

Բ
Ն
Ա
Գ
Ի
Ի

ԵՐ ԵՎ ԱՆ - 2001

Եռամսյա գրական
հանդես

www.bnagir.am

ընթերցողի
համար

1

Մ Ա Ր Տ

Պատմվածքներ Վահրամ Մարտիրոսյան

Խախտումը

Ես քնած էի խոր: Ոչ թե «խորը քնած էի», այլ հենց «քնած էի խոր»: Համենայն դեպս, այդպես պատասխանեցի ընկերներիցս մեկին, երբ հարցրեց, թե ինչ եմ անում, որովհետև արտահայտությունը իմ ամենասիրած մի բանաստեղծությունից էր, որն ուսանող ժամանակ էի անգիր սովորել ու աղջիկների մոտ արտասանում էի: Վաղուց առիթ էր եղել, որ վերիիշելի «Զրիստոսը Զիթենյաց լեռան վրա» վերնագրով սոնետը, բայց մի-երկու բառի տարբերությամբ, կարծես, սա էր.

Ու երբ որդին աստըծո, լեռան վրա Զիթենյաց,
Բանաստեղծի իր վտիտ բազուկները պարզած վեր՝
Խորասուզվեց լիովին վշտերի մեջ ու զգաց,
Թե իր դեմ դավ են կյուրել երախտամոռ ընկերներ,

Իջավ ներքե՛ւ՝ նրանց մոտ, ով սպասում էր իրեն,
Երազելով դառնալ մոգ եւ մարգարե ու արքա,
Սակայն նրանք, կարկամած, քնում էին տարորեն.
Եվ սկսեց նա գոչել. «Աստված չկա՛, ո՛չ, չկա՛»:

Նրանք քնում էին խոր: «Բարեկամներ, ձեզ նոր լուր...
Ես արևոտ եմ, ցավատանջ, ոտքից-գլուխ շարդուփշուր,
Զանգի անհուն երկնքին դիպավ ճակատըս այսօր:

Ձեզ խաբե՛լ եմ, եղբայրներ: Վիհ է, վիհ է, խորխորատ:
Ա՛հ, թափուր է աստծուց սեղանն, ուր զոհ եմ անպարտ...
Աստված չկա, չիք աստված...»: Նրանք քնում էին խոր:

Բանաստեղծության հեղինակն էր Ժերար դը Ներվալը, եւ, ում որ կիստաքրքրի՝ գործը հայերեն լույս է տեսել 1976-ին՝ «Ֆրանսիական քնարերգության ծաղկաքաղ» ժողովածուի մեջ:

Ուրեմն, մեր տուն մարդն առանց զանգելու եկել էր, որ ասի, թե մոտիկ սրճարանում նստած են, արդեն մարտ ամիսն է, գարուն է, տաք՝ ես էլ դուրս գամ-միանամ իրենց: Ես պատասխանեցի՝ «քնած էի խոր», չնայած հնարավոր է, որ շատ խորն էլ քնած չէի, քանի որ ցերեկը հազվադեպ եմ խորը քնում՝ փողոցի ու ներսի ձայների պատճառով: Հետո ասացի՝ հա՛, լավ, ու նա թողեց գնաց:

Դե, ճիշտ է, իհարկե, որ աղմուկը խանգարել էր, որ «քնեի խոր», բայց լավ քնաթաթախ էի, շարժվում էի դանդաղ ու որոշ բաներ անում էի երկու անգամ: Օրինակ, երկու անգամ մտա լողասենյակ ու առանց լվացվելու դուրս եկա: Կամ գնացի միջանցք, որ կոշիկ հագնեմ, բայց մոռացա, հետ եկա սենյակ: Իսկ շարժա, փնտրում էի, պարզ է՝ առանց հիշելու, թե ինչ եմ անում:

Մի խոսքով, դուրս գալու պատրաստվեցի քունը գլուխը մարդու պես, բայց քանի որ տեղից դանդաղաշարժ եմ, երեւի՝ մի բան էլ դանդաղ: Դռան մոտ էի, երբ գանգ եկավ, խոսեցի, հետո էլ ես մի-երկու տեղ գանգեցի, ու երբ ոտքս տնից դուրս էի դնում, անցել էր մի ժամ քսան րոպե:

Շա՞տ է, թե՞ չէ: Հաշվի պետք է առնել, որ սրճարանում էին, փողոցում չէին ու մենակ չէին՝ մի քանի հոգով էին: Բայց վատ կողմն էլ կար՝ սրճարանը բացօթյա էր, իսկ մարտի առաջին օրերին, ինչ էլ որ ասեն, բացօթյա սրճարանը նստելու տեղ չի:

Բայց դա պատճառ չէր, որ անեի այն, ինչ որ արել էի. դա պատճառ չէր, որ ցերեկվա ժամը երեքին սրճարանը հավաքեի: Այգում, որտեղ սրճարանն էր, սեղան-աթոռների հետքն էլ չկար, եւ ոչ էլ մարդ կար, որ հարցումփորձ անեի: Չնայած, հնարավոր է, որ սրճարանը ձմեռվանից հետո դեռ չէր էլ բացվել:

Պարզ է, որ իրենց արածը բանի նման չէր, բայց ես էլ ուշացել էի համարյա ժամուկես:

«Պիտե՞ք, չե՞, ոնց եղավ, որ չեկա սրճարան ձեզ հանդիպելու: Դե, քնաթաթախ էի, տեսար, դանդաղ էի շարժվում: Բայց որ զգացի՝ ուշանում եմ, սկսեցի շտապել: Բայց շտապելուց ճիշտ տեղում պետք է շտապես: Ես ստորգետնյա անցում չմտա, այլ որոշեցի վերելով անցնել: Այդ մասում էլ, հետիոտնի անցում ընդհանրապես չկա, մեքենաներն ընթացքը չեն դանդաղեցնում ու մայրիկ շատ մոտ են շրջադարձ անում:

Դե, ես հենց խախտում արեցի՝ ոտքս դրեցի փողոց, ինձ մեքենան խփեց: Բայց լավ էր, որ տակը չզցցեց, ընկա մյուս կողմը: Բայց թե գլուխս ուժեղ խփեցի ասֆալտին, ու ինձ ուղեղի ցնցումով տարան հիվանդանոց»:

Բայց ի՛նչ կողակի բան պետք է լինի գլխով ասֆալտին խփվելը: Չարժեր, չարժեր, թյու՛, չարժեր, որ ուշանալուս համար դա պատճառ բռնեի:

02.03.01

Զուկը

Արարատ ՍԱՐԳՍՅԱՆԻՆ

Մենք երեքով նստած էինք դեպի վերեւ նեղացող, բարձր կլոր աթոռակներին, որոնք իրենց բարակ ոտքերի կեսին էլ են շրջանակ ունենում: Նստած էինք կամրջի վրա, բազրիքի մոտ, նայում էինք ցած ու խոսում էինք այդ ժողովրդի մասին: Մեզանից ահագին ներքեւ գետն էր, որի աջ ափին բուսածածկ բլուրի ուղղահայաց լանջ էր, ձախ ափին ծառեր էին, որոնց արանքում երևում էին փայտաշեն, մի քիչ խուճկաճած մեկուկես հարկանի տներ: Հասկացվում էր, որ դրանց թիկունքում ինչ-որ տեղ խճուղին կար:

Հիմնականում ձկնորսությամբ են զբաղվել, - ասաց ձախ կողքիս նստածը, որին չեմ հիշում:

- Կարծեմ ձուկը շատ առատ է եղել, ու անհոգ ապրել են, - իմ իմացածը հայտնեցի ես:

- Բայց արդեն հարյուր տարի է ձուկ չեն որսում:

- Ինչի՞, - անհանգստացա ես, քանի որ ձկան սիրահար էի, չնայած բուն ձկնորսության որեւէ հակում չունեի:

- Որ գետը նորից ձուկ լցվի, - ասաց աչ կողքիս նստածը, որը միջնադարյան թուրք ճանապարհորդ էր:

Ես ավելի ուշադիր նայեցի ներքեւ ու նկատեցի, որ գետը համարյա ճահճակալած է՝ մինչեւ մեջտեղը եղեգներ ու բարձր մոլախոտեր էին բռնել: Իհարկե, գետով ոչ մեկի պետքը չէր, ոչ ոք նրան վաղուց մոտ չէր եկել: Բայց դրանից էլ պետք էր ենթադրել, որ ձուկն հիմա լիքն է, վիստում է խոտերի արանքում, ես նույնիսկ աչքերս լարեցի, որ ջրի մեջ աշխույժ շարժում տեսնեմ: Այդ ժամանակ ձախ կողքիս նստածը ձեռքը մեկնեց գետի ձախ ավի բարձր ուռնու կողմը, որի վերելում մի ձուկ էր թրթռում:

- Նայեք, թռչող ձուկ,- ասաց նա:

Ձուկը սկսեց ավելի բարձրանալ՝ թրթռալով, եւ մեկ-մեկուկես րոպեում հասավ համարյա մեզ: Ես ձեռքս կտրուկ առաջ գցեցի ու բռնեցի նրան: Սովորական ձուկ էր՝ 35-40 սանտիմետրանոց, միայն թե դնչից մինչեւ պոչն ընկած հատվածը ներքեւի մասում ուղղագիծ էր, այլ ոչ թե՛ կոր: Շատ չէր թաքտում, դրա համար ես էլ արդեն բռունցքիս սեղմումը թուլացրի ու ձուկը ցույց տվեցի կողքիս նստածներին:

Հրաշք է,- ասաց թուրք ճանապարհորդը,- ես արդեն լսել էի այս ձկան մասին:

Մի հատիկ ձուկը ո՛չ ուտելու էր, ո՛չ էլ, քանի որ արտասովոր էր, ուզում էի հենց այնպես կողքիններիս տալ եւ, նրանից հոգնելով, որոշեցի հետ գցել: Բայց պարզվեց՝ ուժեղ կպած է ձեռքիս, կարծես՝ սոսնձած: Ես մյուս ձեռքով մատներս զոռով պոկեցի իր մարմնից, բայց ձուկը մնաց ավիս կպած ու ինձ քաշում էր դեպի գետը: Ես ձկանը սեղմեցի ոտքիս ու, կայծակնային արագությամբ տրորելով, պոկեցի ձեռքիցս: Բայց նա հիմա էլ ջիւսիցս կպավ ու ծնկիս վերեւի մասից շատ ուժեղ ինձ ձգում էր ջրի կողմը: Քանի որ նստած էի բարձր աթոռակի, իսկ կամրջի փայտե բազրիքը ցած էր, նույնիսկ մի քիչ առաջ թեքվելը կյանքի համար վտանգավոր էր:

- Օգնեցեք,- ասացի ես կողքիս նստածներին:

- Ի՛նչ նման է սովորական ձկան: Իսկ մուգ կապույտ ջիւսի վրա ոնց որ մանրոտ թեփուկներով հասարակ ձուկ լինի,- ասաց ձախ կողքիս, որին չեմ հիշում:

Հանկարծ երկու ձեռքի կեռացրած մատներով թուրք ճանապարհորդը քաշեց-պոկեց ձուկը ոտքիցս: Ձուկը սկսեց նրա դիմաց օդում թրթռալ: Իսկ թուրք ճանապարհորդն ուներ մակր-գանգուր մազեր, որոնք դեմքի երկու կողմից առատանում էին դեպի ներքեւ: Եթե ձուկը կպչեր ճանապարհորդի մազերին, պրծում չէր ունենա:

2000 թվականի նոյեմբերի 28

Ես

Վահրամ Մարտիրոսյանին

Ժամը տասներկուսի մոտ էր: Շատ ուշ չէր, գիշերով երեքին էլ էի տուն եկել, բայց ուշ էր ցերեկվա հինգի համեմատ, երբ որ խոստացել էի գալ: Արժեք, ուրեմն, մի քիչ էլ ձգել, որ բոլորը քնած լինեին, որովհետեւ մյուս առավոտ բացատրվելն ավելի հեշտ է: Բայց խմիչքը վերջացել էր, մյուսներն էլ ցրվում էին. հո՞ դրսում չէի թափառելու, մինչեւ տնեցիները քնեին:

Եսպիսի դեպքում, ինձ հուսադրելու համար, տան պատուհաններին չէի նայում, նայում էի ուրիշ կողմ: Ու աչքս որ ընկնում էր, միշտ փախցնում էի, բայց հասցնելով նկատել՝ լույսերը վառվում են, թե՞՞ չէ: Որովհետեւ դեպքեր պատահել են, որ քնած են եղել: Հենց ես նույն ժամին. իսկ ինչի՞ չէ որ:

Հիմա էլ աչքերս փախցրի, բայց, ավիսս. պարզվեց ճաշասենյակի լույսը վառն է: Հետո նորմալ նայեցի ու տեսա, որ իմ սենյակում էլ է լույս վառվում: Ի՞նչ գործ ուներ իմ սենյակում լույսը: Մենակ թե փոշեծծիչ միացրած չլինեին. ուրիշ բան չեմ ուզում: Մենակ ես ժամին փոշեծծիչ միացրած չլինեին:

Աստիճաններով բարձրանալիս ականջս ձենի էր: Բայց ձեն չկար. սովորական ձեներ էին: Մեր հարկում կանգ առա ու ինձ թափ տվեցի: Ինչ-որ բան ինձ նեղում էր. գոտի՞ս էր պինդ ձգած, թե՞՞ ինչ: Կամ էլ խմիչքն էր հասել կոկորդիս: Համենայն դեպս, գոտիս թուլացրի, կանգնեցի մի քիչ, նոր փորձեցի դուռը բացել: Եթե կարողանամ բանալիով բացել, ուրեմն, ներսից բանալին հանել են՝ ինձնից հույսները կտրած: Եղ ժամանակ կուրախանան, որ գոնե կեսգիշերից շուտ եմ եկել:

Բանալիներիս կապոցը գոտուս է ամրացված, բայց խուսափում եմ ամեն անգամ քանդել, քանի որ մետաղե լեզվակը պինդ է ու կարող գոռից ջարդվել: Բայց առանց բանալիները գոտուց անջատելու դուռը բացելն էլ դժվար է: Որովհետեւ բանալին մի պտույտ հանգիստ անում է. բայց երկրորդին կարող է լռվել կապոցի մյուս բանալիների մեջ: Եղ ժամանակ արդեն ինքը էլ պետք է պտտվեւ, որ բանալին շարժվի ու դուռը բացի:

Ճիշտ է, միշտ հաջողվում է բացել: Վերջին րոպեին մեկ էլ բանալին մի քիչ կշարժվի, դու էլ ժամացույցի սլաքի հակառակ կթեքվես, ու արդեն հանգիստ կարող ես անցնել ներս:

Ես բանալին մտցրի անցքը. մեջն իմ բախտից ներսից բանալի չկար: Սահուն պտտեցի երկու անգամ՝ կողքով դռանը կպած: Բայց տանը փոշեծծիչի աղմուկ էլ չորսացի: Միջանցքում վերարկուս հանեցի ու ճաշասենյակ գնալուց տեսա, որ սենյակիս դուռը կիսաբաց է: Գլուխս մտցրի /ույսը դեռ վառն էր/, տեսնեմ՝ նստած եմ ներսը: Իմ տեղում չէի՝ համակարգիչի առաջ, այլ՝ սուրճի փոքր սեղանի մոտ: Նստած էի նստած էի սեղանին հակառակ, բայց՝ ոչ թե աթոռին հեծած, այլ՝ կողքանց: Հագիս ձմեռային կանաչ պոլիսթիլից խշխշան բաճկոն էր, գլխիս՝ դահուկորդի սեւ գլխարկ, օձիքիս վրայից կապած էր կարմիր վզնոց, շալվարս դարչնագույն էր, աչքերիս՝ դարչնագույն մեծ ապակիներով արեւային ակնոց: Դրանցից ոչ մեկից ես չունեի: Ոչ էլ սիրում էի. Չհաշված՝ որ գլխարկիս տակից ցցված էին հարդագույն ուղիղ մազերը ոչ մի կապ չունեին իմ սեւ մազերի հետ: Ես տեսա, որ նստած էի ոտքս ոտքիս գցած, որի պատճառով շալվարիս փողքը վեր էր քաշվել, եւ նրա ու սապոգիս միջեւ բացված սրունքը, որը վարդագույն գուտապերչից էր:

Սկզբում ուզեցի ներս մտնել, բայց հետո միտքս փոխեցի ու մտա հյուրասենյակ:

2001թ., հունվարի 5

Ազգային գաղափարախոսության ձեւակերպման փորձ

Մարինե Պետրոսյան

Նվիրվում է քրիստոնեության պետականացման 1700-ամյակին

Երկրորդ տարածքը հայացքով ծայրից ծայր ընդգրկելու համար պետք է ինքնաթիռ նստես: Հետո վայրէջքի մառախուղի միջից քեզ ընդառաջ է գալիս ուրիշ մի երկիր, որի անունը վաղուց գիտեիր, հիմա տեսնում ես հստակ գծագրված մարմինը:

Հետո հյուրանոցիդ խաղաղ համարում, այցելությանդ կարճ օրերին, հոգնած փակում ես աչքերդ, որ ընես, բայց ընել չես կարողանում: Որովհետեւ մղձավանջի նման համառ, փակ աչքերի առաջ գալիս է մի բան, որ ոչ պատկեր ունի, ոչ ձայն: Բայց կա: Որպես սեղմված տարածություն: Սեւ խոռոչ:

Երկու տարի է՝ փորձում էի ձեւակերպում գտնել այդ մղձավանջին, որ դադարի մղձավանջ լինելուց ու այլեւս այցի չգա: Ու գտա:

Հայաստան՝ անանուն երկիր:

Հրեայի համար իրականության չափումը գիրն է. իրական է այն, ինչ գրված է: Եվ գիրն այդ ունի միտում եւ ուղղություն, իմաստավորված է ու կառուցիկ: Այն անուն է:

Եվ անունն է այդ «թեք է դրված». այն, որ հրեան միշտ ընդգծվում ամանձնանում է աշխարհի իրականության ֆոնի վրա, նախապես դրված է նրա անվան մեջ, որպես ծրագիր:

Հրեայի պատմությունը նրա անվան պատմությունն է: Այն ունի սկիզբ եւ ուղղություն:

Հայի պատմությունն իր մարմնի պատմությունն է: Մարմին, որ չի կարողանում ստանալ անուն:

Եվ պատմությունն այդ առաջ չի գնում, այն կամ կանգնած է, կամ փորձում է քայլ անել, բայց դարձյալ վերադառնում է իր ելման կետին:

Եվ այսօր, երբ քայլ անելու հերթական փորձից հետո քո պատմությունը դարձյալ վերադառնում է իր ելման կետին, այսինքն ոչ մի տեղ, գուցե վերջապես ժամանակ է հասկանալու, որ այդ ոչ մի տեղը նույնպես տեղ է: Որ անանունությունը նույնպես կարող է անուն դառնալ: Երբ դրան տեր ես կանգնում:

Երբ տեր ես կանգնում պատմությանդ փաստերին ու դրանց տրամաբանությանը: Քրիստոնեությունն ամենից շուտ պետականորեն ընդունելով, դու, միեւնույն է, երբեք էլ քրիստոնյա չդարձար: Սովետական իշխանության 70 տարիներին դու ոչ կոմունիստ, ոչ էլ գոնե մարքսիստ էիր, թեեւ Մարքս ու Լենին էիր անցնում մանկապարտեզից: Այսօր էլ ժողովրդավար չես ու վախենամ երբեք էլ չես դառնա, որովհետեւ ժողովրդավարությանը դու մի քիչ հանաքով ես վերաբերվում:

Երբ այս ամենը գիտես՝ ամենահեշտը հուսահատվելն է: Եվ այն ժամանակ փորձելու ես քո վրայից թողափել քո իսկ պատմությունը, որպես միրած, ֆիկցիա, ուղեղային մորմոք, սրտի հիվանդություն: Բայց կարելի է նաեւ չհուսահատվել: Ու այն ժամանակ իրար հետեւից շարվող փաստերը ծնելու են հարցը. իսկ գուցե այն տեղը, ուր քեզ անվերջ շարտել ու շարտում է պատմությունը, այլեւս ոչ թե ոչ մի տեղ է, այլ հենց քո տեղը, քո վայրը, որ կոչվում է Ոչմիտեղ:

Ու եթե դու նայում ես մի վայրից, որ բոլոր վայրերի սահմանին է ու բոլոր վայրերից դուրս, ուրեմն ինչո՞ւ գարմանալ, որ քո վրա «փոք ես տալիս» բոլոր հնարավոր անունները՝ կրոնների ու գաղափարների տեղով: Եթե քո մարմինը «թեք է դրված» ժամանակի ու տարածության մեջ, ինչո՞ւ գարմանալ, որ նրա վրա հագուստ չի գալիս:

Ինձ դուր է գալիս, որ դու մի քիչ հանաքով ես վերաբերվում ժողովրդավարությանը: Հանաքով վերաբերվիր նաեւ քո այն զավակներին, որոնք մարգարեների առատախոսությամբ քո կործանումն են գուժում՝ անհավատությունից: Նրանց առատախոսությունը իրենց կուրությունից է գալիս, նրանց մարգարեությունները գրագողություն են Աստվածաշնչից:

Տեր կանգնիր անհավատությանդ, որ հավասարապես քո մուրացիկինն է ու կուսակցականինը, քո պոռնիկինն ու բանաստեղծինը,

որովհետեւ խավարի փոխված ընդհանուր ցնծությունից եւ պարտության փոխված ընդհանուր հաղթանակից է ծնվել: Տեր կանգնիր անհավատությանը, որ հեռապատճենման ու կրկնօրինակների մեր ժամանակում բնագրի վավերականություն ունի:

Դրոշմ փոխիր: Զո դրոշմ սպիտակն է՝ ծայրից ծայր սպիտակը: Եվ հանիր թռչող ու ցատկող ծիծաղելի գազաններին գերբիզ վրայից: Զո նշանը դատարկ շրջանն է:

Որ խաչից ամառ էր: Ու խաչից հետո է:

Աղբի հառաչանքը

Սուրեն Համբարձումյան

Նեղ փողոցի անկյուններից մեկում փռվել էր Աղբը: Նա իր ողջ ծավալով գրավել էր մայրն ու, գնելով անցորդներին, որսում էր իրեն ուղղված չարամիտ հայացքները: Աղբը լավ էր նկատում, թե ինչպես են մարդիկ զզվանքով նայում ու զանազան հայիոյանքներ հղում իրեն:

Գոռում էր Աղբը, ճչում, որ նայեն, նայեն, բայց ոչ զզվանքով. նա սիրո էր կարոտ, կարոտ էր ուշադրության, ջերմության...

Գոռում էր Աղբը, ճչում էր, բայց՝ զուր... Զար էին մարդիկ: Նրանք չէին հասկանում, որ գեղեցկությունը գեղեցիկի մեջ չէ միայն, որ Աղբն էլ է գեղեցիկ, Նա էլ է շնչում, զգում յուրաքանձյուր վայրկյանը, ապրում է դարին համահունչ, օգնում բազմաթիվ մարդկանց, կենդանիների...

Գոռում էր Աղբը, ճչում՝ ցուցադրելով իր մարմնի բարեմասնությունները, գայթակղում էր անցորդներին, բայց՝ զուր...

Կույր էին անցորդները, չէին տեսնում ոչինչ: Հառաչում էր Աղբը, եւ նրա հառաչանքը լսվում էր ամենուր, ու նրանից փախչում էին թե՛ ծեր, թե՛ մանուկ...

Մահանում էր Աղբը, ծերացել էր Նա...

Փոքրիկ գրույց կյանքի գոյացման մասին

Ողջույն, հարգարժան ընթերցող: Բացելով այս էջը՝ նորից հանդիպեցիր ինձ եւ ստիպված ես լսել իմ անհեթեթությունները: Ինչու՞՞ ստիպված... Որովհետեւ ներքին կուլտուրա ունեցող ցանկացած անձ պարտավոր է դիմացինին լսել կարողանալ, իսկ տվյալ դեպքում քո դիմացինը ես եմ:

Ի դեպ, դու կարող ես ինձ լսել՝ ամենեւին համաձայն չլինելով ինձ հետ:

Հարգարժան իմ ընթերցող, երեւի ինձանից լավ գիտես, որ մտերը լինում են բազմատեսակ՝ գորտի, ձկան, մկան, ոչխարի, տավարի, մարդու եւ այլն: Սակայն այս բազմատեսակությունից զատ, մտերը բաժանվում են երկու խմբի՝ կենդանի եւ մահացած: Միզուցե քեզ տարօրինակ թվա, բայց ուզում եմ քո ուշադրությունը սեւեռել մահացած, ավելի ճիշտ՝ արդեն նեխած մսի վրա...

Ի՞նչ է իրենից ներկայացնում նեխած միսը. ոչի՞նչ...

Ոչ, այն նոր կյանքի սկիզբն է, մի կյանքի, որ մինչ այդ գոյություն չուներ, իսկ այժմ կա: Եվ բոլորովին կարելու չէ քո վերաբերմունքը նորաստեղծ արարածների նկատմամբ: Փաստն այն է, որ միսը, նեխելով, սկիզբ դրեց նոր կյանքի, իսկ նորաստեղծ արարածները որդերն են, այն բազում վներն ու միջատներն են, որոնք հոշոտում են միսը:

Այդպես էր եւ մեր գոյացումը՝ երկիրը, նեխելով, սկիզբ դրեց մի կյանքի, որը մինչ օրս անխնա հոշոտում է իրեն...

2000թ.

Բանաստեղծություններ

Վիոլետ Գրիգորյան

""
"" ""

Էնքան ծոմ պահեց սիրտուշորունքս, ում տեսամ՝ աչքիս փեսա է,
Մերիկ ջան, մերիկ, տանդ մնացի, դուրսը դիփ յու-յու, յա-յա է,
Հալվեցավ եղս, մաշեց թիկունքս, ոսկորքս խըրթ-խըրթ շուշա է,
Ես դառն մատս ծծեցի, մերիկ, խալխին ջանգյուլում, սքես, պեպսի կոլա է:

Պեռվի կրուգի ցենտըրը դուշ էի, դեղնեցի, հալից ընկա, հիվանդացա,
Թույն նանարների աչքին փուշ էի, թսկեցի, վերխից ընկա, էժանացա,

Տուխտ էի, գուգվոր էի, պակսեցի, թայից ընկա, թաք կենտացա,
Ո՞ւմ ասեմ՝ մեղքս վիզդ, էշըցա, մուֆթա ընկա, հարիֆացա:

Ինձ պիտանի սիրեցյալս չիք բնավին-բոլորովին,
Փոշտը բարեւը չի բերում, դալամը առել է քարին,
Կեսուրս լայեղ չի անում ինձ իրա ինչիներ բալին,
Բարակ թղթիկ, քիչն եմ ասում, շատն իմացրու ես քաչալին:

Ասեղ դառա՛ ընկնեմ-կորչեմ, թելի նման պոչիս կպար, քաշեցիր,
Շաքար դառա՛ հավվեմ-կորչեմ, բկլիկ յաման, ատամիդ տակ շարդեցիր,
Օդառակախ հավք՝ թելին-թելին, դուշբագի պես յոթ երկնքում խաղացրիր,
Ո՞րը ասեմ, ո՞րը թողնեմ, մեյմունի պես մեյդան գցիր, պարացրիր:

Ծամկալս ի ծով, ալ այլուղս կորցրեցի, վարդ կոշիկս էլ ինձ չմնաց,
Ես ի՞նչ թավուր իսան էիր, հեչ քեզանից խեր չմնաց,
Պեպանի պես դամբ գցեցի՝ սրտիդ իշխան ծուկը բռնեմ,
Տրիկ ջուր էր սաղ քու սրտում, դարդակ ուռկանս էլ չմնաց:

Ախչկերքը խաբար բերին Մասսիվներից՝ ախչի, յարդ յար ունի,
Ես չեմ ջոգում՝ մոտի՞ց գցվեմ, երա՞կ փրթեմ, հաշվեմ՝ մերս ինձ չունի,
Էլ շողուլից ընկա սավսեմ, դառա բոմժ ու վիրունի,
Մի տեռորիստ դառնամ ես էլ, գյուլլեմ սիրտն ես գանդունի:

Ասուս սիրուն, մի խոսացրեք, լեզուս սրտիս գյորա չի, չէ,
Փորը լիքը որբեւերու խաղ եմ կապում, լիրիկա չէ,
Գիտեի թե՛ մերն ուրիշ է, մերն անուշ է, անուշ չի, չէ,
Նույն դառնահամ մրմունն է, ուրիշ քաք չէ:

Բոլ է, գրիլ հավի վարիանտ՝ ինքս իմ շուրջ հա խորովվեմ,
Կարտոշկի պես վեր կընկնեմ ես արեւի տակ, չեմ քաշի յարի ջառմեն,
Կլիտըրս քոթ կկտրեմ խափշուհու պես, յան կտամ աշխարհեմեն,
Յարցնող ըլնի՝ դաբլու դաբլու դաբլու. Վիուլետ. էյեմ:

Թեկուզ դուշեշ, թեկուզ հափյեք, դավայ, դումարբազ եմ հիմի,
Ես ես գլխես տակ տված եմ, վայ-բեմուրազ եմ հիմի,
Թեկուզ ուտեմ, թեկուզ չուտեմ գետինեն կուտ, հավայի դազ եմ հիմի,
Թանաքս՝ պըրծ, ձեսս՝ քարի, լեզուս գերի կրունկի տակ է: Յիմի

Փիդրահան դառնառիկ եմ, կըռռում եմ յանա-յանա,
Յարալու Տիտանիկն եմ, սըկում եմ, ամա-ն, հարայ,
Դիվահար դարձվորիկ եմ, ֆըռռում եմ ալա-բուլա,
Մազալու Վիուլիկն եմ, լուրջ չընդունեք, օ քե՛յ, հելա:

""
"" ""

Կամերային սեր- ցուցաօրինակ ներկայանալի, ստանդարտ նմուշ կամ ոսկյա միջին՝ չափաբանալի, սեղմ դիապագոն- վարմունք
հիգիենիկ, մեղմ չափականոն- ջրիկ, անալի,
Կամերային սեր- հագիվ գոյական, նորմատիվ այնքան, որ չես երեւում քոթքոթաթավալ զիզզազների մեջ՝ կենսահպացնիկ-
մահամերձեցիկ,
Կամերային սեր՝ փակձեռ- պահեցող, սուտմեռ- սողեսող, զգաատնտես այդաբար ծախսով դու դեռ կտեսես լիմիտավորված
շրջանակիդ մեջ՝ տիզ երկարապրիկ,
Բոլ ծամած մաստակ՝ ճիլ երկայնակի, այլես անհամ, քաշքշուկ ռեզին-լըմլըմ ծամծմուկ, մատի փաթաթուկ, ականջի տես փակչուկ-
մոռացուկ,
Ձգական մուղամ թմբիրաօրուկ, կերկերուն վարքով հապաղկոտիկիդ լռվել- մխվել ես խուճուճ նախշերի ոստայնացանցում,
խազմզուկների լաբիրինթոսում գալարադարձիկ,
Լարովի ճոճակ ծույլ ժամացույցի, չերեւեկ հեւքդ աջ ու ախյակի մատուցներին՝ հուպ- հարատեւ շարժիչ, սակայն՝ զոռաշխատ,
սակայն՝ բզովի,
Ու չես ելնելու ձգձգահնչուն մազանոթներից հոսովի երգի ու չես ելնելու,
Չես դադարելու աննշմար շարժդ առանցքասատար, ինքնաժաժովի,
Այլ տեսելու ես, հանց փտամանրե սիրաքայքայիկ՝
Դանդաղ սատկովի:

Կամերային սեր- փշուրալեզ ու չմմակերուկ, քո միաժանի պատառաքաղով, առանց ախորժակ, պասմուտի քիմքով դու կքշփորես
մի քանի տարի հացը մեկօրիկ,
Կամերային սեր- ուրբաթախոս ու շաբաթալսիկ, քո անդեմ բայը կրավորական, զը-լլ, կգլորես նախադասութան հարթ ուղեգորգիդ
կանխանիշ գծով՝ անշեղ սղալիկ,
Կամերային սեր- սակավաբավ ու եղածափերիք, նոսրաբար ցանցառ, հար զեղչավաճառ՝ ինքնածախսածածկ հազիվհազիվիկ,
Անհավելվճար զուտ աշխատավարձ՝ անտոկոս-անանձ, զուսպ ու չափահաճ,
Եկվոր տնփեսա՝ պուճախամուտ ու զոքանչավախիկ, խուճուճախախուտ ինչ-որ եուկիկ, ա՛հ, հանկարծ չընկնե՞ս, ո՛հ, հո չի՞ փչում,
վա՛յ, դոզան շատ չէ՞ր, հո՛պ, ստոպ, բոլ է, պա՛հ, դեռ շնչում ես,
Կամերային սեր...

Բայց լաբորատոր այս պայմաններում, ապակե շերտոց- փորձանոթի մեջ, թորածաշրով արբջիռ- ոռոգուն, ստերիլ օդում՝ վարակավարքիկ եւ, այնուհանդերձ, ինչ ոյուրութամբ ես ծաղկում ու փթում՝ ծի'կ-ծի'կ, արդեն կաս, իա~, անհետացար, ծի'կ, նորից ելար,

Դե, տոտիկ-տոտիկ, դե, չոչիկ-չոչիկ, կըլլթ, կաթիլ-կաթիլ, փըլթ, փաթիլ-փաթիլ, մարզվիր ու վարժվիր, օրապահի'կդ - դիետիկ կակա ահա ստացիր,

Կամերային սեր - դիետիկ կակա, լըմլըմուկ պասմուտ, թասն տնփեսա հետեւամտուկ, հիգիենիկ օրգազմ, տնազի պատճեն, կակազիկ սպազմ, Էուկ ծակոտկեն, սուռոզատ -փոխսեր, ծիկ-ծիկ ու ողջ լեր, իսկ ես՝ փաս, ախպեր:

Ամառ-ձմեռ, ամառ-ձմեռ

Գրիգոր Բաբայան

Ամառն ու ձմեռն էին տարվա հիմնական եղանակները, սրանք էին տարվա շարժումը կանոնավորում ու ընթացքի հերթագայությունը կարեւորում: Ժամանակի անտես վիհի, անգմբեթ ու անհատակ վիհի անպարփակ խելահեղության տաղտուկ սպառնալիքից սրանք էին անջրպետում գոյության կամ չգոյության ճոճի տարուբերումը: Միասնաբար շերմուպար: Ամառ-ձմեռ, ամառ-ձմեռ: Գոյության կամ չգոյության ի՞նչ արդարացում կամ հիմնավորում է պետք ամառվա տաքության մեջ կամ ձմեռվա պաղում: Ոչ մի: Ոչ մի: Ոչ հիմնավորում է պետք, ոչ արդարացում, ոչ էլ դրանց կերպի որոնումը: Հրատապ լուծումների անհրաժեշտությունը դրանք դարձնում է վերացական ու եթե ոչ անկարելի, ապա ոչ արդիական, հավերժության սպանիչ հանելուկը հարցադրման խելահաղության իր չափին չի հասնում երբեք, քանի որ ձմռանը ուշիմ ու սթափ է պետք լինել բուխարիկում կրակը վառ պահելու համար, երբ բոցախաղ կամ ածխաթարթ նայում է քեզ ու ճրթճրթունով կամ մշմշոցով համոզում, թե չգիտի, որ դու գիտես, որ քեզ է նայում, իսկ ամռանը ժամանակի առեղծվածը անմիջապես նահանջում է չկամության, բայց խուճապահար՝ արեւի տակ մնացած ու մաքրվելու կարոտ ձկան հոտից: Ջերմուպաղ տատանումով ճոճվող ամառն ու ձմեռն էին տարվա հիմնական եղանակները, անսահմանի խելահեղության մեջ՝ սահմանապահ ու կարգադիր ներդրամիտ, իսկ գարունն ու աշունը սրանց հավելում շարունակությունն էին կամ սպասման նախապատրաստությունը: Անբեկանելի ու հանդարտ անվարան մուտքով, ընթացքով, հասունացմամբ, կիզակետով ու ոչ թե հոգեարքով, այլ հրաժեշտով, ոչ թե մահվամբ, այլ վերադառնալու զուսպ խոստումով: Նաեւ լրիվ չհեռանալու կամ ամենեին չհեռանալու՝ հար ներկայության թաքուն ակնարկով, քանի որ ձմեռվա մեջ միշտ ամառ կա, իսկ գարունն մեջ՝ աշուն: Ամառն ու ձմեռը սահմանադիր կայուն էին ու կայուն գոյավիճակ կամ չգոյության կայուն կերպ էին պարտադրում, ամռանը՝ ամառային ծովի ափին, ձմռանը՝ ձմեռանսինջ անտառի մեջ: Գարունն ու աշունը շարժուն էին ու գործողություն էին հուշում: Գարունը պետք էր լեռան խրճիթից իջնել ծովափ, աշնանը՝ ծովից լեռ բարձրանալ: Եջն ու վերելքը իհարկե միանգամից ու միանշանակ չէին: հազար ու մի գործ կար դրանց ընթացք ու նշանակություն հաղորդող: Անձրեւների մեղմանալու հետ աշխարհը մեծանում էր, հորիզոնը կղզուց օրեցօր նահանջում էր հեռու ընդարձակություն, ծովահայաց դարավանդի եզրից նայելիս արդեն հեռավոր, բայց դեռ բորբոք կապարը ժամ առ ժամ կանաչում ու կապտում էր ի վերջո ծովագույն դառնալու համար, եւ ներքեի չերեւացող ժայռերից արդեն ոչ թե ալեբախության թնոյունը, այլ արորների սուր ճիչերն էին վեր ելնում: Խոնավ փայլկտացող խճերը հայացքը վերադարձնում էին ծառամեջ բացատի գերանակապ խրճիթին, որն արդեն պետք էր մաքրել ու օդափոխել, միակ սենյակի հատակը լվանալ ու առատադի մուրը սրբել, քանի որ անտառն արդեն բազմերանգ կանաչում էր, պետք էր անկողնու մորթիները թափ տալ ու փռել գարունն արեւից տաքացած քարերին, որ մինչեւ աշուն չհոտոտին ու չցեցակալելին խրճիթի տոթ մթության մեջ, պետք էր ուտելիքի պաշարը տնտղել ու խորդանոցը մաքրել համոզվելու համար, որ ձմեռն անցավ. չորացած ձուկը վերջացել է, աղ դրած մսի մնացորդների վերջը պետք է տալ, քանի չեն նեխել գարունն տաքությունից, վերջին մի քանի տանձ ու խնձորը կնճռոտվել, մզացել ու անհամացել են, ուրեմն կանաչ բացատներում արդեն բուրումնավետ ու համեղ սոխուկներից պստիկ ծաղիկներ են ծլել եւ գարունն գույները, հպումները, համերը, հոտերն ու ձայները ամեն օր լեռն ի վար՝ դեպի ծովն են իջնում, ընթացք, որին ի վերջո անպայման պետք է հետեւես:

Գարունն հոտերը խոնավ են: Նաեւ ձայները, համերը, պատկերներն ու հպումները: Գարունը սկսվում է անզո մի պահ, երբ դեռ խոր կամ ուշ ձմեռ է, պատի գերաններից անդին ձնաթմբեր են, սառնաշունչ մառախուղ կամ չոր քամու ոռնոցի անհասցե սպառնալիք, որ պաղ է թավալում անտառի վրա, բայց մի օր ցերեկվա աղջամուղջից հետո երեկոյան աղջամուղջում մի բան է կատարվում, որից ձմեռվա շնչառությունը բեկվում է, ծխնելույզում ընդհատված համբույրի հեք է լսվում, կրակից խոնավ հոտ է գալիս, ու խրճիթում օդը տամկանում է: Մորթիների հոտը առավոտյան թվում է հեղձուկ, եւ պետք է լինում հազնվելուց հետո ու դուրս գալուց առաջ դուռը մի քանի վայրկյան կրկնաբաց անել, ոտնատակ ձյունը ոչ թե ճռճում է, այլ խրթթում, եւ ձյան տակից հողի հոտ է գալիս: Հետո մի գիշեր երկնքից կռվոց է լսվում, բայց կռուկները չեն իջնում, անցնում-գնում են: Ուրեմն ծիծեռնակներն արդեն եկել ու ճավղոլում են ներքեի հովիտում, ուր հողն արդեն նվաղել է անձրեւներից: Մի հորդ անձրեւ էլ հաջորդ գիշեր լեռան վրա է գալիս ու անտառից սրբում տանում է ձյունը: Ձրի հորձանքները գարկում են տանիքին, կրակը խոնավ խարդավում է ճարպի խանձահոտով, դրսում անտառը խավար ու թաց տնքում է լվացվելու հաճույքից:

Ամառվա հոտերը տաք են: Տաք են նաեւ հպումները, ձայները, պատկերներն ու համերը: Ոչ թե ակնաբյուրեղին, քիմքին, թմբկաթաղանթին, շնչափողին, մաշկին դիպչող տաքությամբ, այլ ամառվա խորքում պահվածով, որի շերմությունը կարճատե գիշերն է կիզում լուսնալույս կամ անգամ անլուսին: Ամառվա ծովի մեջ ձկների թրթռուն տաքությունն է: Ամառվա ստվերները արեւի մորմոքն են, բայց մինչ ամառ գարունն խոնավ ու անուշահոտ ընթացք կա, որն իրականում առանձնապես հիշատակության արժանի չէ, քանի որ, ասվեց, գարունը սոսկ ամառվա նախապատրաստությունն էր, ինչպես աշունը՝ ձմեռվա, եւ երկունս էլ շարժուն են, բնորոշման այն կշռելի տարբերությամբ, որ գարունն աշունի մեջ ավելի խռով է ու տազնապ, քան գործողություն կամ գործողության կոչ: Խռովք է ու սպասման տազնապ, բայց իհարկե ոչ անհամբերության գրգռ, որի ակնարկի անգամ ենթադրությունը կքսորյալ պարագայում բացառելի անհեթեթություն կլիներ, եւ խռովքն ու տազնապն էլ ինքնին ոչ թե նրա գոյության կամ չգոյության որեւէ պահին են ներհատուկ, այլ գարունն ընթացքի գույներին ու ձայներին, որ օրերի մեջ երբեւէ չկրկնվելով տարափոխվում են դեպի ամառ, իսկ աշունը գործողության բազմազբաղ ժամանակ էր, քանի որ ձմեռը լուրջ նախապատրաստություն էր պահանջում, ուտելիքի լուրջ պաշար էր ուզում ու շատ վառելափայտ, եւ աշունն իր խորհրդավոր ձայներով ու հպումներով աշնանամուտից առաջ թափանցում էր ամառ ու հիշեցնում, որ անձրեւուտ գիշերներից հետո առավոտները պետք է ծովափից անտառ բարձրանալ ու սունկ հավաքել: Միրգը հասնում էր, պետք էր միրգ ուտել, իսկ երբ աշունն խորհրդավոր հոտերը փոխում էին օդն ու ստիպում չորացրած ձուկն ու սունկը կամաց-կամաց տեղափոխել լեռան խրճիթը, միրգը հասնում էր այնքան, որ արդեն պետք էր ծովին հրաժեշտ տալ. մրգահավաքը աշուն էր նշանակում, իսկ աշնանային փոթորիկների ժամանակ ծովափին մնալ չէր կարելի:

Ամառն ավարտվում էր ամառվա ամենատաք և աշխատանքով. նավակն ու թիերը սրբում, քերում, չորացնում, դնում էր ժայռի խոռոչում ու ծածկում մովաթով, նավակի տակ դնում էր եռածանին, կարթերը, դանակները, ձկանն ու ձկնորսության առնչվող ամեն ինչ, ցանցերը ծալում ու դնում էր վրան, մնացածը՝ գործիքներ ու ամանեղեն, փաթաթում էր երկու անջրանցիկ թիկնոցների մեջ, պարաններով կապոտում ու խցկում խոռոչի չոր անկյունը, հետո ժայռի ծածկ-խոռոչ-անծածկ շարունակությամբ իր վրան-հյուղակ կացարանը քանդում էր ու բրեզենտը, որ ամբողջ ամառ իր տանիքն էր եղել եւ որն ի սկզբանե ու երբեք չկարողացավ առագաստ դարձնել, ձգում էր խոռոչի բերանին, ամրացնում ու կնքում չեչոտ ժայռաբեկորներով: Գնում, մոտենում էր հանկարծ խորթացած ալիքներին, որոնք արդեն մրրիկի երազանքով էին Ֆշշում, առանց հորիզոնին նայելու լվացվում էր արդեն սառը ջրով, որի հեռու անդրադարձն արդեն ոչ կապույտ էր, ոչ նույնիսկ կանաչավուն, հագնում էր կոշիկները, ձկների վերջին շարն ուսը գցում ու քայլում դեպի պայտածե կորացած ծովախորշի ծայրավերջի ժայռոտ մեխերը, քանի որ ծովախորշի խորքից անմիջապես լեռ բարձրանալն անհնար է. կտրուկ գառնափ էր ու սորուն ավազախիճ, կրաքարի փխրուն շերտերը փշրվող դավաճան էին, իսկ հատուկեետ թփերը՝ գրեթե անարմատ, կառչելիս պոկվում էին չարախիտ ուրախությամբ: Քայլելիս ոչ մի անգամ ծովին չէր նայում, որովհետեւ գլաքարերը ներբանների տակ լպրծուն էին ու վտանգավոր. ջանք էր պետք ծովախորշի կոնքից դուրս գալու համար ամառվա վերջում:

Իսկ ամառվա մեջ՝ գիշերադարձի նախօրյակին, ետմիջօրեի մակընթացության ժամանակ հորիզոնի հեռվից, ծովախորշի պայտածե գոգավորության կենտրոնում առագաստ էր երեւում՝ սպիտակափայլ ու զվարթ՝ վագրածկան կեռ լողակի կամ խայտացող կոհակի փրփուրի նման, երկար սիգում էր արեւի թեք ճառագայթներից փայլկտացող կապույտի վրա ու երբ հանդիսավոր նազանքով հասնում էր ափին, Աքսորյալը մտնում էր ջուրն ու մակույկի շարժումն ավարտելով նավաքիթը ափ քաշում, մինչ Մակույկավարն իջեցնում էր առագաստը, հետո որսում էր իրեն նետած ճուպանը, որի ծայրին ցից էր կապված, ու ցիցն ավազի մեջ էր խրում:

- Յը,- ատամները բացելով գոռում էր Մակույկավարը,- ձո՞նկ ես խորովում:

Եվ մակույկի ընթացքի հիշողությամբ դեռեւս ճոճվելով արդեն անշարժ տախտակամածին՝ ուրախ նայում էր Աքսորյալին: Աքսորյալը՝ թաց ոտքերով չոր ավազին կանգնած, մռայլ նայում էր նրան: Դա տեսնում էր մեկ վայրկյան, որն ընդգրկում էր Մակույկավարի այցելության մեկ ժամը, որովհետեւ կայմի տակ իրար կապված երեք պարկն ու մեկ արկղը նշանակում էին, որ մակույկն իհարկե եկել էր մի բան բերելու համար, ոչ թե տանելու, իսկ ձուկ, այո, խորովում էր, կրակը վառել էր առագաստը տեսնելուն պես, քանի որ տեղատվության սկսվելու հետ մակույկը պետք է հետ դառնար, եւ ձկնահոտ ծուխն առիթ էր հայացքը թեքելով մի կողմ գնալու եւ պարկերը քաշքշող Մակույկավարի ուրախ հրամանները վարանումով հասկանալու ու հապաղումով կատարելու համար: Այուր, բրինձ, աղ, մի քանի կարթաթել, մի քանի փամփուշտ, Մակույկավարն անդադար ու բարձրաձայն շաղակրատելով դեսուդեն էր նայում ու քայլում, քար էր գցում որորներին, տնտղում էր արեւի տակ կախված ցանցերը, խամշտորում խեցիների կույտը, նստում էր ու վեր ցատկում, հարցեր էր տալիս ու ծիծաղում, եւ մի ժամ կամ մեկ վայրկյան հետո նավաքթին կանգնած պեպենտ ձեռքը պարզում էր ճուպանը վերցնելու:

- Ես էլ եմ գալիս,- ասում էր Աքսորյալը:

Մակույկավարը քամահրոտ ներողամտությամբ ժպտում էր:

- Ո՞ւր,- հարցնում էր ծաղրով:

- Կսպանեմ,- ասում էր Աքսորյալը:

- Թող,- Մակույկավարը ձգում էր ճուպանը մի անգամ, երկու, ու գարշահոտ ֆշշացնում.

- Թող, շուն:

Աքսորյալը կտրուկ հարվածով ցիցը խրում էր նրա կուրծքը: Մակույկավարը թողնում էր ճուպանը, երկու ձեռքով բռնում կուրծքը մտած փայտի կտորը ու գարմացած նայում Աքսորյալին: Շրթունքները կիսաբաց էին լինում, ներկվում կարմիր փրփուրով, Մակույկավարը ճոճվում էր, ընկնում ու գլուխը թխկոցով խփում տախտակամածին: Աքսորյալը շրջվում էր ու հեռանում: Տեղատվության ալիքները անառագաստ մակույկը ծով էին տանում: Որորները ճղճղալով կռվում էին ավազին ընկած խորոված ձկան կտորների համար: Ծովը կապույտ ու քնքուշ հառաչում էր ու նայում ափին: Ամառ-ձմեռ, ամառ-ձմեռ:

Մյուս երկու սպանությունները կատարվում էին ուշ աշնանը, երբ փայտն արդեն կտրած ու ջարդած էր լինում ու մի մասը շալակով կրելուց հետո սպասում էր ձյան գալուն, որ սահնակով խրճիթ տեղափոխի: Աշնանային խորհրդավոր հոտերի ու գույների մեջ կացնի թխկոցը՝ չոր ու հատու, ոչ օտարոտի էր, ոչ թշնամական, անտառին չէր խանգարում չոր փայտի հետ պողպատի խաղը: Առաջին երեք հարվածից հետո, որ վերելից չոր մամուռ ու ոստեր էին թափում, թռչունները լռում էին, գազանիկները լարվում էին ու ականջ դնում, թփերը անշարժ տազնապում էին մի պահ, հետո գույնզգույն հեռվում մի կաղնի ներողամիտ ճնչում էր ու անտառը վերադառնում էր իր խորհուրդներին, խորհրդավոր շշուկների մեջ անտեսելով փայտահատի աղմուկը: Աշխատում էր առանց շտապելու մոլուցքի. ծառ կտրելը ծանր գործ էր, որը չէր կարելի թունավորել ավելորդ տքնությամբ, եւ հանգիստ առնելու դադարներին երկար շրջում էր անտառում: Աշունը՝ խորհրդավոր ու ջերմ, ամեն ինչին ժամանակ տալիս էր. տանձին ու խնձորին, հոնին ու սալորին, ընկույզին ու կաղիին, իսկ գլեռի ժամանակը ձգում էր մինչեւ առաջին սառնամանիքները: Այդ օրերին էլ, ձյունից առաջ, բայց եղամի հետ, խփում էր մի վարագ ու մի եղջերու: Որքան էլ դիպուկ կրակեր, վարագը հասցնում էր խմբառւ, եղջերուն՝ տնքալ, եւ երբ դանակի տակից արյան շիթը հորդում էր եղամով փշաքաղված գետնի վրա, հողը սարսուռում էր կարմիր գոլորշու տակ: Միսը կտրատում էր ու աղ դնում ավելի շատ համի համար, քան պահպանելու. չի փչանա, ձմեռ է արդեն, եւ բուխարիկում կրակ է վառվում: Ձմեռ է: Պաղ: Կրակ, միս, անշարժություն: Տարին շրջվում է որջում, եւ գարուն է գալիս: Ամառ-ձմեռ, ամառ-ձմեռ:

Այս էր Դժոխքում սահմանյալ շուրջանակն այն քսորյալ ոգու, որ ժամանակին մահկանացու մարդ էր եղել ու ապրել հայաշատ Երեւան քաղաքում եւ մահացել Փրկչի մարդեղությունից հետո 1993 թվականի հունվար ամսի 17-ին ցրտից, ցատումից ու աղիքների գալարումից:

քայլ դեպի ամերիկա

Վահան Իշխանյան

ամերիկա երեք շաբաթով. հիանալի է: խնդրեմ վահան իշխանյանին: ինքն է: սա usaid կազմակերպությունից է, որը զարգացնում է... չեմ հիշում ինչ է զարգացնում, եւ այդ նպատակով ամերիկայում դասընթացներ են անցկացնելու 3 շաբաթով, ձեր թեկնածությունը... դեռ խելքս գլուխս չի եկել: սիրտս խառնում է: միտքս գնում: գլուխս ֆռում: 3 օր առաջ զանգ տային, եւ ինձ արժանավոր մարդ կզգայի, չէի խմի, եւ երկու օրը քաշ չէի գա, հետ տված չլինեի, պատշաճ փաստաթուղթ կլրացնեի: մեկ օր ժամանակ են տալիս, գիտեն, որ գերեզմանից էլ հանեն, ասեն՝ ամերիկա գնալու համար 1 ժամում 4 էջ լրացրու, կլրացնեի: թեեւ անկեղծ ասած հիմա էնքան էլ խեղճ չի, ինչ երազանք ունեի, նյարդերս մաշացրին, դառա փալաւ: գոնե 3 տարի առաջ լիներ էս 3 շաբաթը...

փաստաթուղթը mail-ով եկել է: հիմա լրացրու: կոմպի էկրանին գծիկը թփթփում է: սրտիս համաչափ: թե մի քիչ դանդաղ: պուլսս ու գծիկի թփթփոցը չեն համընկնում, դե որոշի՞ որն է արագ: համբերություն: կոմպը հատուկ էնպես են հնարել, որ հարբեցողները չօգտվեն: ուզու՞մ ես կոմպով աշխատել, խմելը թող: հնարողի հերը հարբեցող է եղել: հորից վրեժ լուծելու համար է հնարել: անուն ազգանուն հայրանուն, նույնը անգլերեն ըստ անձնագրի, անձնագրի համարը: լուրջ, ամերիկան ռեալ է: հասցե, ծննդյան թիվ, սրանք հեշտ են: հիմա տես՝ տեղեկություն աշխատանքի մասին: ինչ գրեմ: կազմակերպության /հիմնարկի/ անվանումը: չգրե՞մ հելսինկյան կոմիտե: ես բաժինն էլ լրացվեց:

նշեք այն դասընթացները, որոնց կցանկանայիք մասնակցել: ի՞նչ դասընթաց, ես դասընթացի, պարզվում է, չեմ ուզում մասնակցել: որեւէ դասընթացի: 35 չէ 36 տարեկանում ինձ դասընթաց են դնում տալիս: կյանքս մաշել եմ ես քաքի մեջ, հիմա՞՞ դասընթաց: դասընթաց են ժամանակ առաջարկեիք, մոսկվայի համալսարանը դեմս փակեցիք, էն քաժը ոնց էր ընկել մատյաններից բացակասներս հաշվում, որ իրեն ուղարկեն: ու եղպես կյանքս հոսեց՝ հայրենիք, անկախություն, կգբ, ռուզան, ամուսնություն, ներող, երեխա, ընտանիք, Էկոլոգիա, 88թիվ, մաշտոց, գոյապայքար, երիտասարդական միություն, հեշտոց, անկախություն, զինվոր շաբաթաթերթ, ներող, երեւանյան պորտվեյն, ներող, աղքատություն, ներող, գանգոսկրի կոտորածը, շողուլի գալու հույսեր... ամերիկա 3 շաբաթով:

նշեք դասընթացներ ա) մամուլի դերը ընտրությունների ժամանակ, մամուլի հրապարակումների ազդեցությունը ընտրությունների վրա, մամուլը որպես քարոզչության եւ հակաքարոզչության բնագավառ: բ) ամն-ի տարբեր նահանգներում... եւ այսպես շարունակ... ****եմ ձեր ամենամեծ դասընթացը: թվարկեք այն բնագավառները, որոնցում կցանկանայիք ձեռք բերել առավել հմտություն: անկեղծ, ո՞ր բնագավառը՝ երեւի ապրելու հմտություն, ծուլությունն ու վախն հաղթելու հմտություն: սրանք ինձ կուղարկեն պսիխոթերապեւտի մոտ: ոչ ամերիկայում, էստեղ իրենց գրանտով օֆիս բացած մի ֆուցնի մոտ: տեսական հմտություն՝ անհատների, համայնքների, կազմակերպությունների եւ խմբերի կողմից իրենց քաղաքացիական պարտավորությունների կատարման եղանակները... գործնական՝ որոշակի թեկնածուի վերաբերյալ լրագրողի տեղեկություն հավաքելու մեխանիզմը... այն ուղիները, որոնցով ոչ կառավարական կազմակերպությունները եւ քաղաքական կուսակցությունները մամուլի միջոցով կարող են իրենց շահերը պաշտպանել: ոնց որ մի բան ստացվեց: ու էսքանից հետո էլ, մեկ էլ ասեն՝ գիտեք, ձեր թեկնածությունը մենք հավանաբար հաջորդ անգամ հաշվի կառնենք:

աննան ոչինչ, վատը չի: բարեւ ձեզ, ես վահան իշխանյանն եմ: աա՛ բարեւ, ես ձեզ թերթիկը տվել եմ, այնպես չէ՞: այո e mail-ով ուղարկել եք: լրացրե՞լ եք: այո, դիսկետով բերել եմ, գիտեք, պրինտերիս ներքը վերջացել էր... ոչինչ, իսկ նկա՞րը: փաստաթղթի մեջ է: իսկապե՞ս, դե նստեք այստեղ, սպասեք, փորձենք բացել:

յանկիական բոլոր գրասենյակներում մեկը սեւ բաճկոնով, ձեռքի մեջ բանալիների խուրճը պտտեցնելով, դավուլի իր առանցքի շուրջը պտտվում ու կատակում է: վարորդն է: կատակում է հատկապես միակ յանկի ոչի հետ՝ հը քյաբաբ հ՞ոթ: վաղիկ, Լու տի դոյոշ, քաք սքազա՞՞՛ քյաբաբ ուտե՞ս, հի հի հի: մյուսները միշտ ողբեր են Էլբրանի առաջ լուրջ չխկացնում են: դրանք ակնոցով են, կարճ կտրած մազերով: միայն ժպտում են վաղիկի եւ յանկի կատակի ժամանակ ու չեն ամուսնանում: icq-ով յանկի փեսացու են փնտրում, նկարն են ուղարկում, որ յանկի փեսացուն իրենց հավանի, սիրահարվի, գա եւ երկրից տանի:

գիտեք, մեր կոմպյուտերը չբացեց դիսկը, հավանաբար նկարը չի կարդում, կարո՞ղ եք mail-ով ուղարկել: ափսոս նկարի վրա եղքան չարչարվեցի, բայց ոչինչ, ֆորմատը կփոխեն հավանաբար mail-ով հասնի: կուղարկեմ, իսկ հետո՞, հետո մենք ձեզ հավանաբար չորեքշաբթի կիրավիրենք հարցազրույցի, թեկնածուները շատ են, մոտ 60 հոգի, որոնցից 16-ը պետք է ընտրվեն: լավ: էստեղ ամենաշատը նկարս է դուրս գալիս: խելք ունենային, մենակ նկարս կուզեին, իսկապես լավն է, չէ՞: լավ, մնում է սպասենք մինչեւ չորեքշաբթի:

երեքշաբթի: արդեն մեկն է լինում, չեն գանգում, երեւի էլ չզանգեն: բայց չէ: լավ է, ինձ զսպեցի, ամբողջ օրը ոչ մի բաժակ: այնուամենայնիվ, փոքրիկ հույսս արդարացվեց: վահա՞ն, ես ու՞ր ես, քեզ ամերիկյան հիմնարկից գանգ տվեցին ու մի քանի անգամ խնդրեցին, որ վաղը 5-ին 20 պակաս անպայման Էստեղ լինես: հա, լավ: բայց, մամ, մի բան ասեմ՝ Էնքան էլ ամերիկայի հավես չունեմ: ինչ ես խոսում, այ տղա, անընդհատ ասում էիր, բոլորը գնում են արտասահման, ես չեմ գնում: ասում էի, բայց հիմա չգիտեմ, Էնքան էլ ցանկություն մեջս չկա: ինչ ասեմ:

դուռը ծեծում են: ես ո՞վ է ես գիշերվա կեսին: դուք ձերբակալված եք: ինչի՞՞ համար: ձեռքերս արագ շղթայեցին: դեմք չի ջոկվում: միջանցքը խավար: չրխկ-չրխկ: սարսափ: թողեք ինձ, ես ոչինչ չեմ արել: հրում են: փոքրում եմ գետնին: չրքխկ-չրքխկ: դուռը փակ է: խուցը սարսափելիորեն լուսավոր է: չէ, չեմ ուզում շուրջս տեսնել, որ տեսնեմ, ուրեմն՝ վերջ, պրծում չկա: միայն դուռը: երկաթ, ծանր: թիկունքս ոնց է այրվում: ետեւից հայացքներն են այրում, լա՞մպն է, քանի մոմանո՞ց է: ոչ մի դեպքում ես մի նայիր, մի նայիր: բաց արեք, գոռում եմ, ու բռունցքներս կոտրվում են դռանը: երբեք կրկորդիցս էսպիսի ծայն դուրս չի եկել: ես ի՞նչ ոռնոց եմ հանում: բայց ինչի՞՞ եմ չոքել: կարծես քացու տակ ընկած լինեմ: անկողինս ջուր: թիկունքս սառը քամի: լույսը չի բացվել: էլ վերջ, էլ քնելն անհնար է: ժամը 5 անց կես է: երկու ժամից լույսը կբացվի:

բարեւ ձեզ, խնդրեմ, համեցեք: մեկը անան է, գիտեմ: մյուսները՝ ծանոթացեք՝ տեղացի եւս մի դուշ, երկու դեռատի յանկի՝ female եւ male: երեք դուշն էլ վատը չեն, ես կասեի՝ մեկը մեկից լավն են: անունները չհիշեցի, դիմացո մարդ չեն: աստված են: որոշելու են դրախտ թողնեն թե արծախն չէ: մտքովդ չի անցնում անուն հիշես, մենակ հանկարծ մի հարցի չկարողանաս պատասխանել, կամ հիմարություն դուս չտաս: թարգմանում է յանկի դշին՝ պատմեք անցյալ տարվա եւ ավելի շատ այս տարվա ձեր աշխատանքի մասին: ինչ պատմեմ, ինչ եմ արել, որ պատմեմ: խոսիր, շատ խոսիր՝ ես չնշեցի փաստաթղթում, որ պատրաստվում եմ թերթ հրատարակել, քանի որ այն ուղարկելուց հետո իմացա, որ թերթը գրանցվել է: really? այո, երեւանյան ճեպընթաց: ի՞նչ թերթ է լինելու: օրաթերթ, պետք է այնպես անեմ, որ շահութաբեր լինի, հակառակ դեպքում չեմ հրատարակի: իսկ ինչպիսի ուղղվածություն պետք է ունենա: հասարակությանը հետաքրքրող տեղեկատվություն: փորձելու եմ հարցումների նման բան անցկացնել, որ որոշեմ, թե ինչպիսի տեղեկություն է մարդկանց հետաքրքրում: ես մասը լավ անցավ: 99 թիվն էլ ոչինչ: բայց յանկի դուշը անընդհատ՝ իսկ այժմ ինչով եք զբաղված ու չի ժպտում: այս օրերին նախագիծ եմ գրում իրավապաշտպան տեղեկագրի գրանտ ստանալու համար: քաջն եմ ընկել, որ դուշը լուրիզվեալում է ծնվել, ես երեւանում: Անցյալ տարի PEN ակումբի մրցանակն եմ ստացել լավագույն պատմվածքի համար: ինչի՞ մասին է: դժվար է ասել, անգլերեն տպվելու է, անպայման ձեզ կտամ: էլ: պապլավոկում մեկը եկել նստել էր կողքս, տեսակետներ էր ասում: մեր քրՖեցի, շոկ խփեց, աչքիս տակը բացեց: ամբողջ գիշեր պահել են ոստիկանությունում: արյունը բլթալով հոսում էր վրայով: առավոտյան կողմ հիվանդանոցում կար դրեցին ու ասացին վիրահատման կարիք չկա: նոր հիշեցի, որովհետեւ մինչեւ հիմա բերանս, որ բացում եմ ծնոտս չեմ: պապլավոկում մերուժի հետ տիպի պատմություն ունեցա: հարբած ոռիս ծակը կորցրել էի, ասացի մերուժ ինչի՞ ինձ գործի չես ընդունում: ընդունեմ, բայց փող չեմ կարող տալ: խի դու պիտի հեռուստատեսություն ունենաս, ես չունենամ: որովհետեւ ես մերուժան տեր գուլանյանն եմ: ասի դու ... հա մոռացա ասեմ տպագրել եմ մամուլ եւ իրավունք տեղեկագրում 27-ի դեպքերի վերաբերյալ մամուլի հրապարակումների անալիզ: իսկ ինչպիսին եք պատկերացնում լրատվության դերը քաղաքացիական հասարակության կառուցման մեջ: արագ պետք է պատասխանել՝ առանց իրավական համակարգի լրատվությունը լուրջ դեր չի կարող խաղալ: միմյանց նայեցին ու՝ դուք որեւէ բան ունեք մեզ ասելու: ինձ համար շատ անակնկալ էր այս հրավերը: երբ ծանոթացա ծրագրին շատ ... չէ ուրախանալ չասեմ: շատ հավանեցի: շատ լավ մեք այս շաբաթվա մեջ ձեզ կզանգեք, ցտեսություն: ցտեսություն:

իսկ ասելու բան ունեմ, շատ ունեմ: օրինակ ուզում եմ ասեմ, որ փոքրուց զգվել եմ քննություններից: դպրոցում որ դաս էին հարցնում, սիրտս սեղմվում էր: համալսարանն ավարտելուց հետո 86 թվից քննություն չէի տվել, ասպիրանտուրա չզնայի, որ քննություն չտամ, բայց ամերիկա գնալու համար քննություն կտամ թեկուզ մոր **ից հենց նոր դուրս եկած յանկիին:

24 փետրվարի, 2000թ.

Բանաստեղծություններ
[Տեղան Գրեալ](#)

Կենսագրություն

Փախչում են ձեռքերս - կանեփի առավոտ,
ինչպես գրպանահատի փոխառած ոտք.
ջրհեղեղը չունի հանգստի աթոռ -
փախչում են աչքերս - շների թախիծ:
Գլխատառա՝ պոետ, կոշիկներս՝ վայրենի-
առավոտյան այտերիս նորից արցունքներ գտա,
իսկ դու ասում էիր՝ էլ չի կրկնվի.
փախչում են ոտքերս քաղաքից դուրս,
ինչպես պարանոց ծիածանի:

Պոեմ պատի տակ...
(իմպրովիզացիա)

Ես
հասկանում եմ
պատին հենված հարբածի թախիծը -
մի քիչ հետո պատը կվերջանա ...

Ամենավերջում

Ինձ օրորիք ամպերի մաքրությամբ,
որ արթնանամ, ինչպես տերեփ առավոտ
եւ փրկվեմ մատով ցույց տրվելու ջրհեղեղից...
Չին կյանք, հին սեր, հին կոշիկ բղավելով՝
հեռանում է գարունը քաղաքի աչքերից -
ես հո ի ծնե տխուր չեմ եղել...
Կապրեմ քո մասին գետեր խմելով,
որ չցամաքի հիշողությանս առուն -
մեխի բացած անցքի չափ հույս տուր...
Կսպասեմ քարերին հավասար,
կապրեմ փողոցի տրամադրությամբ,
երբ մահանամ -
իմ ետեւից ափսեսներով շուր ցփնիր,
որ բարի վերադառնամ քեզ մոտ...

Նայիր Ներս

Սրիչե դիալոգներ կհուշեմ դեմքիդ,
որ նախանձես թեւերիս տակ ապրող թռչուններին -
եւ աչքերիդ տուշը կսկծացնի գիշերներդ...

Կրծկալիդ մեջ մոծակներ կաճեցնեմ,
որ կարոտես դեմքիս -
ձեռքերիս վրա թաքտացող բանաստեղծություններիս...

Կթաքնվեմ շրջագգեստիդ մեջ,
կեսօրին երագիդ կգամ -
կվառեմ խավարը ձեռքերիդ,
որ կանչես՝
էլ չեմ անի, ճչաս -
ու խլանա, թափառի ձայնդ
խրիխնչներիս կողքին -
որովհետեւ արեւը ընկել է աչքերիս մեջ,
եւ սերս հիմա
անկյուն է կանգնած:

Չեռախոս-հեռախոս

- Ես լսել եմ՝ արյուն կա դանակի մեջ:
- Ես լսեցի՝ հացը հայրիկ ունի՞:
- Ես էլ՝ մեր տունը գոբուկի մեջ է:
- Իսկ ես՝ ծամը կոշիկ չունի՞:
Չեռախոսը որ կախես,
արտացոլումդ կանհետանա
ապակիների միջից:
- Ես լսել եմ մանկություն:

Օղակ-կոճակ

Ինձ տուր աստղը առավոտի -
քեզ պահիր շապիկը ծերտոտ:

ստորացնում էին տիկնոջը: Ստորացուցիչ էր ամուսնու՝ միայն սեփական հոգսը հոգալու պատրաստակամությունը. «Չես ուզում, դու մի անի, ինչ կա»:

Կինը հրեք-բացեց ննջարանի դուռը: Լիալուսնի գունատ շողքը ընկել էր մահճակալին, տարածվել հատակին պատուհանի ուրվագծով: Ամուսնու ոտները դուրս էին ցցվել ծածկոցի տակից, սեյակը լցված էր նրա արտաշնչած օդով: Քնել էր ձեռքը աճուկին, երկտեղանի մահճակալի հենց կենտրոնում, թեթեակի հպումից կարող էր արթնանալ, վրա պրծնել սարդի պես: Կինը, որքան հևարավոր է զգույշ, սահեց վերմակի տակ, բայց միեւնույն է, ցանցը ճկվեց, ճռռաց, ասես հոգոց հասեց մարմնի ծանրությունից: Սուսանան շունչը պահեց, հայացքը շրջեց ամուսնու կողմը՝ քնած էր: Բայց հոնքամեջը կամաց-կամաց խոժոռվում էր, մեկ էլ անակնկալ ժպիտով ձգվեցին շուրթերը: Ուրեմն քնած էր ձեւանում, սպասել էր: Նա սովոր շարժումով երկարեց ձեռքը, «ուտե՛մ քեզ»,- շնչաց խռպոտ, համարյա անլսելի: Ինչ նա ասում էր այդ պահերին, կարոտի ու սիրո խոսք չէր կնոջը ուղղված, անհասցե, անհասկանալի մրթմրթոց էր օդի մեջ: Վրա եկավ, նրա մազոտ թեւերը աքցանեցին կնոջը, կառչեցին ուսերից, գաղջաբույր մարմինը ծանրացավ, տարածվեց: Գնա՛ց:

Առաջ ինչ հեշտ էր ստացվում,- մտածեց Սուսանան,- բնական ու հեշտ: Առա՞ջ...: Թե՞ ցանկությունն էր շատ, դրանով սքողվում էր ամեն ինչ: Ինչ-որ բան խախտվել է մեջը, կոտրվել: Հիստերիայի վիճակները գումարվել են, գումարվել են, գուցե՝ անդա՞րձ: Գուցե էսպե՞ս են ֆրիգիդ դառնում... Կինը, թեեւ են զլխից տրամադիր չէր, ուզեց փորձել-մասնակից լինել, իրենը ստանալ: Թեկուզ առանց սիրո, թեկուզ չուզելով՝ վերջացնելն ավելի լավ է, քան սոսկ տրվելը: Անպայման գերադասելի է: Բայց դրա համար պետք էր լրացուցիչ ազդակ: որոշ մտապատկերներ, հաճելի հուշ կամ պատրանք: Եղ հևարքի սաղմերը գալիս են, է՛, արբուկքի ժամանակից: Կինը պատկերացրեց, իբր պարոն Դ-ն է ամուսնու փոխարեն, նրա չորչորուկ մարմինն է սեղմված իրեն, նրա ոսկրոտ մատներն են սահում ազդրերի երկայնքով: Նրա քմահաճ անականությունն է շոյում ներքը: Ամուսինն իսկույն որսաց փոխադարձ խլրտումը, շարժումները դարձան ավելի կոպիտ ու կտրուկ, ինչը, օգնելու տեղակ, միայն խանգարեց: Գունը շրջեր երեսը, կամ այդպես չհեւար... Չէ, չեղավ: Պարոն Դ-ն այդ տեմպին ու վարզին հարմար չէ: Նա ուրիշ է, գրեթե անզգալի, չցավեցնող, դանդա՞ղ... Հաջորդ պահին կնոջ պատկերացումներում կարճամորուք, կարճահասակ ու պինդ երկրաբանն էր, նրա մեղրագույն աչքերը, նուրբ բերանը: Այ, սրանը մոտավորապես նույնն էր, ինչ ամուսնունը, թերեւս ավելի...: Նրա անսովոր վարքը այնպես հուզում էր ժամանակին, ցանկալի էր, բայց... Կարծես ինքը նեղացած է նրանից: Հա էլի, նեղացած է եւ չի ուզում, անգամ մտովի... Լավ, ահա մեկ այլ հուշ-պատկեր, այս անգամ՝ անվրեպ: Նախկին սերը, պաշտամունքը, որ փորձանքի պես էր... Բայց դա եւս չաշխատեց: Են հավեսի հետքն էլ չկար: Ասենք՝ երկու մարմին միաձուլված, հետո՞ ինչ: Ասենք թե ձեռքը, ոտքը, ուրիշ բան - անցած, անհեթեթ, անզրգիռ պատմություն: Իսկ մինչեւ վերջերս այդ պատկերներից յուրաքանչյուրը կարող էր հաջողությամբ ավարտին հասցնել գործը, ձեռքից բռնած տանել ու հասցնել: Թվում էր՝ այդ հարցում ուզել-չուզելը իր կամքից է կախված, մարմինը հպատակ է, ճկուն, կառավարվող: Պարզվում է՝ արդեն ոչ: Մյուս կողմից էլ ամուսինն է անընդհատ շտապեցնում. «Շու՛տ արա, դավա՛ր...»: Սահմանագլխին է, չի սիրում ձգձգել, չի կարող: Նա ուզում է իրենը միանգամից ստանալ, ուզում է լիցքաթափվել, քնել:

Դռնեղուռ, մի վերջին ճիգով կինը պատկերացրեց անդեմ-անանուն, անծանոթ մեկին, մի տղամարդու: Որպես զուտ ֆիզիկական մարմին: Չէ, ինչու, հոգեւոր ենթադրյալ ինչ-ինչ արժանիքներով: Նա: Նա՛: Ինքը նրա դեմ քեն, մեքը կամ պարտավորություն չունի: Նրա դեմ ինքը մաքուր է, ազատ պայմանականություններից ու դեպքերից: Այդ մարդը կատարյալ ճշգրիտ, խորը, տեղին հպումներով, փաղաքշանքով վերցնում է իրեն, վերցնելու էր... բայց ամուսինը արդեն տեղի տվեց, չդիմացավ: Վերջ: Հիստերիայի դառը, զոլ ալիքը կանգնեց կնոջ կոկորդին: Չուր խառնվեցի, մտածեց, էսքան ձգեցի: Իզուր: Արագ վերջացնե՛ր գնար: Ոչինչ, թող իմանա՝ ոչ թե կորցրել եմ հետաքրքրությունս ու չեմ ուզում, այլ ի՛նքը, ինքը չի կարողանում բավարարել: Այ թե ուր հասցրին տարիների հիմար վեճերն ու օտարացումը: Վատ բանից ո՞նց կարող է հանկարծ լավը դուրս գալ: Թող իմանա... Բայց ամուսինն արդեն շուռ էր եկել, քնել, այս անգամ հանգիստ, խաղաղ քնով: Շնչառությունը մակերեսային էր, թեթեւ: Լսվեց խոմփոցը: «Բնության մեջ էլ այսպիսի երեւոյթ կա,- հիշեց Սուսանան,- կոչվում է «կապված ջուր»: Բույսը չորանում է, այնինչ հողում շատ ջուր կա քիմ. միացությունների ձեւով, բույսը չի կարողանում վերցնել»:

Նա չարացած վեր կացավ, գնաց զուգարան, հետո լվացվեց, հետո մոտեցավ պատուհանին, սկսեց լիալուսնին նայել: Լուսինն աղավաղված էր երեւում, ասես մի քանի սկավառակ անկանոն դրված էին իրար վրա: Երբեմն այսպես կտրուկ վատանում էր տեսողությունը: Աստված չանի, մեկ էլ տեսար...

Ինքնակարեկցանքի բարձրացող արցունքի միջից կինը, սակայն, կարողացավ նկատել սալարկ փողոցում լայտերասյանը հենված տղամարդուն: Ցիլիկորով էր, օձիքը բարձրացրած երկար վերարկուով: Ըստ երեւոյթին նա էլ պատուհանին՝ իրեն էր նայում: Չէր գնում: Կնոջ մտքով անցավ, թե նա, ինչ իմանա, էդ խորհրդավոր անծանոթը գուցե նա է՝ իր անդեմ-անանուն տղամարդը, որին քիչ առաջ փորձում էր պատկերացնել, նա է՝ իր թաքուն, ենթադրյալ արժանիքներով, որ այնպես ճշգրիտ ու տեղին, խորը փաղաքշանքով...

Պատմվածքներ

Կարեն Մխիթարյան

Էջ 1 2

Տխուր պատմություն

- Դուք վախենում եք ապագայից:

- Ոչ, բայց անցյալը հիշելիս երբեմն փշաքաղվում եմ:

Կուրտ Վոնեգուտ՝ «Նախաճաշ չեմ պիտոների համար» Եթե ինձ հիշողությունս չի դավաճանում /իսկ վերջերս դա հաճախակի երեւոյթ է դարձել/, այս փոքրիկ ողբերգությունը կատարվեց 1993թ. ձմռանը: Այն ոչ մի կերպ չի կարող համեմատվել նույն ձմռանը տեղի ունեցած բազմաթիվ այլ աղետների հետ, բայց անպայման պետք է ներկայացվի ձեր ուշադրությանը, քանի որ չեմ հոգնի կրկնելով՝ անցյալը հիշողի մեկ աչքն է կուրանում, իսկ մոռացողի՝ երկու:

Թշվառականը, որի մասին պետք է պատմեմ, կրում էր ժոռ անունը: Ակատած կլինեք, որ անունը հաճախ պարտավորեցնում է. բոլոր ժոռերը խմում են: Եթե դրան գումարենք նաեւ այն, որ նրա երկու հնարավոր տատիկներից մեկը ռուս էր, հուսով եմ՝ ավելորդ կլինի նշել, որ ժոռը հարբեցող էր: Մի ոչ այնքան գեղեցիկ օր, երկու խումհարների ճիշտ մեջտեղում, նա զգաց ինֆլյացիայի ամբողջ դաժանությունը եւ որոշեց շշտը հանձնելուց ստացված ամբողջ գումարը նվիրաբերել որեւէ մնայուն եւ արժեքավոր ապրանքի ձեռքբերմանը, որպեսզի մինչեւ խոր ծերություն նայի դրան եւ հիշի, որ ժամանակին ինչ-որ գումար է ունեցել: Մտաւկա տոնավաճառում շատ արագ պարզվեց, որ ունեցած կապիտալը կարող է բավականացնել միայն դատարկ շշտ գնելուն, ընդ որում՝ զգալիորեն ավելի քիչ, քան հանձնել էր: Միառժամանակ նա շփոթված շրջում էր ամետրական շարքերով, իսկ ինֆլյացիոն պրոցեսը շարունակում էր խորանալ: Բայց ճակատագիրը երբեմն ժպտում է խիզախներին. հանկարծ ժոռը տեսավ արտաքինից հողի կին հիշեցնող մի տղամարդու, որը ոչ մի կերպ չէր կարողանում իր դիմաց շարված ճոքավոր կոշիկներից գեթ մի գույգ վաճառել՝ ֆանտաստիկ էժան գնով: Շուտով պարզվեց անհաջող բիզնեսի գաղտնիքը. բոլոր ճոքավոր կոշիկները աչ ոտքի համար էին... Ընթերցող, ինչ ասես Յայաստան չի եկել մարդասիրական օգնության հետ:

Ղեկավարվելով «Եթե ձրի են տալիս, ամենամեծը վերցրու» կարգախոսով՝ ժոռը գնեց Տորք մագեդին վայել մի Salamander եւ վերադարձավ ռուս տատիկի տուն, որպեսզի միասին որոշեն, թե ինչ անեն հետագայում: Չկարողանալով գնահատել ինֆլյացիոն պրոցեսի ողջ ծանրությունը՝ զայրացած տատը ժոռի նվաճումն անվանեց «Ցուսիմայից հետո մեծագույն հիմարություն» եւ արտաքսեց նրան տնից: Խնդրի ծանրության տակ կքած ժոռը իր մոլոր քայլերն ուղղեց Բիժու մոտ, քանզի այդ տարիներին Յին գվարդիայի տղաներից միայն վերջինս էր պատասխանում պատասխան չունեցող հարցերին: Տեսնելով, որ ժոռի թեւատակին ոչ թե շիշ է, այլ ինչ-որ անհեթեթություն, Բիժեն հանգամանորեն վերլուծեց ժոռի բոլոր տատերի բարոյական կերպարները եւ երկու տոպրակ դատարկ շիշ տալով՝ ուղարկեց խմիչքի: Մինչ հյուրին վայել տեսք ստացած ժոռը կվերադառնար, խնդրին արդեն լուծված էր: Կարճատեւ հաշվարկից հետո, քրոմ-նիկելե պարույրի մի որոշակի հատված, համապատասխան էլելտրամեկուսացմամբ, տեղավորվել էր կոշիկի ներքանում, իսկ կրունկի վրա անջատիչ էր տեղադրվել: Այդ երեկո կարելի էր մոռանալ Բիժու բոլոր խորհուրդները, բացի մեկից. «Ժոռ, 12 վոլտից ավել չտա՛ս: Եթե տվիր, սեփական խաշի հոտից ես զարթնելու...»: Յիմ արդեն դժվար է պարզել՝ մոռացել էր ժոռը, թե՞ հումանիտար կրթություն ունենալով՝ կարծել էր. ինչքան վոլտերը շատ, այնքան լավ:

Մի բան է պարզ. եթե Երեւանում մեկը կա, որ զգացել է իսպանական ինկվիզիցիան, դա ժոռն է:

Յովհարային անջատման ժամ էր, երբ նա հարբած տուն վերադարձավ ու, հագնելով Բիժու ստեղծագործությունը, միացրեց այն հուսանքագուրկ ցանցին եւ քնեց: Երագները իրականության արտացոլումն են, ընթերցող, բայց ո՛չ հայելային, ո՛չ անմիջական արտացոլումը: Յմուտ հոգեվերլուծողը կասի, որ երագի նախաբանի համար հիմք հանդիսացան Բիժու վերջին խոսքերը. «Իսպանական կոշիկ չդառնա քեզ համար: Դա ինկվիզիցիայի ամենացավոտ գործիքներից էր»: Երագում իսպանական ինկվիզիցիան բացահայտել էր ժոռի աթեիստական հայացքները եւ պատրաստ էր այրել նրան խարույկի վրա, ժաննա դ՛Արկի եւ Յան Յուսի հետ միասին, առանց որեւէ հարցաքննության: Ներկաներից միայն ժաննա դ՛Արկն էր մի քիչ հայերեն հասկանում եւ ժոռի «Աթեիստը ե՛ս չեմ, Բիժե՛ն է» ճիչը լսելով՝ ուշադիր նայեց նրա սարսափահար աչքերին եւ ասաց. «Բայց գուցե՞ դա պետք է Ֆրանսիային»: Իսկ Յան Յուսը ընդհանրապես ոչինչ չէր հասկանում եւ անընդհատ գոռում էր. «Օ՛ sancta simplicitas!..»: Անթողաֆեն ընդհանրապես անտանելի բան է, իսկ այստեղ նաեւ սարսափելի նեղվածք էր. երեքին էլ տեղավորել էին մի խարույկի վրա, եւ այրվում էր ժոռի միայն աչ ոտքը...

Յովվերգություններ չսպասեւ ինձնից, ընթերցող: Այս դաժան եւ տարօրինակ պատմությունների համար հիմք են հանդիսացել իմ եւ իմ ընկերների դաժան ու տարօրինակ տարիները: Երկրորդ աստիճանի այրվածքներով, իսպանական ինկվիզիցիայի ճիրաններից հրաշքով փրկված ժոռը, թե՛ այրված, թե՛ սառած ոտքերին կաղալով, մի կերպ հասավ հեռախոսին եւ շտապօգնություն կանչեց:

Տարիներ են անցել այդ օրից, կամաց-կամաց մոռացվում են թե՛ չարը, թե՛ բարին, բայց ամեն անգամ, երբ քնած ժոռը երագում շշնջում է. «Ժաննա ջան, Ֆրանսիան ի՞նչ կապ ունի...», նրա ռուս տատը վախեցած խաչակնքում է եւ, համենայնդեպս, դուրս հանում հոսանքի ապահովիչը:

Էջ 1 2

Ռագմիկի ուղին

Ծղրիղը երգ չասաց՝
Ինչքան է նա ապրելու:
Ճապոնական պոեզիայից

Անելանելի վիճակներ չեն լինում: Սրանում համոզված էր նաեւ հանգուցյալ պապիկս: Ավելի քան արժանավոր անձնավորություն լինելով՝ նա ամբողջ կյանքում հետեւեց ճապոնական սամուրայների «Բուսիդո» /Ռագմիկի ուղի/ կողքսին, առանց ճապոնիայի տեղն իսկ իմանալու: Դժբախտաբար, երբ իմ կյանքում եկավ վճռական որոշում կայացնելու ժամանակը, պապիկս արդեն 50 տարուց ավելի էր, ինչ Բուսիդոյի ասած՝ վերամարմնավորվել էր, ինձ թողնելով ընդամենը մի փոքր ծոցատետր՝ կցկտուր գրառումներով: Յիմականում դրանք պատվիրաններ էին. «Մի՛ խմիր կամ՝ եթե խմում ես, հետը մի բան կեր», «Թունդ խմիչքներից դեպի թույլ խմիչքներ անցումներ մի՛ կատարիր», «Յարբած ժամանակ արեւի լոզանքներ մի՛ ընդունիր»... Ապրած տարիներն ապացուցում էին, որ պապը կանխատեսում էր թոռանը սպասող բոլոր արհավիրքները, այնպես ու՛մ երեւակայությունը թույլ կտա այսպիսի գրառում անել. «Որքան էլ զզվելի լինեն ձակնդեղի սպիրտն ու քացախը, նրանց խառնուրդն ավելի զզվելի է»:

Կարմայի պահպանման օրենքի անողոքությունը եւ զգացել եմ սեփական կաշվիս վրա: Յրաշալի, թեթեւ կարմայով պապ ունեցողի կյանքը, հասկանալի է, պետք է մղձավանջային լիներ: Ավելին կասեմ, դա ոչ թե կյանք էր, այլ անընդհատ դեգերումներ ճահճային մառախուղներում:

Ինչեւէ, արդեն վաթսուների մատուցներում էի, երբ, չգիտես ինչու /գուցե կարմայի սպառվելու հետեւանքով/, մառախուղը ցրվեց եւ ես հայտնաբերեցի ինձ խոհանոցում նստած, բաժակը ձեռքիս, ինչ-որ ժրաջան կնոջ հաճոյախոսություններ անելիս: Շուտով պարզվեց մի բան, որից ես ամենաշատն էի վախենում՝ դա իմ կինն էր...

Ճիշտ էր ասում Սյորեն Կյերկեգորը. «Կյանքը քառս է, իսկ մեր նպատակն է այդ քառսում կարգավորվածության կղզյակներ

ստեղծել»։ Բայց ես գնալով ավելի ու ավելի էի համոզվում, որ այս կարգավորվածության կղզյակը փոքր է երկուսիս համար... Կնոջս ուշադիր նայելով՝ ես հասկացա, որ նախորդ կյանքում նա եղել է հնդկահավ, իսկ սամուրայն անկարող է ապրել հնդկահավի հետ, նույնիսկ՝ նախկին։ Կամքի գերագույն լարումով ես կասեցրի դեպի գրտակ կը ձգվող ձեռքս եւ սկսեցի մտածել։ Իսկ ճահճային մառախուղը սկսեց խորանալ... Վճռական գործողություն կատարելուց առաջ, ինչպես հայտնի է, սամուրայը պետք է յոթ անգամ շնչի եւ արտաշնչի, որքան էլ առաջին հայացքից գործողությունը պարզ լինի։

Հասկանալի էր, որ պետք էր կնոջս թրի հարվածով կիսել, ուղղակի ես, այն, չէի կարողանում ընտրել՝ լայնակի՞ կիսեմ /այդ հարվածը կոչվում է «ծիծեռնակի թռիչք»/, թե՞ երկայնակի /«չոր տերեւ» հարված/։ Ոչինչ այնպես չի ծերացնում մարդուն, ինչպես տարիները, ընթերցող... Հիրավի, եթե երիտասարդությունն իմանա՞ր, իսկ ծերությունը կարողանա՞ր... Իսկ ինչո՞վ կարելի է փոխարինել երիտասարդության ուժը, եթե ոչ ծերունական իմաստությամբ... Ու ես սկսեցի մտածել։ Վասալ է պետք։ Բոլորովին պարտադիր չէ, որ դժվարին խնդիրը սամուրայը մենակ լուծի։ Դժվարին խնդրի լուծումից առաջ սամուրայը պետք է սափրի գլխի գագաթը, բայց ես ազատված էի դրանից, քանի որ ճաղատ եմ։ Ու՞մ վասալ վերցնեմ, ու՞մ եմ փրկել այս կյանքում։ Հանկարծ հիշեցի, իմ հարեան Ռազմիկին, որին բախտ եմ ունեցել բազմակի ազատել խումհարային տանջանքներից։ Կարծես թե ամեն ինչ հաջող էր դասավորվում։ Ռազմիկին գտա մեր բակի փշատի ծառի տակ, խումհարային տանջանքներում։ Համապատասխան բուժում անցկացնելուց հետո անցա բուն գործին։ «Ռազմիկ, դու սամուրայ՞ ես»։ «Հա՛, քու ցավը տանեմ»։ «Ռազմիկի ուղին գիտե՞ս»։ «Ո՞նց չգիտեմ, ցավդ տանեմ»։ «Վասալս կլինե՞ս»։ «Բա հո թաղայինի վասալը չե՞մ լինելու, Վալոդ ջան»։ «Ուրեմն լսի՛ր։ Հիմա գնում ես իմ տուն, ու սկսում եք կնոջս հետ ինձ դավաճանել։ Ես գալիս ձեզ բռնացնում եմ ու կնոջիցս բաժանվում։ Սա հրաման է... Դու կարող ես այն բողոքարկել, բայց կատարելուց հետո միայն... Ես էլ խմիր...»։

Կես ժամ անց երկու վկաների ներկայությամբ տուն բարձրացա եւ խոհանոցի հատակին հայտնաբերեցի արյունվա Ռազմիկին, մի վիճակում, որ բռնցքամարտիկներն անվանում են «գրոգգի»։ Լացակումմած կիսս, որ գրտակով կասեցնում էր Ռազմիկի կանգնելու բոլոր փորձերը, շնչաքա։ «Վալոդ, գիտես ինչ էր ասում ես անասունը»...

Սամուրայը չպետք է դիտի մյուս սամուրայի տանջանքները, ոստի ես վերցրի խոհանոցի դանակը, որպեսզի գլխատեմ ընկերոջս։ Վերջին խոսքերը, որ հիշում եմ, կնոջս ճիչն էր. «Վալո՛ր, չանես...»։ Էլ ոչինչ չեմ հիշում, երեւի կիսս ինձ էլ էր գրտակել... Հիմա ես նստած եմ այստեղ... Այստեղ ավելի լավ է, քան մեր տանը... Թե՛ քույրերը, թե՛ բժիշկները շատ հոգատար են իմ նկատմամբ, իսկ գլխավոր բժիշկը այլ կերպ չի դիմում ինձ, քան՝ «Սենսեյ»... Իմ այս վերջին տարիներն ամբողջովին իմն են, ես եւ թաքուն հույս եմ փայփայում, որ գրառումներս չեն կորչի ու կհասնեն թոռնիկիս, որն աղջկաս պատմածներից դատելով, հիմա դեգերում է ճահճային մառախուղներում։

Ձեռքերը գրպաններում

Սհեռ Բեյլեոյան

«Թռեք, բերեք կրակ», - փորձեցի ներշնչել տելեպատիկ եղանակով։ «Մեր փետուրները խուզել են», - պատասխանեցին կարապետը տելեպատիկ եղանակով։ «Վե՛րջ», - հարցրի կարապետին, բայց ակամայից պատասխանեցի ինքս. «Սա մեկ օրվա վերջն է»։ Ափսոս, լավ օր էր, մեկն այն օրերից, երբ կայացնում ես անակնկալ որոշում, որը քեզ կլանում է ամբողջովին, մեկն այն օրերից, երբ որոշում ես 24 ժամ ձեռքերդ գրպաններից չհանել։ Դժվարանում եմ ասել, թե ինչու, բայց կարող եմ առաջարկել հետեւյալ վարկածները. 1. Երիտասարդը փորձում է ընդդիմանալ մասնկությունից պարտադրվող արգելքներին, 2. Պատանին օժանդակ է, 3. Պատկառելի արտաքինով տղամարդը ապուշի մեկն է։

Այդ օրը ոչ մեկին ձեռքով չբարեւեցի, սևավեցի առանց ձեռքերի, իսկ բնական պահանջներս բավարարելու մասին նույնիսկ չեմ ուզում հիշել։ 18: 05, Թումանյան փողոց, անծանոթ դեմքեր, սով, գլխապտույտ, սրտխառնուք, սեւ խոշոր աչքեր... սեւ աչքեր։

- Չճանաչեցի՞ր, - եւ աչքերի խավարի մեջ ժպիտ կա։ Դեմքը ծանոթ է, չնայած առաջին անգամ եմ տեսնում։ Այդպես լինում է ամեն անգամ, երբ նայում եմ գեղեցիկ աղջկա. գեղեցկությունը հարագատ է, ինքը՝ օտար։ Փորձում եմ ժպտալ, բնագոյաբար նայում եմ ոտքերին։ Հագին սեւ շրջագագեստ է, կարմիր, ձեռքի գործած սվիտեր։ Ոտքերը երկար են, թիկունքը ձիգ, իրանը բարակ, հայացքը հպարտ։

- Ի տարբերություն ոմանց, ես հիշում եմ իմ ծանոթներին, - ու աչքերը հառում է երկինք, ասես աղոթելով։ Ամեն ինչ նկատում եմ եւ ոչինչ չեմ կարողանում մտածել, որովհետեւ ա) Ուղեղս բթացել է, բ) նայում եմ կրծքերին, գ) Ձեռքերս թմրել են։ Անցողիկներն աղջկան են նայում, նա՛ ամպերին, ես՝ ասֆալտին կպած ծամոնին։

- Լավ չե՞ս, - ու դեմքիս զգում եմ շնչառությունը, առնում օծանելիքի նուրբ բուրմունքը։ Կռացել, թեք նայում է ինձ, ես ամոթխած ժպտում եմ։

- Հարբա՞ծ ես, - եւ թեւանցուկ անելով օգնում է անցնել փողոցը, հետո տեղավորում Կարապի լճի նստարաններից մեկին։

- Ո՞նց ես, - ու թաշկինակով սրբում է ճակատիս քրտինքը։

- Ի՞նչ ես ուզում ինձանից, ո՞վ ես։

- Աղջիկ, - ասում է ժպտալով, ասում է հեզանազ, ամոթխած, գլխահակ։

- Քանի՞ տարեկան ես, որ աղջիկ ես։

Մի պահ լրջանում է, կծում ներքեւի շուրթը ու հետո.

- Ապուշ, - եւ արմունկով բավական ցավոտ բոթում է ուսս։

- Դու շատ սիրուն աղջիկ ես, - ասում եմ՝ դիմելով իմ սիրած «ամենատափական ամենից եֆեկտիվն է» սկզբունքին, A. Մերսի (

կարմրելով ու գլուխը խոնարհելով), B. Նշում է հորինովի թերություն (ասում են ոտքերս ծուռ են), C. Ի երախտագիտություն համբուրում է տղայի այտը (վիզն ականջին միացնող հատվածում), D. շառաչուն ապտակ է հասցնում՝ «աղջիկ» բառի մեջ տեսնելով վիրավորական ենթատեքստ:

-Գիտեմ,- անակնկալ պատասխանում է եւ հանգիստ քորում ձախ ականջի բլթակը:

Ստովի քորում եմ կզակս՝ փորձելով մի բան հորինել:

-Յաստատ անունդ քեզ պես սիրուն է,- շարունակում եմ զարգացնել տափակության գիծը:

-Մարիա,- ասում է ու փորձում որոշել՝ արդյո՞ք կհավանեմ իր անունը:

-Իմ ամենասիրած անունն է , - ասում եմ անկեղծորեն:

-Դուրդ չեմ գալի՞ս,- ու կծում է վարի շուրթը:

-Կուտվես,- ասում եմ ու շրջվում կարապետի կողմը: Երեք կարապետ, մեկը մյուսից մերկ, ճերմակ, լաիրշ: Մարիան հայացքով «շոշափում» է դեմքս, նայում եմ իրեն: Այնքան է տարվել, որ բերանը բացվել է, աչքերն ավելի են խոշորացել, գլուխը թեքվել է ուսին:

-Ինչո՞ւ ինձանկից չես վախենում,- ու դեմքիս հաղորդում եմ սարսափելի արտահայտություն:

Նա ժպտում է, ինչպես կժպտան եղբորը, հետո զրնգուն քրքում: Մի՞թե այդքան անօգնական է տեսքս: «Դմբ», - ասում է ծիծաղելով եւ բորում ուսս: Մռայլ հետեւում եմ կարապետին, իսկ նրանք ամեն կերպ ցույց են տալիս իրենց արհամարհանքն իմ եւ ողջ աշխարհի նկատմամբ:

-Ձեռքդ տուր՝ զարկերակդ ստուգեմ,- տարրական պատրվակ: Եթե մեր ձեռքերը հանդիպեն, երկուսիս սիրտն էլ կբաբախի արագ, իսկ հետո ես Նորից կզգամ իր շնչառությունը, օծանելիքի բուրմունքը եւ չեմ կարողանա որոշել, թե որտեղ է ավարտվում իմ շնչառությունը, եւ որտեղ է սկսվում իրենը: Ես պատկերացրի մեր առաջին համբույրը եւ էլի շատ բաներ...

-Կիրակի օրերը ձեռքերս գրպաններից չեմ հանում:

-Այսօր կիրակի չէ,- եւ գլուխը շրջում է կարապետի կողմը,- չես ուզում, մի տուր: Դու, քո ձեռքը:

Կծոտում է ներքեւի շուրթը ու մտածում վրեժի մասին:

-Իսկ քո անունն ի՞նչ է:

Անունս լսելուն պես՝ /. Այդպես էլ գիտեի, //. Ամեն ինչ պարզ է, ///. Չեմ սիրում այդ անունը:

-Չեմ հիշում,- ասում եմ անկեղծորեն:

Անմիջապես հավատում է, զարմացած բարձրացնում հոնքերը.

-Քեզ կսագեր Գուգուշը,- ասում է առանց ժպտի: Նորից մռայլվում եմ:

-Իսկ Յայկարա՞մ, Մելս, Կառլոս, Ցեզըր, Ալֆրեդ, Ժուլիետա...

Նա թվարկում է, ես՝ կորցնում գիտակցությունս: Յետո ոտքի է ելնում:

-Ուշ է,- ու հարցական նայում է ինձ:

-Ներիր, բայց չեմ կարող ուղեկցել:

-Որովհետեւ կիրակի՞ է:

-Որովհետեւ կիրակի է:

-Կե՞րջ,- հարցնում է երկարատեւ դադարից հետո ու արագ հեռանում: Ի՞նչ կարող էի ասել.

1.Ողջ կյանքում փնտրել եմ քեզ,

2.Բայց լավ կլիներ՝ չհանդիպեիք,

3.Որովհետեւ արդեն ուշ է :

Բաց զարկերակներիս ցավն արդեն բթացել էր: Գողտրիկ վերքերը ողջ օրը արյունահոսել են: Արյունը լերդանում է, եւ ստիպված եմ ձեռքերս գրպաններում շարժել՝ վերքերը բացելու համար: Մի թափառական շուն, արյան հոտն առնելով, հարձակվեց վրաս ու կծեց ոտքս: Շանը քշեցին, ինձ հարբածի տեղ դրին: Փորձում եմ հիշել, թե ինչու եմ արել այդ տափակությունը.

A.Կյանքն անիմաստ է,

B.Դժբախտ սեր,

C.Սոցիալ-տնտեսական ծանր կացություն,

D.Հայի բախտ,

E.Թիթիզություն...

Փորձեցի օգնություն կանչել, բայց անորոշ բառաչ դուրս եկավ: Կարապետը մոտեցել էն ափին եւ ուշադրությամբ հետեւում են ինձ: «Թռե՛ք, բերե՛ք կրակ», - փորձում եմ ներշնչել տելեպատիկ եղանակով: «Մեր փետուրները խուզած են», - պատասխանում են կարապետը տելեպատիկ եղանակով: «Վե՛րջ», - հարցնում եմ: «Մարիան խելոջ է, կկռահի ու կվերադառնա», - ասում է առաջինը, «բայց արդեն ուշ կլինի», - ավելացնում է երկրորդը, «ուշ լինի, նուշ լինի», - եզրափակում է երեքից ամենատարեցը:

Պառկում եմ նստարանին, «Սա միայն մեկ օրվա վերջն է», - ներշնչում եմ ինձ տելեպատիկ եղանակով: Փակում եմ աչքերս, եւ կյանքիս մեջ առաջին անգամ փակ աչքերիս խավարը ժպտում է ինձ:

Բաժանման երկանդամ

Միբայել Աբաջյանց

Երբ գինովացած անկեղծության խանդավառ պահերին գավաթ են բարձրացնում հանուն սիրո եւ հանուն կնոջ, հոգիս ողողվում է սեւ, փրփրուն նախանձով. այդպես տանիքներին երկար մնացած ճյուղն է հալչում-լցվում ժանգոտած ջրատարերը: Իմ ողջ ապրած կյանքում չկար այնպիսի բան, որ նման լիներ սիրուն: Ծաղկած ակացիաներն էլ ինձ գարուն չբերեցին: Ինձ անակնկալ հանդիպելիս՝ երիտասարդ ու քնքուն էակի դեմքը երբեք չփայլեց ուրախության ու հրճանքի լայնաշուրթ ժպիտով: Ոչ մի անգամ դեռ ոչ մի կին վախից կամ ցավից չէր ճչացել իմ գրկում, չէր քրքջացել համբույրների տարափի տակ: Ես սիրուն սպասում էի, ինչպես հրաշքի կսպասեն, կանչում էի, բայց այն աննկատ անցավ իմ կողքով: Եվ նույնիսկ մեկուսի, միշտ խավար անկյունը՝ ծեփաթափ ջեռուցիչի կողքին, որ տան աստիճանավանդակի խորշում էր, եւ որտեղ նեխեց իմ պատանեկությունը, այդպես էլ ինձ չգայթակղեց իր հեղձուկ, միգահոտ, վավաշտ քրքիջներով լեցուն խորքը: Ես ոչ թե այլանդակ էի կամ երկչուտ, կամ հոգեկան պակասություններ ունեի, այլ խառնվածքի ինչ-որ յուրահատկություն զգացմունքն իմ մեջ խեղդում էր դեռ չծնված: Եվ այնտեղ, ուր ուրիշ ուզածո հոգում պահվում են առաջին սիրո հուշերը, իմ հոգում մորմոքվում են տարօրինակ եւ ծայրաստիճան հիվանդագին տպավորություններ:

Ես ուսանող էի, հայրական տանից հեռու, սենյակ էի վարձել կիսանկուղային հարկում: Բնակարանը խուց հիշեցնող երկու կից սենյակ ուներ՝ խորիված, խոնավ պատերով: Սենյակները բացվում էին ընդհանուր միջանցքի վրա, ուր էլի երեք դռներ կային՝ խոհանոցի, լոգարանի եւ դեպի աստիճանավանդակ տանող: Ամենուր աղտեղություն էր, խոհանոցի սեղանին՝ դեղնած ու ճաքճված անվառ ամանների կույտ, էլեկտրական թույլ լույս, որ առկայծում էր մերկ լարերի կոթաներին հազգված ցածրավատ լամպերից: Ամեն ինչից զգացվում էր, որ տանտիրուհին կծծի է ու ծուլ: Իմ վարձածը ավելի փոքր սենյակն էր, որի համար որպես պատուհան ծառայում էր պատի նեղ, վանդակապատ կտրվածքը՝ ցածր առաստաղի տակ: Այդ պատուհանից երեւում էին ակացիայի ձնաթաղ ոստերը: Արեւը ինչ-որ հրաշքով իր ճառագայթները ուղարկում էր ներս, գցում դիմացի պատին:

Երբ օրը ամպամած չէր լինում, որոշակի ժամին, մի քանի րոպե, ես կարող էի հետեւել, թե ինչպես է արեւի լուրբ ճառագայթը սողում ժամանակից եւ խոնավությունից ջնջված պատամանախշերի վրայով: Պատերից մեկի տակ դժվարությամբ տեղավորված մեծ, երկաթե, ճռճան մահճակալն ու հաշմված ոտքով սեղանը լցնում էին սենյակի մեծ մասը: Պատուհանի տակ դրված սեղանը որոշ հավասարակշռության էի բերել՝ ոտքի տակ խցկելով Վլադիմիր Իվանովի մաթեմատիկական անալիզի 5-րդ հատորը: Մնացած չորս հատորները՝ նույնքան սարսափելի լայնածավալ, նույնքան պատառոտված, մանուշակագույն դաշվածքի նկարներով ու բացատրագրերով, բազմել էին սեղանին: Այդ գրքերի հետ շարել էի նաեւ Ալեքսանդրովի անալիտիկ երկրաչափությունը, Վիգորսկու տեղեկագիրքը եւ մի քանի ուրիշ ձեռնարկներ, որոնք իմ մեջ ոչ մի ոգեւորություն չէին արթնացնում: Ես անասելի դժկամությամբ էի թափանցում թվային տեսությունների մեջ: Ինձ չէր հիացնում Ռիմանի մտքի թռիչքն ու Ֆանտագիան՝ անալիտիկ ֆունկցիաների տեսությունում, բայց գրքի լուսանցքներում արված անպարկեշտ գծանկարներն ու մակագրությունները աշխուժորեն հետաքրքրեցին: Եվ ես աննկատ տրվեցի դրանց ուսումնասիրմանը՝ խուսափելով ձանձրալի գիտությունից:

Երբ ուտել էի ուզում, դուրս էի գալիս միջանցք, թակում մեծ սենյակի դուռը: Իմ կանչի վրա տանտիրուհին դուրս էր թռչում՝ փաթաթվելով կեղտոտ, յուղաբծերով խավաթի մեջ, ուղղվում էր խոհանոց: Ըստ պայմանավորվածության՝ նա ինձ համար օրական երկու անգամ ճաշ պիտի պատրաստեր, որի համար, բնականաբար, վճարել էի ամսվա սկզբում: Այդ ճաշը խոզի ճարպայուղի մեջ տապակած-այրած կարտոֆիլ էր՝ վրան ձու չարդած: Այդ ամբողջ ընթացքում տանտիրուհին երբեւէ չփորձեց փոխել ճաշացանկը, եւ օրական երկու անգամ վերոհիշյալը՝ դեղնած, երկնագույն եզրագծով ափսեի մեջ, թրխկոցով դնում էր սեղանին, իմ առջեւ, մի կտոր հացի ու ծոված պատառաքաղի հետ, եւ դա անում էր ինչ-որ տարօրինակ, գոհ քմծիծաղով, որը ստիպում էր կասկածել, թե ստորաբար խաբում էր ինձ հաշվի մեջ: Այդ քմծիծաղից, անմաքուր, անտկապես փորի մասում ճարպաբծերով խավաթից, կասկածելի պատառաքաղից՝ ատամների արանքում ինչ-որ դեղին բան չորացած, ճարպի հոտից սիրտս խառնում էր: Բայց ես արցունքոտ աչքերով, համբերատար ուսումնասիրում էի այդ ամենը, քանի որ նախօրոք վճարել էի:

Տանտիրուհու տարիքը դժվար էր որոշել: Դեմքը չէր տրտալ, երեւի լավացած պզուկների հետքերով: Մաշկի այդ անհարթությունը չիներ, ինչպես նաեւ այտերի թուլացածությունը՝ նրան կարելի էր գեղեցիկ համարել: Կինը սիրում էր նստել կողքիս, սիգարետ ծխել մեկը մյուսի ետեւից: Նրա ցանկասեր աչքերը, թունավոր-հարողագույն ներկված զգգված-ճարպոտ մազերը, փորի մոտ երկփեղկվող խավաթը, որ բացում էր խոզաճարպի երանգով մաշկը, իմ մեջ ոչ մի կերպ ցանկություն չէին հարուցում: Եվ նա հանգստում էր սիգարետը պղտոր ապակու վրա, դեմքն ակամա սկսում էր ցնցվել մատների լարումից, խոնավ աչքերը կկոցվում էին, դառնում նեղ ճեղք: Յետո նա ետ էր քաշում դեղնած մատները լի մոխրամանից եւ քստքստացնելով հեռանում՝ հիասթափված նետելով. «Թեյը սալօջախին է, ինքը քեզ համար կլցնես»:

Երբեմն տանտիրուհին դուրս էր գալիս տանից: Ես լսում էի, թե ինչպես է նա հագնվում, ինչպես է շրխկացնում մուտքի դուռը: Եվ ես բնակարանում մնում էի մենակ: Նա միշտ կողպում էր իր սենյակը, եւ դրանից, չգիտես ինչու, ես ինձ ստորացած էի զգում:

Մի անգամ, նրա գնալուց անմիջապես հետո, բացեցի աստիճանավանդակ տանող դուռը, նայեցի: Այնտեղ սովորականի պես

խավար էր: Միայն ջեռուցման մարտկոցն էր անորոշ ուրվագծվում պատի տակ: Թվաց՝ ինչ-որ բան շարժվեց ամենամութ խորշում, այնտեղից լսվեց ոչ այն է հարբածի ծիծաղ, ոչ այն է՝ շշուռ, եւ թվաց՝ ինչ-որ մեկը կիսաձայն կանչում է ինձ: Ամփջապես շրիկացրի դուռը: Եվ այդ պահին անպատկերացելի մի թախիծ իջավ հոգուս: Ես համոզված էի, որ տանտիրուհին էր այն խորշում:

Սենյակիս պատուհանը նայում էր անմարդ, նեղլիկ նրբանցքին, ուր ամեն ոտնաձայնը, թրխկոցն ու ճռիկը խուլ թնդում էր եւ երկար թեւածում տների պատերի արանքում: Փողոցի ձայները երբեք չէին միանուցվում, դառնում ընդհանուր աղմուկ: Ցանկության դեպքում լսողությունս զանազանում էր այդ ձայները: Մի անգամ ականջով որսում էի փողոցի ձայները, իսկ հայացքս գամված էր պատի վրայով սահող ցուլին, երբ լսեցի դա: Ես միանգամից չկարողացա հասկանալ՝ ի՞նչն էր, որ հուզեց ինձ: Բայց ես այլեւս ուրիշ ձայն անկարող էի ընկալել, բացի դրանից: Այն բոլորովին էլ ուժեղ չէր: Սկզբում կամաց էր, բայց հետզհետե ուժեղանում էր: Հիշեցնում էր ջրի հարթ մակերեսային զարկով կաթիլի ձայն. բայց անհամեմատ ուժեղ էր: Դա փափուկ կաշվի մեջ ամփոփված երիտասարդ կնոջ ոտքերի ուժն էր, որ մետաղով հարվածում էր բետոնին: Կանացիությամբ ու երիտասարդությամբ առչեցուն այդ ընդհատ հարվածները բորբոքեցին երեւակայությունս: Սիրտս շտապում էր, բայց չէր կարողանում հասնել մետաղյա կրունկների ռիթմին: Ձայնը աստիճանաբար մոտենում էր, թվում էր՝ այն կոչ է իմ պատանի-ամնական եւրոյանը, եւ սիրտս թրթռում արձագանքում էր այդ մաքուր, երաժշտական ձայնին: Ես սեւեռված նայում էի պատի նեղ բացվածքին: Եվ ահա արեւի ընկնող լույսը հատվեց, կարծես հրաշագեղ սեւ կայծակը մթնեցրեց այն: Երիտասարդ կնոջ սլացիկ, նեղ սրունք էր, կաշվի մեջ ամփոփված, որ վստահ հարվածեց ձանր բետոնե սալարկին, եւ կրունկը փայլատակեց արեւի տակ: Հարվածը, թվաց, ցնցեց իմ խցի պատերը: Պահ անց՝ թեթեւ, ցոլացող փոշին եւ զնգոցով հեռացող աստվածուհու վեժ քայլեր էին հավաստում, որ եղածը իրականություն էր, ոչ թե իմ բորբոքված երեւակայության արդյունքը:

Օրեցօր, հետզհետե ես ավելի էի խորանում մաթեմատիկական անալիզի թավուտներում: Դիֆերենցիալ հավասարումները եւ անսահման փոքր մեծությունները, ընդհատման կետերը, Լոպատալի կանոնները զբաղեցնում էին իմ ողջ ազատ ժամանակը: Էջերի լուսանցքներում ավելի ու ավելի հազվադեպ էին հանդիպում անբարո գծանկարները, դրանք ինձ արդեն չէին հետաքրքրում: Պարբերաբար, օրվա նույն ժամերին, իմ առջեւ շրիկում էր կապույտ եզրագծով ճաքած ափսեւ, եւ ես սկսեցի նկատել, որ կարտոֆիլի բաժինները գնալով փոքրանում են, իսկ տանտիրուհին կողքիս ավելի երկար է նստում: Նրանից փչող գինու հոտը գնալով ուժեղանում էր, ինքը դառնում էր ավելի ու ավելի հակակրելի: Նրա թարթիչագուրկ աչքերը ինչ-որ տարօրինակ կերպով զննում էին ինձ: Ոտքը ոտքին՝ տարուբերում էր կոշտ, սեւացած կրունկը, եւ այդ կեղտոտ կրունկի պատճառով արտիստները համակում էր ինձ: Ամեն անգամ, դուրս գալիս, կինը հիասթափված նետում էր. «Թեյը սալօջախին է»:

Հետո ես լսում էի, թե նա ինչպես է հագնվում, դուրս գալիս:

Ես նրան երախտապարտ էի, որ հեռանում էր ճիշտ այն ժամին, երբ դիմացի պատի վրա ընկնում էր արեւի ճառագայթը: Մոտավորապես հենց այդ ժամանակ էի լսում թեթեւ զնգացող քայլքը, որ այդպես հուզում էր ինձ: Խորհրդանշական էր թվում այն հանգամանքը, որ աստվածուհին պատուհանիս մոտով անցնում էր հենց միայնակ լինելուս պահերին: Ես ջանում էի մտովի պատկերացնել obje-ին, եւ կարծես ստացվում էր: Նա պիտի լիներ մարմինը կիպ գրկող կարմիր, կարճ զգեստով: Երեւակայությունս նկարում էր ճերմակ, երկար ոտքեր՝ կարմիր, նրբագեղ բարձրակրունկներով, հրաշալի ձեռքեր՝ երկայն մատներով, կարմիր լաքով: Նա, հավանաբար, ճերմակ, խարտիշահեր էր, դեմքը՝ առանց կնճիռի նշույլի, վառ կապույտ աչքերով, սեւ հոնքերով, ալ շոթներով: Այդ ամենը պիտի լիներ ներդաշնակ, ճկուն, լի ուժով եւ ինքնավստահությամբ: Ես գզում էի այդ ճերմակ մարմնի ջերմությունը, որ թափանցում էր գործվածքի միջով: Այնքան իրական էի պատկերացնում նրան, որ թվում էր, ինչ-որ տեղ արդեն տեսել էի:

Ես ավելի էի խորացել մաթեմատիկական ֆունկցիաների եւ դրանց հարաբերությունների ուսումնասիրման մեջ: Էջերը, որ կարդում էի, ապշեցնում էին իրենց կուսական մաքրությամբ: Ըստ երեւույթին, իմ նախորդները այդ էջերին չէին հասել. հայացքիս տակ իրար էին հաջորդում ճերմակ, անսահման մակերեսայինները՝ ցնցելով իրենց ամայությանը: Ոչ մի ուռուցիկություն չէր խախտում այդ հարթությունները: Հարթությունները առաջադրվում էին հավասարումներով, հատվում անթիվ ուղիղներով: Այդ ամենի մեջ զգացմունք չկար, միայն սառը տրամաբանություն էր ու մեռած հաշվարկ: Ես խելագարվում էի այդ սառցային աշխարհում: Եվ այդ արեստրակտ շփոթի միջով ես տեսնում էի իմ 888ալաթեային: Ոչ մի պահ չէի մոռանում նրան, նրա քնքուշ, հրաշալի ձեւերը, որ դյուրեւ էին ինձ: Նրա ջերմ, դուրաթեք, կարմիրով պրկված կորությունները ինչ ահավոր էին հակադրվում մեռելագույն-ճերմակ հարթություններին:

Կիսացնորային, տարօրինակ հոգեվիճակում էի: Ըստ երեւույթին՝ սերը հենց դա էր: Եվ ես, վերջապես, որոշեցի տեսնել նրան: Այլեւս անտանելի էր տանտիրուհու ներկայությունը՝ ծխի-գինու խառնուրդ հոտերով: Ուզում էի մենակ մնալ: Սպասում էի այն ժամին, երբ արեւի ճառագայթը կընկնի ներս ու կսահի պատին: Բանաձեւերով խճողված բաց էջերը առջեւ էին, բայց չէի կարողանում աշխատել: Փորձեցի ստիպել ինձ, բայց ոչ՝ հայացքս սեւեռվել՝ մնացել էր Բեռնուլիի բաժանման երկանդամին: Ուղեղս հրաժարվում էր մտածել: Բութ հայացքով նայում էի ատելի ֆորմուլին: Վերցրեցի գրիչը, պատեցի մատերիս արանքում եւ հենց երկանդամի վրա կանացի մերկ հետույք նկարեցի: Դրանից հետո կարծես մի քիչ թեթեւացա եւ այդտեղ նկատեցի, որ ճաշ սեղանին է, իսկ տանտիրուհին չկա: Նույն պահին հայտնվեց արեւի ճառագայթը: Այն ցոլաց ավելի ու ավելի պայծառ, հանկարծ սկսեց սահել պատի վրայով: Եվ անմիջապես էլ լսվեց կրունկների՝ սիրտս կեղեքող նուրբ զրնգոցը, որը, մոտենալով, հստակվում, ուժեղանում էր: Ես այլեւս անկարող էի մահճակալին նստած մնալ: Դուրս նետվեցի միջանցք, կրնկի վրա բացեցի դուռն ու վազեցի: Ինչ-որ մեկը փորձեց կտրել ճանապարհս, աշխատեց կանգնեցնել, բղավեց կանացի խռպոտ, ծխահար ձայնով: Ես դուրս թռա փողոց: Պարզվեց, որսում կեսօր էր, գարուն: Ամեն ինչ կայծկլտում էր արեւի շողերի տակ, նույնիսկ սեւ ձնհալով լցված ջրափոսերը: Ակացիաները ամբողջապես ծածկված էին սպիտակ, նուրբ ծաղկաբույլերով եւ խենթացնող բույր էին արձակում, իսկ կարմիր զգեստը ճոճվելով հեռանում էր ակացիաների ծաղիկների միջով: Նա էր: Նա հենց այնպիսին էր, ինչպիսին ինձուհիս պատկերացրել էի: Վազեցի նրա տեւից: Թվում էր, թե այլեւս չեմ հասնի նրան, բայց հասա: Նա միտաբարուհի էր: Ձգվեցի, բռնեցի ձեռքը: Նա ետ նայեց՝ թարթելով անհուն կապույտ աչքերը, որ եզերված էին երկար, նետասլաց թարթիչներով: Դեմքը ճերմակ էր ու հարթ: Ծրթուկները նուրբ էին, ալ կարմիր: Արեւը անդրադարձվում էր նրա լուսավոր մազերից: Նա տարակուսանքով բարձրացրեց մուգ հոնքերն ու հանկարծ արտաբերեց.

-Ասացի, չէ՞, թեյը սալօջախին է:

Անճաշակ երագ կամ միջնուրակային ձեռնաշարժության վնասները

Վահրամ Սահակյան

Գյուտահանրամատչելի պոռնոգրաֆիկ ձեռնարկ՝ ապագա դեգեներատների եւ խանդոտ սարկավազների համար, ըստ Վահրամ Սահակյանի եւ էլ ըստ ոչ մեկի

Ձեռնարկը նվիրվում է Հայաստանում Քրիստոնեության հաստատման 1700-ամյակի պարահանդեսի կազմակերպիչներին հիշատակին

Այ եսպիսի զգվանք բաներ... Ի՞նչ անենք հիմա... Ի՞նչ են ուզում մեզանից տիեզերական հեռու միգամածություններում ծվարած անսեռ, բայց մշտավառ արեւի անսառն ջերմությունից երեկցված ռոբոտները... Անկողնում կամ նրանից դուրս, անընդհատ լսվում է նրանց սեռականչը... Օ, կարծես ամբողջ տիեզերքն է երեկցվել... Կնշանակի ճիշտ է, որ մեր հոգին եզրեր չունի... Ու մեր կանայք մեզ չեն բավարարում, կովերը... Եվ ես, առանց ցանկանալու, ենթագիտակցորեն՝ ձգտում եմ միջտիեզերական կենսակցումների... կամ գոնե ձեռնաշարժության... Սուպեր-Գաղափար՝ կենսակցել աստղային մակարդակներով... Մինիմում՝ ութ միլիոն լուսնային տարի... Եվ օրգազմի հասնել Հավերժության հետ միասին... Արժե, ինչ խոսք... Սկզբում՝ ինտերնետ, անբովանդակ միջազգային խլրտումներ, իսկ հետո, իհարկե՝ տիեզերական ողիսական, համեմված վտանգավոր, բայց արտաբնական սեռական արկածներով... Ասում են Սեւ Կարիճի համաստեղության մոլորակներից մեկում /մեր Ծիր Կաթնից մի քիչ աջ... մի քիչ վերեւ... այ եղտեղ/ բնակվում են նարնջից պատրաստված կանայք, որոնք ունեն 380 ոտք եւ դրան համապատասխան՝ 190 կանացի հատուկ օրգան, որին մեր տերմինաբանական կոմիտեն անվանում է հեշտոց, առանց մտածելու, որ մեզ մոտ այն վաղուց դժվարնոց է դարձել: Ես էստեղ եմ ուզում զնալ, մանկուց հետաքրքրասեր եմ եղել... Ու իմ հոգեւոր երեկցիան մշտապես խլացրել է ազգային բոլոր պարեղանակները... Այո, ազգային սեռապարն ինձ չի հագեցնում: Կարողություններս էլ տիեզերքին չեն հասնում. նրանք դուրս են մղվում եւ ընդամենը չինական պատին բախվելով՝ բուժման գի պես վերադառնում են դեպի ինձ... Ի՞նչ անեմ... Ոչ, միայն ոչ դա, թող կորչի ձեռնաշարժությունը, որից էլ ծնվում է գործազրկությունը... Բայց մենք, հայերս էլ վատը չենք, թեեւ պատրաստված ենք ոչ թե նարնջից, այլ վարդագույն տուֆից, մոլիբդենից, օբսիդիանից ու սատանի եղունգից: Ու՞ր եք՝ Վարդան Մամիկոնյան ու Ֆրեյդ... Միայն դուք կհասկանաք ինձ... Ո՞ր կորան նախնիներիս չարածրություններն ու չափից դուրս շատ կենսակցումներից առաջացած սպազմները... Թե՞ այն անհիշելի ժամանակներում նույնպես անլուծելի խնդիրներ են եղել... Գուցե... Իհարկե եղել են... Այդ պատճառով, երբեմն ես պատկերացնում եմ իմ նախապապին՝ Ավարայրի ճակատամարտում փրթված անդամի վերամաստը փնտրելիս... Այո, հաստատ, պարսիկ զինվորներից մեկը թրի մի հարվածով նախապապիս սարքել էր հրեա, թլատել էր, ասել է... Ու թե ինչո՞ւ մտաք Տղմուտ գետը, այ նախապապեր, մարդ չի հասկանում... Լոգանք էիք ընդունում, հա՞... Բա պարսից փղե՞րը: Ի՞նչ արիք դրանց հետ, կենսակցեցի՞ք... Եղիշեի մոտ դա չի նշվում: Եթե Եղպիսի բան եք արել՝ էլ ի՞նչ ...ի բարոյական հաղթանակ. մի՞թե կարելի է փղին նման բան անել... Եղպես եք անում, էլի որ հայտնվում եք ինտերնետի Animal sex բաժնում... փղին զմբխելը բարոյականություն է՞... Եհ, հոգնեցրիք, իսկապես... Հոգնեցրիք ամեն ինչով, ձեր «...իմացեալ մահով, չիմացեալ անմահութեամբ... եւ լավագույնս իմացեալ անմահութեամբ»: Այն ինչ կորցրեք նախապապս Տղմուտ գետի ցեխաջրերում՝ ես ինքս ԴՐՈՒԺԲԱՎ սղոցով կկտրեմ ու կընծայեմ սոցիալապես անապահով որբեւ ընտանիքի տիկնոջ... Նրանցից, որ գերթախարժեք մուշտակներով կանգնում են օգնություն ստանալու հերթում... Մուշտակով օգնություն... Ու եթե նա գիշերները դարդից չի կարողանում քնել, ես համաձայն եմ նրա դեմքին փռել ԱՌԱՎՈՏ օրաթերթի նախավերջին համարը, կանգնել անկողնի գլխավերեւում ու «Մարտեյեզ» երգելով՝ հունցել փսկած կուրծքը... Վստահ եմ, որ դրանից հետո նա միայն ի՞նձ մոտ կգա օգնություն եւ նպաստ ստանալու... Այն էլ՝ առանց մուշտակի, խնդրում եմ արձանագրել սույն փաստը ձեր հոգու մատյանում ...

Իսկ տիեզերքը, միեւնույն ժամանակ հառաչում է կորցրած սիրո ու կիսատ մնացած անկողիների համար... Ես ուզում եմ մի գաղտնագիր ուղարկել... «Բոլորին, բոլորին, բոլորին... Բոլոր տիեզերական միգամածությունների բաշխողուկներին, աննկարագրելի հեռավորության համաստեղությունների թմրամուկներին, դեղամուկներին եւ սակրավորներին: Մենք բնակվում ենք «Ծիր Կաթին» համաստեղության «Երկիր» մոլորակի «Երկիրը Երկիր չի» երկրում: Մենք գտնվում ենք մահվան բազրիքի եզրին, անհույս երեկցիայի թմբիրի մեջ ու հուսահատ կայֆի տակ... Խնդրում ենք ուղարկել համապատասխան ազդանշաններ, որ մենք, ի վերջո կարողանանք ունենալ նրբանկատ տնքոցներով համեմված՝ թուլից չափավոր օրգազմ... Նամակի վերջում հայտնում ենք, որ վաղը, Ապարան-Հրազդանում ոչ մի լավ բան չի սպասվում...»: Այսբան բան: Այո, հենց սա ենք ուզել մենք բոլոր դարերում: Եվ ընդհանրապես մենք շատ սեքսի ազգ ենք եղել... Լուրջ: Օրինակ՝ ինձ միշտ գրգռել է գրգռում են ազգային հեքիաթները...

Ո՞րն, ասում եք... Գյուլնազ տատին, ասում եմ... Գյուլնազ տատն անձամբ է սրում իմ լիբիդոն... Ես արդեն լուրջ հորմոնալ խանգարումներ եմ ձեռք բերել նրա ձեռքից... Եվ իհարկե՞ մեր հեքիաթների հերոսները... Արեգնազան, օրինակ... Լսե՞լ եք դրա մասին... Ասում են՝ աշխարհի առաջին տրանսսեքսուալն է եղել՝ Արեգ, իսկ հետո՞՞՞ Նազան... Մեր լավ հայրենակիցն է, պիորը... Ինչ ուզի՞ կանի... Երկուսից էլ ունի, պլյուս 4-րդ համարի կրծկալից դուրս կախվող կրծքերը... Հայի կրծքեր, տխուր կրծքեր, kak mnogogo dum navodit on. Ասում են՝ էդ Արեգնազանը ֆռֆռում է հեքիաթների աշխարհում ու կենսակցում է յուրաքանչյուր շարժվող արարածի ու առարկայի հետ...

Օրինակ, երևի հյուրընկալվել էր Ալիսին... Հրաշքների աշխարհը ողողել էր որոշակի հեղուկի շատրվաններով... Նրա ձեռքից չեն փախել Մավիան, Հայր Կառլոն եւ Արտեմոն շունը... Ամառի Կաշչեյը մեռել է առաջին իսկ հպումից... Հավերժական Sex-Mashine...

Այ քեզ բա՛ն... Ճիշտ են ասում, որ ամեն ինչ մեզանից է դուրս եկել... Ամբողջ աշխարհը մեզանից է սովորել ապրել... Բայց մենք մոռացել ենք: Ապրելը մեզ համար դարձել է հերոսություն, իսկ մեռելը՝ խորամանկություն: Մենք մեռնում ենք սողալով ու մուրալով... Բայց ես չեմ ուզում մեռնել եղպես: Ես օդում եմ ուզում մեռնել... Օդում, ո՞չ ցեխաջրում... չըլմփի հա չըլփ...

Դե ճամփա տվեք հերոսին, ոչխարներ... Նա ուզում է մեռնել թռչիքի պահին... Ի՞նչ... Դուք է՞լ եք մեռնում... Էլի՞ թռչիքի պահին... Այ քեզ բան՝ բոլորը մեռնում են... Մենք մեռնել եւ մեռել սիրող ժողովուրդ ենք: Մեզանից շատերը մեռնում են հենց էնպես, ձեռի հետ, որ հետո ասեն,- «Տեսա՞ք ինչ արեցինք... Կարա՞ք դուք էլ սենց բան անեք...»: Ամբողջ կյանքը իրար մայր են հեկեկացնում, հետո պառկում են իրար կողքի, բա թե՛ տեսե՛ք, տեսե՛ք՝ մեռել ենք... Եհ... Skoty, ի՞նչ ասես... Մորթում են, մորթվում... Եղ ասելով՝ ես ակամա հիշում եմ մեր փրգային շահերի պաշտպան տղեցի այն հատվածին, որ ազգային շահը, ի վերջո շփոթեցին Շահ Աբասի հետ: Ու հետո սկսեցին կարթել իրար... Ի՞նչ ասես... Նրանց հերթի դրված մորթազերծումներից կարելի է միայն զվարճանալ: Բայց մտածում ես. չե՞ որ նրանց էլ է մայր ծնել՝ տեսնող է եղել... Հա՞, բայց խնդիրն այն է, թե ի՞նչ մայր... Ինչպես սիրում են արտահայտվել Կեռ Անիվի միգամածությունում ծվարած 320 անդամակի ռոբոտները՝ «Մայր կա, որ որդուն ծնող մի մայր է, մայր էլ կա՞՞՞ անցնող-դարձողի վայր է...»: Հասկացող մարդիկ եւ պայծառատեսները ժամանակին զգուշացնում են՝ «Աբրոտ արա, աղջի, շուտ, արագացրո՞ւ... Իսկ նա թե՛ «Չէ, պիտի ծնե՛մ, պիտի ծնե՛մ»: Դե ծնի... Vse? Դե հիմա նայի, թե ինչ ես ծնել... Տեսա՞ր ինչ եղավ... Եղ էիր ուզու՞մ... Չէ, այդպիսի մայրերին պետք է 16 տարեկանում որդեգրես եւ գործակախում ցույց տաս, որ «Կյանքը լի է

դաժան անակնկալներով... Ու ստիպես, որ անգիր ակի «Ճտերն աշնանն են հաշվում, կանանց անվերջ են հաշմում» ասացվածքը: Իսկ խեղաթուրված երեւակայութիւնը բավարարելուց հետո, բնական է, որ Քրազիլիայի խորունկ շունգիներում նրան կարելի է փոխել կոկաինի թարմ տերեւների կամ 500 գրամ կաուչուկի հետ: Թող իմանա, որ չի կարելի ամեն մեկին ծնել, չի խրախուսվում... Ու սրա մասին խոսելով, ես չեմ կարող չհիշատակել բոլորիս կողմից սիրված առակը, ուր՝

«Յանդիում են մեկ թռչակառու կգաքիս եւ մեկ տրանսցենդենտալ ոգու ազատության համար մարտնչող գնդապետ:

- Ո՞րն է կյանքի իմաստը,- հարցնում է գնդապետը:

- Վախն ու ատելությունը, որոնք այդպես խնամքով թաքցված են Կենտրոնական Աֆրիկայի Չիանգո շունգիի խորատունկ թփուտներում,- մանանեխի մեջ եփած ճագարի փայծաղը ծամելով պատասխանում է կգաքիսը:

Գնդապետը երկար մտածում է եւ որոշում է այդպես էլ չամուսնացնել իր աղջկան»:

Դե ի՞նչ, այսքանից հետո... Մի՞թե կարելի է այսքան մեծ գլխաքանակով կրծողներ լույս աշխարհ բերել: Այ, կրծողների մի տարատեսակ կա/osob/, որն ապրում եւ ստեղծագործում է կղզիանքի համամասնության մեջ: Բայց բնակվողները երկար չեն մնում ներսում: Գոյատեւման որոշակի փուլում գլուխները դուրս են հանում, զարմանքով նկատելով, որ մոլորակում կան դեռեւս կղզիանքի շառավիղից դուրս վայրեր՝ իրենց պարտքն են համարում կղզիանքը վերցնել եւ շաղախել հիշյալ վայրերին, այնտեղից՝ այստեղ, այստեղից՝ այնտեղ...

...Եւ սկսվում է Շարժումը...

Տեսնելով, որ ամեն ինչ արդեն ապականված է, այդ շարժուն տղեքը որոշում են հանգստանալ, թոթափել աշխատանքի լուծը, ջերմանալ, լոգանք ընդունել...Դե իհարկե... Ճերմակ լոգարան, հախճապակե սալիկներ, կախովի առաստաղ, գտարյուն բուլդոզ, թարախ ավտոմեքենա, քրտնած կին, զգվանք որդի, բորբոսնած դուստր եւ ծնկածեւ լիսեռը 86-րդ անգամ փոխած սիրուհի: - Բա քա՞նքն ուր ա, քա՞քը,- կհարցնի ցանկացած բազմազգակ մաշկավեներուգ,- ո՞ւր ա, հարցնում են ձեզ...

- Յոգու խորքում,- նրանց փոխարեն կպատասխանենք մենք՝ տուժածներս:

Եղպիսի բաներ: Բայց թե պատմություն կոչվող դավադիր ռիսակալը կրկին ու կրկին հակառակն է ապացուցում: Եւ այդ ճարտար ու ճկուն տղեքի մեջ սկսվում է ներկուսակցական պայքարը... «Ինչու՞ պիտի նա ավելի մեծ տուն ունենա, քան ես... Ինչու՞ պիտի նրա կինը ոտքերն ավելի լայն բացի, քան իմը... Եւ ընդհանրապես՝ ինչու՞ է նրա արյունն ավելի համեղ... Բերեք, ուզում եմ խմեմ մի բաժակ...»: Ու սկսվում է... Գը՛ըմմմ, դը՛խկ, դը՛խկ, դը՛խկ, գըըմմմ՛մմմմմմ... Եվ ի՞նչ...դիակներ... Դագաղներ ու զվարթ թաղումներ... Եվ էլի ինչ-որ խառնածին, աննպատակ մտեղներ... Ահա, սա՞ ով է, այս սատկած թերաքուն բլո՛ճը... Ահ, եւս մեկ «Էշ նահատակ»,- ինչպես արտահայտվեց Նորագավիթի շրջանի առաջինի կաթսայագործը, երբ տեսավ, թե ինչպես են Մալիբուի գուրմանները համոտն անում խոս-խոսն ծառարմատի հատիկներով շոգեհարված կեռնեխի աճուկային ավշահանգույցները...

Իսկ հաճախ էլ, այդ տղեքն ու աղջկեքը վարի են գնում կղզիանքի պակասից առաջացած հորմոնալ խանգարումներից, նրանց միգրացիոնական օրգանները ի վիճակի չեն լինում արտադրել համապատասխան դոզայի «սնունդ»: Ու նրանք մեռնում են, որովհետեւ կղզիանք են ուզում, սովորության ուժն ավելի գորավոր է, քան տարածաշրջանային ինտեգրումը եւ գլոբալիզացիան: Շատերին էլ համախոհները ծակն են կոխում: Ավելի ճիշտ՝ ծակը կոխում են, հետո կոխում են ծակը: Բնական է, որ ծակում էլ են ծակը կոխում՝ հանցագործ աշխարհը քաղաքական գործիչներին հատուկ հոգածությամբ է վերաբերում, ու եթե նա բանտում լավ չի աշխատում՝ ուրեմն համոզված եղեք, որ փչացել է կամ փչացվել: Եվ քանի էր ժամանա տղերքը բանտում են՝ մյուս կալանավորները դեն են նետում ձեռնաշարժության համար նախատեսված Բեթհոլդեի կամ Լոմոնոսովի նկարները...

Այ քեզ շարժում, այ քեզ գործ... Յայի քաքեր, կերած քաքեր...

Էհ, ձեզ եմ դիմում, դեռեւս կենդանի մնացած տղեք՝ ինչ իրավունքով եք շնչում ու արտաշնչում անադարտ թթվածինը... Ինչածին եք դուք... Ուժե՞ր եք... Յա՛, դուք ուժեղ եք, մենք թույլ... Իսկ կուզե՞ք ես ձեզ ցույց տամ գոյատեւման իմաստը, քաղցր բալեք... Ես ինձ մոտ կկանչեմ հավատարիմ ռոբոտներին, նրանց օգնությամբ ձեր բոլոր խմբավորումները, կուսակցությունները, դատարաններն ու թաղապետարանները կքաշեմ անդամիս, կթաթախեմ ժավելի սպիրտի մեջ, կխոյացնեմ դեպի երկինք, մի քանի օր եղպես ցցված կպահեմ, /որպես ձեր կողմից գաղված 1700-ամյակի կենդանի հուշարձան/ այնուհետ բազմիցս անգամներ կտարուբերեմ Ջավախքից մինչեւ Մեդրի, կմտցնեմ մետրոյի թունելը, կհանեմ ու կվերջացնեմ ձեր կանանց մատնական լոժաների մեջ... Յասկացա՞ք ինչ եմ ուզում ասել ու անել, թե՞ մի հատ էլ կրկնեմ:

Ձեր գոյատեւման փաստը վիրավորում է տիեզերական հեռավոր խորխորատներում ծվարած ամենավերջին, ամենասոցի ու ամենաժանգոտ ժշտոցի սաքթած ռոբոտի մտավոր ունակությունները... Պոտենցիալ դիակներ ու կանխատեսելի գոհեր, սիֆիլիտիկ կրոնականներ ու ազգայնամոլ գերեզմանափորներ, բաշխողուկ գեներալներ ու տակները ցած գինավորներ, գոմբիացված ոստիկաններ ու իրար վրա հետ տված գրողներ, գերեզման քանդողներ ու գերեզման պառակցողներ, արյուն ծծողներ ու ոչ միայն արյուն ծծողներ, լոգարանում գիլյոտին պահող մարդու իրավունքի պաշտպաններ, ճղած փորից չալաղաշները դուրս թափած թաղապետներ, cherniashka-ից ուշքի չէկող դատախազներ ու պարանոյիկ արտիստներ, ուղեղից կաղ Լենկ Թեմուրներ ու Աթաթուրքի թոռնիկներ, տեսող Էդիպ արքաներ ու կոյր Նապոլեոններ... Ո՞ւր եք, տղաներ... Բա դուք մոր կաթ ե՞ք կերել, թե՞ գալապերդիդ, առանց ցիկլադոլի... Ու՞ր եք, հը՞... Ո՞ր ծառի տակ ձեզ հագան, ո՞ր սեւ քարի տակ պառկացրին... ձեռն հանեք... Բա թա՛փ էիք տալիս... Մենք, մեր անկախությունը, ես, իմ անմահությունը... Մեզ խփողը չի ծնվել... Էդ ո՞նց եղավ, որ Յուլիոս Կեսարին խփողը ծնվել էր, ձերը չէ, այ... դե արի ու մի ասա... Ի՞նչ եղավ... Պրծա՞ն էր բարիքները... Յայրենիքը գոնե պրծա՞վ... Յը՞... Յայրենիքը շքուտ պրծա՞վ, թե դուք... Ատեք, դուք եք ակտը կատարել, մամայա... Բայց հո չե՞ք կարծում, որ ձեր որդիներն ու դուստրերը դեռ պիտի վայելեն... Օ՛... Նրանք խորխորաբար գալիս են ձեզ մոտ... Սպասեք, ժամն է տարածում... Յավերժական տառապող սերունդների երթը Երեւան- Չիանգոյում Գյոռ չարտերային թախչեք... Թնդում են տիեզերքի բոլոր նվազախմբերը, փողերը օդ են ուղղված, ծնծղաներից կայծեր են թռչում եւ զվարթ ճոճուկով բռնկվում են ձեր կաթսաների տակ... Դե ձեզ տեսնեմ, տեսնեմ նրանց, որ դեռ ֆոֆոնում են... Կամ կրկին բոմժ են դարձել... Բոմժ էիր, բոմժ դարձար... Էլ ի՞նչ ես ֆոֆոնում... Ժամանակն է: Մեկ-երկու-երեք՝ մեռնում ենք բոլորս... Ո՞վ մնաց... Սաղ մեռա՞ն... Ո՞վ չմեռավ... Ով չմեռավ, նա էլ փախա՞վ... Փախա՞վ... Դե փախեք ցիգաններ, փախեք, առանց ձեզ կյանքն ուրախ Է... Գնացեք ու մտքե ամերիկացիների հետույքը, էստեղ տաք Է... Կոնֆորտ կա... Բայց ամերիկացիք մի վատ_խԱՍԻԱԹ ունեն... Յա... մի օր, կներեք արտահայտությանս՝ ահասարսուռ գազ բաց կթողնեն ու

զանգվածաբար կլցվեք օվկիանոսը: Ուրեմն՝ մնացեք... մնացեք ու 35 տարի սեփական ձեռքերով վերանորոգեք բնակարանը... Ստեղծագործ ժողովուրդ, քարից հաց քամող, քաքից՝ բաստուրմա, մեզից՝ Nescafe... Տոնակներով ավագ ու գաջ շաղ տվեք շենքի մուտքին, պարկետ կտրելու սղոց միացրեք տանը, պատերը քերեք, պլենդուզ կպցրեք, աբոյ քաշեք, հետո վերանորոգումը վերջացրեք ու նույն օրն էլ մեռեք... Ո՞ւմ են պետք հարեանները... Դըխկ, դըխկ, դըխկ... 15 տարի... Դըխկ... 25 տարի... Դոռոռ՝ քարից հաց ենք քամում... Դըռոռ... Էլի ենք քամում... Բա դուք ի՞նչ եք վայելելու, դվարնյաշկեք... «2-սենյակ ծախեմ՝ 1 առնեմ, 3-ի հետ փոխեմ, մեկը ռեմոնտ անեմ, մյուսը շուշաբանդ դնեմ ու հետո տանեմ էն աշխարհ»։ Գոնե՛ք ձեր կանանց մեկ-մեկ մատով բզբզեք, մեղք են, կույս բերում եք, մի գիշեր դիսկոնում ու վերջ... Թե՛ սեփական կինը դրա համար չի... Մի հատ ձեռի համար գոնե բզբեք ու նայեք-տեսեք ո՞նց ա բզվում, արա... Մեղք չի՞... Դեռե՛ք հաստանում է, չէ՞... Դաս-տա-նում... Իսկ հաստառո կնոջը մեկ կոկոսի հետ էլ չես փոխի, լինի դա Բոլիվիայում, Մադագասկարում կամ թեկուզ հենց այնտեղ՝ Սոմալիում: Պահանջարկ չկա: Իսկ նա, կինը, ձայն չի հանում... Դամակերպվել է: Բայց որ թողնես՝ օօ՛... Գազի բալոնի պտուտակի հետ էնպիսի խաղեր կտա, որ եթե Պամելա Անդերսոնը տեսնի՝ կամաչի ու կկարմրի...

Մի միշտ հիշեք, որ հեռու տիեզերքից ձեզ ուշադիր զննում են: Իսկ դուք հեշ լավ չեք նայվում: Գալակտիկայով մեկ խայտառակ եք եղել, ու՛մ եք պետք դուք, ձեր նպաստներով, չլողանալուց նեխած անդամներով ու չգործածվելուց դաբախանի կաշի դարձած հեշտոցներով... Ո՛ւ՛՛՛՛՛, ի՞նչ ասեմ, համատարած անհեթեթություն, անճաշակ պատմություն, գրականություն եւ երկրաչափություն: Գուցե նաե՛ւ՝ քիմիա եւ սեռական կյանքի պսիխոհիգիենայի մշտական բացակայություն: Եւ այն էլ այս ինտերնետի դարում, երբ արդեն, /ինչպես ասում է պոետը/ ամոթ է կենակցել կանանց, տղամարդկանց, շնեթի ու կզաքիսների հետ: Դաս՛, բայց դրա փոխարեն մոդայի մեջ են այսպես կոչված ընտանեկան լոտոն, ընտանեկան սեքսը եւ միանվագ կենակցումները առարկաների հետ: Չհասկացա՞ք... Ո՞նց... Ընտանիքի շահելը, /տղեն/ կենակցում է ՉԻՊ-ի հետ /ես մի Sex Mashine/, մյուս եղբայրը սեռական գործողության մեջ է մտնում բջջային հեռախոսի հետ, քույրը զգեստապահարանում կենակցվում է ֆենի կողմից, իսկ հայրը դրել ու չի ուզում դուրս բերել Դայրենիքի միջից... Այ սա է իսկական ընտանեկանը: Պարել է պետք սովորել, բոմժեր: Իսկ հետո՞՛ հետ սովորել: Chtob ne bylo muchitel'no bol'no... Օ, ճիշտ ճամփով ես գնում, տղա ջան, ճիշտ ճամփով, պապայի սիրուն բալա... Ձիպը գցի 5-րդ արագության... Մազը միացրո՛ւ՝ 100x100x100 վատ՝ դեմից, հետեւից, մեջտեղից... Արագ, էլի արագ... Դուրս ենք գալիս Սեանի տրասս... Ժամում 180, 200, 220, լավ է, արագությունը փոխում ենք՝ 6... Առաջ, ծխախոտ ենք կպցնում... կայֆ... 230, 240, 250... Դեռվից մի մոլորյալ ԿԱՄԱՁ է գալիս... Կայ ես դրա ապուշ մերը... Դընթ, դընթ, դընթ... Ռուսական էստրադա եւ 7-րդ արագություն... Այ քեզ թույլիկ Ձիպ՝ 4x4, Cheroki... Թարախություն... 260... Կամազը մտնեմ ու, Զիպի առավել ես... Կայֆ... Մոտեմ ու... Մի հատ չվախցնե՛ք սրան, արա՛, չքաշե՛ք վրեն՝ սիրտը կայնի... Մոտ են... Տիեզերքը խոժոռվում է, ռոբոտները մի պահ դադարեցնում են սեռական ազդանշանները, մնաց 50 մետր, սատանան աչքերն է կկոցում, Աստված բարկանում է, /առաջին հերթին իր վրա, որ ստեղծել է այդ մոդեռնիստ... Մոտեմ ու, մոտեմ ու... մնաց 20 մետր... Վախցնում ենք, քաշենք վրեն... 15 մետր, 10, 5, 0... Ես ո՞վ ա Կամազի ռուլին՝ գերանդիով... Դը՛ըըխխխխկկկկ... Ու հոգեհանգիստ՝ փակ դագաղով... Ես իրոք՝ ի՞նչ դնես դագաղի մեջ, ո՞նց հավաքես, որտեղի՞ց... Նման PUZZLE-ները չեն հավաքվում... Սա վերջին գոնե էր... Երեկվա... Իսկ այսօր՝ նորերը կան... ջահել-ջահել գնացողներ... Ու անիմաստ մնացողներ: Նոր լացողներ ու նոր զվարճացողներ... Բայց ծնվում են, ծնվում են կրկին թափթիկները... Դասա՛ցում է տիեզերքն իր ամբարիշտ վարքով, ռոբոտները նամակ ստացել, խառնվել են իրար ու հրավերքի ազդանշաններ են ուղարկում, եւ «Արի՛, արի՛, արի՛»... Տո ո՞ր գամ, այ ձեր ցավը տանեմ, ինչի՞ գամ, արաղ ե՞ք տալու ինձ որ գամ, չալաղաջ ե՞ք տալու, թե՛ կին... Ընդհանրապես՝ տալու ե՞ք, որ ասում եք՝ արի... Ես մեր չտվողներից եմ փախնում, դուք հավարդ դրել եք՝ թե՛ արի... Ես ջերմում եմ, իմ ձիերը հիվանդացել են քրոնիկ սուսանակով, իսկ իմ ընկերուհիներն ապրում են Չտալովի փողոցում... Օ՛, որքան են շատանում երբեմն նրանք, այդ ընկերուհիները... Ես փորձում եմ նրանք քչացնել... Ես բուրդին տեղավորում եմ մեկ անձի մեջ ու ընկնում եմ հետեւից, նախապես գիտենալով, որ չեմ բռնելու... Որովհետեւ տասին բռնելն ավելի հեշտ է, քան կենտրոնացված մեկին, մանավանդ երբ այդ մեկը հստակ գիտի, որ ինքը կենտրոնացված է... Իսկ եթե նա էլ չկա՝ կարելի է եւ մեռնել: Մեռնել հիմնավոր, այլ ոչ ձեռի հետ... Մեռնել՝ սեռական գաղտնիքների վերածննդի համար, եւ հանուն այն մեկի, որին չի լինում, չի լինում բռնել... Մեռնել, որ չտեսնես, թե որոշ ժամանակ անց՝ ինչպես է այդ մեկը ցանկանում քեզ բռնել, իսկ դա արդեն քո ամորձիներին չի հետաքրքրում եւ մտածում ես, թե ո՞նց նրան հասցնես Չանգեզուր ու փոխես կես լիտր թթի արաղի հետ...

Օ, կարելի է, մեռնել, կարելի է... Կարելի է ու պետք է... Մեռնել հանուն հոգեւոր երեկցիայի, հանուն Ինտերնետի պոռնոգրաֆիկ էջեր թափանցած Դամակարգչի, հանուն այդպես էլ չճաշակած սիրո, հանուն այս ալանդակ տողերի, հանուն դեռեւս չճմրթված անկողնու... որն այդպէս դատարկ է մեռելուց առաջ... Գալիս եմ, ռոբոտներ, գալիս եմ... Դուք լավ եք, լավը, զիլ տղեք եք դուք... Նարնջագույն ռոբոտուհիներ, դուք էլ եք զիլ... Ուրիշ եք դուք, նման չեք մեր կանանց, որոնք սեռաքաղցության նուպայի մեջ, առողջ տղամարդուն տրվելու փոխարեն սկսում են աղոթել բոլոր սրբերին, Կրիշնային, Ալլահին, Բուդդային, Զուդային եւ Մկրտիչ Պեշկոթաշյանի անդադրում Ոգուն՝ միայն թե՛ իմանան, թե՛ ՎԱՂՆ ինչ կլինի... ՎԱՂՆ ո՞վ ում կշարտի, ո՞վ ում կծախի ՎԱՂՆ ՉԷ ՄՅՈՒՄ ՕՐԸ, Ռ՝Կ Ռ՝Կ ՄԻ ՎԱՏ ԲԱՆ ԿԱՆԻ... Նրանք չեն խորհում ԼԱՎԻ մասին ու լացացնում են Սիրո լավը... Սիրում են մեզ, իրոք սիրում են... Մեր կանայք... Ու կույսերն են սիրում մեզ... բայց հենց նրանք, այդ մայրապետերն ու կույսերը, մեզ սիրելով եռակի-խմբակային սեքս են անում Կասկածի ու Անելության հետ... Hardcore bizare... Մենք ենք մեղավոր, մենք... Որ սիրում ենք՝ գործելու փոխարեն... Որ ոտի տակ չենք առնում, որ աստվածացնում ենք նրանց, որ գրում ենք այս զզվելի ու անմարդկային տողերը... Որ մեղանջում ենք մեր քնույթի դեմ... Գրելով ու խորհելով նման բաներ... Ես ներում եմ ձեզ, մնացեք բարյավ... Բոլորին եմ ներում, բոլոր, բոլոր կանանց, անգամ բուրդ չփխռողներին: Ես ի փիճակի եմ ներել բոլորին, բացի ինձնից: _«Ձեզ վերջին ազդանշանն եմ տալիս, իմ սիրելի ռոբոտներ, իմ 1700 տարվա մենության վկաներ... Միշտ հիշեք, որ այս երկրի հետ կապի մեջ մտնելը հղի է արտարգանջա հղիացումներով: Մենք սխալ ենք կենակցել մեր կանանց եւ ընկերուհիների հետ... Ի սկզբանե սխալ է եղել ամեն ինչ... Եւ մեզ մոտ չափից դուրս շատ են ավելացել աչ ու ձախ խարժով աննպատակ հումանոիդները... Նրանք աններելի են... Այդ պատճառով էլ խնդրում եմ, նրանց գրանցեք Միջմոլորակային համաստեղությունների գլխավոր կոմիտեում, որպես Դավերժության դեմ հանցագործություն կատարած անձինք: Եթե կարողանաք դա անել՝ ես ձեզ խոսք եմ տալիս, որ նրանք էլ երկրորդ անգամ չեն ծնվի, քանի որ նրանք մայրերին են վաղուց արդեն փոխել եմ մեկ գավաթ թարմ կաուչուկի հետ»:

16, փետրվար, 2001թ. Երեւան

Դայր մեր
[Արսի Ոսկանյան](#)

Մենք որք էինք: Մենք թրջված էինք, կծկված, քաղցած, բոկոտն... Մենք կոյր էինք, սարսափած ու պատռված...
Մենք սեղմում էինք միմյանց ձեռքերը քրտնած ափերով: Քրտնած ափերով ծածկում էինք մեր կարմիր աչքերը: Անձրեւը լցվում էր
մեր ռունգերի մեջ: Մեր ձեռքերն ու ոտքերը պոկվում- ընկնում էին... Մենք գալարվում էինք ու կարմիր աչքերով որոնում նրան...
Արի, անսպիտակ գիշերում մեզ քույր եղիր: Արի, մայրություն արա մեզ: Բացիր մեզ քո մարմնի խոռոչները ու քո մեջ առ մեր անհագ,
անսպառ, հավիտենական կարոտը...
Արի, տես՝ ոնց են ձիերը մեզ սմբակների տակ գցել... Արի, տես՝ ոնց են դեերը կղկղել մեզ վրա... Արի, տես՝ շունը քնած է... Շունչ
բեր...
Հիշիր մեզ, արի ու վերջ տուր այս կիսատ աշխարհին...

Մենք փնտրում էինք նրան ամենուր, թեպետ հստակ գիտեինք՝ որտեղ է: Թակում էինք դուռ ու պատուհան, շրջում էինք
եկեղեցիներով, արվեստանոցներով, համերգասրահներով, սրճարաններով, հասարակաց պետքարաններով...
Հետո իբր պատահաբար մտանք մթերային ու տեսանք նրան երրորդ, թե չորրորդ դարակի վրա՝ ինչ-որ տեղ բարձրում...
Ամենաբարձրում...
Մենք նկատեցինք նրան միանգամից, թեպետ... Թեպետ քեզ թաքցրել էին մեզկից ինչ-որ գույնզգույն գիբիլների հետեւում եւ ինչ-որ
զիզի- բիզի պիտակ կպցրել վրադ: Բայց մենք իսկույն ճանաչեցինք քեզ... Քո վճիտ, անկաշառ թափանցիկությամբ դու ուրիշ էիր՝
տարբեր, բարձր... Եվ կայիր, եւ չկայիր...
Մենք հմայված, ապուշ կտրած նայում էինք քեզ երկար-երկար: Հետո դողացող ձեռքերով շրջեցինք մեր ծակ գրպանները ու գնեցինք
քեզ...
Դու քրոջ պես քերեցիր մեր մարմիններից դեերի կղկղանքը, լողացիր մեզ մոր պես, կարկատեցիր մեր վերքերը, կպցրեցիր
պոկված ոտքերն ու ձեռքերը, սոսնձեցիր փշրված մատները, հագցրեցիր մեզ, շերմացրեցիր, ուղղեցիր մեր սապատները, լույս
տվեցիր մեր բիբերին, շունչ փչեցիր մեր ռունգերի մեջ եւ լցրեցիր մեր սմբակած խոռոչները հավիտենական մոռացումով...
Հայր մեր, որ շշու՞մ ես...

Երբ արթնացանք, նա համբարձվել էր՝ թողնելով մեզ սեղանի վրա ճոճվող իր ապակե դին...
Եվ մենք էլի որք էինք, էլ ավելի որք, կիսատ ու պատռված... Սառը,
օտար, լարծուն անձրեւը լցվում էր մեր ռունգերի մեջ: Մենք սողում էինք ծանր հողի տակով ու արյուն թքում... Քրտնած ափերով
փակում էինք մեր կարմիր աչքերը... Մեր ձեռքերն ու ոտքերը պոկվում- ընկնում էին, ու մենք, ձեռ ու ոտ ընկած, որոնում էինք
նրան...
Հետո մեր լեզվից վերջին բառերն էինք պոկում՝ անճոռնի վաճառողուհուն սիրաշահելու, համոզելու, հաճոյախոսելու, սեր
խոստովանելու, շողոքորթելու համար... Սպառնեցինք երդման բոլոր հայտնի ձեւերը, նորերը հորինեցինք, խոստացանք փրկագինը
մարել մեկ շաբաթից, երկու օրից, վաղը, մի ժամից: Հետո սպանեցինք նրան ու փրկեցինք քեզ...
Փրկեցինք այս զիզի-բիզի, գույնզգույն, քաղցրեմի աշխարհից... Փրկեցինք, որ սիրենք, համբուրենք, գուրգուրենք քեզ, կենակցենք
հետո, հիդիանանք... Փրկեցինք, որ դենք քեզ մեր գլխի վրա, ծնկենք քո առջեւ, երկրպագենք քեզ ու փրկություն աղերսենք...
Եղիր քրոջ ու մոր պես... Քերիր մեր փվվող մարմիններից դեերի կղկղանքը... Կարկատիր մեր քրքրված վերքերը... Շունչ փչիր մեր
նեխահոտ արձակող մարմինների մեջ... Մեր սառը, օտար, լարծուն խոռոչները լցրու հավիտենական թափանցիկով...
Հայր մեր, որ շշու՞մ ես... Արարիր ինձ նորից...

Ռեքվիեմ

Ջեք-փոթն ամբողջովին շահած, ձեռքերս գրպաններս խոթած, սիգարետը ատամներով սեղմած, կեպիս ծուռ, գողական քայլվածքով
եւ անմաքուր թքած՝ դուրս եմ գալիս խաղից:
Ահա ես՝ նա, ով մատը տնկել է լուսնին:
Ես գնում եմ պարարտացնելու հողը աշխարհի ամենագեղեցիկ ու թերեւս ամենասիրելի մարմնով: Կրակի վավաշուտ լեզուներին եմ
հանձնում անշեշ կրքերս: Շնչառությունս նվիրում եմ քամուն: Արյունս ներարկեք հիվանդ գետերին:
Հիշե՛ք՝ նիկոտինի թսան միլիգրամը կարող է ձի սպանել: Հիսուն գրամ օդին ի գորու է բացել չակրաները: Իսկ մանանեխի հատիկի
չափ հավատ ավելի լավ է չունենալ:
Հիրավի ես՝ նա, ով մատը տնկել է լուսնին:
Ես գնում եմ, իսկ դուք շարունակեք խաղալ: Մատս ընդ ձեզ, ես չեմ վերադառնալու նրա հետեւից... Չառ:

""
"" ""

ծնողներին, բարեկամներին,
ընկերներին, հարեւաններին,
սիրածներին, ընթերցողներին,
քննադատներին, տառապյալ
ազգին եւ Տեր Աստծուն
անորոշ գործունեությամբ
զբաղվող, հիմնավոր կացարան
չունեցող անծից

Դիմում

Հանկարծակի վրա հասած դժբախտության պատճառով խնդրում եմ ազատել ինձ խրատաբանությունից, պատվիրաններից,
տրտունջներից, պահանջներից, բողոքներից, խանդի տեսարաններից, ազգային գաղափարներից: Ես էլ չեմ ուզում կաշվից դուրս
գալ՝ ձեր չափանիշներին համապատասխանելու համար: Ես էլ չեմ ուզում գլուխկոնծի տալ՝ ձեզ զվարթացնելու համար: Ես էլ չեմ
ուզում տառապել՝ ձեզ երջանկացնելու համար: Ես հոգնել եմ, ես խելագարվել եմ, ես ընկել եմ մեքենայի տակ, ես
ճառագայթափարվել եմ, ես տառապում եմ արյան ռակով, ես արդեն մեռել եմ, ես՝ պաս...
Նախապես շնորհակալ եմ:

Դիմող՝ / /
... .. թ.

Հայ պոեզիայի անթոլոգիա
Բովանդակություն
/պոեմ/

Հայոց պատմություն	1
Մատյան ողբերգության	101
Վերջ Հայաստանի	102
Սիրեցի, յարս տարան	103
Հացի խնդիր	200
Անտունի	209

Օտար, ամայի ճամփեցի վրա	220
Պանդուխտ հայը	224
Դեպի Մասիս	225
Ձախորդ օրերը կուգան ու կերթան	229
Հայ ժողովրդի երգը	240
Երգ պանդուխտի	240
Օտար երկրում	280
Հայրենիքից հեռու	280
Հեյ, ջան հայրենիք	299
Յարս նստել վանքի դռան	310
Ծամերդ հյուսել	311
Ամեն լավերդ ցույց ես տալիս	311
Մայրս	312
Ջուխտակ շամամերդ ծոցումդ դրած	315
Յոթը որդով սեղան նստել	360
Քույր իմ նազելի	365
Ես քեզ նշանի մատանի բերի	366
Դու ինձ մերժեցիր	366
Բարեւ կուտամ, չես առնի	380
Աչքս մնաց քո կրծքին	381
Մարալ աղջիկ	389
Լուսնյակ գիշեր, քուն չունեմ	390
Հերիք է, յար ջան	401
Տուն արի	401
Էսօր ձեր տուն մեծ խնջույք կա	401
Վայ թե մեկի յար ես դառել	402
Մասիս սարը	405
Սարերը ման եմ եկել	407
Որտե՞ր էս, յար, որտե՞ր էս	407
Գողի ջեյրան	408
Նշանեցին Մարոյին	415
Լինեի չոբան սարերում հեռու	418
Արագի ափին տունս լիներ	420
Ամպի տակից ջուր է գալիս	421
Պախրան ձագին ծիծ է տալիս	422
Ո՞վ կա մորից վեր	423
Ներկա եղա սիրեկանիս պսակին	424
Համեստ աղջիկ	430
Ո՞վ է լինելու իմ հարսնացուն	431
Մազկտրածը	435
Մայր, կգտնեմ այնպիսի մի հարս	436
Մոր կասկածը	442
Կույսի մեջ էլ կույս չեմ գտնում	444
Օ, իմ սուրբ Մասիս	445
Կույս ծծերդ կույս կժերով	450
Հոգի կուտամ, հոգի տուր ինձ	480
Այս գիշեր, քույր իմ, մինչեւ լուսաբաց	486
Մենք Մասիսին, Մասիսը մեզ	490
Ինձ Մասիսից գրկող ձեռքը	498
Երբ եկիչերին մեր տունը խուժեց	498
Մեծ եղեռնը	500
Դանթեական	555
Սիրեցի, յարս տարան	602
Հայրենիքիս կարոտ մնացի	640
Ինչ օրի հասա, սեւ օրի հասա	648
Կորցրեցի լավերս	672
Ես իմ անուշ Հայաստանի	673
Էդ ի՞նչ կրակ կանես, մերիկ	689
Քելե, լառ, քելե երթանք	690
Կռունկ, ուրկե՞ կուգաս	715
Երբ ես մեռնեմ, ինձ կթաղեք	720
Բարձր սարի վրա՝ վանք	751
Հայրենի ծովս	755
Սուրբ օջախդ	760
Հայոց լեզուն	777
Մայր տաճարը	800
Լուսավորչի կանթեղը	800
Մեր պատմիչները եւ մեր գուսանները	800
Հայ ճարտարապետությունը	800
Մի խառնեք մեզ ձեր վայրի արջի ցեղերին	801
Մենք քիչ ենք, բայց մեզ հայ են ասում	820
Ո՞վ Արարատ ունի	845
Արարատին քար զարկողը	850
Այլոց դավերը	889
Թե ինչ ուղարկեց թուրքի սուլթանը Մոսկովի ցարին	900
Խրիմյան հայրիկը	906
Մասիսի հույսով	919
Ռազմակոչ	920
Ձոն սպարապետին	922
Չորահավաք	939
Ելի՛ր, ո՞վ հայ	944
Հայ եմ ես, հայ ես դու	968
Հայ ենք մենք, որտեղ էլ որ լինենք	980
Որտեղ շքեղ մի շիրիմ կա	988

Ծաղիկներ, ծաղիկներ, ծաղիկներ բերեմ	990
Որտեղ հաց, էնտեղ կաց	991
Մասիսի հույսով	992
Երգեր մասիսված	992
Եղեռնահար հայոց սիրտը	1000
Մեր հայրենիք թշվառ, անտեր	1005
Սիրող որդիներից	1010

Բանաստեղծություններ

[Հենոկ Էդուան](#)

Թեթեւ հագնված կանայք

Մշուշոտ պատկերի մեջ
 ուրվագծվում են օրերի եզրերը
 ամեն մեկն իր շարժման վայրում,
 եւ գեղեցկության հպումը երկրին
 արթնացնում է երազի
 ննջած հոգիներին
 եւ թեթեւ հագնված կանայք - անձրեւից
 եւ ցողից թրջված
 հաշվում են իրենց գեղեցկության վերջին
 տոկոսները,
 որ նրանց չեն պաշտպանում
 երբեք ոչ մի տեղ
 եւ շահույթ չեն տալիս:

Միակ շոշափելին

Օրը գլորվում էր
 քաղաքի վրայով,
 գնում, հետ գալիս
 ինչպես Սիզիֆի քար:

Եվ կեսօրվա մեջ
 փողկապն արձակելով
 փորձում էր ապրել
 մի հին տղամարդ:

Հոգին խաչվում էր,
 իսկ մարմինը դեռ
 շրջում էր փողոցում,

ուր միակ շոշափելին
 հենց իր ստվերն էր:

Անբնակիչ տուն

1.
 Շարժելով տարիների շարքերը դեպի ետ - մի՞թե
 ես եղել եմ այնտեղ, ուր ապրել եմ - արոյո՞ք
 ապրել եմ այնտեղ, ուր եղել եմ -
 ժամանակի սեղմված որովայնում: Ես գուցե
 շարժվում եմ, ինչպես երազի մեջ մի
 բնապատկեր, որ լողում է հիշողության
 Եկրանի վրայով: Նորից բառերը
 հեռանում են իրենց նշանաձողերից: Նորից
 ես այնտեղ եմ, որտեղ չեմ ապրել -
 անբնակիչ տուն, որտեղ ես չեմ եղել,
 կամ գուցե եղել եմ, գուցե դա ինքս եմ,
 որ դուռը չեմ փակել, երբ դուրս եմ եկել:

3.
 Ապրելն արվեստ չէ,
 եւ չունի վարպետություն
 եւ ճարպիկ մտքերի
 առաքելություն կամ ժամանակից
 գողացված վստահություն,
 եւ ինքը ձեւ չունի, եւ բոլոր իրերը
 ձեւավորվում են միայն նրա մեջ:
 Ձեռքդ դիր նրանց վրա,
 եւ նրանք բոլորը կսկսեն բաբախել
 քո սրտի զարկի մեջ: Ապրելը բառ չէ
 քո կյանքի էջին գրած,
 այլ մի լուռ սպանություն
 սեփական շեմի առաջ:

Դահիճների ժամանակը

1.
 Ովքե՞ր են իշխում հիմա -
 նրանք, որ չունեն իշխանություն,
 չունեն նշաններ,
 եկել են ընդերքներից,
 ինքնիշխան իշխանություն,
 հենված իր ստվերին,
 ձայների արձագանքին,
 քաղցածի չարչարանքին,
 փախուստի արահետին - /պեղածո ճանապարհին
 դիտարկելով/
 ձայներ՝ անարձագանք, անհեռանկար,
 եւ լքվածների նավերի համար
 հրվանդան անբարեհույս:

Ովքե՞ր են իշխում հիմա
 ոտքերով գետածիու
 եւ իսկա գանգով դեզներատի,
 կույ տալով հողն ու քարը, լիճն ու
 անապատը,
 խողովակները, ասֆալտը, փշալարը:
 Ովքե՞ր են իշխում հիմա
 հիմնավորը դեմքերին,
 ճակատագրերի շփոթված երամին,
 ուր անկման վախից վիրավոր մի թռչուն
 թռչելն է թափահարում
 մերկ եւ անփետուր:

2.
 Մագերը սանրված են, ուղիղ,
 հագին կոստյում է բոլորովին նոր, ասես մետաղից,
 եւ թրի նման իջնում է փողկապը
 փնտրելով վիզը հերթական գոհի:
 Ունի վկայական մեռած օրերի, մեռած խոսքերի,
 մեռած հոգիների,
 ապրում է ստվերի տակ իրականության:
 Լռությունը խիստ է, հայացքը շեղքի պես
 կտրում է մոտեցողին եւ փակվում նորից
 անշարժ աչքի մեջ:
 Եւ չի խոստանում, միայն ցանկանում է:
 Մեռած դեմքին անշարժ
 նստած է սեւ ժանգը սնափառության,
 իսկ մարդիկ իր կողքով անցնում են անշատված
 իրենց ստվերներից
 եւ անհետանում
 կարմիր խոռոչի մեջ սեփական արյան:

Վերցնում ես դիմակը երկդիմի գոյության -
 նրանից այն կողմ
 մահ եւ ամայություն,
 պատրանք եւ խաբկանք
 եւ կեսգիշերվա մռայլ մղձավանջ,
 որ չքանում է եւ անհետանում -
 երբ արթնանում ես:

1996թ.

Ձնջված մետաֆիզիկա

Ժամանակի ժանգոտված
 ցուցանակից այս կողմ
 դեմքեր եւ անուններ
 կորած գիշերների անեզրության մեջ,
 անլուսին երկինքներ
 անշարժ թեքված քո կյանքի

7.

Դու հավասարվիր քո խոսքին, ինչպես մեռածներն՝ իրենց լուռությանը, այստեղ, այս վայրում, ուր չկա երկխոսություն, եւ ուր մենությունն է միակ իրականը:

վայրերի վրա,
եւ - Դրեշտակի մետաղե թելերից
թափվող ստվերներ,
սիրո թռչուններ,
որ ժամանակի
ցուցանակի ետեւից
ելնում են, մոտենում
եւ իրենց թելերի արագ շարժումով
ջնջում քո ստեղծած մետաֆիզիկան:

9.

Պոկիր ցուցանակը
Երկրի վրայից, որ հոգիները
անհունում ճախրող
չտեսնեն այլեւս
հուշկապարհիկների այս կղզին
վտանգավոր,
այս անկման վայրը
խիզախ նավորդների:

12.

Սերն անհնար, սիրե՞լ եմ, չե՞մ սիրել,
երբ ձգտել եմ հասնել հնարավորին,
իսկ սերն անհնար է, իրականություն -
որից դուրս քո կյանքը ամասպել է սոսկ:
Երկու ձայներ են ականջներիս մեջ,
ես ավարտվում եմ,
ինչը սիրել եմ՝իմը չի եղել,
իմն է եղել այն՝ ինչ պարտադիր էր -
մետաղ, քար, քամի - ձեռքիդ վրա
թունավոր խայթող ճակատագրի:
Նորից ժամն է հնչում, ելիր, բարեկամ,
սլաքները քո կյանքի թելերն են կտրում:

13.

Եթե զգացմունքը իմ մեջ գիշերն է -
ուրեմն ես հիմա լողում եմ անպատասխան
մի երագի մեջ: Երագն ապրել չէ,
ապրելը երագ չէ, ոչ ամենեւին,
Լուսնի մարդ, թեքված
աշխարհի արահետին:
888ոյության արյունատար զարկերակի մեջ
ոչ ցերեկը կա, ոչ գիշեր:
Կյանքի պատասխանը հենց կյանքն է,
զգացմունքի պատասխանը զգացմունքը չէ,
այլ նրա մշտական վերածնունդը
Լուսնային մարդու անթարթ հսկման մեջ:
2000թ.

«Ֆալկենշտեյն»

Առասի Ավագան

Դիմացը սեւ պատ էր:

- Գեղեցիկ է, չէ՞...- ասաց կողքիս՝ մի քիչ ետեւում կանգնած գերմանացի ուղեւորներից մեկը: Այդ երկու բառը ես հասկացա եւ, կասկածի տակ չառնելու համար եվրոպացու խոսքը, սեւեռեցի հայացքս սեւի մեջ ինչ-որ ձեւ, գույն հայտնաբերելու նպատակով: Պատրաստ էի ասելու՝ «գեղեցիկ է», սակայն գոնե ինքս ինձ պետք է պարզեի՝ սեւի մեջ ի՞նչ կա: Դայի քաղաքավարությունը՝ օտարների նկատմամբ եւ հայի սեւեռումը՝ իր մեջ: Նահանջի, երկբայության համար տեղ ապահովելու համար, գլխով կիսահավանության նշան արեցի եւ վերստին սեւեռվեցի սեւի մեջ: Դայի սեւեռումը/դիսկ եմ անում ինձ վերագրել հայի հատկությունները/տրամաբանություն չունի, կամ էլ՝ շատ խորքային անիմանալի տրամաբանության արդյունք է: Խեղճ իմ ուղեղ... Ինչքան եմ քեզ չարչարել... Եվ էլի չարչարում եմ՝ ինչ-որ մի բան հասկանալու, այժմ՝ տեսնելու համար: Եվ ոչինչ չկարողացա նշմարել: «Ֆալկենշտեյն» նավի շարժիչների դրոյունն էի զգում ողնաշարովս վարից վեր, իսկ ցուրկի ճեղքած ծովի ալիքների միալար, հերոսու ու հոգեմաշ ճողփյունը պարտադրում էր իր կամքն ու տրամադրությունը:

- Դուք է՛լ եք դեպի լիճը ուղեւորվում...- խտտացնող քաղաքավարությամբ հարցրեց իմ կողքին՝ մի քիչ ետեւում կանգնած անձնավորությունը:

- Այո՛...- փնթփնթացի ես:- Կղզի,- ավելացրեցի, քանի որ իմ՝ աշխարհի անկյունները տեսնելու մղումը տանում էր կղզի, որտեղ հռչակավոր գեղեցկության լիճ կար: Եվ եթե այդ սեւ նիստի մեջ ես ոչինչ չեմ տեսնում, իսկ նա...

- Գեղեցիկ՝ է, - այս անգամ հաստատեց կողքիս՝ մի քիչ ետեւում կանգնածը, եւ ես առաջին անգամ շրջվեցի դեպի նա: Նա ժպտաց, ես քաղաքավար պատասխանեցի նույն կերպ: Եվ եթե մարդիկ անընդհատ նման ձեւով հասկանան իրար, նման ձեւով պարզեն իրականությունը, ի՞նչ է լինելու ճշմարտությունը սահմանելու, եղելությունը ճշտելու, աշխարհի կյանքը շարունակելու վիճակը:

Սեւ հարթությունը ցայաբացին պատռվածք տվեց, եւ մեր «Ֆալկենշտեյնը» մտավ պատռվածքի մեջ:

- Մեկ ժամից կհասնենք,- նորեն կողքիս՝ մի քիչ հետեւում հայտնվեց «Ֆալկենշտեյնի» ուղեւորը: Ես թեքեցի գլուխս: Լիճը շա՛տ գեղեցիկ է...- ասաց նա՝ արդեն դեմուդիդ: Ապա ժպտաց:

- Ասում են՝ նրա ափին պառկել չի կարելի...

Ես, նորեն քաղաքավարության համար, հարցական նայեցի: Նա կրկին ժպտաց:

- Ասում են՝ գետինը սոված է...

Գերմաներեն «սոված» բառը, երեւի թէ, մի ուրիշ իմաստ է պարունակում. այդպես է լինում, երբ լեզվին չես տիրապետում: Բառը ավելի այլ խորհուրդ է ներկրում նախադասության մնացած բառերի ընկերակցությամբ: Ես միայն «սոված» հասկացա ու նորեն ժպտացի. ինձ համար այնքան էլ կարելուր չէր նրա ասածը:

Կղզին թերակղզի էր, սակայն նրա կապը մայր հողի հետ այնքան չէին էր, հարաբերությունը՝ այնքան հեղհեղուկ, որ այդ փոքրիկ հողակտորը ինքնաբավ էր, իր անկախությունն էր հարկավորում:

Փոքրիկ, ճոճան տախտակամածը, որ գրեթէ թաքնված էր ծովի վրա խոնարհված սաղարթի տակ եւ ծառայում էր որպես նավամատույց, շարունակվում էր կղզի մտնող նեղ արահետով: Արահետը ճյուղավորվում էր, եւ մի ճյուղը՝ դեպի լիճ ուղղություն հուշող ցուցատախտակներով, խորհրդավոր փսփսուկով տանում էր ջրերից եկող տամկության միջով:

Այնտեղից, որտեղից սկսվում էր լճի արահետը, երեւացին սագեր: Զքնաղ, ճերմակ, աչքերի շուրջ՝ սեւ օղակներով, ծառերի խոտույնից ամառացած կիսախավարում նրանք փայլեցին էին շաղ տալիս, ու ցուցում էր բանդագուշանք միջավայրը: Այն է՝ ես պիտի մոտենայի նրանցից ամառիկին, երբ, անսպասելիորեն ինձ համար, ինքը արագաբայլ շարժվեց ինձ վրա եւ կտցահարեց ձեռքս: Ես մի կողմ ցատկեցի՝ տակավին չարժեքորելով կատարվածը: Հարձակվող սագի ամառիկն անգամ էի հանդիպում: Հետո, գնալով, ավելի անհասկանալի դարձավ. երկրորդ սագը արդեն հեռվից վազում էր դեպի ինձ: Ես մի կողմ քաշվեցի՝ արագացնելով ընթացքս, բայց սագը հասավ ու ավելի վայրագորեն կտցահարեց թեւս, ոտքս, ազդրս... Սա իսկական գիշատիչ էր... Ես համարյա փախա: Իմ ամոթալի փախուստը սագերն ընդունում էին բավարարվածությամբ, որովհետեւ այլեւս կասեցնում էին հետապնդումը: Վտանգավոր էին առջեւում գտնվող թեւավորները. մտքովս անցավ, որ նրանք հսկում են արահետը. յուրաքանչյուրը՝ իր հատվածը:

Լիճը, թերեւս՝ լճակը, խաղաղ էր, լուռ, ինձ ծանոթ ու անծանոթ զանազան բուսականությամբ: Ափերը փափուկ էին, թավշապատ... Հեռվում, ծառերի արանքներում ճոճվող մի քանի լանտիկներում մարդիկ էին ընդգոգվել տեղանքի հուռուքի մեջ:

Իրականությունը փոխհատուցեց բոլոր իմ դժվարություններն ու անծանոթ անհարմարությունները. օդի շոյանքը, լճի թափանցիկ մակերեսը, որի տակ էլի ինքն էր, իր ենթագիտակցությունը՝ բազմաթիվ հաշտ ու իմաստալից շերտերով, որոնց ներքո անգիտակցական էր, անվերջանալի... Թվում էր՝ լիճը հատակ չունի... Ափերն էին նրան պահում, որ չընկնի, չգնա հավերժություն... Եվ ամեն ինչ ժամանակ չունեւր, չափումներից դուրս էր...

Օդոլորտի թանձրուկն էր՝ սկիզբն ու վերջը միասին, այն անիմաստալիս, որի մեջ կայծույն ես որպես պահեր լույս:

Ամեն ինչ հրապուրում էր, կանչում... Հոգնած ոտքերս ծալվում էին, եւ ես նստեցի թավշյա կանաչի վրա, ապա կողքի ընկա, հետո մեքս հանգիստ ուզեց, եւ մարմինս փռեցի՝ դեմքով դեպի երկինք... Ու գարմանալի էր ամբողջի միասնականությունը՝ սովորականի հակառակ՝ լիճը արտացոլվում էր երկնքում... Նայում էի լճին երկնքում, երկնքին՝ լճում, եւ ընդարմություն էր ժողովում եութունս, մարմինս անկշռանում էր ու վերեւանվում դեպի երկինք... Ու ես ընկղմվում էի լիճը՝ երկնքում... Եվ ես ընկղմվում էի ավելի ու ավելի խորը...

Հողը նահանջում էր իմ ներքո, եւ ես իջնում էի նրա ընդերքը... Քիչ անց, երկինքը երեւաց շրջանակի մեջ, եւ ես հասկացա, որ դա ինձ ընդգրկող փոսի եզրերն են: Ես սուզվել էի գետնի մեջ: Հիշեցի «Ֆալկենշտեյնի» ուղեւորի «գետինը սոված է» խոսքը: Ուրեմն՝ ես ուղիղ էի ընկալել օտար բառը: Հողը սոված էր, եւ ես նրան ցանկալի էի: Եվ ինչն էր ամենամասնավորը, զարմանալիս՝ նա էլ էր ինձ ցանկալի...

Կիլ, Գերմանիա
2000թ.

Ալժիրցի փիլիսոփան կամ մի կողքի վրա [Վարդան Զայույան](#)

Ալժիրցի նշանավոր մտածող Ալդի Բիրոնդի Ֆոսդի Ֆորնիկո Ֆոկոսը ծնվել է 1930թ., այսինքն՝ նույն թվականին, ինչ՝ ոչ պակաս հայտնի փիլիսոփա Ժակ Դերիդան: Բախտի քմահաճույքով նրանք հաճախել են նույն դպրոցը: Դրանք ֆաշիզմի տարիներն էին, եւ փոքրիկ Ժակին հաճախ էին հետապնդում ու ծանակում «չհուդի ծագ» մականունով: Մի անգամ նրանց՝ Ժակին ու Ալդին, փողոցում կանգնեցնում է Հուսեյն անունով աժդահան եւ սկսում վիրավորել անպաշտպան հրեային: Փոքրամարմին Ալդին գրպանից հանում է պարսատիկը եւ մեկ հարվածով գետնին փռում դաժան հսկային: Այդ պահից նրա մականունը դառնում է «Բերբեր Դաուր»: Այս դեպքը առիթ դարձավ, որ երկու ապագա մեծ փիլիսոփաների միջեւ առաջանա խոր ու անջնջելի համակրանք:

Հուսեյնը, որ նաեւ թուրքական համայնքի եւ տեղի արաբ ֆաշիստների պարագլուխն էր, սարսափելի վիրավորված էր: Կնոջ խորհրդով նա Իկոնիայից /Թուրքիա/ դուրս է գրում մի քուռ, որը վերացնում էր տղամարդու մազածածկույթը, վերածում կնոջ եւ ներշնչում աջ, պահպանողական հայացքներ: Հատուկ ուղարկված գերմանական լրտեսը թափանցում է փոքրիկ Ալդիի ննջարանը, բայց հասցնում է քուռը տարածել միայն նրա դեմքի ձախ կողմում: Հետագայում Ալդի Բիրոնդիի ձախ կողմը ձեռք է բերում նրբագեղ կանացի գծեր, աչքը դառնում է դարչնագույն, իսկ աջ կողմը մնում է անապականորեն գեղեցիկ եւ առատ մազածածկույթ է հայտնվում՝ բեղ ու մորուքի կեսը: Նրա աջ աչքը նույնքան տպավորիչ էր եւ կարմիր սուտակի գույնով փայլում էր նույնիսկ ամենամուգ գիշերվա մեջ: Իսկ անապականությունը չէր տուժել. ընդհակառակը՝ ձախ կիսադեմի /ուղեղի աջ կողմի/ շնորհիվ նա

կարողանում էր ճանաչել ու գուշակել կանանց ցանկություններն ու չար մտադրությունները: Յավոք, բարի մտադրությունները նրան անհասկանալի էին մնում: Նա գիշերները քնում էր միայն աջ կողմի վրա, որպեսզի պահպանողական մտքերը չհիշեն իրեն, չէր քնում մեջքի վրա, որ աջ ու ձախ գաղափարները չմիախառնվեն: Դա հավանաբար միակ անհարմարությունն էր, որ նա ունեցավ այդ պատահարի պատճառով:

50-ականներին Ալդիի ու Ժակի ճանապարհները բաժանվում են. չնայած «Բերբեր Դաուդը» հավանաբար էր աթեիզմին, հոր պահանջով նա մի քանի տարի ուսանում է իսլամական աշխարհի ամենաշնամավոր՝ Կահիրեի Մեդրեսեում: Այդ պայմանով միայն փիլիսոփայական գործը ընդունակություններ ունեցող պատանին կարող էր ուսումը շարունակել Փարիզում, իր մանկության ընկերոջ կողքին:

50-ականների վերջին նրան տեսնում ենք Փարիզում, քիչ անց՝ «Թել Զելին» հարող խմբակի անդամների մեջ: Սակայն հանդեսի էջերում նա համարյա չի հայտնվում. հեղինակել է միայն մի փոքրիկ գրախոսություն: Բայց ալժիրյան ճգնաժամի ավարտին գրում է «Ալժիրյան փիլիսոփայություն» գիրքը, որի առաջին բառերը այսօր ամենաշատ ցիտվող արտահայտությունն են. «Եվրոպան ինչ-որ բան ձեռնարկելուց առաջ հարկ է, որ արթնացնի իր խիղճը»: Դա արեւմտյան իմպերիալիզմին ուղղված ամենացնցող հորդորն էր:

Սակայն 1976թ. մյուսխեսնյան իրադարձությունները մի ամբողջ հեղաշրջում են կատարում Ալդի Բիրոնդիի ծրագրերի մեջ: Նա հասկանում է, որ իր նպատակը արաբա-եվրոպական համերաշխության որոնումն է, աֆրո-ասիական լեզվա-մշակութային հիմնաշերտի պեղումները: Նա երկար ճանապարհորդում է Աֆրիկայի ու Ասիայի երկրներով, որի ընթացքում ստեղծում է իր լինգվա-գենետիկ խորքային խիրոմանտիայի մեթոդը, որը թույլ է տալիս հետազոտել մարդկության պատմության նեոլիթային շրջանը: Այդ մեթոդի եուլոյունը Թանատոսի եւ Էրոսի լիբիդոգ էներգիաների հատման հարթության վրա առաջացած գծերի միջոցով խիրոմանտիկ խորասուզման սեանսի ժամանակ կոնցեպտի ճակատագիրը՝ նեոլիթային անցյալը, մոդեռնիստական ներկան եւ պոստմոդեռնիստական ապագան հետաքննելն է:

1984 թվականին Ալդին հայտնվում է Զրդստանի լեռներում՝ նպատակ ունենալով Լուսնասիրել քրդերի եւ հատկապես եզդիների նիստուկացը: Այստեղ նա ծանոթանում է ԶԲԿ առաջնորդ Աբդուլա Օջալանի հետ:

Օջալանը ծնվել է ջուրդ հորից եւ թուրք մորից, բայց դաստիարակվել է հոր բարեկամ հայկական ընտանիքում: Նա իսկապես մեծ ինտենսիվացիոնալիստ է, անկուն հեղափոխական եւ մի ինքնատիպ տեսության հեղինակ, ըստ որի եզդիները պահպանել են հնագույն պատմական զգացողություններ ու հիշողություններ: Ալդի Բիրոնդիի ներկայությունը բարերար ազդեցություն ունեցավ ԶԲԿ տեսական մտքի վրա, եւ շուտով մտածողը մեծ հեղինակություն ձեռք բերեց ողջ Մերձավոր Արևելքում: Եթե փոքր, ճնշված ազգերը՝ քրդեր, եզդիներ, հայեր, ասորիներ եւ այլն, Օջալանին՝ Ափոյին, համարում էին իրենց փրկիչը, ապա Ալդի Բիրոնդիին՝ Բերբեր Դաուդին, սկսեցին համեմատել Զովհաննես Կարապետի հետ:

Յավոք 1997թ. Ալդի Բիրոնդին վիրավորվում է եւ տեղափոխվում Զոլանդիա: Օջալանը, մնալով առանց իր տեսաբանի, մի շարք սխալներ է գործում, որի հետեւանքով շարժումը պարտվում է, իսկ ինքը՝ Օջալանը, ձերբակալվում:

Հաջորդ տարի Ալդի Բիրոնդին հրապարակում է իր «1001 հեքիաթային կոնցեպտ մարդկության գիշերվա խորքից» գիրքը: Այն «սոցիոլոգիական ինտերվենցիայի» տեսության հեղինակ Ալեն Տուրենի կողմից անվանվում է հերյուրանք, Սերժ Մոսկովիչին ավելի զուսպ կոչում է ստեղծագործությունն՝ անհիմն, իսկ Նախկին ընկերները՝ Լիոտարը եւ Դերիդան, երկը ընդունում են միանգամայն սառը: Ոգեւորված էր միայն «Ժամանակակից մոդեռնիզմ» գրքի հեղինակ գերմանացի գրականագետ Պիտեր Բերգերը:

2000թ. մայիսի մեկին՝ Աշխատավորների միջազգային համերաշխության օրը, Ալդի Բիրոնդին կնքում է իր մահկանացուն: Մահվանից մեկ պահ առաջ նա այնուամենայնիվ շրջվում է ձախ կողմի վրա:

Հայ փիլիսոփան կամ հատակում

Մի հայ փիլիսոփա, որն այնքան անհայտ էր, որ նրա մասին ոչ մի թերթ չմահախոսական չտպագրեց, իրենից հետո թողեց մի բնակարան, որի բնակարանի մի մասը կազմում էին 84 թափված թղթեր, ինչպես կասեր Վասիլի Ռոզանովը, որոնցից երկուսը նմուշի համար ներկայացնում ենք ձեր ուշադրությանը, որպեսզի դուք գոնե ինչ-որ մի պատկերացում կազմեք այդ անհասկանալի էակների վարքուբարքի մասին:

1. Մեկը մյուսին հարցրեց, թե որն է տայերի լեզվում ամենախիստ հայիոյանքը: Մյուսը սկսեց բացատրել, որ ամենաթունոզ հայիոյանքը ցանկացած մշակույթի մեջ ամենամեծ սեռական ստորացումը արտահայտող դարձվածքն է, եւ հետեւաբար հնարավոր են ամենատարօրինակ տարբերակներ: Ունենալով ազատ սեռական սովորություններ՝ տայերը ոգիների աշխարհի հետ են կապել իրենց ամենաթունոզ հայիոյանքը, որը ինչու է այսպես՝ շուն-կլամ-դուն, թարգմանաբար՝ «քո կատուն ջուրը ընկնի»:*

- Այո,- տխուր նկատեց մեկը,- հավանաբար շատ ստորացուցիչ է հուսահատությունից ջուրը ճանկռելը:

- Շատ դիպուկ է նկատված,- ոգեւորվեց մյուսը, որն, ընդհանուր առմամբ, Տախլանդի անարխիստական շարժումները ուսումնասիրող պատմաբան էր,- ջրահեղձները ոչ մի տեղ հարգի չեն, Լույնիսկ՝ Հայաստանում, որտեղ նրանց անհանգիստ հոգիները վերածվում են գյոռնափշտիկների, մինչդեռ Տախլանդում դրանք նաեւ սեռական մոլություններ կրող ոգիներ են:

Այս եւ այլ թեմաների շուրջ լճակի հատակին գրուցում էին երկու ջրահեղձ:

2. Մեկերը, ձարխոտերը, պտերը, ինչպես հայտնի է, բազմանում են քամուց քշվող սպորներով: Դրանք շատ ևուրբ, փոշենման գոյակցություններ են, որոնք կենսաբանական էվոլյուցիայի արդյունքում վերածվեցին բանական էակների:** Շնորհիվ իրենց ծագումի նրանք այնքան թեթեւ էին, որ հաջողությամբ կարող են մեր կողմից կոչվել Օդային Մարդիկ: Առաջին հերթին հարկ է նշել նրանց խաղաղասիրությունը, որն ինչ-որ տեղ Լույնիսկ անհրաժեշտություն էր, քանի որ ունակ չէին իրենց ձեռքում պահել ամենաթեթեւ դասակը, էլ չենք ասում գնդացրի մասին: Բայց ամենահետաքրքիրը նրանց էրոտիկ կյանքն էր: Ինչպես հայտնի է,

Էրոտիկայի նպատակը փոխադարձ ներթափանցումն է՝ հասկացված ուղիղ եւ փոխաբերական իմաստով: Կազմված լինելով նուրբ սուբստանցիայից, նրանք կարողանում են իրագործել այն, ինչ գովազդային խորհրմաստությունը անվանում է՝ երկուսը մեկի մեջ: Նույնիսկ ամենանցողիկ հրապուրանքի դեպքում, երբ համատեղումը տեսում էր մի քանի րոպե, փոխափանցումն ու փոխհասկացումը այնքան խորն էր լինում, որ դրա մասին չէր կարող երագել ոչ մի մարդկային զույգ: Մի խոսքով՝ չքնաղ ռասա էր:

Բայց պատահեց դժբախտություն. փչեց քամին...

Իրականում մեր հերոսը միայն պայմանականորեն էր փիլիսոփա: Նրա իսկական մասնագիտությունը բնագիտական էր, չէ՛մ հիշում՝ ինչ. ֆիզիկո՞ւս, թե՞՝ քիմիկոս, բայց դատելով հետազոտությունների բնույթից, հավանաբար՝ կենսաքիմիկոս: Նա փնտրում էր «փիլիսոփայական քարին» նմանվող նյութեր, եթե դատենք նրա հայտնաբերածի ազդեցատային վիճակից՝ «փիլիսոփայական հեղուկ», որը նա ստանում էր սնկերի, ձարխոտերի ու պտերի սպորներից: Հեղուկ մեղմ ազդեցությամբ թմրանյութի տպավորություն էր թողնում, որը ներգործում էր միայն փիլիսոփայական հարցերի մասին խորհելիս՝ ճշմարտության, հավերժության եւ այլն:

Այդ նյութի առաջին փորձարկմանը ներկա էր փիլիսոփայի սիրեցյալը՝ տիկին X-ը, որը շատ հմայիչ ու անկեղծ անձնավորություն էր, եւ, իր արարքից դատելով՝ շատ արի կամ շատ սիրահարված: Տիկին X-ը կարողացավ համոզել, որ առաջին փորձարկումը կատարվի իր վրա: Առաջին տասը րոպեի ընթացքում տիկինն իրեն հրաշալի էր զգում, բայց հետո վերածվեց ծխի սպիտակ քուլայի:

«Բոլոր կանայք խաբեբաներ են». դառնորեն մտածեց փիլիսոփա կենսաքիմիկոսը**** թաց աչքերով հետեւելով, թե ինչպես է ցնդում ծխի քուլան, եւ մի շարժումով ըմպեց իր հեղուկի ողջ պաշարը: Ընդամենը հինգ րոպե անց նա վերածվեց գարշահոտ լճակի, որի հատակին երկու դիակ էին լողում...

* Կարելի է միայն չարախնդալ մեր փիլիսոփայի միամտության վրա: Առողջ դատողությունը մեզ հուշում է, որ ոչ մի մշակույթում «քո կատուն ջուրը ընկնի» արտահայտությունը չի կարող հայիոյանք լինել, քանզի հայիոյանքը արտահայտում է մտադրություն, բայց՝ ուղղակի, ոչ երբեք՝ փոխաբերությամբ: Թեեւ, որքան ինձ հայտնի է, տայերեն «կատուն» եւ «հեշտոց» բառերը ինչնում են միանման, եւ հնարավոր է, որ մյուս գրուցակիցը, նկատի ունենալով առաջինի սեռը, հմայքը եւ նրբամտությունը, խուսափում է իրական թարգմանությունից:

**Չուր չէ, որ հայ փիլիսոփայությունը նորագույն ժամանակներում չի տվել ոչ մի նշանակալի դեմք: Սպորներից Էվոլյուցիայի ճանապարհով բանական էակներ չեն կարող առաջանալ, քանզի նրանք անհատ օրգանիզմի միայն մի հատվածն են, հետեւաբար կարող են առաջացնել միայն բանական էակի մի մասը, ասենք՝ ստվերը:

***Ոմանք կարծում են, որ փիլիսոփայի հանդիմանությունը եւ դառնությունը վերաբերում են տիկին X-ի բարոյական կերպարին: Ամեն մեկը դատում է իր փչացածության համեմատ: Հստակորեն նշված է, որ տիկին X-ը անկեղծ, արի եւ հմայիչ մարդ էր: Դրվագի իմաստը հարկավոր է նշել սգի եւ կսկիծի տրամաբանության մեջ, երբ սիրեցյալի մահը, որը տվյալ դեպքում կարող է հիշեցնել ձեռնածուկի հնարը, ընկալվում է որպես դավաճանություն, քանի որ ով դրժել է իր խոսքը եւ անհետացել, խաբեբա է:

Տագնապ [Լեոն Զավախյան](#)

Դեռահաս էինք, մեծ չէինք, բայց անմեղ էինք ու սիրուն: Գյուղի շամբուտում խաղ էինք անում: Պապս ասում էր՝ տունիկ շինողը տուն կշինի, տունիկ քանդողը տուն կքանդի: Մենք տունիկ էինք սարքում: Խրձերով հոլիկ էինք կապել: Իրիկկամուտ էր: Թաց գեփյուռը ինչնում ձայնի խայտաբղետ վանկեր էր բերում, որոնք օդի ուժգնացող շնչի հետ հստակվելով՝ դառնում էին հողաբաշխ խոսքի պարզ մասնիկներ: Ձայնը մեզ գայթակղում էր: Եվ մենք, ապավինած եղեգնյա ցողուններին, գլուխներս դուրս հանեցինք «թաքստարանից»:

Վիթխարի ընկուզենու տակ, մարմրող կրակի շուրջ, բոլորվել էր մեր գյուղի արական ընտրանին: Ձայնը ասում էր.

- ...Ասում էր՝ աչքերս բաց արի, մին էլ են տեսնամ՝ Ռոզիկիս գգում են...

Խոսքը փոստատար Փանոսի ու նրա տիկնոջ՝ Ռոզիկի մասին էր, որին մեր ժրաջան փոստատարը օրերս էր հայտնաբերել, ի դեպ, երազկոտ քնի ու արթմնի խումբարի սահմանագլխին, զույգ սիրեկանների գրկում:

-Հի,հի,հի,հի,հի,հի,հի...

-Էնա ասա մեր Թաթոսն ա էլի,- թաշկինակով աչքերը սրբեց գյուղսովետի նախագահը,- հենա՛՛ նրա տունը՝ Մեծ ժայռի վրա, Փանոսի տան տակին:

Ոնց որ հասկացա: Մեր ավագանու խոսքը գալիս էր սարի ծերից, այնտեղից՝ որտեղից գյուղն է սկսվում:

-Արա, եղ ախմախը մի օր եկավ գյուղսովետ,- շարունակեց նախագահը,- թե՛ ընկեր Պողոսյան, կնիկս բոզ ա: Ասինք, ի՞նչ ա: Ասավ, հաստատ բոզ ա: Ասինք, չի կարող պատահի: Ասավ, ուզում՞ եք դակագատ անեմ: Էլ ճար չկար: Ընկերական դատարանով բերեցինք մի հանձնաժողով կազմեցինք ու ելանք պառվերկի: Ես էի, Թաթոսն էր ու էլի դրա նման մի քանի թաթոս-թուրթու: Ոնց որ որսկանը՝ աղվեսի պես փափուկ ոտնակոխով, նապաստակի նման խլշկոտալով՝ տների կողքով, չափարների արանքով, քարափների տակով, բաղչեքի միջով, Չքնաղի հովտով գնում էր... Մեկ-մեկ էլ շուռ էր գալիս, մատը դնում բերանին, ասում՝ սու՛ս, կամա՛ց... Էթենց պոհեցելը բռնած՝ գնաց դեմ առավ Թոմոյի ջրաղացի պատին: Մի քար ուներ պահած, բերեց, գզույշ / որ ծիտը չփախի/ դրեց ոտնատակը ու քանդված պատի վրայով նայեց: Մեկ էլ՝ աչքերը պլպլացնելով շրջվեց, թե՛ ընկեր Պողոսյան, ընկեր Պողոսյան, չէիք հավատում, է՛, չէիք հավատում,- կանչում էր ու հագիվ գալում գոռալու ցանկությունը. եռանդագին ձեռքով էր անում,- դե հմի տե՛ս, տեսե՛ք, լավ տեսե՛ք... Տղերք, տեսանք, ի՞նչ տեսանք... Արա, ոտները գլխին էր, գլուխը՝ ոտների տակ... Ես էթենց բան չէի տեսած: Թաթոսի քեֆին էլ քեֆ չէր հասնի. կուրծքը ուռցրել էր, քիթը տնկել, աչքերը շողում էին...Ու էթենց քիթը տնկած, իր պայծառ

բարձունքից մեզ էր նայում՝ բա՞, դակազատ արեց: Իր արեւին շուստրի էր...

-Յի,հի,հի,հի,հի,հի,հի...

Անանկակալի էր եկել: Սիրտս նվաղկուն բաբախում էր: Մի քաղցր տազնապ էր համակել ինձ, որ մեկ փախուստի էր դրդում, մեկ ավելի ու ավելի մղում դեպի կրակոտ լույսը: Չարմանքից կլորացող աչքերով ու ականջներս ցից-ցից՝ կաննում էի «արգելված պտուղը»:

-Եղբայր, շուստրին հրեն նրա հարեւան Միքայելն է,- աշխուժացավ վարժապետ Լիպոն,- գիտե՞ք, չէ, շրջսովետում է աշխատում: Ասում են՝ նոր բնակարան ստացողները սկզբում նրա թրի տակով են անցնում: Տուն ստացողն էլ, թե որ սիրուն տոտա է լինում, էլ դու սուս, ոնց որ մի թատրոն: Ասում է՝ եկե՛ք, եկե՛ք, ինչո՞ւ եք ամաչում, մո՛տ, ինձ մոտ նստեք... Յետո էլ թե՛ տեղա՞կ եք, չէ՞, բնակարանի համար ձեզ ինչ փաստաթղթեր են անհրաժեշտ: Ու աստիճանաբար ձայնը իջեցնելով, շնչակտուր ելեւեջներով արանք է բացում մութ հույզերին: Կինը պարանոցը երկարում է, ակամա ձգվում նրա կողմը: Միքայելն էլ թե՛ մոտեցեք, մի ամաչեք, դե մոտ նստեք, դե՞... Յետո ավելի կամաց, հազիվ լսելի շշուկով էլի ինչ-որ թղթերի անուններ հիշատակում: Կինը ոտքերը սեղմած, ինքնաբերաբար գալիս ծունկ-ծնկի հավում է Միքայելին: Դա արդեն ներկայացման կուլմինացիան է: Եստեղ է, որ կատարվում է անկատարվելին. Միքայելի ձեռքը սեղանի տակից գողտու հափռում է փափուկ ազդրերը: Խեղճ կինը, ասես խածված, ցնցվում է, այլայլվում ու բազուկի պես կարմրատակած՝ կտրուկ ետ քաշվում: «Ա՛յ, դու շույնիկ...», բարի ժպիտով բացականչում է Միքայելը: «Շույնիկ...»:

-Յի,հի,հի,հի,հի,հի,հի...

-Իբր շնացողը ինքը չէ, կինն է: Կինը շփոթված ժպտում է, փեշերն ամոթխած հավաքում: «Ա՛յ, դու շույնիկ... վախկոտ շույնիկ...», քաշվերով ժպիտով գոչում է Միքայելն ու կրկին նրան հրավիրում՝ ծունկ-ծնկի փաստաթղթային քննարկման:

-Յի,հի,հի,հի,հի,հի,հի...

-Վարժապետ, էդ քո գոված Միքայելին իսկի ձեռնի ջուր լցնող չեմ պահի,- լսվեց գյուղի լոթու՝ Բաբանց Սերոբի բամբ ձայնը, որը պարտադիր կարգով բոլոր հարսանիքների ազապաշին էր: -Դե որ էղբան դռնալ ա՛ կարա՞ կեսուրի առաջ հարսի ծոցը մտնի, հը՞, կարա՞...:

Մութը գրեթե ամել էր կապտագորշ երկինքը, օդը կենդանական աղմուկից զտվել էր, եւ Սերոբի անապան ձայնը ունկերիս մեջ զնգում էր պարզ ու հստակ:

-Ես մտել եմ,- ասաց,- հա՛, հա՛, հենց ծոցը՝ կեսուրի քթի տակ... Յոթսանց լխտիկ հարսը Էստեղ չի՞ ապրում,- մտքը տնկեց Յոթսանց տան ուղղությամբ,- մարդն էլ ես տարի գնացել էր խուպան, իր քավթառ մորն էլ չափել կնգա վրա կարգել պահակ: Բայց էդ շարմաղ ծառը խու անջրել չափտի մնար... Երկուսով մի սենյակում էին քնում: Պառավին էլ խու լավ գիտեք՝ հատած, հանգած, չրի պես չորացած, Երկու աչքից էլ բոլորովին քոռ: Տղերք, ուրեմն տրուսիկը, չուլքենին, գիշերանոցը հոտերով էր տարբերում: Մեր կողքըն էլ հենց էդ էր: Կռավաթի ճռճոցը խլացնելու համար ռադիոն մինչեւ վերջ գլում էինք ու անցնում գործի: Մի օր էլ հալից ընկած քնով էինք ընկել: Ռադիոն էլ իր գործն էր արել ու դիմաքցել: Արա, առավոտվա ժամի վեցի կողմերը կլինեք, ղզղնեցի: Սուսուփուս շուռ եկա բոզիս կողմը ու կամաց, կամաց, որ պառավը չզարթնի, դրի վրեն: Որ հուպ չտվի... Մին էլ՝

"Soyuz nerushimiy respublik svobodnix splotila naveki velikaya Rus'..." , - դղրդաց Սովետի հիմնը: Էդ դավմազ ռադիոն ինչ իմանար՝ ես էդ ժամին ինչ բանի եմ, իր ժամին միացել էր: Մեղքս ինչ թաքցնեմ, մի մոմենտ թվաց՝ ինձ ա շախ տալիս: Էդ շան աղջիկը էլ չդիմացավ, փռթկացրեց... Փաա~... Յիմնը գլխներիս հարամ եղավ... Պառավն էն կողմից խու մի ճվճվոց չդրե՞ց, խու մի ճվճվոց չդրե՞ց...

-Յի,հի,հի,հի,հի,հի,հի...

-Բա դուք Ամերիկայի հիմնը լսե՛լ եք,- զրույցին խառնվեց Դորոխչի Դերոն,- տեսե՛լ եք, ինչ տրուսիկ եմ ճանկս գցել...

Իսկապես, ձեռքին կանացի ժանյակագործ մի վարդագույն վարտիք կար: Կարմիր հրացուլի մեջ պարզ նկատելի էր: Ներսից մատն ինչ-որ բանի դիպրեց: Եվ խորհրդավոր բզզոցով հնչեց Ամերիկայի Միացյալ Նահանգների հիմնը: Միաժամանակ, նրա խրոխտ հնչյունների ներքո, վարտիքի առջեւի ճեղքվածքի բոլորանքով տոնականորեն թարթում էին գույնզգույն լույսերը: Դերոն՝ ականջը հիմնին, զարդարուն ճեղքին էր նայում կենդանական զմայլանքով. «Տոն, որ միշտ քեզ հետ է», - հետո թե:

-Էսօր Չքնաղ գետի ափին ախպար Շադիկի հագից եմ հանել, պարծենում էր, թե Ամերիկայից են նվեր արել: Ձեր կյանքում Էստեսակ տրուսիկ տեսած կա՞ք, լավն ա, չէ՞... Գիշերը կնգանս կիսագնեմ ու մատով կանեմ,- վարտիքի անցքից դուրս տնկած մատը մտերմիկ շարժեց: -Կայ՞ք ա, չէ՞...:

-Բա որ հիմնը լսում ես, չես կանգնու՞մ...

-Բա չի կանգնու՞մ,- խոսքն ուզած ուղղությամբ ծռեց Դերոն:

Դերոն Շադիկենց տան կողմն էր նայում:

...Ո՞նց էի հասկացել: Սիրտս ուժգին բաբախեց: Փոխանցումավազքի պես տուն առ տուն անցնող պատմություններն, անվրեպ, գալիս էին մեր տան ուղղությամբ: Ու դեռ տուն չկար, որ փուստ լինեք:

Կասկածը որդի պես բուն դրեց կրծքումս...

-Բանաստեղծը...

Յա, էլի~...Մեր գյուղում մի բանաստեղծ կար, ու նրա տունը զուտ մեր տան կողքին էր: Օդի պակասություն էի զգում: Շուրջս

նայեցի: Ոչ ոք չկար: Ընկերներս, աննկատ, լքել էին շամբուտը: Նրանց տներով կամ անցել էին, կամ էլ դեռ պիտի անցնեին: Ես էլ էի ուզում փախչել եղեգնուտից, գյուղից, աշխարհից, ինքս ինձանից... Բայց վիշապի երախով հմայված ճագարի պես թալկացել, մնացել էի:

-Բանաստեղծը,- ասաց մեր վարժապետը,- Ես երկու օրը բաժանվեց: Ես դատը լսեցի: Հապա, դուք էլ ինձ լսեք. տեսեմ՝ կարա՞ք բաժանեք մեղավորը անմեղից:

-Ուրեմն,- շարունակեց որոշ դադարից հետո,- Եղ տնաշենը իր գապով կնոջ հետ քաղաքից գյուղ գալիս է լինում: Կնոջույքից էին վերադառնում, քեֆն էլ մի քիչ լավ: Ծամփի կեսին, թե մեջը ինչ սատանա է մտնում, մեքենան դեմ է տալիս ձորի բաղերին, կանգնեցնում ու կնոջը թե՛ Եսօր պիտի բնության գրկում գուրգուրվենք: Բանաստեղծ մարդ, ի՞նչ իմանաս՝ Եղ ռոմանտիկան խմիչքից էր գալիս, թե իրենից: Կինը թե՛ գժվե՛լ էս, այ մարդ, դրա համար տուն կա, անկողին կա, ժամանակ կա... Մարդն էլ թե՛ տանը երեխաներ էլ կան, Ես հիմա եմ ուզում: Կինը՝ չէ, մարդը՝ հա, կինը՝ չէ, մարդը՝ հա... Վերջը հաղթում է ռոմանտիկան: Մտնում են քաղերն ու ջահել չինարու տակ ազատություն տալիս մեղմ ու բարի կրթերին եւ որ ամենակարեւորն է՝ շոյալ զգացմունքներին...

Էն է, բանաստեղծը գոհ ու երջանիկ շավարն է բարձրացնում, մեկ էլ թիկունքից մի կոպիտ ձեռք բարեկամաբար բախում է ուսը: Շրջվում է, տեսնում, ի՞նչ է տեսնում: Չորս բաղմանչի սմիռնա կանգնած: Ասում են՝ հալալ եղավ, ախպեր, մենք քեզ չխանգարեցինք, հիմի էլ դու չպիտի մեզ խանգարես: Բանաստեղծը խեղճացած սրանց ոտն է ընկնում թե՛ տղերք ջան, խնայեք, հարագատ կինս է: Բաղմանչիներն էլ թե՛ տո, Եղ շինող, ո՞վ է տեսել՝ մարդը իր կնոջը չլուրմը պառկացնի: Որ բանաստեղծը մի քիչ ընդդիմանում է, մռթին մի երկու հազցնում են, ձեռքն ու ոտքը կապում ու գնա՛, թե գալիս եմ... մինչեւ լույս առավոտ... Լուսադեմին կնոջը բարձրացնում են, շորերը քաղաքավարի թափ տալիս, հանձնում պոետի ձեռքն ու մաղթում բարի ճանապարհ: Գալիս են տուն, մարդը գլուխն ափերի մեջ առած ծխում-մտածում է, ծխում-մտածում ու մեկ էլ կնոջը թե՛ դու բոզ ես: Բա դու ի՞նչ ես, տո փալաս, Էն դու՞ չէիր, որ ասփալտած ճամփումը բլբուլ էիր կտրել, բա տղամարդկությունը ու՞ր կորավ...

Պոետը թե՛ միեւնույն է, դու բոզ ես, պիտի բաժանվենք: Ու գործը տվել էր դատարան:

-Բա հետո ի՞նչ եղավ,- քթի տակ խնդմնաջ վարժապետը: -Ուրեմն, Եղ բաղմանչիներից մեկը՝ կլոր պլալան քաջալի շուրջբուրդը զգզված մագերով, տուլմա քթով, կարմիր աչքերով, դեղնակոթած ատամներով, անթրաշ, անվա, սեւ ու անճռնի մի մարդ էր՝ սատանան ձեզ օրինակ: Դատավորը դրան նայեց, նայեց ու Եղ կնոջը թե՛ աղչի, սա էլ է հետդ եղե՛լ... Կինը ամոթխած գլխով արեց: Եղբայր, Եղ չարքի ինքնասիրությունը վիրավորվեց: Քաղաքացի դատավոր,- ասաց,- ինձ լավ էլ տալիս էր: Ամոթ ա ասելը՝ համա տակից էնեց բաներ էր անում...

-Հի,հի,հի,հի,հի,հի,հի...

Կուրծքս ոնց որ մի սկսեա ջրաղացքար ճնշեր, ուր որ է շնչահեղձ էի լինելու: Գլխապտույտ էի զգում, ուղեղումս մուծ էր, շփոթ, քառս, պղտոր օդի մեջ տարուբերվող աշխարհ: Ծանր թմբիրը ինձ տանում էր դեպի անեացում...

Իսկ այդ պատմությունն ասես վերջ չունենար, շարունակվում էր ու շարունակվում...

-Բա գիտե՞ք, մեր պոետը ապահարզանի ինչ դիմում է գրել,- վարժապետը ձեռքը տարավ ծոցագրպանը ու այնտեղից քառածալ մի թուղթ հանեց: -Եղբայր,- ասաց,- աշխարհում դեռ ոչ մի մահկանացու այսպիսի ապահարզան չի ներկայացրել: Եվ սրա հեղինակը,- ձայնը խորհրդավոր երանգ ընդունեց,- մեր գյուղում ապրած ու ստեղծագործած բանաստեղծն է: Ինչեւէ, արտագրել բերել եմ, լավ լսեք:

Բոցկլտուն կրակից ձգվող հրակարմիր լեզվակները սպառնալի հարձակվում էին ուսուցչի վրա՝ փորձելով լափլփել նրա ձեռքի թուղթը. վարժապետ Լիպոն ոգեշնչված կարդում էր.

Ա պ ա հ ա ր գ ա ն ի դ ի մ ու մ

Ես եւ վերոհիշյալ կինը մեր միացյալ կյանքում ունեցել ենք բազմաթիվ երջանիկ, երբեմն տխուր, անգամ դրամատիկ օրեր, նվաճումների ցնծություն, կորուստների եղերականություն, զգացմունքների տիեզերական խոյանքներ: Յայժմ էլ ինձ համակում է վեհագույն բերկրանք, քանզի ունեցել եմ այդպիսի եթերային հոգու տեր կին, որն ինձ պարգեւել է ամենավերին զգացմունքներ եւ երկու արու զավակներ:

Սակայն վերջին շրջանում իմ նախկին կողակիցը՝ անկանելիվ բռնի ազդեցությունների որոգայթը, ոգեւորվելով ազատամտության կուրտիզանական ու աղանդավոր մեկնաբանություններով՝ հոգեւոր ծանծաղում ապրեց եւ ինձ համար ծանր օրերին ընդունեց բրուտոսաբար կեցվածք՝ բորբորիտոնականությամբ անտեսելով իմ խառնվածքի եւ մեր որդիների նկատմամբ իր պղծյալ մեղանչումների անխուսափելի հատուցումը: Եվ գիարդ, եղյալ ու չեղյալ սեփական արժանիքների գերագնահատմամբ եւ ուռճացմամբ մոլահարված՝ նա խախտեց իմ մտապատճենում վավերացված հայ կնոջն ու մորը թույլատրելի բացառականության բոլոր սահմանները եւ, բռնված հարավային կրքի եղկելի տենդով, շահարկեց իմ ծնողական ներուժը ու այն ամենը, ինչով պայմանավորված է ընտանիքը, անզուսպ տռփանքով թափթփուկների հետ մխիթեց մեր տան անմեղությունը՝ միտվելով գահավիժության անդամալի ուղին, ի վերջո, վերածվելով հասարակական սերմի ավելցուկի կոյուղու: Հետեւաբար, մեր հետագա համատեղ կյանքը համարում եմ վերջնականապես սասանված ու անվերականգնելի:

Այսու՝ խնդրում եմ օրինականացնել մեր փաստացի ամուսնալուծությունը եւ ապահարզանել»:

Տիրեց լռություն: Քամին դադարել, ու աշխարհը կարծես քար էր կտրել: Ժամանակն ավարտուն տազնապով ասես հուշում էր վերջս: Սիրտս ուր որ է պիտի պայթեր: Ու կպայթեր, եթե...

-Տղե՛րք,- գիշերային պահակն էր,- ձիանոնց մտուրքի վրա հենց նոր մի կնիկ տարան...

Որսկան Դավոն, որ մինչ այդ, թուքը կուլ տալով, չտեսի պես կլլում էր դառնանուշ պատմությունները, խիստ աշխուժացավ:

-Աղա՛, Եղ իմ դսմաթն ա,- անհամբեր ոտքի ելավ,- պիտի աչքովս տեսնեմ... աչքով տեսածը ուրիշ ա...

Սառած հետքեր մշուշում

[Վահագն Գրիգորյան](#)

Էջ [1](#) [2](#) [3](#) [4](#) [5](#) [6](#) [7](#) [8](#) [9](#) [10](#) [11](#) [12](#) [13](#) [14](#) [15](#) [16](#)

Մի անգամ ուշ երեկոյան, երբ Սանատրուկ Սամարյանը՝ Նատած էր կիսախափար սենյակում, լուսավորված հեռուստացույցի անձայն թարթող Էկրանով, նրան տարօրինակ անհանգստություն պաշարեց. սկզբում թվաց՝ ինքը մենակ չի սենյակում, հետո՝ ինչ-որ մեկը հուշիկ քայլերով դուրս գնաց:

Տիկա զգացողությանը Սանատրուկը հանգիստ արձագանքեց՝ նույնիսկ ետ չնայեց: Իր ասելով, այո, հաճելի չէր, բայց հո լավ գիտեր, որ մենակ է տանը:

Տագնապը, սակայն, չէր լքում նրան, իսկ քիչ անց մի ուրիշ նույնքան տարօրինակ զգացողություն էլ հայտնվեց՝ նա կարծես թե ծանոթ վիճակ էր վերապրում: Վնհայտ ինչ-որ բան ասես դարանակալեր ոչ միայն այս պահի, այլևս սրա նման մեկ ուրիշի միջից: Ինչպես, ասում էր, ծանոթ մի տեղ ընկնելի, եւ հիշողություններ արթնանային:

Բայց ի՞նչ տհաճ հուշեր պիտի կապված լինեին մեր բարեկամի բնակարանի հետ, որտեղ Սանատրուկն անց էր կացնում ընդամենը յոթերորդ երեկոն: Միայն ձանձրալի միապաղաղությունը, որովհետեւ ինչքան էլ համբերատար լինես ու համակերպվես, երեւի մի քիչ շատ է՝ Փարիզ գալ ու յոթ երեկո անընդմեջ նստել հեռուստացույցի առաջ: Ըստ որում, ֆրանսերեն չհասկանալով: Եվ իմանալով, որ առջեւում կան նաեւ տասնյոթերորդ ու քսանյոթերորդ համանման երեկոները: Իսկ այդ երեկո նրա նյարդերն արդեն արդեն մի անգամ տեղի էին տվել, եթե, ասես պատժիչ գործողություն իրականացնելով, խլացրել էր հեռուստացույցի ձայնը:

Սանատրուկը մտածեց, որ գերեզմանային լռությունն էլ այնուամենայնիվ մի բան չի, ու թեեւ դժկամորեն, բայց բարձրացրեց ձայնը: Արդեն ժամից ավելի ինչ-որ բան բաժանող ու ոչ մի կերպ չբաժանող տիկինն ու նրա ամուսինը (իսկ գուցե սիրեկանը, գուցե բուրդովին անկապ մեկը, արի ու իմացի), ասես հարկադրյալ համբույրությունից իրոք զզված, երջանկացած բլբլացին ֆրանսերենի բոլոր հնարավոր ելեւէջներով, Սանատրուկն էլ ջանասիրաբար մտածեց, որ այս լեզուն, այնուհանդերձ, անբացատրելի հմայք ունի, եւ ընդհանրապես մանկամտություն է սեփական ձանձրությանից բողոքել որեւէ լեզվի դեմ ըմբոստանալով, բայց հիմա էլ օժանելիքի բույր առավ: Շատ թեթեւ, հազիվ որսալի, որ գրեթե նույն պահին էլ անհետացավ, սակայն դա էլ բավական էր, որ նա նորից երկրորդ մարդու ներկայություն զգար: Վնհար էր մտածել, որ բուրում է Էկրանի տիկինը, նաեւ քիչ հավանական էր, որ երեկոյան զովը բաց պատուհանից փողոցով հենց նոր անցած որեւէ անծանոթուհու բուրումնավետ հետագիծն էր հասցրել երկրորդ հարկ, բացի այդ, բուրումնքը սկսեց ծանոթ թվալ: Դա արդեն չափազանց էր: Սանատրուկի նյարդերը տեղի տվեցին, նա վեր կացավ ու վառեց լույսը:

Պայծառ լուսավորված սենյակը, իհարկե, ուրիշ աշխարհի էր՝ այնքան ամօքեական, որ տեղ չէր թողնում երեւակայության ոտնձգությունների համար: Սանատրուկը ճմլկոտեց, ուղղեց ուսերը, նայեց ժամացույցին. կարելի էր ընթրել, որեւէ գիրք վերցնել ու պառկել: Իհարկե, սրա համար չէր եկել Փարիզ, եւ սա չէր նկատի ունեցել մեր բարեկամը, երբ նահանգներ մեկնելիս նրան հաճելի հանգիստ ու ժամանց էր մաղթում, բայց ընտրություն, միեւնույնն է, չկար:

Սանատրուկը ընթրեց ոտքի վրա, անախորժակ, ավելի շատ հիշելով, որ առավոտից ի վեր բերանը ոչինչ չի դրել: Ու թեեւ ինչպես միշտ խնամքով մաքրեց ատամները, ննջարան այդպես էլ չմտավ: Հիշեց անիմաստ ու պարսպ անցնող օրերի հետեւանք՝ արդեն սովորական դարձած անքնությունը: Եվ, ննջարանի փակ դռան առաջ մեկ-երկու վայրկյան տատանվելուց հետո, հյուրասենյակ վերադարձավ, ու, այլ հարմար բան չգտնելով, պահարանից հանեց մեր բարեկամին նվեր բերած «Վասպուրականի» շիշը:

Մեկ-երկու բաժակից հետո, իր համար էլ անսպասելի, Սանատրուկը ննջեց բազմաթոռի մեջ: Արթնացավ, հետո դժվարանում էր ասել, երեւի մի ժամից: Դռան շխկոցից: Դուռը կարող էր շխկալ Էկրանում, որտեղ արդեն ուրիշ կինոնկար էր ցուցադրվում, բայց նա բնակարանի մուտքի դուռը պատկերացրեց: Եվ մեկ-երկու րոպե նստած էր գլուխը դեպի նախասրահ շրջած, չիմանալով ինչ մտածի՝ ինչ-որ մեկը դուռը բացեց ու գնաց, թե՛ ընդհակառակը, ներս է եկել եւ կանգնած է պատի ետեւում: Ըստ որում, ասում էր, դարձյալ վախեցած չէր բառիս բուն իմաստով, բայց հասկացավ, որ չի հանգստանա, մինչեւ չստուգի: Եվ վեր կացավ ու նախասրահ գնաց:

Պատի տակ ոչ ոք չկար, դուռը փակ էր, բանալին՝ փականքի մեջ, ինչը բացառում էր որեւէ մեկի ինչպես դուրս գնալը, այնպես էլ ներս գալը: Բայց չէ որ իրական սարսափները ոչ թե դրսից են, այլ ներսից: Չէ որ ինքներս մեր մեջ մեք արտացոլվում ենք ոչ թե այնպիսին, ինչպիսին երեւում ենք, այլ այնպիսին, ինչպիսին կանք, եւ մեր միջի այդ փոքրիկ, մշտապես վախեցած հակոտնայի կասկածներն են, որ խոր վիրապներից լույս աշխարհի գալով, վրդովում են մեր անդորրը: Այնպես որ, Սանատրուկը հանգիստ, չգտավ: Անցյալն էր գլուխը հանում ներկայի միջից, թե ներկան իր հաշիվներն ուներ նրա հետ՝ տվյալ պահին դա այնքան էլ կարելու չէր, եականը տագնապն էր, որ ոչ մի կերպ չէր լքում նրան, իսկ նորից նստելով շի առաջ ու նորից գոտեպնդվելով, Սանատրուկն իր հոգեվիճակը բացատրեց ճգնաժողովի կյանքով, որ վարում էր Փարիզում: Տասներկուսն էր դառնում, բայց դա ի՞նչ կարելու էր, գիշերային կյանքը հիմա է սկսվում: Փարիզի գիշերային կյանքի մասին նա ավելին չգիտեր, քան երեւանում նստած յուրաքանչյուր դեռահաս, որ երեւակայությանն է գոռ տալիս, բայց մի կողմից «Վասպուրականն» էր մեջը խոսում, մյուս կողմից վիրավորանքը իրեն այնքան բնագոր ստորացուցիչ անօգնականությունից: Եվ Սանատրուկը վեր կացավ ու սկսեց հագնվել: Հերիք եղավ ինչքան մկան պես նստեց տանը: Կեսգիշերից քիչ անց էր, երբ իր ետեւից շրիկացնելով դուռը, նա ցած իջավ:

Սանատրուկի ձախորդությունները Փարիզում սկսվել էին առաջին իսկ օրից: Իհարկե, իր մեղքով: Նրան մայիսին էին հրավիրել, ըստ որում, բավականին հարուստ ծրագրով, նա չգիտես ինչու ձգձգեց ու չգնաց, հետո, երբ ասացին, որ ամեն ինչ տեղափոխվում է սեպտեմբեր, վեր կացավ ու գնաց հուլիսի վերջին, ասես մոռացած, որ համատարած արձակուրդների օգոստոսը լավագույն ժամանակը չի ամեն ինչ տեսած Փարիզը սեփական մտքի թռիչքներով գարմացնելու համար: Մեր բարեկամը, որ կազմակերպել էր այդ հրավերը, ապշեց, երբ մի գիշեր նրան քնից հանեց Սանատրուկի գանգը՝ դիմավորի, գալիս եմ: Մեր բարեկամը օդանավակայան գնաց զայրույթից իրեն ուտելով, բայց, ասում էր, անպարկեշտության աստիճանի միամիտ ժպիտ տեսնելով Սանատրուկի սովորաբար խստաճայաց դեմքին (գավառական իմաստասերի խստաճայաց դեմքին), հանգստացավ: Ըստ

Եուրթյան, մեր բարեկամը ոչինչ չէր կորցնում, չհաշված մի քանի հազար լրացուցիչ ֆրանկը, որ թողեց Սանատրուկին իր բացակայության ժամանակ ծախսելու համար: Նա պետք է Միացյալ Նահանգներ գնար ու գնաց, հուսալով, որ Սանատրուկը մենակ էլ գլուխը կպահի: Ֆրանսերեն, ճիշտ է, չգիտեր, բայց անգլերեն բացատրվում էր, իսկ գերմաներեն պիտի որ լավ իմանար, եթե խոսքի մեջ քարկտիկի պես էր խաղացնում գերմանական փիլիսոփաներին: Գլխին ծածկ, գրպանում փող, մի քիչ էլ լեզուներ իմացող մարդը, ասում էր, այն էլ Սանատրուկի նման ինքնավստահ մարդը, պիտի որ Փարիզում չկորչեր:

Այդ կարծիքին էր երեւի նաեւ Սանատրուկը: Բայց հենց երկրորդ օրը, մնալով մենակ, եւ չգտնելով փարիզյան եւս մի քանի ծանոթների, որոնք կամ արդեն մեկնել էին իրենց օրինական արձակուրդը վայելելու կամ մեկնելու էին օրերս, նա շատ արագ ընկճվեց: Փողոցներում, խնդրեմ, ամբողջ օրը քայլի, սրճարաններում, խնդրեմ, ինչքան ուզում ես նստիր, բայց մենակ ու բերանդ փակ: Նրան հասկանում էին միայն սրճարանների ամեն ինչ տեսած մատուցողները, ինքը՝ ոչ մեկին: Բայց եթե շաղակրատ խանութայանին չհասկանալը մեծ դժբախտություն էր, առանձին դեպքերում կատակերգություն էր, մինչեւ իսկ՝ ողբերգություն: Մի անգամ նրա հետ սկսեց գրուցել կողքի սեղանին նստած շիկահեր մի աղջիկ, ամեն ինչից դատելով՝ գոսաշրջիկ, որի բավականին վարժ անգլերենից Սանատրուկի ուղեղին միայն առանձին անկապ բառեր էին հասնում: Աղջիկը կռահեց, որ իրեն չեն հասկանում, ներողություն խնդրեց ու անցավ ֆրանսերենի, ճիշտ է, ոչ անգլերենի չափ վարժ, բայց նույնքան իողակապ, որից, սակայն, Սանատրուկը նույնիսկ առանձին բառեր չհասկացավ: Անհարմար վիճակից պատվով դուրս գալու համար, չգիտես ինչ ու վստահ, որ հիմա էլ աղջիկը չի հասկանա իրեն, նա ասաց՝ դոչ, այսինքն, եթե կարող եք, գերմաներեն խոսենք, ինչով, ի գարմանս իրեն, անսահման հրճվանք պատճառեց աղջկան, որը անցավ այնքան անխառն գերմաներենի, որ Կանտին ու Յեզելին հայերեն թարգմանությամբ սերտած Սանատրուկը բարվոք համարեց սուրճը կիսատ թողած վեր կենալ: Իսկ Փարիզում գտնվելու երրորդ թե չորրորդ օրը վերելակին մոտենալիս երանի էր տալիս, որ չհանդիպի վերելի հարկերից մեկում ապրող տիկնոջը: Արդեն երկու անգամ միասին էին վերելակ նստել, երկու անգամ էլ տիկնոջը բարեհամբույր ճովողել էր, որին ի պատասխան Սանատրուկը կարողացել էր միայն բերանը ջուր առած ծպտալ:

Համարյա Սպինոզա ծնված, Սպինոզայի նման մերժված՝ Սանատրուկը որոշեց վեր կանգնել կիսագրագետների ամբոխներից եւ մի անգամ նույնիսկ սրճարանում թուրք ու գրիչ հանեց գրպակից, բայց մտքի անիվներն անհուսորեն տեղապտույտ տվեցին եւ մխիթարվեց մտածելով, որ ինքը Յեմիզուեյ չի եւ լավ է, որ չի: Որոշեց ամեն ինչի վրա թեթև, նստել տանը, կարդալ ու աշխատել, առավել էս, որ մեր բարեկամը հետաքրքիր հրատարակություններ ուներ, բայց միտքը, այնքան թեւազուրկ էր երեսնում, Փարիզում դավաճանորեն կարծրացել էր: Իր շուրջը սեղմվող օղակը փորձեց ճեղքել՝ մի անգամ էլ զանգահարելով ունեցած համարներով, եւ մեկին գտավ: Վատ էր պատկերացնում իր գրուցակցին, ենթադրեց, որ երեւի կլոր երեսով այն մարդն է, որին մեր բարեկամը բնորոշել էր որպես անուշիկ տղա, սա, իրոք, անուշիկ ձայնով ասաց, որ այսօր, ցավոք, զբաղած է բայց առտու կանուխ տելեֆոն կնե, առավոտը, սակայն, դարձավ կեսօր, հետո էլ ճաշ ու երեկո, իսկ զանգ այդպես էլ չեկավ: Տեղի հայկական թերթի իմբագրությունում նրան անապայման կճանաչեին, բայց երկու օր շարունակ զանգահարելով ու պատասխան չստանալով, վրդովված վճռեց, որ ֆրանսիական հոռի բարքերին տուրք տված, հանուն իրենց հանգստի՝ օգոստոսին փակել են թերթը: Իրականում նա կորցրել էր օրերի հաշիվը եւ զանգահարում էր շաբաթ ու կիրակի: Արդեն խեղդող օղակից ազատվելու վերջին փորձը արեց՝ Փարիզի քարտեզը ձեռքին ճամփա ընկնելով դեպի Լուվր: Կարծես թե ճիշտ էր գնում, Լուվրն էլ պիտի որ ասեղ չլիներ, բայց չգտավ: Փոխարենը ընկավ մի փողոց, որը Սեն Դենի էր կոչվում, եւ Մոնա Լիզայի կամ թեկուզ Էնգրի մերկ գեղեցկուհիների փոխարեն շքեղությունների առաջ ու բակամուտքերում հաճախորդի սպասող պոռնիկներին դիտեց: Մի քանիսը նրան բավականին հրապուրիչ թվացին, արդեն շաբաթից ավելի էլ կին չէր տեսել, բայց առաջին անգամ էր փողով սեր գնելու եւ համարձակությունը չհերքեց: Եվ ինքն իրենից հիասթափված, այլևս շուրջը չնայելով, տուն գնաց, որովհետեւ Սեն Դենին նրան համանուն բուլվար բերեց, որը արդեն ծանոթ էր: Եվ երբ բացվեց Փարիզում գտնվելու յոթերորդ առավոտը, հասկացավ, որ փողոց դուրս գալու ոչ մի ցանկություն չուներ: Ամբողջ օրը անցկացրեց տանը, ըստ որում, հիմնականում անկողնում, միայն երեկոյան, պառկելուց հոգնած, նստեց հեռուստացույցի առաջ, որտեղ էլ նրան դարանակալել էր, ինչպես Երեւան վերադառնալուց հետո էր ասում, իրեն ժամանակից շուտ Փարիզ տարած կանչը:

Սանատրուկն առաջին անգամ էր Փարիզում այդքան ուշ ելնում տնից: Մի շաբաթում հասցրել էր ինչպես պետք է ուսումնասիրել 8-րդ թաղամասը (որտեղ մեր բարեկամի էր ապրում), բայց ուշ գիշերով ամայի փողոցը համարյա անծանոթ թվաց: Զար լուռության մեջ սեփական ոտնաձայները լսելով, նա քայլեց բուլվար Կլիշի կողմը, մտածելով, որ այս ժամին բաց սրճարաններ այնտեղ կլինեն: Եվ հազիվ երկու քայլ արած, ցնցվեց, կողքից լսելով՝

Բուժու՛ր...

Սանատրուկը տեսավ ավտոմեքենայում նստած կնոջ ծպիտը, բայց դեմքը չհիշեց: Թեթեւսլիկ ողջունին պատասխանեց քթի տակ, առանց կանգ առնելու: Ով գիտե ինչ էր պետք այդ անծանոթ կնոջը, իսկ նորից անհասկանալի խոսակցության մեջ քաշվելու վտանգը հարյուրոտկոսանոց էր:

Աշխատեց ավտոմեքենայի շարժիչը, լուսարձակները վառվեցին ու խփեցին Սանատրուկի մեջքին, ապա, որոշ ժամանակ կորցնելով հույսը քաշարից դուրս գալու համար, մեքենան նորից հասավ նրան եւ նախքան առաջ կանցներ, Սանատրուկը հիմա էլ լսեց՝

Օռվու՛ա՛ն...

Լսեց, ասում էր, որքան էլ տարօրինակ էր, խոստումի նման՝ մինչեւ նոր տեսություն:

Կլիշում շողշողում էին մերկ աղջիկների լուսանկարներով ցուցափեղկերը, ֆրանսերենն ու անգլերենը խառնելով՝ «Եստի համեցեք» էին կանչում ստրպտիգ-բարերի դռանը կանգնած արաբները, եւ գիշերային արկածների սիրահարների ամբոխի մեջ Սանատրուկը վերջապես կարծես թե ինքն իրեն պիտի նմանվեր: Ցավոք, փակ էին բոլոր սրճարանները, նույնիսկ Մուլին Ռուժի դիմացինը, որտեղ նա սովորություն էր դարձրել օրը գոնե մի անգամ նստել: Միտել էի, ասում էր, այդ սրճարանը, այն Փարիզը առաջին անգամ «Սիրելի բարեկամ»-ով եմ հայտնաբերել, մերոցից թաքուն կարողում էի դասագրքերի տակ դրած, եւ առաջին օրը, երբ պատահաբար տեսա, ինձ թվաց՝ Դյու Ռուան ես եմ (Սանատրուկին չհիասթափեցնելու համար ես չասացի, որ Դյու Ռուան ոչ թե Մուլին Ռուժ, այլ Ֆուլի Բերժեր էր գնացել, բայց երեւի իզուր): Սանատրուկը ետ դարձավ, մտածելով, որ կարելի է որեւէ ստրպտիգ-բար մտնել: Բայց հասավ Պիգալի հրապարակ, այդպես էլ վճիռ չընդունեց: Կրկին ետ դառնալը երեխայություն կլիներ, եւ նա քայլեց ներքե, մտածելով, որ տուն է գնում, սակայն ամայի, մուր ու նեղ փողոցները նորից խոսեցին չարագուշակ լուռությամբ, բնակարանի վրա թողած լույսերն էլ ասես տագնապ ազդարարեին, եւ Սանատրուկը անցավ տան կողքով ու այս անգամ քայլեց դեպի Մեծ Բուլվարները:

Բաց սրճարան նա գտավ բուլվար Պուստիոներում, որտեղ նստեց համարյա մինչև երկուսը: Սրճարաններում նա սովորաբար սուրճ կամ զարեչուր էր խմում, բայց այս անգամ, քանի որ պատերազմ էր հայտարարել իրեն պատիվ չբերող խեղճուկրակությանը, վիսկի պատվիրեց: Երկրորդ վիսկին խմեց արդեն բարին կռթած, դուրս գալուց առաջ, երբ վերջին հաճախորդն էր, ու մատուցողները սեղաններն էին հավաքում:

Երկու անգամ նա ծայրածայր կտրեց Մեծ Բուլվարները: Այստեղ էլ համարյա մարդ չկար, հատուկենտ անցորդներ էին հանդիպում ու երբեմն ուշացած մեքենաներ անցնում, բայց, միեւնույնն է, Մեծ Բուլվարները լուսավոր էին, գաղտնիքներ չէին թաքցնում իրենցից ճյուղավորվող նեղ փողոցների նման, որոնցից հատկապես երկուսը, որոնցով սովորել էր տուն բարձրանալ, մույթ ու բաց երախներ էին թփում: Տունդարձի ճանապարհը փակ էր, և Սանատրուկը ի վերջո նախընտրեց ռուս Սեն Դեմին, որը հայտնաբերել էր նախորդ օրը:

Ռուս Սեն Դեմին նույնպես ցերեկը բուրրովին ուրիշ էր, գիշերվա այդ ժամին՝ ուրիշ: Երեկ Սանատրուկը անցել էր բազմության մեջ խուսանվելով, հիմա միակ անցորդն էր, կամ, ավելի ճիշտ, բախտախնդիրը: Աղջիկներն էլ էին քչացել: Բակամուտքերի խավարում կամ հատուկենտ ցուցափեղկերի նետնային լույսի մեջ նրանք զուցե ավելի շահեկան էին դիտվում, այնուհանդերձ, գիշերային արկածի ելած Սանատրուկը թեթևության զգաց, երբ ետեւից հասավ ու բավականին առջևում կանգնեց խոշոր մի մեքենա, որին անմիջապես մոտեցավ աղջիկներից մեկը, դեպի պատուհանը կռանալով կարճ բանակցեց, ապա շրջվեց ու կանգնեց ընկերուհուն: Սանատրուկը մեքենային հավասարվեց, երբ աղջիկները արդեն տեղավորվել էին, և շարժվելու պահին դեկի առաջ ասես Սաղամ Զուսեյինի քթից ընկած մեկին տեսավ: Փողոցը վերջանում էր, համենայն դեպս այն հատվածը, որտեղ գնդի սիրո ջրմուռիներն են կանգնում, և Սանատրուկը ինքն իրենից նեղսրտած մտածում էր, որ պետք է մի բաժակ էլ խմած լինե՞ր՝ այդպես հեշտ կողմնորոշվեր, երբ հանկարծ խարտյաձ խոպուկներով մի գայթակղիչ գլուխ տեսավ: Դաստակներն անփութորեն երկնագույն ջիւսի գրպանները խրած, աղջիկն անհոգ ճոճվում էր ճերմակ մարգակաչոլիկների քթերի ու կրունկների վրա: Սանատրուկի ասելով, նա այնքան նման էր այն միլիոնավոր պարմանուհիներին, որոնց կարելի է հանդիպել բոլոր երկրների բոլոր քաղաքների բոլոր փողոցներում, որ եթե չիմանար որտեղ է, չէր համարձակվի կանգնել նրա առաջ: Աղջիկը ժպտաց (երեւի կարդալով Սանատրուկի մտքերը) ու ասաց՝

Սերը՝ չորս հարյուր ֆրանկ, մինետը՝ երկու հարյուր:

Սանատրուկը չէր սակարկելու, գրպանում, սրճարանում ծախսածից հետո, շուրջ հինգհարյուր դեռ կար, նա հապաղեց միմիայն ֆրանսերենի պատճառով՝ թեեւ տվյալ դեպքում համարյա համամարդկային: Եվ մինչ ուղեղը կարճազանքեր ականջներին, շարժում լսեց իր ետևում, շրջվեց ու տեսավ հենց նոր մոտեցած ու շարժիչը չանջատած մեքենա, ներսում՝ կանացի ժպիտ: Ինչպես եւ մեր բարեկամի տան առաջ: Կնոջ դեմքը չէր տեսել ու չտեսավ, մեքենան չէր հիշել ու չհիշեց, բայց ժպիտը բավական էր, որ մտածե՞ր՝ նույն կինն է ու նույն մեքենան: Իհարկե, հիմա նա մենակ չէր, հարտյաձ խոպուկները նրան ատամներով կպաշտպաներ, ինչն էլ փորձեց անել նույնիսկ համաձայնություն չառած եւ գուցե ոչ թե նրան փրկելու, այլ իր հաճախորդին չկորցնելու համար, բայց այս դեպքում դրանք համազոր բաներ էին: Ձեռքերը հանելով ջիւսի գրպաններից, միանգամից կերպարանափոխվելով (նմանվելով երեւի այն վիուկներին որոնց կարելի է հանդիպել բոլոր երկրների բոլոր քաղաքների բոլոր փողոցներում), նա մեքենայի վրա քշեց, այն փոշիացնելու ակնհայտ մտադրությամբ: Բայց դեկի առաջ նստած կինը, իսկ Սանատրուկի աչքում՝ ժպիտը, երկու-երեք բառ ասաց, որոնք Սանատրուկը, բնական է, չհասկացավ, բայց որոնք չգիտես ինչու շատ դուր եկան հարտյաձ խոպուկներին: Նա, ինչպես միանգամից բռնկվել էր, միանգամից էլ հանգստացավ, ծիծաղեց ու ետ քաշվեց: Ծիծաղեցին նաեւ քիչ ներքե կանգնած երկու աղջիկները: Ծքամուտքի մոտից Սանատրուկին էր նայում հարտյաձ խոպուկները՝ ձեռքերը նորից ջիւսի գրպաններում, բայց ծիծաղից ծալվելով, մեքենայի միջից անփութորին ժպիտը, և գլուխը կորցրած Սանատրուկը, անհասկանալի իրավիճակից դուրս գալու այլ ելք չգտնելով, շարունակեց ճանապարհը: Եվ ինչպես առաջին անգամ մեքենան նորից հասավ նրան, այս անգամ, սակայն, միանգամից առաջ չանցավ: Սանատրուկին Երեւանից ծանոթ տեսարան էր, այն տարբերությամբ, որ Երեւանում մեքենայի մեջ միշտ տղամարդ էր լինում, փախչողը՝ կին, բայց նա չհասցրեց ամոթի ու խայտառակության համա ամենել, որովհետեւ զգում էր՝ իր խուճապի պատճառը միայն մեքենան չի կամ ոչ այնքան մեքենան է, որքան իր ներսից նորից բարձրացող տագնապը, արթնացած, ճիշտ է, մեքենայի հայտնվելու հետ, բայց իրենը՝ վաղուց լեզվի տակ պահած դառն հաբի նման: Անպայման իրենը, որովհետեւ մեքենան վերջ ի վերջո պոկվեց ու գնաց, իսկ տագնապը, արդեն սարսափ դառած, ներսից շարունակվում էր բարձրանալ, ինքն էլ՝ Սեն Դեմիով:

Սանատրուկը կանգ առավ հասնելով խաչմերուկին: Այստեղ ավարտվում էր նրան ծանոթ Փարիզը: Միակ ճիշտ քայլը ետ դառնալն էր, բայց դա նշանակում էր, որ նորից պիտի հանդիպեր հարտյաձ խոպուկներին: Մտածեց, որ հարկավոր է վերադառնալ զուգահեռ փողոցներից մեկով, բայց մինչ կորոշե՞ր ձախ թեքվի թե աջ, արդեն կոկորդին հասած սարսափը, ասես օգտվելով նրա թուլեական համապարտմից, ելք գտավ:

Սկզբում հիշողությունը անցյալի միջից սոսկ զուգորդական պատկեր դուրս քաշեց: Դիշեց, որ հեռավոր մի օր ինքը էլի ճիշտ այսպես քայլում էր մայթով, իսկ Մերին, ուսումնական «01»-ի դեկը բռնած, անվարժ ու դանդաղ շարժվում կողքից (նոր էին սկսել միասին ապրել, ապագայի ծրագրերից մեկն էլ մեքենա գնելն էր): Ապա, առաջին հիշողությունը դեռ լրիվ չմարսած, Սանատրուկը միանգամից ու հստակ հիշեց, որ Մերին երեք տարի առաջ անհետացավ ճիշտ այս օրը, ճիշտ այս ժամերին:

Իհարկե, էլի կարելի էր տուն վերադառնալ և շփ տակ մնացածով խեղդել որտեղից որտեղ արթնացած խիղճը, բայց Սանատրուկը նաեւ հիշեց, որ հեռուստացույցի առաջ իրեն ծանոթ թվացած բույրը Մերիի «Պալմա Պիկասոյի» բույրն էր, իսկ ինքնապահպանման բնագոյը, ինչպես հայտնի է, խղճից գորավոր է:

Սանատրուկն ու եւ մտերիմներ չէինք, իմ կողմից նույնիսկ վատ քողարված անբարեհաճություն կար, եթե հնարավոր էր, եւ աշխատում էի խուսափել նրանից, բայց մեր գրեթե նույնանման մասնագիտությունների պատճառով շփումները անհնարին էր բացառել: Որոնք, պարզապես հաճախակի դարձան, երբ նրա կողքին հայտնվեց Մերին: Այդ կարճ շրջանը՝ երեւի մի ամբողջ ամառ, առաջին անգամ եւ առանց տհաճության էի գնում «Առագաստ» կամ Օպերայի շրջակայքի բացօթյա սրճարանները, եթե այնտեղ երեւում էր Սանատրուկի անբարտավան կերպարանքը: Իսկ եթե, պատահում էր, եւ էի նստած, տեսնելով նրան, իսկույն աթոռ էի առաջարկում իմ կողքին: Դա առաջին ու վերջին ամառն էր (եւ ոչ միայն ամառը), որ եւ հերոսաբար դիմանում էի Սանատրուկի ճամբարակություններին: Որովհետեւ այդ ամառ նրա կողքին հայտնվել էր Մերին:

Սկզբում հայտնվեց ընկերուհու հետ, և Սանատրուկը նրանց ներկայացնում էր՝ իմ ուսանողուհիները: Դա, իրոք, այդպես էր՝ մի կիսամյակ ինչ-որ դասընթաց էր կարդացել համալսարանում, ու թեեւ հիմար պետք էր լինել չհասկանալու համար, թե որ դեպքում են ուսանողուհիները քաշ գալիս դասախոսի ետեւից, բերանները բաց նրան լսում նաեւ համալսարանից դուրս, ինձ մխիթարում էի

Նրանով, որ գուցե սիրահարվածը ընկերուհին է, առավել եւս, որ Սանատրուկը կարծես թէ մեկին մյուսից չէր առանձնացնում: Ամռան կեսերին ընկերուհին անհետացավ, մնաց Մերին, բայց, միեւնույնն է, նրանց փոխհարաբերությունները կարծես թէ սրճարաններից այն կողմ չէին անցնում: Ինչպես միշտ իր արտառոց գաղափարներին հետամուտ՝ Սանատրուկը նրան կարծես թէ նույնքան էր ուշադրության արժանացնում, որքան մյուսներին, այսինքն այնքանով, որքանով նա իրեն լսում էր: Համենայն դեպս, ինձ այդպես էր թվում: Եվ թվում էր, ինչքան էլ համր ունկնդրի դերը հաճելի լինի, ուրախությամբ է ձեռքը տալիս, երբ նրան զգուշորեն հանում էի Սանատրուկի պերճախոսության ուստայինից: Ասես դեն էր գցում անցած ձմռանից ու սերին մնացած շալն ու դեղձագույն ուներով (եւ երեւի դեղձաբույր, իսկ մի ուշ ու մի քիչ քամտ տրեկո նաեւ դեղձամաշկ), համարձակ քայլում ամառային օրվա մեջ: Եվ ծանոթության առաջին իսկ րոպեներից ինձ մինչ այդ չհանդիպած ինչ-որ բանը սկսում էր զարմացնել նոր երանգներով: Նա նման էր խաղաղ երեկոներին, երբ կարծես թէ ոչինչ տեղի չի ունենում, բայց տեղի է ունենում ամեն ինչ: Այդ երեկոյի միջով նրա ձայնը հոսում էր միեւնույն խոխոչի մեջ հազարավոր պատմություններ տանող առօրյա սման: Ես սիրում էի լսել ու նայել Մերին, իսկ երբ ես էի խոսում, իսկ նա՝ արմուճակ սեղանին, ծնոտը փոքրիկ բռնցքին, լսում, հայացքից համարյա զգայական ջերմություն էր հաղորդվում, որովհետեւ ինչպես ոչ ոք կարողանում էր շոյել հայացքով: Չգիտեմ, գուցե ես հույս ունեի, որ ինձ շոյում է առանձնահատուկ ջերմությամբ, ինձ էլ չէ, գոնե այն, ինչ զգում էի իր հանդեպ, որովհետեւ լինում էին րոպեներ, երբեմն էլ երկար, երբ բազմամարդ սեղանի շուրջը մենք նսանվում էինք գաղտնի ժամադրության եկածների: Այդ խորհրդավոր առանձնության մեջ էս պարզորոշ զգում էի, որ մեր երկուսն էլ արանքում ուրիշ մթնոլորտ է, տարվա ուրիշ եղանակ է օրվա ուրիշ ժամ, թթվածինը, որ մենք շնչում ենք, ուրիշ բաղադրություն ունի, որ մեր ձայներն ու հայացքները այդ տիեզերքում ասուպների նման ընկնում են միայն երկուսիս համար: Գուցե սխալվում եմ, գուցե ինձ մոլորեցնում է այդ տիեզերքի բովանդակությունը, որ միայն ու միայն նրանով էր լցված, բայց մի բանում համոզված եմ՝ Մերին նման աղջիկ կամ ինձ դեռ չէր հանդիպել, կամ մինչեւ նրան հանդիպելու ես ընդունակ չէի եղել կնոջն այդպես ընկալելու:

Բայց ես պատրանքներ չունեի: Զառասուճա արդեն լրացել էր (ի միջի այլոց, Սանատրուկինը նույնպես), նոր էի ամուսնալուծվել (Սանատրուկը նույնպես), նախկին կնոջս մոտ մեծանում էին երկու զավակներս (Սանատրուկինը՝ մեկը), իսկ Մերին դեռ քսան չկար, նա ինձ անհայտ աշխարհից էր, որի տեղը վաղուց էի մոռացել: Ես կարող էի մոտենալ այդ աշխարհին, նայել դռնից ու պատուհանից, կարող էի շնչել այնտեղից եկող բույրերը, բայց շեմքն անցնել չէի կարող: Չէի կարող հազար ու մի փորձությունների միջով անցած, ծեծված ու դառնացած, հաճախ դաված ու խաբած իմ աշխարհը խառնել նրա աշխարհին: Ես ինչքան կյանքի թամբի էի, նույնքան էլ նրա սմբակի տակ, ես եթե դեռ ճանապարհի էի գնում, ապա շնորհիվ շառաչող մտրակի, որ մի օր ձեռքիս էր, մի օր թիկունքիս, Մերին դեռ կարծում էր, որ արեւը արեւելքից է ծագում եւ կարելի է հավերժ քայլել նրա ետեւից: Իմ հիասթափություններն ու նրա հավատը անհամատեղելի էին, նա կարող էր այդ չիմանալ, ես լավ գիտեի: Նա կարող էր խաբվել, ես խաբելու իրավունք չունեի: Ում շատ է տրված, նրանից շատ է պահանջվում, բոլորի նման ես էլ միշտ չէ, որ հետեւել էի այդ պատվիրանին, այս անգամ, չգիտեմ ում բախտից, մշտապես էի հիշում: Մերին առաջին աղջիկը չէր, որ նեկտարի բույրով հրապուրված մեղվի պես ճանճորսներիս շրջապատն էր ընկնում, բայց նա ինձ համար երբեք հերթական աղջիկ չեղավ: Արդյո՞ք ես չէի կարծում, որ նույն է զգում, նույն կերպ մտածում նաեւ Սանատրուկը, չէ որ ամեն մեկս իր արշիւն է բացարձակեցնում: Բայց ինչպես երեւում է մեր ընտանեկան մակույկները շուռ էին եկել տարբեր պատճառներով, մեր թուլությունն էլ զեղեցիկ սեռի հանդեպ տարբեր խմորից էր: Երբ արտաքուստ շատ սովորական մի օր նա հանկարծ թեքվեց, համբուրեց Մերին ու ինձ առաջարկեց խմել իրենց կեանքը, ես հոշոտող խանդ զգացի: Իսկ Մերին աչքերի երջանիկ փայլից՝ նաեւ խաբված: Աշխարհ սկիզբն էր: Մերին սկսեց Սանատրուկի հետ ապրել, իսկ ես՝ շրջանցել սրճարանները, որպեսզի պատահաբար չհանդիպեմ նրան:

Մտավորապես մեկ ամիս անց զանգահարեց անծանոթ մի կին եւ, ի զարմանս ինձ, ներկայացավ որպես Մերինի քույրը: Այդ, ես գիտեի, որ Մերին ու Սանատրուկը միասին են, բայց չգիտեի, որ Մերին տնից գնացել է, հակառակ ծնողների կամքին, որ հայրն այլեւս չի ուզում նրա անունը լսել: Ես այդպես էլ չհասկացա, թե քույրն ինչ հույսեր էր կապում հետս, հասկացա միայն, որ հիասթափվեց ինձնից, առանձնապես հավատ չնձայելով իմ ու Սանատրուկի մտերմության մեղմ ասած չափազանցված լուրերին:

Ուշ աշնան ու ձմռանը բացօթյա սրճարանները փակ էին, իսկ ապրիլի վերջին ու մայիսի սկզբներին, երբ ես, կորստիս հետ հաշտված, արդեն կարող էի սրճարաններ հաճախել, չվախենալով այդ երջանիկ գույզին հանդիպելուց, զարմանքով տեսա, որ Սանատրուկը թեեւ առաջվա նման շրջապատված է բերանբաց ունկնդիրներով, որոնց թվում կարելի է եւ պերճախոսությանը ծրարորդ երիտասարդ կանանց տեսնել, Մերին բացակայում է: Եթե չեմ սխալվում, միայն մեկ, թե երկու անգամ նա աչքովս ընկավ: Եվ, պետք է խոստովանեմ, նախանձեցի Սանատրուկին, որ կարողացել է սանձահարել չգիտեմ ինչ երկինքներ երագող այդ աղջկան, ինքը չփոխելով ամուրիի իր կենսաձեւը:

Մերին անհետանալը ինձ հայտնի դարձավ Սանատրուկից: Առաջին անգամ նա ինձ տուն էր զանգահարում: Ասաց, որ երկու օր առաջ Մերին կորել է: Որ այս թեմայով միայն ինձ հետ կարող է անկեղծ խոսել, որովհետեւ ես չեմ էի իրենց նկատմամբ: Ես չասացի, որ ջերմությունս (եթե ընդունենք, որ բառը տեղին է օգտագործված) իր վրա չէր տարածվում: Ես լուռ լսում էի նրան, բայց քիչ բան հասկանում նրա ենթադրություններից ու վարկածներից:

Սանատրուկը չէր ժխտում, որ իրենց համատեղ կյանքը չստացվեց: Հասկանում ես, ասում էր, բոլորովին մի բան է, երբ սիրահարված աչքերով քեզ են նայում ասենք, ինքը գիտես, սրճարանում, բոլորովին ուրիշ բան, երբ առավոտից երեկո են այդ հայացքի տակ: Որին չես կարող պատասխանել: Ես, ասում էր, այդ, սիրում էի նրան, հիմա էլ եմ սիրում, բայց ես հազար ու մի գործ ունեի, վերջապես շրջապատ ունեմ, ես չէի կարող ամբողջ օրը նրա հետ դուրդուրել: Զեք թվում է, ասում էր, ե՞ս չուզեցի ամուսնանալ: Ես ընդամենը ականջի ետեւի էի զգում, իսկ երբ առաջակցեցի, ինքը հրաժարվեց: Կորելուց, պատկերացրու, երկու օր առաջ: Հիասթափվել էր, հա՞, երեւի ինձնից: Դու նրան, ասում էր, այդպես փխրում մի կարծիք, ես ու դու միասին նրա կամքը չունենք, նա, եթե մտքում մի բան դրեց, անպայման կանի: Ես վախենում եմ, ասաց, ամեն վայրկյան թվում է, ինձ հիմա կկանչեն դիաճանաչման:

Նա երկար խոսեց, երեւի խմած էր, ես խոսափողով մի այրվող ականջիցս մյուսին էի տեղափոխում, լսելով, որ մեզ շատ սիրող կանանց հետ չի կարելի ամուսնանալ (եթե միասին էինք ապրում, ի՞նչ էինք, եթե ամուսնացած չէինք), որովհետեւ ինչքան սիրում են, այդքան էլ պահանջում ու բեռ դառնում, իսկ երբ զգում եմ, որ բեռ եմ, ահա այսպիսի օյիներ են խաղում: Դու գիտես, ասում էր, ես մարդամոտ եմ, բայց նրա հետ արդեն բերանս չէր բացվում, ինքն էլ իր մեջ էր քաշվել, որովհետեւ ինչ ասեր, ինչպես էլ ասեր՝ ինձ դուր չէր գալիս, մենք վաղուց արդեն բաժանված կլինեինք, բայց նա գնալու տեղ չունեի, ես էլ ուր պիտի գնայի իմ տնից, ահա տեսնում ես, ասում էր, մեծ սերը մեզ ուր հասցրեց, դու բախտավոր մարդ ես, ասում էր, զգույշ ես, իսկ ես, չէ, ու հիմա նստած դողում եմ, աստված չանի մի բան պատահած լինի, այս քաղաքում հազար ու մի սրիկա կա, այն էլ գիշերվա այդ ժամին:

Մերինի երկար փնտրեցին: Եվ իրեն, եւ դիակը: Որը նույնպես չգտան:

Մերին կորավ անհետ:

Սանատրուկը ոստիկանության ամենակատիվ փնտրող օրերին անգամ չլքեց սրճարանները, բայց մշտապես մռայլ էր, չսպիրված ու հաճախ հարբած: Եվ դարձյալ նրանից անպակաս էին ուղևորները ու երկրպագուները, որովհետև սիրո եւ մարդու երջանի մասին դատողությունները այնքան անսովոր կամ նույնիսկ արտասովոր էին, որ եթե դրանք հնարավոր լինեին հիշել ու վերարտադրել, կամ գոնե ինքը՝ Սանատրուկը, շարքարեր, մարդկությունը ինքն իրենից հիասթափվելու մի անփոխարինելի ձեռնարկ կատարար:

Սանատրուկը ինքն իրեն նմանվեց երեւի միայն գարնանը: Համենայն դեպս ամբողջ ձմեռ ոչ մի անգամ չէինք հանդիպել, իսկ առաջին տաք օրերին մայիսից տեսնելով նրան ու չհասցնելով ժամանակին շրջվել, ստիպված ընդունեցի հրավերն ու մոտեցա: Ի պատասխան իմ ափսոսանքին, որ տարին լրանում է, իսկ Մերիի մասին ոչինչ չիմացանք, նա ձեռքը թափ տալով դժգոհեց իրավապահ մարմիններից ու շարունակեց իմ մոտենալու պատճառով ընդհատված խոսակցությունը Դավիթ Անհաղթի չէմ հիշում որ տրակտատի իր նոր ու յուրօրինակ տեսակետի մասին: Գուցե շատ նոր ու յուրօրինակ, բայց ես, ասելով, որ շտապում եմ, վեր կացա:

Դրանից հետո, թեև երբեմն պատահաբար նորից հանդիպում էինք, բայց բարեկից այն կողմ չէինք անցնում: Սանատրուկը երեւի սկսել էր հասկանալ, որ ես խուսափում եմ իրենից, կամ էլ, ով գիտե, գուցե ինքն էլ ինձնից խուսափելու պատճառներ ուներ:

.....

Ետեւում Սեն Դենին (ամուսնացած այն հատվածը, որտեղ աղջիկներն են կանգնում), առջևում անհայտություն, գիշերվա գովում միանգամից քրտնած Սանատրուկը ոչ թե պարզապես երեք տարի առաջվա այս օրն էր մտաբերում, այլ նորովի վերապրում նրա արտացոլումը: Լրիվ չմիանալով նրա մտածածից արտաստեղծ արարածին, այնուհանդերձ պիտի ընդունում, որ զուգահեռությունները, իրոք, մի քիչ շատ էին պատահական լինելու համար: Ինչն էլ երեւի նշանակում է, որ ինչքան էլ խորը լինի մեր մարմնի վիրապը, ինչքան էլ գոմեշի կաշի քաշենք մեզ վրա, ինչքան էլ մեր փոքրիկ վահեցած հակոտնյան ընդունած լինի խաղի մեր կանոնները, մնում-մնում՝ իր իմացած ձեռով է խաղում, եւ՝ կամ կաշին է ճաք տալիս, կամ լրիվ հուսալի վիրապներ ընդհանրապես չկան:

Երեք տարի առաջ Սանատրուկը տուն եկավ տասի կողմերը: Մերին սկսեց ինչ-որ բան պատմել: Ինչպես միշտ՝ անխմաստ մի պատմություն (իրոք՝ նրա բոլոր խոսակցությունները անխմաստ էին, թե՛ այդպես էր թվում): Նյարդայնանալով լսեց մի թույլ, երկու թույլ, ապա վեր կացավ ու անջատեց հեռուստացույցի ձայնը: Երկուսից միայն մեկին կարող եմ լսել, ասաց: Ներքի, ասաց Մերին: Այդպես մի քանի թույլ նստած էին գերեզմանային լուռության մեջ, հետո Մերին վեր կացավ ու գնաց սենյակից:

Հեռուստատեսային հաղորդումը պակաս ծանծաղ չէր (ծայրը, պարզ է, նորից միացրեց) եւ շուտով ինքն էլ վեր կացավ: Խոհանոց գնաց: Զգիտես ինչու կարծում էր, Մերին այնտեղ կլինի, ինչպես միշտ, երբ խռովում էր, սեղանի առաջ մենակ նստած, կշռի գլուխը, կհամբուրի, եւ ամեն ինչ կանցնի: Բայց Մերին խոհանոցում չէր, նույն պահին էլ ինչ-որ բան ընկավ ննջարանում: Մտածեց, որ այս անգամ Մերին ավելի լրջորեն է նեղացել ու արդեն երեւի պառկում է, բայց գնաց մինչեւ ննջարանի դուռը, որի առաջ մի քանի վայրկյան կանգնելուց հետո միտքը փոխեց, վերադարձավ հյուրասենյակ եւ, բաժակ ու շիշ վերցրած, նստեց հեռուստացույցի առաջ (ի տարբերություն այսօրվա՝ օղու շիշ, բայց ըստ էության դա տարբերություն չի): Եվ ննջեց հեռուստացույցի առաջ: Կեսգիշերին մոտ արթնացավ դռան չխկոցից: Եթե միանգամից ետեւից գնար, կհասներ դեռ շենքից դուրս չեկած: Հապաղելուց հետո էլ մի տեղում անպայման կհասներ... Զե, չմտածեց՝ լավն էլ սա է, ինչ որ վաղ թե ուշ պիտի լինեի, թող հիմա լինի: Ետեւում՝ Սեն Դենին, առջևում՝ անհայտություն, զով գիշերում քրտնած Սանատրուկը խոստովանեց՝ այո, չմտածեց, բայց գիտեր: Եվ այնքան նստեց, որ երբ վերջապես վեր կացավ ու նախարարի գնաց (դուռը բաց էր, բանալին՝ ներսից փակված մեջ), մնում էր միայն դուռը կողպել:

Մերիի նման Սանատրուկն էլ կեսգիշերին էր փողոց դուրս եկել, Սեն Դենիից էլ նրա նման գնաց դեպի անհայտություն, բայց ինչը Մերիին հաջողվեց էր կամ վիճակվել, Սանատրուկի դեպքում պետք է վերածվեր ֆարսի, բոլոր ուշացած կամ կիսատ գոջումների նման: Ինչեւէ, Սանատրուկը կորչելու մասին չէր մտածում: Գուցե Մերին էլ չէր մտածել, բայց խորտակված անուրջների ուրվականը եակներին պիտի որ տարբերվի այն ուղտափշերից, որոնք սեփական ոտնահետքերից են ծնվում: Դժվար է ասել, ինչու Մերին այն գիշեր ամուսնացած ավագ քրոջ տուն չգնաց, թեև վերջինս հեռու էր ապրում, ինչու գնաց նկերուհիներից մեկի մոտ, թեև վերջին տարում նրան ընկերուհի էլ չէր մնացել, գուցե ուզում էր, բայց, ցավոք, չհասավ, իսկ գուցե նրա ճանապարհը ի սկզբանե էր անվերադարձ: Սանատրուկինը որոշակի էր՝ նա հույս ուներ մի այնպիսի տեղ ընկնել, որտեղ կնստեր մինչեւ անհաղթ: Բայց սարսափ իր մեջ էր եւ ոչ թե մեր բարեկամի տան պատերի, եւ գիշերվա այդ ուշ ժամին քշելով քշում էր անձանոթ քաղաքի փողոցներով:

Սկզբում, որքան էլ զարմանալի է, ճիշտ էր գնացել: Ժամանակն էր երկուսն էլ մեր բարեկամի մեքենայով մի թռուցիկ պտույտ էին արել Փարիզում, անցել Ելիսեյան դաշտերով, քարտեզից էլ մոտավորապես հիշում էր տեղադրությունը եւ մտածեց, որ այնտեղ կյանքը պիտի որ եռա մինչեւ լույս: Այդքան ուշ ժամի Ելիսեյան դաշտերում չէմ եղել, չգիտեմ կյանքն այնտեղ ինչպես ու ինչքան է եռում, բայց ահա մի քիչ ուղիղ, մի քիչ աջ շարժվելով, Սանատրուկը շուտով հասավ Ռիվոլի՝ երեկ այնքան փնտրված Լուվրի մոտ: Ռիվոլին նրան վաղ թե ուշ Կոնկորդի հրապարակ կբերեր, որտեղից մինչեւ Ելիսեյան դաշտերը երկու քայլ էր, բայց նա այդ չգիտեր, Լուվրն էլ չճանաչեց: Եվ որոշ ժամանակ անվերջանալի թվացող մութ պատի տակով քայլելուց հետո ետ դարձավ, շրջանցեց իր կարծիքով անհրապույր շենքը եւ հայտնվեց գետափում: Այս կողմից երկար շենքը, այսինքն՝ Լուվրը, բաց տարածության շնորհիվ պակաս անհրապույրից թվաց, բայց հիմա էլ համբերությունը հերիքեց մինչեւ Տյուիլրի այգին: Այստեղ Սանատրուկը նորից անվճարական կանգ առավ մե մինչ կորոշեր ինչ է անելու, որտեղից որտեղ հիվա թե վեց կլոշարներ հայտնվեցին: Սկսեցին քաղաքավարի՝ մայր, խնդրում ենք եւ այլև, բայց սկզբնական մեկ ֆրանկը, որը Սանատրուկը տվեց անմիջապես, դարձավ տասը, իսկ երբ դա էլ տվեց, բայց պարզվեց, որ յուրաքանչյուրին պետք է տասական տաս ու փորձեց հրաժարվել, կլոշարներն իրենք ձեռքները գցեցին նրա գրպաններին: Հատկապես ակտիվ էին քթին կեղեակալած վերքով տղամարդը եւ աչքի տակ կապտուկ ունեցող կինը: Վերջինս, ծանր գինեհոտ փչելով դեմքին, գրկել էր ու, ինչ-որ փաղաքշանքեր մոլտալով, ձեռքը պիջակի գրպաններն էր տանում, տղամարդն էլ ետեւից փորձում էր տաքստի գրպանները մտնել: Պիջակը արդեն հանում էին վրայից, երբ նա, հասկանալով, որ դիմադրել անօգուտ է ու ավելի շատ մտածելով այդ գարշահոտ գրկախառնությունից ու իրեն շոշափող ափերից ազատվելու մասին, ձեռքերը բարձրացնելով, ասաց՝ օքե՛յ, օքե՛յ (Սանատրուկը շատ հպարտ էր, որ այդ ծանր պահին կարողացել էր ամենաճիշտ արտահայտությունը գտնել): Նրան, իրոք, բաց թողեցին, Սանատրուկն էլ ձեռքը գրպանը տարավ մտածելով՝ արդյոք հիսուն կամ գոնե հարյուր ֆրանկով կարծնի՞, թե՛ բոլորը կաննեն ձեռքից: Դրամապանակը նրանից խլեցին լույս աշխարհ գալուս պես, Սանատրուկն էլ նույն պահին հիշեց, որ սրճարանում վճարելուց հետո փողը տաքստի գրպանն է դրել: Թիչ էր մնում ասե՛ր՝ կներեք,

սխալվել են, փողն այստեղ է, գրպանումս (փողը, միեւնույնս է, խլելու էին, խաբելու համար էլ, ի՞նչ իմանաս ինչ պատիժ էին տալու), բայց կոշտընեղը զբաղված էին դրամապանակը քրքրելով, և Սանատրուկը փախավ:

Փախավ կամրջի կողմը, որովհետեւ այդ կողմում էր ճանապարհը ազատ: Գոռում-գոչյունով, հայիոյելով հետապնդեցին նրան, բայց դոկտորական թեզը ընդամենը մի քանի ամիս առաջ պաշտպանած Սանատրուկին հասնել կլինե՞ր: Պիշակի փեշերը փոփռացնելով՝ սանում էր քամու արագությանը: Կամրջի կեսից հետապնդումը դադարեցրին, բայց Սանատրուկն իրեն ապահով չզգաց, մինչեւ որ չհեռացավ գետափից: Շուկն տեղը բերելով, մտածում էր, որ մի որոշ ժամանակ կբայլի գետին զուգահեռ, հետո մեկ ուրիշ կամրջով իր փնջ կանցնի: Սակայն, երբ վերջապես համարձակվեց դեպի գետափ շարժվել, Սենան չգիտես ինչու չերեւաց: Նա հասկացավ, որ մոլորվել է եւ, որպեսզի ավելի չփչացնի գործը, կանգնեց ինչ-որ խաչմերուկում, հուսալով, որ վաղ թե ուշ որեւէ ուշացած անցորդ կերեւա, և նրանից կհարցնի, թե որ կողմում է Սենան: Եվ իրոք, շատ շուտով ոչ հեռու մի շքամուտքից ինչ-որ կին դուրս եկավ: Գուցե մի քիչ շատ բարձրահասակ, մի քիչ շատ զուգված և շատ ընդգծված շորորացող, այնուհանդերձ կենդանի արարած, որի կրունկների կտկոտոցը նույնիսկ մեղեդի թվաց, և Սանատրուկը գնաց նրա ետևից, անհանգստանալով միայն մի բանի համար՝ աստված չանի վախեցնի միայնակ կնոջը: Արդեն համարյա հասնում էր, երբ մի լուսավորված ցուցափեղկի մոտ կինը հանկարծ կանգ առավ, ոտքը դրեց ելուստին, բարձրացրեց փեշն ու սկսեց գուլպան ուղղել: Սանատրուկը դանդաղեցրեց քայլը: Բայց կինը չէր շտապում փեշն ու ոտքն իջեցնել (ի միջի այլոց, բարեկազմ ոտքը), և երբ Սանատրուկն իր կամքից անկախ հավասարվել էր նրան, կինը, դիրքը չփոխելով, շրջեց գլուխը, և ապշած Սանատրուկը տեսավ տղամարդու վիթխարի քիթումուռ: Դրանից հետո զարհուրած Սանատրուկն էր առջեկից գնում, իսկ կրունկների կտկոտոցը հետապնդում նրան: Քայլերն արագացնելով, մի քանի փողոց փոխեց, մինչեւ որ կտկոտոցը լռեց: Այս անգամ էլ փրկվեց, բայց արդեն վերջնականապես մոլորվելու գնով: Դրանից հետո, ճիշտ ու սխալ գնալու հավանականությունը հավասար՝ հիսուն հիսունի գնահատելով, արդեն քայլեց ուր աչքը կկտրեր: Մեկ-երկու անգամ հեռվում մարդ տեսավ, որոնք կարող էին ցույց տալ Սենայի տեղը, բայց աչքն արդեն այնքան վախեցած էր, որ ինքն էր փոխում ճանապարհը:

Մի որոշ ժամանակ, ինչպես հետո պիտի իմանար, քայլել էր բուլվար Սեն ժերմենով, այսինքն, Սենայից ոչ հեռու և զուգահեռ: Ցավոք, հետո շարժվել հարավ, որովհետեւ մեծ ու մութ այգին և պալատի նմանվող շինությունը միայն Լյուքսուրմբուրգյան այգին ու պալատը կարող էին լինել: Այստեղից մի կարճ ժամանակ բավականին ճիշտ էր գնացել, որովհետեւ մի գեղեցիկ օր զարմանքով ճանաչեց Սորբոնի համալսարանը: Բայց այդ գիշեր նա չգիտեր, որ Լատինական թաղամասում է, իմանար էլ՝ չգիտեր այդ թաղամասի տեղադրությունը, և նորից հեռանալով Սենայից, ի վերջո իրոք մռայլ, եթե չասենք չարագուշակ տեղ էր հասել՝ Մոնպառնասի գերեզմանոց, որից ընկնելով էլ տեսել էր Մոնպառնասի երկնաքերը: Որը մեկ ուրիշի համար կարող էր հրաշալի ուղեցույց դառնալ, բայց Սանատրուկը, հնազանդ իր ճակատագրին, համառորեն շարունակել էր հեռանալ Սենայից և սատանան գիտե թե որտեղ դես ու դեն ընկնելուց հետո վերջապես տեսել այն, ինչն արդեն չէր համարձակվում երագել՝ բաց սրճարան, «24 ժամ» ցուցանակով:

Լուսավոր, ծանոթ բույրերով լցված սրճարանում երկար տառապած Սանատրուկն իրեն պահեց օազիս հասած ուղտի նման, բայց չընթելով ռուսական օդու վրա, որը, պարզվեց, այստեղ նույնպես վողկա է կոչվում: Երկրորդ թե երրորդ բաժակից հետո արդեն հարբած՝ հիմա էլ երեւի մարդկային ուշադրության կարոտից, սեփական ուշադրությունը կենտրոնացրեց վաճառատնային մյուս ծայրում բարմենի հետ զրուցող ֆրանսիացու վրա, տեսքից դատելով՝ գործավորի, երեւակայությանը զոռ տալով՝ Բերանժեի երգերից փախածի: Իր դիտողականության համար Սանատրուկն այս դեպքում իրեն շնորհավորելու իրավունք ուներ, որովհետեւ, երբ երրորդ թե չորրորդ բաժակ վողկան պատվիրելիս պահանջեց լցնել նաեւ ա՛յ այն հրաշալի մարդուն, հասկացնելով, որ հյուրասիրում է, մի պահ շանթահարված ֆրանսիացին, արագորեն ուշքի գալով, բացականչեց՝ մոն ֆեռ՝, ապա մոտեցավ, թփփաքրեց Սանատրուկի ուսին ու ներկայացավ՝ Ժակ: Պարզության համար Սանատրուկն այս դեպքում, հասկանալի է, Սանո էր: Որքան հիշում էր, Ժակի հետ խմեցին եւս մի անգամ, որից հետո սրճարան մտան եւս երեքը, իսկ գուցե չո՞րսը, բայց մեկը հաստատ կին և նույնպես հաստատ Բերանժեի երգերից փախած: Ժակը Սանատրուկին ներկայացրեց նրանց՝ մոն ֆեռե Սանո, և ի նշան ընդարձակվող բարեկամության՝ Սանատրուկը վողկա պահանջեց բոլորի համար: Ինչ-որ մեկը հետաքրքրվեց նրա ազգությամբ, և Սանատրուկը հպարտությամբ ասաց, ըստ որում, մաջուր ֆրանսերենով՝ ժը սյուրի արմենիեն, ինչը, սակայն, համենայն դեպս նրան այդպես թվաց, չգիտես ինչու համարժեք արձագանք չստացավ, և, անհանգստանալով, որ երեւի իրար չհասկացան, ավելացրեց՝ Շառլ Ազնավուր: Ուի՛, ուի՛, Ազնավուր՝, գլուխները տմբտմբացրին բաժակակիցները: Ոգեւորված Սանատրուկը ավելացրեց՝ Գառզու: Գառզու՞, կրկնեցին գործավորները, իրար նայեցին, ապա, ասես ֆեռե Սանոյին չնեղացնելու համար, նորից տմբտմբացրին գլուխները: Սանատրուկը մտածեց, որ գործավոր մարդկանց չի կարելի մեղադրել Գառզուին ըստ արժանկույն չգնահատելու կամ նույնիսկ ճանաչելու համար, հիշեց, որ նրանց կուռքը պետք է որ ֆուտբոլը լինի, բայց ոչ մի կերպ չկարողացավ հիշել հայազգի անվանի ֆուտբոլիստի ոչ հայկական վերջավորությամբ ազգանունը: Սանատրուկը կյանքում անկասկած առաջին ու երեւի վերջին անգամ էր ինքնահաստատվում այլոց հեղինակությամբ: Նրա հռչակավոր ամբարտավանությունը տրորվել էր անսխալաբեկ անողորմությամբ, նա՛ քողակ կերած ու հանկարծ շոյող ձեռքի հանդիպած, քծնում էր ինչպես կարող էր, իսկ կարող էր միայն նորից հյուրասիրելով: Եվ նորից վողկա պահանջեց: Նորից բոլորի համար: Բայց բարմենը, երեւի քաջատեղյակ նրա ֆինանսներին, պահանջեց, որ այն անգամ նախապես վճարի: Ժակի օգնությամբ հաշվելով ու վերջին թղթադրամի վրա դնելով տարբեր գրպաններում հայտնաբերված մետաղադրամները, նա ի վերջո կատարեց այդ, ինչպես իրեն էր թվում, մի քիչ անհարգալից պահանջը, որից հետո «չին-չին» խմեցին վերջին անգամ: Ե՞րբ գնացին իր բարեկամները՝ Սանատրուկը վատ էր հիշում: Ազոտ հիշում էր միայն Ժակի հերթական թփթփոցը իր ուսին: Մեկ էլ այն, որ ինքը նորից վողկա էր ուզում, բարմենը հրաժարվում լցնել, և կարծես դա քիչ էր, մի անծանոթի հետ իրեն, կարծես թե հակառակ իր կամքին ու ոչ այնքան բարեկամաբար, փողոց հանեցին:

Առավոտյան զով օդը, սակայն, աստիճանաբար (և համեմատաբար) սթափեցրեց նրան: Լույսը բացվում էր, բայց գիշերվա ցրվող խավարից ծնվում էր նույնքան անծանոթ մի քաղաք և գուցե ավելի թշնամական, որովհետեւ զգայական սարսփանքերին փոխարինեց հոգեմաշ ամայությունը՝ գուցե արտաքին ազդակներից եկած, բայց անապատ դարձած իր մեջ: Սրճարանային հովվերգությունը առավոտի մեջ ներկայացավ բոլորովին ուրիշ հանդերձներով՝ որպես իր կրած բոլոր ստորագումներին արժանի դասինդասակ: Սանատրուկն զգում էր, որ ինքը իր գոհն ու դահիճն է միաժամանակ, և գիտեր, որ չգիտի, թե ինչպես է զլուխը մարմնից անջատելու:

Լույսը բացվել էր: Երեւացին առաջին հատուկենտ անցորդները: Նրանցից կարելի էր իմանալ ինչպես իր փնջ անցնի, բայց հարցնելու ոչ ուժ կար, ոչ ցանկություն:

Մերիին ու նրա հետ կապված զգայախաբությունները, պատասխանելով իմ հարցին, այո, ասաց, վաղուց էր իսպառ մոռացել:

Նրա փրկության համար ուղարկված ավտոմեքենան կողքին արգելակվեց բացարձակապես ամալի, լայն ու երկար խճուղու պես մի տեղում, որը այնքան էլ նման չէր նրա լսած ու իմացած Փարիզին և կարող էր աշխարհի ցանկացած խոշոր քաղաքի

արվարձանները տանել: Սկզբունքորեն դա կարող էր ուրիշ մեքենա լինել, բայց Սանատրուկը առանց վարանելու մտածեց, որ երրորդ անգամ ճակատագրին հակառակվելն անիմաստ է: Երեւի այդպես էր մտածում ևս էլ ղեկի առաջ նստած կինը, որն այս անգամ առանց այլեւայլության ձգվեց ու բացեց նրա կողմի դռնակը: Սանատրուկի ուղեղը այնուհանդերձ ինչ-որ միտք ձեւակերպելու անհամարձակ փորձ արեց, բայց արագությունների լծակի վրա սպասող նեղ դաստակն ու մեքենայի անհամբեր գոգոռոցը իսկույն այդ փորձի առաջն առան: Ինչէն, Սանատրուկն արդեն չէր ուզում մտածել եւ սուսուփուս ընդունեց ողորմածությունը:

Այդ պահից, կարելի է ասել, սկսվեց Սանատրուկի վերածնունդը: Որին նախապատրաստվող նրա օրգանիզմը նախ անուշ սինջի մեջ ընկավ լիքը լցված լողարանում, որտեղ նրան այնուամենայնիվ աղմուկով արթնացրին, ապա երկնագույն խշխշան սավաններով անկողնում, որը, սակայն, երեւի արդեն փառքով տուն դարձած կտրիճի մրափ էր, որովհետեւ այս անգամ աչքերը բացեց կամովին ու միայն երեկոյան:

Սանատրուկը մոտավորապես հիշում էր ինչպես է այստեղ ընկել, աղոտ հիշում էր իրեն բերած կնոջը եւ բուրբուքին չէր հիշում անունը: Ինչքան էլ անաղմուկ հագնվեց, տանտիրուհին երեւի լսել էր՝ կամացուկ թակեց դուռն ու հայտնվեց շեմին: Նա անպայման լավ էր հիշում, թե ինչ է բերել տուն եւ ցնծությամբ ողջունեց Սանատրուկի հարությունը, իսկ վերջինս՝ նախ զարմացավ, որ նա այդքան երիտասարդ է, հետո էլ փառք տվեց աստծուն, որ այլանդակ չի:

Կնոջ անունը Ամելի էր: Ինչէն, Սանատրուկը դա ավելի ուշ իմացավ: Թեեւ անունը չիմանալը ամենեւին չիսկզբարեց, որ հաճույքով խմի բուրումնավետ սուրճը, ծխի նրա ոչ պակաս բուրումնավետ սիգարետները, չհասկանալով ձեւացնի, թե ուշադիր լսում է նրա շաղակրատանքը, այդ ընթացքում՝ մտածի՝ տեսնես իրենց միջեւ որեւէ բան լինելու՞ է, թե՞ ոչ, կամ, ավելի ճիշտ՝ ե՞րբ է լինելու, վերջում էլ ընդունի դրոսով ճաշելու հրավերը, թեեւ արդարությունը պահանջում է ասել, որ այստեղ նա անհանգստացավ, բայց Ամելին բացատրեց, որ ինքն է հրավիրում, ուրեմն ինքն էլ հյուրասիրում է,, եւ Սանատրուկին մնում էր իբրեւ թե զիջելով հնազանդվել (ահա սա է, ախպերս, մարդ կոչվածը, ասում էր ինձ Սանատրուկը Երեւանում, հարմարվում է բոլոր պայմաններին, բոլոր հանգամանքների ձեւն ընդունում, հիմա հասկանու՞մ ես, թե ինչու դիտզավրերն անհետացան, իսկ մարդը բուրբուք արագ զարգացավ):

Երբ դուրս էին գալիս, պարզվեց, որ Ամելիի քնակարանը երրորդ հարկում է (Սանատրուկը, իհարկե, չէր հիշում ինչպես է այստեղ բարձրացել), մի բավականին հին շենքում՝ փողջիկ աստիճանահարթակներով, նեղ, բավականին վերձիգ ու համարյա ուղրապտուկ սանդուղքով: Աստիճանները փայտից էին, կարմիր ներկված, բայց չափազանց մաքուր, պատերը խնամքով ճերմակեցված՝ խնամքով պահպանվող հիշողության նման, չգիտես ինչու հենց այս համեմատությունը անցավ Սանատրուկի մտքով: Իսկ փողջուց, երբ մեքենային էին մոտենում, Սանատրուկի մտքերն այլ ընթացք ստացան՝ նրան թվաց՝ գիտի որտեղ են: Բայց վատահ չէր կամ չէր կարողանում հավատալ, մինչեւ որ մի հարյուր մետր գնալուց հետո մեքենան խաչմերուկից հաջորդ փողջոց չմտավ: Փողջոցը, որտեղ Սանատրուկն էր արդեն մի շաբաթ ապրում, իհարկե, խաչմերուկից երեւի երկու հարյուր մետր ցած:

Ամելին ասաց, որ ճաշելու են Լա Կուպուլում եւ նայեց Սանատրուկին՝ նրա կարծիքը իմանալու: Անունը ծանոթ էր գրականությունից, ինչից Սանատրուկը ենթադրեց, որ դա բավականին պատվավոր ռեստորան է, թեեւ նրա համար միելույն էր ուր կգնան, որովհետեւ արդեն մի շաբաթ, եթե ճաշել էր, ապա զագօջախի վրա իր պատրաստած ձվածեղներով: Եվ շնակով շատ բացահայտ չնայել Ամելիի ավելի մերկացած ու ավելի երկարած ոտքերին, գլխով արեց, ինչը այս եւ ուրիշ առանձնահատուկ դեպքերում համաձայնության նշան է:

Մի պահ մղձավանջային երազի ծվեններ արթնացան, երբ մեքենան սկսեց կամրջով անցնել, բայց իր պահապան հրեշտակի կողքին ապահով բազմած Սանատրուկին ձախ ափն այս անգամ դիմավորեց մայրամուտի արեւով ողողված փողոցներով ու շենքերով, անհոգ բազմություններով, լեփ-լեցուն սրճարաններով, եւ Սանատրուկը անմիջապես էլ մոռացավ միլլիոն տարի առաջ մեկ ուրիշ կյանքում մեկ ուրիշին այցելած անհեթեթ երազը:

Ճաշեցին, Սանատրուկի խոսքերով ասած, փառավոր: Չնայած ուղիղ մեկ դյուսիս խիսունջների տեսքը, որոնք ճաշակելու համաձայնություն տվել էր չհասկանալով, սկզբում վախեցրեց: Բայց երբ Ամելին ցույց տվեց, թե ինչպես պետք է աքցանով բռնել, ինչպես կեռ պատառաքաղով պատյանից հանել եփված վիճակում էլ խոր թաքնված կակոմորթին, պարզվեց, որ վերջինս, համարյա հայավարի պղպեղված ու համեմված, տավարի մսի համ ունի: Եվ երեւի այնքան ախորժակով էր ուտում, որ Ամելին ղիմացավ, ձեռքը գցեց իր ափսեին, տանելով տասնմեկերորդ խիսունջը: Բայց ոտարեները, ասում էր Սանատրուկը, որ դրանից առաջ փորձեցին, ինչքան էլ Ամելիի խորհրդով կիտրոն քամեց վրաները, տպավորությունը չգործեցին, թեեւ երեւի պիտի գործեին: Ինքը՝ Ամելին, ուտում էր առանց կիտրոնի ու երեւի շատ գոհ էր: Իսկ գինին, որ Ամելին ընտրել էր ամենայն բժախնդրությամբ (Սանատրուկը չէր հիշում ինչ գինի) ուղղակի հրաշալի էր:

Ամելին ցույց էր տալիս պատերին արված նկարներ, զանազան մակագրություններ եւ ասում, թե որը որ մեծության թողած հիշատակն է: Յետո խնդրեց, որ նայի մի քանի սեղան այն կողմ նստածներին, եւ Սանատրուկը առանց նրա ասելու էլ ճանաչեց իտալացի անվանի կինոդերասանին՝ արդեն ճերմակած: Կողքի սեղանին նստած տղամարդը՝ ինչ-որ բանով միլլիոն տարի առաջ մեկ ուրիշի երազում հայտնված կլոշարների հիշեցնող, իհարկե, ոչ այդքան այտուցված դեմքով, Ամելիի ասելով, հայտնի նկարիչ էր: Մեկ ուրիշ սեղան գրադեցրել էին ինչ-որ ավտոարշավոր ու նրա սիրուհին՝ տոպ-մոդել, իրենց շքախմբով: Գուցե ուրիշ անվանիներն էլ կային, բայց դա ի՞նչ կարեւոր էր, կարեւոր էր, որ այդ երեկո ինքը՝ Սանատրուկն էր սանձել բախտի նժույգը:

Ցավոք բերանն էր առաջվա նման կապված: Իսկ գինին, միջավայրը, Ամելիի ներկայությունը նրա վրա ներգործում էին ինչպես արեւի շողը երկար ձմռան ընթացքում համբերությունը կորցրած սերմի: Եվ այստեղ էլ տեղի ունեցավ անսպասելին: Ամելին առաջարկեց, որ Սանատրուկը հայերեն խոսի: Սանատրուկը չհավատաց ականիջներին: Ոչինչ, ասաց Ամելին, դու էլ չես հասկանում, երբ ես եմ խոսում: Մի քիչ հասկանում եմ, չհամաձայնեց Սանատրուկը: Երբ ինքը թեգ լրիվ հասկանաւ, ասաց Ամելին, մի քիչ էլ ես կհասկանամ:

Սանատրուկը գտնում էր, որ դա երբեքից որեւէ կնոջ բերանից հնչած ամենախելացի միտքն է: Սկզբում, իհարկե, թվում էր՝ Ամելին բարեկամական կարեկցանքով արեց այդ կարծես թե անհեթեթ այդ առաջարկը, բայց շուտով ամեն ինչ տեղն ընկավ: Պարզվեց, որ առօրեական արտահայտությունները՝ սա վերցրու, սա տուր, ուզում եմ կամ չեմ ուզում, այո եւ ոչ, լավ ու վատ եւ այլն, եւ այլն, կարեւոր չի, թե ինչ լեզվով են ասվում, հասկանալի են ամեն դեպքում, իսկ գալով մնացածին, իրոք, կարեւոր է, որ մարդ նախ եւ առաջ ինքն իրեն հասկանա: Ամելին իրենն էր պատմում, Սանատրուկն իրենը, Ամելիի պատմությունները միշտ ուղեկցվում էին

ժպիտներով, որոնք Սանատրուկին էլ էին վարակում, Սանատրուկը իր սովորության համաձայն լուրջ բաներից էր խոսում, բայց անկեղծ ուշադրությունը, որով նրան լսում էր Ամելին, մոռացնել էր տալիս, որ իրեն գուցե էլ չհասկանա։ Խոսում էր, իհարկե, ավելի հակիրճ, քան այդ կաներ Երեանում, բայց աստիճանաբար, պատկերավոր ասած, վերածնվելով ինքն իր միջից։ Ժամերը աննկատելի անցան։ Սանատրուկին թվում էր, նեղվելու է, երբ Ամելին պայուսակից փող հանեց, սակայն ընդամենը մի քիչ ափսոսաց համարյա երկու հազար ֆրանկը։

Հետո կատարեց իր ժամերի բացթողաց սրճարաններից մեկում։ Դա միակ բանն էր, որ Սանատրուկը բազմիցս իրականացրել էր եւ առանց Ամելիի, այնուհանդերձ նոր էր ավելի էական բան, որն իր ներսում էր։ Նորից գտած ինքնավստահությունը։ Սանատրուկը համարյա շոշափելի գգում էր, ինչպես են հանգստանում մկանները, ինչպես են նյարդերը գուրգուրում իրենց հանգիստը, ուղեղի քջիչները տևավարի զբաղվում ինքնավերարտադրությամբ։ Փարիզ հասնելուց ի վեր առաջին անգամ չէր մտածում ինչը ինչպես պիտի անել։ Համարյա Երեանի նման։ Այն տարբերությամբ, որ Երեանում մենակ էր, որովհետեւ կարելու էր չէր՝ կողքին մեկը կա, թե ոչ (պիտի լինեին, ուր պիտի փախչեին, պիտի գային պարսերով, պիտի կաշեին ու պոկ գային), այստեղ հանգստացնող դեղահաբի պես գգում էր Ամելիի ներկայությունը, որի անունը ճաշի ժամանակ էր վերջապես իմացել, ներողություն խնդրելով, որ չի հիշում (Ամելին ուրախ պատասխանել էր՝ գարմանալի կլինեիր, եթե հիշեր)։ Ի տարբերություն Երեանի, հանկարծ սկսել էր դուր գալ նաեւ սեփական լռությունը, սեփական մտքերի կարծես թե ծուլը, բայց զով երեկոյի հետ հաշտ ընթացքը։ Նույն տրամադրության մեջ էր նաեւ Ամելին, նույնպես լռել էր եւ միայն ժպտում էր, երբ հայացքները հանդիպում էին։

Տասներկուսն էր, երբ իրենց ափը վերադարձան։ Այն ամենից հետո, ինչ տեղի էր ունեցել լուսաբացին այդ մեքենան կատարելու պահից ի վեր, Սանատրուկը ամենեւին չգարմացավ, երբ մեքենան կանգնեց ոչ թե Ամելիի տան մոտ, այլ մեր բարեկամի շքամուտքի առաջ։ Սրանով հաստատվում էր, որ չի սխալվել, երեք անգամ էլ նույն մեքենան է հանդիպել իրեն, այսինքն, Ամելին։ Բայց ինչպե՞ս, կամ ավելի ճիշտ՝ ինչու՞, սրանով Սանատրուկը չհետաքրքրվեց ոչ այդ երեկո, ոչ հետո։ Վերածնվելով ինքն իր միջից, նա նորից, ինչպես եւ Երեանում, ձեռք եկածն ու դուր եկածը վերցնում էր առանց հարցնելու՝ որտեղի՞ց, արդար քրտինքով վաստակած հոնորարի նման։ Հետոնեղը կորչում են նրա ողիսականի կեռամաններում, իսկ մեր բարեկամի շքամուտքի առաջ ավելի անհետաձգելի խնդիր պիտի լուծեր։ Ընդհակառակը Սանատրուկը հայտնեց անկեղծ սրտով, բայց թեքվելով հրաժեշտի համբույր տալու, հրաժեշտ չէր ուզում։ Ինչպես, Ամելին էլ չէր ուզում, եւ մի քանի րոպե անց մեքենան արդեն նրա տանն էր մոտենում։

Իսկ այս պահից թերեւս սկսվեց Սանատրուկի շուրջ երեքշաբթյա երկնագույն ճամփորդությունը։ Երեկնագույն, որովհետեւ այդ գույնի էին ոչ միայն Ամելիի անկողնու բարձերն ու սավանները, այլեւ անամպ երկինքը նրանց հարաբերություններում։ Երեք շաբաթ նրանք անբաժան էին։ Բացառությամբ այն րոպեների, երբ Սանատրուկը տուն էր վազում որեւէ հազուստ կամ այլ անհրաժեշտ իր վերցնելու։ Բայց մի քանի օր անց, երբ ինչ ուներ-չունեւր կամաց-կամաց Ամելիի մոտ էր տեղափոխվել, այդ կարճատեւ րոպեներն էլ այլեւս չպակասեցին նրանց քսանչորս ժամերից։ Առավոտները որպես օրենք երկար ու ծուրոտ թավալվում էին անկողնում, հետո սուրճ խմում, նախաճաշում, որեւէ տեղ գնում՝ հիմնականում Փարիզը Սանատրուկին սկուտեղի վրա մատուցելու նպատակով, մեկ-երկու անգամ էլ քաղաքից դուրս եկան, որովհետեւ հրաշալի եղանակներ էին։ Ճաշում էին, նայած տրամադրության՝ տանը կամ դրսում։ Երկու անգամ տանը ճաշեցին այն պատճառով, որ Ամելին հետաքրքրվեց հայկական ճաշատեսակներով։ Խոհանոցի հետ զլուխ չունեցող Սանատրուկը, օգնության կանչելով իր ողջ երեւակայությունը, երկու անգամ էլ ինքն իրեն գերագանցեց, եւ իր հաջողությունը, հուսալով, որ Ամելին կհասկանա, բացատրում էր այսպես՝ մի բանի մեջ որ սիրտ դրեցիր, կհաջողվի։ Իսկ անկախ նրանից, թե որտեղ էին ճաշել, երեկոները վեր էին ընկնում տարբեր սրճարաններում։ Եվ բոլոր քսանմեկ օրերն էլ ավարտվում էին երկնագույն բարձերի ու սավանների գրկում։ Սանատրուկին թվում էր՝ միաժամանակ այդքան քնքուռ ու իմաստուն կնոջ երբեք չի հանդիպել, եւ օր օրի ինքն էլ իր մեջ էր հայտնաբերում սերը ընդունելու եւ վերադարձնելու մինչ այդ չիրագործված ընդունակություններ։ Այստեղ էլ, ինչպես եւ ցերեկը, յուրաքանչյուրը խոսում էր իր լեզվով, ըստ որում, եթե ցերեկը Սանատրուկը կասկածներ ուներ, որ իրեն հասկանում են (թեեւ Ամելիի արձագանքները սովորաբար կարծես թե բխում էին իր ասածներից), անկողնում ըմբռնումը լիակատար էր։ Յուրաքանչյուր հայերեն խոսք չգիտես ինչպես էր հասնում Ամելիին, բայց ավելի ինքնամոռաց արձագանք Սանատրուկը չէր հիշում։ Եվ ոգեկանչությամբ զբաղված՝ զբոսնում էր դրախտում։

Քսանմեկ ցերեկն ու գիշերը Սանատրուկը հիշում էր միախոսված մի երկար օրվա մեջ, կամ մի շնչում արարված երազի նման, որտեղ, եթե մի բան առանձնանում էր, ապա այն, որ քսանմեկ տարբեր Ամելի կար։ Ամեն լուսաբացի հետ ասես նորոգված կամ պարզապես նորը դարձած ներկայանալու այդ գաղտնիքը Սանատրուկն այդպես էլ չբացահայտեց։ Կամ գուցե չփորձեց։ Որովհետեւ յուրաքանչյուր նոր Ամելի նույնքան սիրելի էր, որքան նախորդը, իսկ առանձին դեպքերում նույնիսկ ավելի սիրելի, օրինակ, այն Ամելին, երբ այցելության գնացին Վան-Գոգի գերեզմանին։

Դեռ տանը Սանատրուկը նրան նմանեցրեց Արտեմիսին, հետո մոռացավ։ Հիշեց, երբ Վան-Գոգի գերեզմանից վերադառնում էին, ու Ամելիի մտքով անցավ շեղվել խճուղուց եւ արտամիջյան ճանապարհները մտնել, որտեղ էլ վիուկի նման մի պառավ տեսան՝ տասը-տասներկու այծերի ուղեկցությամբ։ Ամելին ուրախ ճիշերով դուրս թռավ մեքենայից։ Նույնն էլ Սանատրուկն էր ուզում՝ անել, իհարկե, առանց նույն ոգեկորության, բայց նախ մի մայր այժ սպանալից վրա քշեց, հետո էլ ներին։ Եվ մինչ նա ապահով կատարեց էր մեքենայում, միայն դուռը բաց թողած, Ամելին նախ ներքին շոյեց, ապա հանգստացրեց մայր այծին, գրկեց ուլերից ամենափոքրին, որը, թվում էր, համաձայն է իր մնացած կյանքը նրա գրկում անցկացնել։ Կանգնած էր Մերին, շրջապատված այծերով, ուլը գրկում, միայն կապարճն էր պակասում վերջնականապես Արտեմիս անձնավորելու համար (որ այծերը երե ցեն, ոչինչ, մտածեց Սանատրուկը), իսկ պառավը մեկուսի կանգնած դիվոտում էր՝ այծերը բանի տեղ չէին դնում նրա կանչերը։ Այծերը գնացին պառավի ետեւից, երբ Ամելին ցած դրեց ուլին, մի անգամ էլ շոյեց ներքին ու ձեռքով արեց՝ գնացե՛ք։

Իսկ հաջորդ անգամ քաղաքից դուրս գնալիս՝ Ամելին, կարելի էր ասել, ծված էր գթության ջուր լինելու համար։ Առավոտից ի վեր արտասովոր հեգհամբույր էր, հայացքում էլ այն իմաստությունը, որ սովորաբար անսահման հաբերատարության արձագանքն է։ Մի ծառի տակ Սանատրուկը քնեց գլուխն նրա ծնկների դրած։ Աչքերը բացեց, երբ արեւն արդեն թեքվել էր։ Քանի՞ ժամ եւ անշարժ կատարեց, հարցրեց ապշած։ Հո թե չէ՞ ի՞նչ խանգարելու, պատասխանեց Ամելին, համբուրելով նրան ու դժվարությամբ ուղեղով ծնկները։

Ընդամենը մեկ օր պահանջվեց, որ Ամելին հիմա էլ արթնանա երակներում տոհմիկ ամազոնուհու արյուն։ Սանատրուկի արյունն էլ, ընդհակառակը, սառեց, երբ արագաչափի սլաքը անցավ հարյուր երեսունը, ապա հարյուր քառասունը, իսկ Ամելին շարունակում էր սեղմել ու սեղմել գազի ոտնակը։ Պատճառը ետեւից ընթացող ծանր «Աուդին» էր, որը, Ամելիի կարծիքով, պահանջված հարգանքով չէր ճանապարհ պահանջել։ Թեթեւ «Ուենոն» թռչում էր անիվները երեւի ասֆալտից կտրած, Ամելիի արձակ մագերը ծածանվում էին ներս խուժող քամուց, արագաչափի սլաքը արդեն հարյուր յոթասուսունին էր հասել, երբ «Աուդին» վերջապես ձեռք քաշեց խելագար մրցավազքից ու սկսեց ետ մտալ։ Վերջապես Ամելին էլ ոտքը ետ քաշեց ու գնաց սովորական արագությամբ՝ հարյուր-հարյուր քսանի վրա։ Նրա կարծիքով, դրանք հրաշալի րոպեներ էին, եւ երեւի շատ կգարմանար, եթե իմանար, որ Սանատրուկը

վախեցել է: Բայց չիմացավ, որովհետև վտանգն անցել էր, եւ հանգստացած Սանատրուկը արագ սլացքի մեջ արդեն որոշակի հմայք էր տեսնում:

Այսօր Ամելին միևնույն ուղևորուծուծը նրբակիրթ ազնվականուհի էր՝ դաստիրակված վարքածեւի ամենախիստ կանոններով, վաղը՝ թոկից փախած, որ պիցցան խփշտում էր ոտքի վրա, ձեռքով, հետո էլ բավականությամբ լիզում մատները: Ըստ որում, նա փոխվում էր թե ներքուստ, թե արտաքուստ: Եվ այսօր այսպիսին էր ոչ թե այն պատճառով, որ այսպես էր հագնված եւ իրեն այսպես էր պահում, այլ այդպես էր հագնված, այդպես էր պահում ու այդպես դիտվում, որովհետև այդպիսին էր արթնացել:

Մի անգամ, ռեստորանում ճաշելիս, Սանատրուկը զարմանքով Ամելիի դիմագծերում հնդկացիական ինչ-որ բան նկատեց՝ փոքր-ինչ բարձր թվացին այտուկները: Եվ նրա հարցին՝ թե դա ի՞նչ կարող է նշանակել, Ամելին ծիծաղելով պատասխանեց՝ ամեն ինչ, բայց ես, չվախենաս, զանգամաշկ չեմ հանում, թեեւ բոլոր գտարյուն հնդկացիների նման պատվաստ եմ: Իսկ հաջորդ օրը Սանատրուկն արդեն զարմանում էր, թե որտեղից գտավ այդ հնդկացիական նմանությունը, որովհետև եթե Ամելիի տատիկներից որեւէ մեկին կարելի է կասկածել, ապա ոչ թե արեւմուտքում, այլ արեւելքում, նույնիսկ գուցե Բեյրութի որեւէ հայկական թաղամասում մեղանշելու համար: Իսկ ես մեկ օր անց՝ Ամելին գտարյուն ֆրանսուհի էր, եւ նրան որեւէ այլ ազգության գոռով էլ չէիր կապի:

Ինչեւէ, ամեն օր փոխվելով հանդերձ, Ամելին նաեւ միշտ նույն էր: Ոչ մեկս այսօր երեկվանը չէ, բայց մենք մեկ օրից մյուսն ենք քաշ տալիս կասկածների ծակ բեռը, որի տակ կքած՝ ինքներս չենք երեւում: Ամելին մեկ օրից մյուսն էր տանում թերեւս միայն այդ քսանմեկ օրերի, կամ, ավելի ճիշտ, ի՞ր քսանմեկ օրերի թափանցիկ ուրախությունը, որի տեսում ինչքան անհնար էր թաքնվել, նույնքան էլ անիմաստ: Ով էլ լինէր այդ օրը՝ Ամազոնուհի թե Արտեմիս, ազնվական տիկին թե թռիչք-վռի աղջիկ, անփոփոխ կերպով զգայուն էր գթության քորջ նման: Որտեղ էլ մեղանշելիս նրա տատիկները՝ արեւմուտքում, արեւելքում թե հենց Փարիզի սրտում, նա մի քանի վայրկյանով հանկարծ աշխարհից կտրվելու սովորություն ուներ՝ ինչ-որ տեղ գնալու ու գալու նման: Աչքերը փակած, ցածի շրթունքը կծելով՝ արծազանքում էր զգիտես հեռու մի կանչի, թե կուլ տալիս մոտիկ մի ցավ: Սանատրուկը չգիտեր՝ որտեղից է գալիս այդ կանչը եւ ինչ է ասում, բայց միշտ էլ կարծես թե լավ բան, կամ որտեղից է ծնվում այդ ցավը, բայց միշտ էլ կարծես թե կուլ գնում, որովհետև Ամելիի մի պահ լրջացած ու սեւեռված դեմքը աստիճանաբար լուսավորվում էր ժպիտով, իսկ սթափվելուց հետո, ասես իր լավ լուրը կամ ցավից ազատվելը մենակ չվայելելու համար, ձգվում ու համբուրում էր Սանատրուկին, որտեղ լինելիս ու երբ ասես՝ փողոցում թե տանը, սրճարանում թե մեքենայի մեջ (ըստ որում, ընթացքի պահին), գիշեր թե ցերեկ:

Եվ այնուհանդերձ, Սանատրուկը, որ կարծես թե գիտեր Ամելիին, ոչինչ չգիտեր նրա մասին:

Նախ եւ առաջ՝ պարզապես չգիտեր ով է նա:

Ամելին չէր աշխատում: Առաջին օրերին միամտաբար տրված այս հարցին Ամելին պատասխանեց փիլիսոփայորեն՝ կյանքն այնքան կարճ է: Պատասխանը, իհարկե, չբավարարեց Սանատրուկին, եւ նա փորձեց ինքնուրույն կռահել՝ ի՞նչ փողեր է Ամելին ծախսում աչ ու ձախ, չհաշվելով ու չանհանգստանալով: Բնական է, չկռահեց եւ հարցը համարեց փակված:

Նույն օրերին մի հարց էլ սկսեց: Նրան սովորաբար քթիմագության աստիճանի հետաքրքրում էր դիմացինի կրթական մակարդակը եւ թյուրիմացությունից խուսափելու համար հարցը ձեւակերպեց անզլերեն, որը ինչեւէ մոտավորապես այսպես՝ դու սովորե՞լ ես, ինչին Ամելին պատասխանեց՝ իսկ ես նմա՞ն եմ անգրագետի, եւ այս հարցն էլ փակվեց:

Մնացած հարցերը, Սանատրուկի գլխում ինչպես ծնվում, այնպես էլ մարում էին: Ունի՞ ծնողներ, քույր ու եղբայր, որտե՞ղ է ծնվել, ամուսին կամ մտերիմ ունի՞ կամ ունեցե՞լ է: Իր իսկ հարցերից նա զլուխն ազատում էր Ամելիի ոճով՝ իսկ ո՞վ է առանց ծնողի ծնվում, չունենում քույր ու եղբայր (ինքը՝ Սանատրուկը, չունեւ), բոլորն էլ մի տեղ ծնվում են, բոլորն էլ ամուսին կամ մտերիմ ունենում:

Ամենամենակյաց մարդն էլ՝ ընկեր-ընկերուհի չունենա, ծանոթներ գոնե ունենում է, Ամելին, ամենեւին էլ մենակյացի տպավորություն չթողնելով, չունեւ: Ոչ մեկի հետ չէր շփվում, ոչ ոք նրան զանգ չէր տալիս, խոսքի մեջ ոչ մեկին չէր հիշատակում: Այս կյանքում անհնար է որեւէ գործ, պարտավորություն, հոգս չունենալ՝ Ամելին չունեւ: Սանատրուկը հարցը փակեց այսպես՝ չունի, ուրեմն, չունի:

Բայց անցյալ հո՞ պիտի ունենար: Ամելին դա էլ չունեւ: Նրա ամենահեռավոր անցյալը այն պահն էր, երբ հանդիպել էին ինքն ու Սանատրուկը: Ինչ էլ պատմեր, ինչից էլ խոսեր՝ այդ պահից հեռու չէր գնում: Եվ մի գիշեր, երբ Սանատրուկի քունը չէր տանում, մտքով անիշեթեթ բան անցավ՝ չեն կարող հեռու գնալ, որովհետև միևնույն այդ պահը Ամելին գոյություն չի ունեցել: Դա նույնիսկ միտք չէր, տարտամ զգացողություն, որ հագիվ շոշափվեց ու մոռացվեց:

Սանատրուկը ոչինչ չգիտեր Ամելիի մասին եւ չէր էլ ջանում իմանալ: Խլացնում էր գլխում ծնվող հարցերը եւ իրեն մինչ այդ անծանոթ կենսածեւը վայելում: Որի համար արդեն ուսմունք էլ ունեւ: Մարդկանց բոլոր դժբախտությունների աղբյուրը իրար հասկանալու փորձերն են: Եթե ամեն մեկն իր առանձին լեզուն ունենար, կյանքը հրաշալի կլիներ, որովհետև ոչ մեկը ոչ մեկին չէր հասկանա: Ոչ մեկը չէր հասկանա, թե ինչ է ասում մյուսը, եւ գծություն ու պառակտություն կվերանար երկրի երեսից: Իրար չէին հասկանա, բայց կհասկացվին, ինչպես հասկացվում են ծիծաղն ու ժպիտը, նույնիսկ արցունքները: Ոչ ոք ոչ ոքի չէր մեղադրի, ոչ ոք ոչ ոքից ոչինչ չէր պահանջի, որովհետև անհասկանալի լեզուների բառերը ինչու են երաժշտության նման, գուցե երբեմն թախծոտ, երբեմն էլ բարկացկոտ, բայց, միեւնույնն է, երաժշտության:

Շուրջ երեք շաբաթ Սանատրուկն ու Ամելին մեղեդիներով էին հաղորդակցվում՝ մեկը հայերեն, մյուսը ֆրանսերեն, հրճվում մեկը մյուսի կատարողական արվեստով եւ հասկանում այնքան, որքան ձեռնտու էր: Թեեւ ո՞վ գիտե, գուցե սխալվում եմ, գուցե եթե երբեւէ որեւէ մեկն էլ ինձ երաժշտական ողջուն ուղարկի, ականջներս անմիջապես որսան կեղծ ինչուները: Նրանց ականջները չէին որսում: Սանատրուկը հասկանում էր հիմնականում անհասկանալի ֆրանսերենը եւ հայերենով ճշգրիտ պատասխաներ տալիս, Ամելին հասկանում էր բացարձակապես անհասկանալի հայերենը եւ ֆրանսերենով պատասխանում տեղը տեղին: Եվ շուրջ երեք շաբաթ նրանք իրարից լսում էին միայն այն, ինչ կուզենային լսել:

Բայց մի անգամ Ամելիի մեղեդին Սանատրուկին տարակուսանք պատճառեց: Նա հենց նոր էր ետ եկել իր հերթական հեռու կանչի գրկից կամ ազատվել մոտիկ ցավից, այս անգամ, սակայն, ժպիտը կարծես թե լարված էր, համբույրը՝ վարանոտ:

Դու կուզենայի՞ր երջանիկ մեռնել, հարցրեց Ամելին (հասկանալի է, ֆրանսերենով):

Իմ ուզելով լինել, ընդհանրապես չէի մեռնի, պատասխանեց Սանատրուկը (հայերեն):

Ես հարցնում եմ՝ երջանիկ, պնդեց Ամելին:

Ի՞նչ է նշանակում՝ երջանիկ, հետաքրքրվեց Սանատրուկը:

Օրինակ, ես հիմա երջանիկ եմ, ասաց Ամելին:

Եվ կուզենայիր հիմա մեռնել, գարմացավ Սանատրուկը:

Այո, ասաց Ամելին, շա՛տ: Դու չես պատկերացնում ի՞նչ դժբախտություն է դժբախտ մեռնելը:

Քեզ լսողը կկարծի՝ մի անգամ արդեն մեռել ես, ասաց Սանատրուկը:

Իսկ ես մի անգամ իրոք արդեն մեռել եմ, ասաց Ամելին, դժբախտ էի ու ավելի դժբախտացա: Իսկ հիմա նորից եմ ծնվել եւ երջանիկ-երջանիկ:

Ուրեմն երջանիկ-երջանիկ ապրի:

Հնարավոր չէ հավիտյան երջանիկ մնալ, համառեց Ամելին, իսկ երջանիկ մեռնելը, դու չես պատկերացնում ի՞նչ երջանկություն է՝ հավիտյան երջանիկ ես մնում:

Ոչ պատկերացնում եմ, ասաց Սանատրուկը, ոչ էլ ուզում:

Ես այդպես էլ գիտեի, ասաց Ամելին:

Ի՞նչ գիտեի՞ր, դժգոհեց Սանատրուկը:

Ոչինչ, ասաց Ամելին, խոսք էր, թռավ բերանիցս, գոնե մի անգամ իրավունք ունե՞մ հիմար բան ասելու:

Մի անգամ էլ, տասն անգամ էլ, ասաց Սանատրուկը, բայց ավելի լավ է՝ ոչ մի անգամ:

Հաշվիր, որ սա վերջին անգամն էր, ասաց Ամելին:

Այս երաժշտական... այնուամենայնիվ չասեմ երկպառակությունը... ուրեմն թերեւս ոչ լիակատար փոխըմբռնումը տեղի էր ունենում նրանց քսանմեկերորդ գիշերը: Իսկ ավելի ուշ, երբ Ամելին արդեն քնել էր թեւը սովորականի պես Սանատրուկի վիզը գցած, վերջինս հանկարծ հիշեց, որ վաղը Միացյալ Նահանգներից վերադառնում է մեր բարեկամը:

Մեր բարեկամը Նահանգներից գանգահարել էր Սանատրուկին, զգացել, որ տրամադրությունը փայլուն չի, հետո, ինչքան գանգահարել, չէր գտել ու անհանգստացել էր, իսկ տանը նրա հետքերը չգտնելով, բացառությամբ մի քանի շաբաթվա վաղեմիության հացի չորուկների, զլուխը կորցրել, երբ հարգարժան պարոնը ինքը գանգահարեց: Ըստ որում, շատ առույգ ձայնով:

Սեփական տագնապներից հետո, երեւի ակնկալելով Սանատրուկի սովորին հանդիպել, մեր բարեկամը ապշեց, տեսնելով փթթուն, ինքնավստահ մի պարոնի: Ինքնավստահությունը Սանատրուկի վրայից թափվում էր նաեւ Երեւանում, բայց մի քիչ կեցվածքի պես, մի քիչ գրգռող, մարտահրավերի պես նետված շրջապատին, հիմա նա անկաշկանդ, ներքին ազատության մեջ անհոգ լողացող մարդ էր, որտեղից էլ ներողամիտ հայացքներ էր նետում շուրջը: Մեր բարեկամը պատրաստ էր նույն օրն էլ նստել ու խելոք մտքեր շարադրել իսկական ժողովրդավարության հրաշքների մասին, որ մարդուն հղկում է ներսից ու դրսից, ազատում վայրենի բնագոյներից, պարարտ հող նախապատրաստելով ապագայի հասարակության համար, ինչը, սակայն, բնական է, չարեց: Նրան մի քիչ անհանգստացրեց, որ նույն անհոգությունը նաեւ գործի վրա է տարածվում: Սեպտեմբերը գալի՞ս է, այս պետք է անենք ու ա՞յն, կանենք, դեմ մի քանի օր կա: Ագրեսիվ Սանատրուկի հետ անհետացել էր նաեւ նպատակասլաց Սանատրուկը, ինչով մեր բարեկամի համար շահեկանորեն առանձնացել էր ամեն ինչ ձեռքի հետ մի կերպ անող երեսանյա նայրենակիցներից ու արժանացել այս հրավերին: Եվ մեր բարեկամին մնում էր հուսալ, որ Սանատրուկը շուտ կարթնանա ամառային պարապության նիրհից: Ամելիով առանձնապես չհետաքրքրվեց. հարցրեց՝ հա՞յ է, իմացավ, որ չէ, շնորհավորեց փարիզյան մի ամրոց արդեն նվաճած լինելու համար, եւ հարցը դրանով փակվեց:

Մեր բարեկամի ժամանումը կտրուկ ու անդարձ փոխեց Սանատրուկի օրակարգը: Երեք շաբաթ շարունակ Ամելիից անբաժան լինելուց հետո, հենց առաջին օրը, կեսօրին այցելելով մեր բարեկամին, Ամելիի մոտ վերադարձավ միայն կեսգիշերին՝ զրուցելուց, ճաշելուց, մի երկու պարտիա նարդի խաղալուց հետո: Ապա սկսվեցին գործերը, կային նաեւ ուրիշ պարտավորություններ, եւ նրանք արդեն հազվադեպ էին միասին որեւէ տեղ գնում, էլ ավելի հազվադեպ ամբողջ օրը միասին լինում, բայց այդ ժամանակացույցով են ապրում բոլորը, եւ նոր վիճակը երկուսին էլ բնական էր թվում: Եվ, իրոք, արտակարգ ոչինչ չէր եղել՝ ավարտվել էր մեղրամիսը, սկսվել ամօրյան: Ամելին գիտե՞ր՝ Սանատրուկը ուր էլ գնա, վերջում իր մոտ է գալու, Սանատրուկը՝ որտեղ էլ լինի, Ամելին իրեն է սպասում, սեպտեմբերն էլ այդ տարի հատկապես անամպ էր Փարիզում: Սանատրուկին, իհարկե, ինչքան ուրախացնում, նույնքան էլ գարմացնում էր, որ երբ էլ գանգահարի կամ երբ էլ վերադառնա, Ամելին միշտ տանն է ու իրեն է սպասում, եւ երբ մի անգամ հարցրեց՝ ինչու՞ ոչ մի տեղ չի գնում, Ամելին պատասխանեց՝ դու անում ես այն, ինչ քեզ պետք է, թող ես էլ այն անեմ, ինչ ինձ է պետք: Եվ նա սպասում էր, եւ Սանատրուկը գալիս էր, եւ երբ միասին էին ամեն ինչ ամաշվապ պես հրաշալի էր, այն տարբերությամբ, որ օգոստոսին Ամելին Սանատրուկի տիեզերքի կենտրոնն էր, սեպտեմբերին՝ խաղաղ հրվանդանը: Ինչը ըստ Եուրթան նույնպես վատ չէր, չհաշված, որ Ամելին անփոփոխ իր տեղում էր, Սանատրուկը սրարշավ առաջ էր գնում:

Բառիս ոչ միայն փոխաբերական, այլև ուղղակի իմաստով: Օգոստոսյան ժանգը մաքրելով ուղեղից, դառնալով նախկին պայծառ մտքի տեր Սանատրուկը, նա երկու-երեք շաբաթում այնպիսի հեղինակություն դարձավ Փարիզի հայկական շրջանակներում (ինչը ստեղծելու համար քանջ չէր խնայում նաեւ մեր բարեկամը), որ նրան ուզում էին տեսնել ոչ միայն պաշտոնական հանդիպումներում, այլև մտերիմ շրջանակներում: Եվ հաճախակի դարձան նաեւ սրա-նրա տուն հրավերները, ճաշկերույթները, այնպես որ

Սանատրուկն այլևս ազատ օր չէր ունենում եւ Ամելիի մոտ էր գալիս փաստորեն միայն գիշերելու: Բայց նա գալիս էր, Ամելին էլ սպասում էր, եւ առնվազն գիշերները առաջվա պես հրաշալի էին:

Սեպտեմբերի վերջը վճռական էր լինելու Փարիզը ապեցնելու եկած Սանատրուկի համար: Վերջապես դուրս գալով հին բաճկոնի պես իրեն այնքան նեղ եկող հայկական շրջանակներից, նա դասախոսություն էր կարդալու Պոմպիդուի կենտրոնում: Դասախոսության թեման ինքնաստիջան հետաքրքիր էր՝ «Հայկական ռենեսանսը ֆրանսիական մշակութային», բայց պակաս կարելու էր, որ կարդալու էր ֆրանսերեն: Մեր բարեկամը թարգմանել էր շուրջ քսան համակարգչային էջերը, որոնք Սանատրուկը պետք է սովորեր սահուն կարդալ: Մեր բարեկամը հուսահատվեց հենց առաջին օրը: Նրա համբերությունը բավականացրել էր Սանատրուկի խորին մտքերը ֆրանսերենի վերծանելուն, բայց սպառվեց առաջին իսկ նախադասությունը նրա բերանից լսելիս: Նրանք նույնիսկ վիճեցին: Մեր բարեկամն արդեն մտածում էր, որ պետք է ինչ-որ հարգելի պատրվակով հրաժարվեն այս բացառիկ հնարավորությունից, երբ ուսուցչի դերը կամովին ստանձնեց Ամելին: Երկու օրում, ամեն կարգի ու բովանդակության համբույրների արանքում նա Սանատրուկից այնպիսի առաջադիմություն կորցրեց (երկու օր նրանք վերջապես նորից քսանչորս ժամ միասին էին), որ երրորդ օրը Սանատրուկը մեր բարեկամի մոտ գնալով, միանգամայն արդարացի լկտիությամբ ասաց՝ դե հիմա նստիր ու իսկական ֆրանսերեն լսիր, իմ ֆրանսախոս բարեկամ:

Դասախոսությունը, ինչպես հաջորդ օրը մի ֆրանսիական թերթ էր գրել, փայլուն տպավորություն գործեց: Սանատրուկը պատասխանեց նաեւ բազմաթիվ հարցերի, այս դեպքում արդեն թարգմանչի միջոցով, որի դերը մեր բարեկամն էր ստանձնել: Հետո օրվա հերոսը ճաշում էր արդեն ծանոթ Լա Կուլպուրում, մեր բարեկամի եւ Սորբոնի երկու պրոֆեսորների հետ, իսկ Ամելին փառասիրության իր բաժակը ըմպում էր հաջորդ օրը, երբ թերթերից մեկում համառոտ տեղեկատվություն հայտնվեց: Ըստ որում, ըմբռնվելու նման, որովհետեւ մի քանի օր թերթը չէր անհետանում նրա գիշերաստեղանից կամ սուրճի գավաթի կողքից:

Անհետացավ այն օրը (ինամբով թաքնվելով գիշերաստեղանի դարակում), երբ մի շաբաթօրյա հանդես, թեւեւ մի քիչ ուշացումով, բայց վերջ ի վերջո (երեւի դասախոսության տպավորության տակ) տպագրեց իր թղթակցի գրույցը հայ ակադեմիկոսի հետ (Սանատրուկն արդարանում էր, որ ակադեմիկոսը թղթակցից է իրենից մոզոնել): Ինչքան էլ Սանատրուկը խելքը լիներ, ինչքան էլ նրա պատասխանները խորիմաստ լինեին, հարցազրույցը այնուամենայնիվ խոսք էր, տեքստ, գոնե արտաքուստ մյուս տեքստերից չտարբերվող, անկրկնելի Սանատրուկի լուսանկարն էր: Բավականին էլ տպավորիչ լուսանկար էր, արված այն պահին, երբ իր տարերքում գտնվող Սանատրուկը, աջ ու մատը բարձրացրած, երեւի հատկապես կարելու ինչ-որ բան էր ապացուցում: Բավականին էլ մեծադիր, հատկապես վրէժն Ղեյլոնի՝ ձախակողմյան էջում գտնվող ճատիկ լուսանկարի համեմատությամբ: Ղեյլոնի մյուս լուսանկարները նախորդ բացվածքում էին, իսկ այս վերջինը պարզապես կադր էր ինչ-որ կինոնկարից, բայց դա ինչ կարելու էր, Ամելիին նման մանրուքները չէին հետաքրքրում, իսկ եթե հետաքրքրում էլ էին, ապա մի կողմում նա տեսնում էր ծերացած ճատիկ Ղեյլոնին, մյուս կողմում՝ ուժերի ծաղկման շրջանում գտնվող Սանատրուկին, որի կանոնավոր դիմագծերն ու հստակ գծագրված ծնոտը, ինչ որ ճիշտ է՝ ճիշտ է, շահեկան էին լուսանկարվելու համար: Բայց Ամելին ձախ չէր նայում, չէր էլ կարող նայել, որովհետեւ ծալել էր հանդեսը, Ղեյլոնին, այսպես ասած, ողջ-ողջ թաղել: Այդպես հարմար էր հանդեսը ձեռքն առնել՝ երբ պառկած էր, հարմար էր հենել հայելուն՝ երբ նստած էր հարդասեղանի առաջ, կամ ծաղկասափորին՝ երբ սուրճ էր խմում: Իսկ ամբողջ օրը տանը ու մենակ՝ Ամելին, հասկանալի է, կամ սուրճ էր խմում, կամ պառկում, կամ նստում հարդասեղանի առաջ: Կեսգիշերին տուն եկած Սանատրուկն էլ, նույնպես հասկանալի է, նրան ներում էր այս երեխայությանը:

Հոկտեմբերի առաջին օրերին Սանատրուկին Մարսել հրավիրեց տեղի հայ համայնքը: Մեկնելու օրն էլ մեր բարեկամը առաջին ու վերջին անգամ տեսավ Ամելիին: Նա Սանատրուկին Կառ դե Լինոն էր բերել (կայարան հասնելու համար Սանատրուկը պայմանավորվել էր մեր բարեկամի հետ, բայց Ամելին դեռ առավորից էր նրան ճանապարհելու վազվզուքի մեջ, եւ վերջին պահին քաջությունը կորցրած Սանատրուկը զանգահարեց ու ասաց, որ իրեն իր ընկերուհին կտանի, իսկ մեր բարեկամը, եթե ուզում է, թող առանձին գա): Ամելիի մասին մեր բարեկամը առանձնապես ոչինչ չասաց, չհաշված, որ նրանից «աղվոր ոռիկ» լսելը բավականին բարձր գնահատական էր, բայց նա նկատել էր ամենազվախալորը, որ այդ կինը շուրջը ոչինչ չէր տեսնում, բացի Սանատրուկից:

Մարսելում Սանատրուկը երեք օրվա փոխարեն մնաց շուրջ տասը օր: Խոստացել էր ամեն երեկո զանգահարել Ամելիին, բայց իր խոսքի տեղը եղավ առաջին երկու օրը, հետո մի անգամ մոռացավ, երկրորդ անգամ: Իսկ երկօրյա ընդմիջումից հետո խոսափող ձեռքն առնելով, հասկացավ, որ ոչ թե սրտի թելադրանքն է կատարում, այլ պարտականություն: Չարմանալիորեն նույնիսկ ասելու բան չկար: Այո, այստեղ տաք է, կարծես դեռ ամառ լինի, այո, գործ չան կա, լավ էղիր, համբույրում եմ: Գործ, ճիշտ չէր, շատ չկար, բայց ճիշտ էր այն, որ ասելու բաներ կային տեղում՝ տարբեր սեղանների շուրջը ծավալվող գրույց ու վեճերում, որոնց կենտրոնական դեմքը, ինչպես եւ հին ու բարի երեւանյան ժամանակներում, ինքը՝ Սանատրուկն էր: Խոսակցությունները միշտ չէ, որ նրա նախընտրած թեմաների շուրջն էին պատվում, ավելի շատ համահայկական խնդիրների ու Դարաբաղի հարցի, որոնց խորն իմացությամբ Սանատրուկը չէր կարող պարծենալ, բայց նա ինչպես ոչ ոք գիտեր իր մի պտղունց գարին մի պարկ ցորենի տեղ անցկացնել: Տասն օր նա տաքանում էր հարավային արեւի ու մարսելահայերի ջերմության շողերում, երբեմն նա կամ այն հայկական ակումբում թռուցիկ հանդիպումներ ունենալով, այսինքն, խոսելով, խոսելով, բացատրելով ու ապացուցելով, վրդովելով, որ չէն հասկանում ինչպես պետք է, եւ ավելի տաքացած իրենը ասելով, այսպես թե այնպես պոկելով զխի հաստատական շարժումներ, գոհունակությամբ լսելով՝ իրա՛վ, իրա՛վ, մարդը իրավ կսէ, մոռացած, որ մարդու փրկությունը չհասկացված լինելն է, որ միակ ճիշտ հաղորդակցությունը քամու, անձրեւի, ձյան, չգիտեմ էլի ինչերի, բայց վերջապես՝ բառերի երաժշտությունն է: Մարսելում Սանատրուկը զգաց, որ Ամելին իր համար դարձել է այն, ինչից խուսափել ու վախեցել է ողջ գիտակցական կյանքում՝ կապանք: Գուցե հաճելի, բայց կապանք: Ըստ որում, յուրահատուկ պակասությամբ՝ հետը խոսել չի լինում, նրա կողքին միտքը կարծրանում է: Զգիտեմ Մարսելի ֆրանսիացիները ինչու ուշադրության չարժանացրին մեծանուն ակադեմիկոսին, իրենց գավառացու հոտառությամբ մայրաքաղաքցիներից խելացի՞ էին, թե՞ պարզապես դեռ պիտի աճեին ու աճեին նրան ըստ արժանվույն գնահատելու համար, կամ գուցե մեր բարեկամը ազգանվեր գործ գլուխ բերելը չպիտի վստահեր տ եղի հայերին, չգիտեմ եւ դա ինձ քիչ է հետաքրքրում: Գիտեմ այն, որ չորս թե հինգ օր Սանատրուկը գիտակցաբար չէր զանգահարում Ամելիին, զանգահարեց միայն մեկնելուց առաջ, որպեսզի զգուշացնի, որ գալիս է:

Այս վերադարձով սկսվում է Սանատրուկի Փարիզյան ողիսականի եզրափակիչ արարը: Ամելին նրա դիմավորեց Կառ դե Լինոնում, տուն տարավ, ճանապարհից հոգնած Սանատրուկը ինչպես եւ օգոստոսյան այն առավոտ երկար պառկեց տաք լողարանում, ի տարբերություն օգոստոսյան այն առավոտի, խշխշան երկնագույն սավանների մեջ հայտնվելով, տեղնուտեղը չմարտնչեց, բայց սիրառատ էր միայն ու միայն այն պատճառով, որ Մարսելում կին չէր տեսել: Իսկ հաջորդ օրվանից նորից փարիզյան շրջապատույթի մեջ էր: Չէր ուզում Ամելիին ցավ պատճառել, ամեն գիշեր մտածում էր, որ վաղվա օրը ամբողջությամբ նրան է նվիրելու, բայց չգիտես ինչու չէր հաջողվում այս բարեգութ մտադրությունը իրականացնել, իսկ եթե այսպես թե այնպես ժամանակ գտնում էր նրա համար, տանը մնային, թե որեւէ տեղ գնային, ձանձրույթից իրեն չէր գտնում: Եվ առանց որեւէ կանխամտածվածության, ինքնաբերաբար, դրսում մնում էր այնքան ժամանակ, ինչքան դրա հնարավորությունը կար: Ըստ որում, արդեն գործերը չէին

պահում նրան: Դարձյալ պետք է ասեմ՝ չգիտեմ հոկտեմբերն ինչու այնքան հագեցած չեղավ Սանատրուկի համար, որքան նախատեսվում էր, գուցե մեր բարեկամի հնարավորություններն էին սպառվել, բայց ֆրանսիական կողմից չէին իրականացվում խոստացված քայլերը, հայկական կողմն էլ երեւի արդեն կուշտ էր նրանից: Եվ հոկտեմբերի երկրորդ կեսը, հատկապես երեկոները, Սանատրուկը ակումբ գնալու նման անց էր կացնում կամ մեր բարեկամի տանը, կամ էլ մեկ ուրիշի, վիսկի բաժակը ձեռքին լեզվին տալով, երբեմն էլ՝ Լարոի խաղալով: Ամելին էլ, ինչքան էլ փորձեմ զարմանալ, տանը նրան սպասելով: Եվ հիմա ավելի երկար սպասելով, որովհետեւ Սանատրուկն ավելի ուշ էր վերադառնում, քան այն ժամանակ, երբ իրոք գործ ուներ: Եվ Սանատրուկը նրան հաճախ արդեն անկողնում էր գտնում: Ամելին որպես օրենք արթնանում էր, ինչքան էլ անաղմուկ էր նա ջանում վերմակի տակ մտնել, եւ, ինչ-որ բան շշուշուով քթի տակ, թեւով օղակում էր նրա վիզն ու ևորից քնում:

Բայց մի անգամ չարթնացավ: Սանատրուկը վերադարձավ լուսադեմին, հանվեց, ինչպես միշտ անաղմուկ վերմակի տակ էր մտնում, երբ ինչոր բան խշխշաց արմունկի տակ: Հանեց եւ պատուհանից ընկնող լույսով տեսավ, որ հանդես է իր լուսանկարով:

Ի պատիվ իրեն, Սանատրուկն այդ գիշեր այն չկայրեց: Փարիզում մնալու ժամկետը լրանում էր մի քանի օրից, ու թեւեւ մեր բարեկամը ասել էր՝ հոգ մի ընե, բան մը կընենք, էլի կմնաս (նա դեռ հույս ուներ, որ ֆրանսիացիներից պոկած խոստումները այնուամենայնիվ կիրականանան), միեւնույնն է, շուտով պիտի մեկնես: Գիտեր, որ ծանր բաժանում է լինելու, բայց կարծես թե դա չէր անհանգստացնողը: Սանատրուկն իրեն տեղ չէր գտնում այդ գիշեր եւ չէր հիշում ինչպես հանգեց արտառոց մտքին: Սովորաբար մարդ քիչ թե շատ պատկերացնում է, թե իրենից հետո ինչ է անելու մյուսը (թեկուզ պարզվի սխալվել է), ինքը չէր պատկերացնում: Ամելին, ինչպես առեղծվածաբար, ասես ոչնչից հայտնվել էր իր կյանքում, այդպես առեղծվածաբար էլ անհետանում էր, իրենից հետո ասես դադարեցնելով գոյությունը: Սանատրուկն ասում էր, որ այս միտքը զգում էր համարյա առարկայացած, ասես կապված աչքերով ինչ-որ ծանոթ իր շոշափեր, բայց չճանաչեք: Իր ասելով, երկրորդ անգամ գիշերվա ուշ ժամին համարյա լուծել էր Ամելիի հանելուկը, բայց համարյա: Հանձարները, ասում էր, մեզնից տարբերվում են նրանով, որ ան ում են վերջին քայլը, մենք՝ չէ:

Մեր բարեկամին հաջողվեց երկու շաբաթով, այսինքն, մինչեւ նոյեմբերի կեսը երկարած գել ժամկետը, բայց չհաջողվեց տեղից շարժել ուխտադրուժ ֆրանսիացիներին: Եվ նոյեմբերյան երկու շաբաթները ձգվեցին վերջնականապես փչացած եղանակների պես տաղտկալի: Այդ երկու շաբաթից Սանատրուկը շատ քիչ բան էր առանձնացնում: Թերեւս միայն այն, որ ևորից ավելի հաճախ էր լինում Ամելիի հետ: Հանգամանքներն այնպես դասավորվեցին, որ հիմա էլ շարունակ զբաղված էր մեր բարեկամը, եւ Սանատրուկն ու Ամելին ևորից մինչեւ կեսօր թավալ էին տալիս անկողնում: Մտքում հաշվելով բաժանման մոտեցող օրերը, Սանատրուկը երբեմն փորձում էր որեւէ փոփոխություն գտնել Ամելիի մեջ, սակայն, չէր գտնում:

Բացառությամբ մի դեպքի: Սանատրուկի մեկնումից երեք կամ չորս օր առաջ: Հատկապես անձրեւոտ ու մառախլապատ մի օր Ամելիի խելքին հանկարծ փչեց մեքենան քշել սատանան գիտե թե ուր: Անվերջանալի ճանապարհը անձրեւի ու մառախուղի միջով թվում էր անվերադարձ: Սանատրուկը ոչինչ չէր հարցնում, Ամելին ոչինչ չէր ասում: Ռադիոընդունիչը երզը երգի ետեւից էր հաղորդում, բոլորն էլ այնքան անհամահունչ եղանակին ու իրենց տրամադրությանը, որ կորցնում էիր իրականության որեւէ զգացում: Դժվար է ասել, ինչքան էին գնացել, երբ Ամելին հարցեց՝ դու ծով սիրում ես: Ոչ այս եղանակին, պատասխանեց Սանատրուկը: Այս եղանակին էլ ծովն իր իմաստն ունի, ասաց Ամելին ու ևորից լռեց: Սանատրուկը, մտքում մի քանի ագամ կրկնեց նրա ասածը, փորձեց «իմաստը» ուրիշ բառով փոխարինել, օրինակ, «հմայքով», սակայն շուտով ձեռք քաշեց: «Իմաստ» է, թող «իմաստ» էլ լինի: Անցան ինչ-որ փոքրիկ քաղաք, թե գյուղ, ապա ևորից ճանապարհ, մառախուղ, չդադարող անձրեւ:

Ծովը Սանատրուկը տեսավ հանկարծակի, միանգամից, մշուշից ծնվող իրենի նման, սկզբում նույնիսկ չհասկանալով, որ ծով է տեսնում: Այն բանից հետո, երբ Ամելին հանկարծ կտրուկ արգելակեց թափով սլացող մեքենան, որի անվները ողբալի ճռռոցով սահեցին սատանան գիտե ինչքան, այն բանից հետո, երբ Սանատրուկը ևորից ուղիղ էր ևստել, երբ մշուշի միջից մեքենայի քթի առաջ ճանապարհի փոխարեն դուրս լողաց ծովի վրա կախված կիսակառույց թե լքված ամբարտակի եզրը: Սանատրուկը մտքում շնորհավորեց Ամելին մառախուղի մեջ ճիշտ ժամանակին արգելակելու համար, բայց Ամելին, երեւի կարողալով նրա մտքերը, ասաց՝ ես այստեղ արդեն եղել էի: Ե՛րբ, հարցրեց Սանատրուկը: Երբ դու Մարսելում էիր, ասաց Ամելին:

Ետին թվով Սանատրուկը վստահ էր՝ այդ օրը Ամելին վերջին պահին իրեն խնայեց:

Վերադարձին, սակայն, չնայած մշուշը չէր ցրվել, անձրեւն էլ շարունակում էր մաղել, Ամելիի տրամադրությունը բացվեց, շուտով նա ևորից ինքն իր նման էր, ևորից ինչ-որ բան էր պատմում, ևորից ականջ դնում իր հեռու կանչին կամ մոտիկ ցավին, ևորից լավ լուր ստանում կամ ազատվում ցավից, որովհետեւ թեւեւ ճանապարհը առանց այդ էլ կարգին չէր երեւում, առանց վարանելու թեքվում էր ու չպայացնում Սանատրուկին: Նա նույն Ամելին էր նաեւ գիշերը, միայն թե նրա կրծքերը, անձրեւի ու մշուշի բույրը պահպանած, ասես անցած ամառը կարոտեին:

Եկավ վերջին օրը: Առավոտյան, լույսը չբացված՝ Սանատրուկը օդանավակայան պիտի գնար: Քանի որ երեկոյան մեր բարեկամի տանը հավաքվելու էին փարիզյան մտերիները, Սանատրուկը որոշել էր ցերեկը Ամելիի հետ անցկացնել:

Երկուստեք համաձայնությամբ՝ նա չպետք է գար օդանավակայան: Սանատրուկը, համոզված, որ իրենք այլևս չեն հանդիպելու, դա ավելորդ փորձություն էր համարում: Իսկ թե ինչ էր մտածում Ամելին, Սանատրուկը չգիտեր: Նա միայն թեթեւացած շունչ քաշեց, երբ Ամելին անտրտուն լույսով իր համաձայնությունը:

Գիշերը անցել էր սովորականի նման, թերեւս մի քիչ ավելի բացահայտ էին տխրում Ամելիի կրծքերը, ինչը, սակայն, երեւի բնական էր՝ արդեն խոր աշուն էր: Առավոտը նույնպես սովորական պես բացվեց, թեւեւ գուցե սովորականից քիչ թավալ եկան անկողնում՝ կարճացած նոյեմբերյան ցերեկը շտապում էր իրիկանալ: Սանատրուկը հասկանում էր՝ ինչ էլ որ անի, կամ՝ ինչ էլ որ անեն, ոչինչ չի փոխվելու, բայց նստել տանը ու իրար երեսի նայել, իրար ասելու բան չունենալով, անտանելի էր լինելու, եւ նախապես որոշել էր, որ կճաշեն դրսում: Ինչի համար նախօրեին հազար ֆրանկ էր փոխառել մեր բարեկամից (այս անգամ, ասել էր, պարտքով, լավ, լավ, ծիծաղել էր մեր բարեկամը), մի այդքան էլ ինքն ուներ: Առաջին անգամ ձեռքը գրպանը տանելով, Սանատրուկը, իհարկե, պատրանքներ չուներ, թե տոնախմբություն է սարքելու, բայց խոփը քարին առավ դեռ ճանապարհին: Ու՛ր գնամ, հարցրեց Ամելին: Ուր կուզեմ, ասաց Սանատրուկը: Դու որոշիր, ասաց Ամելին: Ես չգիտեմ, ասաց Սանատրուկը: Ես էլ չգիտեմ, ասաց Ամելին: Աննպատակ պտտվում էին տարբեր բուլվարներով ու փողոցներով, եւ համբերությունը կորցրած ու ինքն իրենից զզված Սանատրուկը, առանց շուրջը նայելու, ասաց՝ այստեղ կանգնիր:

Այնտեղ, որտեղ կանգնել էին, ռեստորան չկար, ստիպված ահագին քայլեցին, առաջին հանդիպածն էլ ոչ թե ռեստորան էր, այլ

սրճարան: Իսկականն է, ասաց Ամելին, ես այնորժակ չունեմ, իսկ դու երեկոյան միեւնույնն է ուտելու ես:

Ամելին հյուսիս վերցրեց, Սանատրուկը՝ գարեջուր, բայց հազիվ մի ումպ արած, ետ հրեց ու վիսկի պատվիրեց: Երկար ժամանակ երկուսն էլ լուռ էին, հետո Ամելին, ասես խղճահարվելով (Սանատրուկն անդադար ծխում էր), սկսեց ինչ-որ բան պատմել: Սանատրուկին սկզբում թվաց՝ այս անգամ չի հասկանում նրան, որովհետեւ անուշադիր է, սակայն, ինչքան էլ լարվեց, ոչինչ չհասկացավ: Եվ մտածեց՝ չէի հասկանում մեր հանդիպման առաջին ժամերին, չեմ հասկանում բաժանումից մի քանի ժամ առաջ: Նրան չգիտես ինչու թվաց, որ այդ ժամերը՝ առաջին ու վերջին, նման են ծննդյան ու մահվան թվականների: Այս համեմատությունը ասես արձագանքը լինե՞ր ոչ այնքան վաղուց իրեն այցելած մեկ ուրիշ մտքի, բայց ե՞րբ ու ի՞նչ մտքի, չհիշեց, քանի որ հանճար չէր: Փոխարենը այդ առաջին ու վերջին ժամերը իրար կապող մի բան էլ գտավ: Երբ երկրորդ վիսկին էր պատվիրում: Խմելով էր նշում առաջիկա հանդիպումը Ամելիի հետ, որին դեռ չէր ճանաչում, խմելով է նշում առաջիկա բաժանումը այս կնոջից, որին շուտով մոռանալու է:

Տանը Սանատրուկը զբաղվեց այդ ամիսների ընթացքում իր գրոտած թղթերը ջուրով լվանալով, իսկ Ամելին, ճերմակ լողախալթի մեջ փաթաթված, բազմոցին պառկած ինչ-որ հանդես էր թերթում, որ գնել էր սրճարանից դուրս գալիս: Սանատրուկը երբեմն բարձրացնում էր գլուխը, նայում նրա բոքիկ, նեղ ներբաներին (դեմքը հանդեսի տեսում էր), իսկ Ամելին էջերն էր խշխշացնում: Ամեն ինչ սովորականի նման էր, բայց, երբ իր դասախոսության ֆրանսերեն օրինակը չգտնելով, Սանատրուկը նրան դիմեց, Ամելին թե՛ն հանդեսը ցած դրեց սովորական պատրաստակամությամբ, սովորական թեթեւությամբ գտավ ու բերեց պահանջվածը, վերջում էլ պարտադիր համբույրը չպապարհեց, Սանատրուկին թվաց՝ իրեն երեկվա օրվա միջից համբուրեցին:

Սանատրուկը կարծում էր պայուսակը կհավաքի մինչեւ մեր բարեկամի մոտ գնալը, առավել եւս, որ ունեցածը շատ չէր՝ մի քիչ հագուստ եւ գրքեր, որ ստացել էր սրանից-նրանից, բայց թղթերով ընկած այդպես էլ չհասցրեց: Կհավաքեմ, ասաց, երբ կգամ:

Ես Սանատրուկին հարցրի՞ ինչու՞ Ամելիին մեր բարեկամի մոտ չէր տանում: Սանատրուկն ուսերը թոթվեց:

Ավելի ուշ հարցրի մեր բարեկամին՝ ինչու՞ էին ինքն ու Սանատրուկի մյուս բարեկամները անտեսում Ամելիին: Նա նույնպես ուսերը թոթվեց. իրենց տպավորությամբ, ասաց, Սանատրուկը լուրջի չէր առնե՞ր այդ աղջկան:

Հրաժեշտի ճաշկերույթը երկար տևեց: Սանատրուկը կարծում էր կվերադառնա մինչեւ տասներկուսը եւ ամսվազն հինգ ժամ նորից Ամելիի հետ կլինի, բայց միայն երկուսին կարողացավ դուրս պրծնել, այն էլ մյուսներին սեղանի շուրջը թողնելով:

Ամելին չէր պառկել, համենայն դեպս նրան դիմավորեց նույն խալաթը հագին: Մինչեւ մեկնելը դեռ երեք ժամ կար, եւ Սանատրուկը որոշեց լրիվ ազատվելու համար նախ պայուսակի հարցերը լուծել: Ինչն էլ որ արեց բավականին արագ. կարելուց սեփական գրառումներն էին, որոնք արդեն կարգի էր բերել, հագուստներն ու գրքերն էլ իրենք իրենց տեղավորվեցին պայուսակի մեջ (մի քանի գիրք այնուամենայնիվ դուրս մնացին, բայց Սանատրուկը դողում էր միայն սեփական շարադրանքների վրա):

Եվ ահա, երբ արդեն լրիվ ազատ էր, առջեւում էլ համարյա երեք ժամ կար, զնգաց հեռախոսը: Որը իր նպատակին սկսել էր երբեմն ծառայել մեր բարեկամի վերադառնալուց հետո, այնպես որ, խոսափողը ինչպես միշտ Սանատրուկը պիտի վերցնե՞ր: Չանգահարում էին մեր բարեկամի տնից: Հայտնելու համար, որ նրան սպասում են: Սանատրուկը կարող ասել, որ արդեն հրաժեշտ տվել են, որ արդեն ուշ է, կարելուց մեր բարեկամն էր, որի հետ շուտով նորից հանդիպելու էին՝ օդանավակայան էին գնալու, բայց նա առաջիկա երեք ժամերից վախենում էր եւ կառնեց անմիջապես հեռանալու պատշաճ պատրվակից:

Ամելին չզարմացավ, որ նրան կանչում են, որ պետք է գնա հենց հիմա: Ընդհակառակը, շտապեց ննջասեղանի դարակից բերել Սանատրուկի լուսանկարով հանդեսը: Սանատրուկի պայուսակում այդ հանդեսից երկու օրինակ էլ կար՝ ոչ մի անգամ չբացված, միանգամայն նոր (որոնք պետք է մեր աչքը խորթեր կամ պահեր ապագա սերունդների համար), տրորվածը, որի վրա անհաշիվ անգամներ աղոթել էին, տասնյակ անգամներ քնել, նրան ամանձնապես չէր հետաքրքրում, բայց ինչպես ասեր՝ սա քեզ եմ թողնում եւ, շնորհակալություն հայտնելով, խրեց պայուսակի գրպանը:

Սանատրուկը պայուսակը ձեռքին դեպի դուռը գնաց, Ամելին՝ նրա ետևից:

Դուռը Ամելին բացեց: Այս կանգնեց ինչպես միշտ՝ ձեռքերը խալաթի գրպաններում (երբ խալաթով էր), Սանատրուկն էլ ինչպես միշտ համբույր դրոշմեց նրա շուրթերին, բայց այնքան արագ, որ չզգաց ինչ է համբուրում: Այնուհանդերձ, ամեն ինչ ամեն հարթ էր ընթանում, ինչն էլ երեւի բացարձեց Սանատրուկի զգոնությունը: Փոխանակ ետ չնայելով ինչն էր, սովորականի պես ոտքը կախ գցեց: Պայուսակը ձեռքին չըջվեց եւ տեսավ, որ Ամելին իր ետևից առաջ է եկել եւ հիմա կանգնած է մի ձեռքը դարձյալ գրպանում, մյուսը՝ դռան բռնակին:

Սկզբունքորեն դեռ կարելի էր անպատիժ հեռանալ: Չպատավորեցնող մի ժպիտ, եւ, հայդե՛, գնա ուր աչքդ կտրում է: Բայց ծանր պայուսակն էր դանդաղաշարժ դարձրել, թե՛ ներսի բեռը, ամեն դեպքում դարձյալ հապաղեց ու երեւի շատ շփոթված տեսքով, որովհետեւ Ամելին հանկարծ ծիծաղեց, անցավ շեմը եւ մի ձեռքը գրպակից չհանելով, մյուսը չպոկելով բռնակից, մի արագ համբույր էլ իր կողմից դրոշմեց: Չհաշված համբույրի թոնոցիկությունը, դարձյալ մնալով արարողակարգի սահմաններում, ինչն էլ, ասում էր Սանատրուկը, իրեն լրիվ ապակողմնորոշեց:

Վերջին մի շաբաթը եւ հատկապես վերջին երեք օրերը նա կարողացել էր չանել ու չասել ոչ մի այնպիսի բան, որ այսպես թե այնպես անխուսափելի բաժանման ակնարկ պարունակեր: Ըստ եւության, հիմա էլ չարեց ու չասաց, ընդամենը հարցրեց՝ ի՞նչ ես անելու:

Հարցրեց ու վախեցավ: Ամեն օր ինչո՞ղ այս հարցին Ամելին որպես օրենք պատասխանում էր՝ քեզ եմ սպասելու: Սկզբում Սանատրուկը վախեցավ, որ նույն պատասխանն է լսելու, բայց ինչքան պայծառանում էր Ամելիի ժպիտը, այնքան իր հարցի մեջ արդեն ուրիշ իմաստ էր տեսնում, որի պատասխանը չուշացավ: Ամելին ասաց՝

Սերը չորս հարյուր ֆրանկ, մինետը՝ երկու հարյուր:

Այդ պատասխանից հետո այլևս ոչ մի բան նախկինի նման չէր: Առաջ Սանատրուկը ինչն էր, իսկ Ամելին այնքան ժամանակ դուռը բռնած կանգնում, մինչեւ նա կանհետանար ցածի աստիճանահարթակում: Այս անգամ Սանատրուկը դեռ կանգնած էր, երբ Ամելին մի քայլ ետ գնաց ու ծածկեց դուռը:

Այնուհանդերձ, Սանատրուկը մխիթարվեց նախանձելի թեթեւությամբ՝ դեռ մեր բարեկամի տուն չհասած: Գիշերային սառն օդը ասես թարմացնող ցնցուղ լիներ, ամայի փողոցներն էլ, այն արդեն հեռավոր գիշերվա նման վախեցնելու փոխարեն, ասես վերստին գտած ազատությունը խորհրդանշեին: Իսկ ձեռքի ծանր պայուսակը հաստատ գրավական էր, որ այլևս ետ չի դառնալու: Ինչ վերաբերում էր բաժանմանը, չպետք է մոռանալ, որ ծանր են ընդհանրապես բոլոր բաժանումները, դրանից խուսափել հնարավոր չի, Սանատրուկն ավելի ծանրներն է տեսել և գիտի, որ ժամանակը բուժում է ամեն ինչ: Օրինակների համար նա հեռու չգնաց: Մեկը հենց Ամելին: Արդեն ազատվում է այս բաժանման բեռից, իսկ այն, ինչը հրաշալի էր, միշտ իր հետ կլինի: Ինչպես, օրինակ (եւս մի օրինակ) Մերիի դեպքում:

Մեր բարեկամի ասելով, Սանատրուկը վերադարձավ բարձր տրամադրությամբ, ինչով նույնիսկ մի քիչ զարմացրեց, որովհետև մինչև գնալը ասես փշերի վրա լիներ ու շարունակ ժամացույցին էր նայում: Վերադարձավ ու ոչ մի անգամ այլևս չհիշեց, որ այնուամենայնիվ երեւի մի քանի ժամ պետք է քնել, ընդհակառակը, սեղան նստեց չգիտես ինչ աղբյուրից նոր եռանդ ստացած և պահեց նույնիսկ նրանց, ովքեր արդեն ուզում էին գնալ: Մեղանը լքեցին հինգին, երբ իջնում էին ճանապարհ ընկնելու: Սանատրուկը պայուսակը գցեց մեր բարեկամի մեքենայի մեջ, գրկախառնվեց մյուսների հետ, և երբ նրանց մեքենաները շարժվել էին, ինքն էլ տեղավորվեց ու ասաց՝ վերջ, գնացին:

Մեքենան գնաց վերեւ, հասավ առաջին փողոցի խաչմերուկին և այնտեղ, որտեղ հատվում էին իրենց և Ամելիի փողոցները, Սանատրուկը անսպասելիորեն կանաչի մի մենավոր կերպարանք տեսավ: Կինը կանգնած էր մոխրագույն թիկնոցի մեջ փաթաթված, Սանատրուկին թվաց՝ իրեն ծանոթ ծովագերը կատարած արշավից: Մեքենան արդեն անցնում էր խաչմերուկը, և նրան աչքից չկորցնելու համար Սանատրուկը շրջվեց: Կինը, եթե դա Ամելին էր, արդեն տեղից շարժվել էր դեպի իր փողոցի խորքը և էր քայլում: Նա աչք գնում, մեքենան վերեւ, և վայրկյան անց Սանատրուկը նրան կորցրեց աչքից: Մեր բարեկամը ոչինչ չէր նկատել, և Սանատրուկը նրան ոչինչ չասաց:

Սկզբում Սանատրուկը չէր կասկածում, որ դա Ամելին էր: Տատանվում էր միայն մի հարցում՝ դուրս էր եկել չորս հարյուր և երկու հարյուր ֆրանկների սպառնալիքը իսկույնեւեթ իրականացնելու՞, թե՞ այնուամենայնիվ մինչև վերջին հնարավոր պահը իր հետ լինելու: Բայց ինչքան հեռանում էին նրանից, ծանոթ փողոցներից ու Փարիզից, այդ վստահությունը խաբխվում էր, և օդանավակայանին մոտենալիս նա արդեն մտածում էր, որ երբեք ու ոչնչում չմեղանջել անհնար է,, իսկ ուրվականներն ու խղճի խայթերը հետապնդում են սովորաբար փոքրոգիներին, որ քաջություն չունեն գլուխը բարձր անցնելու կյանքի ձեւով իրենց տրված կարճ ճանապարհը:

Այնպես որ, այս պատմությունը շարունակություն չէր ունենա, շարադրելու անհրաժեշտություն էլ երեւի չծագեր, եթե օդանավում Սանատրուկը երազ չտեսներ: Որտեղ, չնայած ամբողջ գիշեր ոչ մի վայրկյան աչք չէր փակել, դարձյալ բավականին առույգ էր, սկզբում ոտքով-ձեռքով գրուցում էր կողքին նստած ամուսնական գույգի հետ, որոնք երեւան էին թռչում աշխատանքի անցնելու ֆրանսիական դեսպանությունում, հետո, երբ կինը քնեց գլուխն ամուսնու ուսին դրած, միջանցքի մյուս կողմում նստած գործարար հայրենակցի գլուխն էր տանում ամենաոսկեղենիկ հայերենով, իսկ երբ սա էլ քնեց կամ ձեռացրեց թե քնել է, երկար ժամանակ նստած էր աչքերը բաց, մտածելով, որ կարոտել է իր տունը, գրքերը, գրասեղանը, երեւանյան մթնոլորտը: Ննջեց իր համար էլ աննկատելի, երբ արդեն մոտենում էին Հայաստանին և երազ տեսավ:

Ամելիի հետ ինչ-որ տեղ էին գնում: Սա սովորական բան էր, զարմանալիս այն էր, որ դեկը իր՝ Սանատրուկի ձեռքում էր, Ամելին էլ զարմանում էր՝ բա դու ասում էիր քշել չգիտե՞ս: Ես խելոք եմ, ասում էր Սանատրուկը, մի քանի անգամ նայեցի ու սովորեցի: Քշում էր անսահման բավականությամբ ու ավտոարշավորդի վարպետությամբ, և ամեն ինչ լավ էր, քանի դեռ չէր նայել ու տեսել, որ Ամելին կողքին չէ՝ ընկել է շրջադարձերից մեկի ժամանակ: Ետ դարձավ, սկսեց փնտրել նրան: Կարծես թե հիշում էր որ բուլվարներով է անցել, բայց Ամելին չկար ու չկար: Այնուհանդերձ, շարունակում էր փնտրել, մինչև որ քաղաքը հանկարծ դատարկվեց և ինչոր անծանոթ բուլվարում վերջապես տեսավ մեն-մենակ քայլող Ամելիին: Քայլում էր Ամելին մայրով, նա՝ գնում կողքով, բայց չգիտես ինչու Ամելին նրան չէր տեսնում, իսկ երբ արդեն խաչատել էր անունը տալով, Ամելին հանկարծ շրջվեց ու հայերեն ասաց՝ այդ երբվանի՞ց ես սկսել ֆրանսերեն խոսել: Սանատրուկն ուզում էր ասել՝ այն օրից, երբ Փարիզ եկա, բայց զարմանքով տեսավ, որ ամենեւին էլ Փարիզում չէ, այլ երեւանում, ոչ թե անծանոթ բուլվարում, այլ Մաշտոցի պողոտայում՝ ծածկած շուկայից քիչ վերեւ: Եվ այստեղ էլ վերջապես տեսավ, որ մայրով քայլող ոչ թե Ամելին է, այլ Մերին: Դե, իհարկե, ահա քայլում է մոխրագույն թիկնոցը հագին: Սանատրուկը հասկացավ, որ սխալվել է, ոչ թե Ամելին է գցել մեքենայից, այլ Մերին և արդեն հայերեն սկսեց խնորել, որ նա նստի: Իսկ ու՞ր ենք գնում, հարցրեց Մերին: Օդանավակայան, ասաց Սանատրուկը, Փարիզ ենք թռչելու: Այստեղ Մերին վերջապես մոտեցավ, որ նստի, բայց դռնակը բացվեց: Սանատրուկը փորձեց ներսից ինքը բացել և նույնպես չկարողացավ: Իսկ մեքենան չէր կանգնում, թեեւ դառնալով, բայց շարունակում էր գնալ: Մերին քայլում էր մեքենայի կողքից, ձեռքը դռնակին, Սանատրուկը փորձում էր կանգնեցնել մեքենան ու չէր կարողանում, մինչև որ ստուգումով հիշեց, որ ինքը քշել չգիտի, նույնիսկ գազի ու արգելակի ոտնակները միմյանցից չի տարբերում: Արդեն հասնում էին շուկային, զառիվայր գնացող մեքենան արագացնում էր ընթացքը, Մերին, թեեւ ձեռքը դեռ բռնակին էր, արդեն չէր հասցնում համաքայլ գալ: Շուկան էլ անցան, այստեղ Մերին ստիպված թաց թողեց բռնակը, Սանատրուկը, թեեւ գետնուղուն էին մոտենում, դեկը թողած ետ շրջվեց, և վերջին բանը, որ տեսավ, Մերին էր՝ մոխրագույն թիկնոցի մեջ փաթաթված, մեն մենակ կանգնած ամայի մայրին, հետո Սանատրուկին կանեց գետնուղու խավարը...

Օդանավի անիվները դիպան Չվարթնոցի վայրէջքուղուն, և Սանատրուկը բացեց աչքերը:

Սանատրուկը ինձ զանգահարեց նոյեմբերի վերջին կամ դեկտեմբերի սկզբին: Հեռվից սկսելու սովորություն չունեի և, ժամանակ չկորցնելով որպիսությունս հարցնելու վրա, ասաց, որ շատ կարեւոր գործով ուզում է հենց հիմա ինձ տեսնել: Ես ասացի, որ հենց հիմա զբաղված եմ շատ կարեւոր գործով, երբ ազատվեցի ինքս կզանգահարեմ: Ե՞րբ, հարցրեց նա: Շուտով, ասացի: Լավ, ասաց, ուղղակի ուզում էի ասել, որ ես գտել եմ Մերին:

Հասկանալի է, որ այս հայտարարությունից հազիվ կես ժամ անց ես արդեն գնում էի նրան տեսնելու:

Հետո մենք հանդիպում էինք մի քանի օր անընդմեջ:

Սանատրուկը չէր կասկածում, որ Ամելին Մերին է:

Նրա փաստարկները շատ էին: Նախ և առաջ, թեեւ դա մանրուք է, թիկնոցը. ծովագերը գնալիս իրեն ծանոթ թվաց, բայց մտածեց, որ տեսել է զգեստապահարանում, իրականում տեսել էր Մերին հագին. ըստ որում, երբ փնտրում էին Մերին և իրեն հարցրին,

տնից որեւէ բան պակասու՞մ է, թե՞ ոչ, գարմանալիորեն պակասում էր հենց թիկնոցը, թեեւ հուլիսին Երեւանում Մերիի ինչի՞ն էր պետք: Թիկնոցի ու էլի մի քանի մանր-մունր իրերի պատճառով էր, որ հետաքննությունը հակված էր կարծելու՝ Մերին տնից դուրս է եկել ոչ թե հանպատրաստից, այլ նախապատրաստված:

Իր՝ Սանատրուկի նման ապուշը միայն կհավատար, որ Ամելին հայերենը լսում է երաժշտության պես: Հայերենը, ինձ շատ կներես (այդ ես պիտի ներեի), անվազն արեւելահայերենը, բավականին կուպիտ լեզու է, մեր թմբկաթաղաթն է, որ դիմանում է, Ամելին պարզապես հասկանում էր հայերեն, որովհետեւ Մերին էր: Ինքը, որ քչից-շատից էլի ֆրանսերեն որոշ բառեր գիտի, ավելի վատ էր հասկանում նրան, քան նա՝ իրեն: Բայց ինքը միամտորեն ընկավ նրա թակարդը, որովհետեւ պետք է ընդունել՝ վարպետորեն էր խաղում: Գրող ու ցավ էր լսում իր բերանից եւ ոչ թե երաժշտություն, բայց հասկանում էր, որովհետեւ Մերին էր:

Եվ ամենագլխավորը՝ ինչու՞ էր ընկել իր ետեւից, ինչու՞ հարբած, ձեռքից գնացածին տուն տարավ: Կինոա՞սող էր ինքը, որին կարելի է սիրահարվել աշխարհի ուզածը ծայրում, շան նման վազել ետեւից, ոչ մի բանից չխորշել: Բայց քանի որ ինքը կինոասող չի (եւ լավ է, որ չի), ուրեմն ի՞նչ՝ Ամելին այն գիշեր պատահաբար իրեն տեսավ տնից դուրս գալիս եւ մթության մեջ սիրահարվեց մինչեւ ականջնե՞րը: Այդպիսի բան չի լինում: Նա վաղուց գիտեր իրեն: Որովհետեւ Մերին էր (ի միջի այլոց, ոչ մի կին իրեն այնպես չի սիրել, ինչպես Մերին, չհաշված, իհարկե, Ամելին, բայց չէ որ նա էլ Մերին էր): Մերին ինչ-որ ձեռով իմացել էր, որ ինքը Փարիզ է գալու, ինչ-որ կերպ գտավ իրեն...

Եվ վերջապես՝ պատահակա՞ն էր, որ նրան ոչ ոք զանգ չէր տալիս, ոչ ոք մտող չէր գալիս, ինքն էլ երբեք չէր խոսում ընտանիքից, ծնողներից, ծանոթ-բարեկամից, սովորելուց, աշխատելուց: Ինչպե՞ս զանգ տալին, գային, ինչի՞ց խոսեր, եթե Ամելին ոչ ոք չուներ ու ոչինչ չէր արել, ուներ եւ արել էր Մերին: Պատահակա՞ն էր իր այն զգացողությունը, որ Ամելին չունի անցյալ ու ապագա: Զուներ եւ չէր կարող ունենալ, որովհետեւ Ամելի չկար, կար Մերի: Որն իմացել էր իր տեղը եւ այն ուշ երեկոյան մեքենայի մեջ սպասում էր իր իրեն:

Մի բան էլ չմոռանա՞ք՝ այդ տարօրինակ ու անսպասելի խոսակցությունը երջանիկ մեռնելու մասին: Ախր բացեիքաց ասաց՝ մի անգամ արդեն մեռել է եւ գիտե թե ինչ դժբախտություն է դժբախտ մեռնելը:

Ես, քնական է, հակաճառում էի, բերելով իմ փաստարկները:

Առաջինն ու ամենագլխավորը՝ ինչպե՞ս, ընդամենը երեք տարի անց, Սանատրուկը միանգամից չի ճանաչել Մերիին:

Կանայք, ասում էր Սանատրուկը, եթե ուզենան անճանաչելի դառնալ, կդառնան: Բավական է, ասում էր, մտածեն, որ իրենք այսպիսին չեն, այլ այնպիսին, եւ սկզբում ներքուստ կփոխվեն, հետո՝ արտաքինով: Իսկական կանայք, ասում էր, որոնք տարերք են, Լիլիթի ծոռունիները եւ ոչ թե Եվայի: Եվայի կոչումը մարդկային ցեղը շարունակել է, Լիլիթինը՝ մեր մեջ էլ կրակ վառելը: Մերին Երեւանում էլ ուներ այդ տաղանդը, պատահակա՞ն էր, որ ինքը սիրահարվեց նրան, բայց հետո, ցավոք, հրշեջի կամ կրակմարիչի դեր ստանձնեց, ինքը Երեւանում ոչ թե հեշտ է, այլ նույնիսկ կարծես թե օրենք, Մերին էլ, իրեն շատ սիրելով, մի օր զիջեց, երկու օր... Իսկ Փարիզում նա ոչ մի օր նախորդ օրվանը չէր, ինչպես կրակը ամեն օր նույնությամբ չի վառվում: Բայց հիմա, ետին թվով, կարող է ասել, որ ամեն քայլափոխի Մերիից մի բան տեսել է նրա մեջ՝ նստելիս, վեր կենալիս, նայելիս, լսելիս:

Մերին, ասում էի, չեմ հիշում, որ խոսեր հեռու կանչի կամ մոտիկ ցավի հետ:

Բա՞ն ասացիր, քմծիծաղում էր, Սանատրուկը, նրա տեսածը տեսնելուց հետո ո՞վ ցավ չի ունենա, կամ ո՞վ ինքն իր հետ չի զրուցի: Իսկ գուցե ցավը մեր մոտալուտ բաժանու՞մն էր, ախր նա տեսնում էր, որ ես բոլորովին չեմ փոխվել: Կամ կանչը այնուամենայնիվ հու՞յսը չէր, որ ամեն ինչ լավ կլինի:

Հիմա քանի՞ տարեկան կլիներ Մերին, հարցնում էի ես:

Քսաներեք, ասում էր Սանատրուկը, կամ հարմարյա քսաներեք:

Իսկ ինչքա՞ն էր Ամելին:

Հիմա զգում եմ, որ ճիշտ այդքան, պատասխանում էր Սանատրուկը:

Ի՞նչ ճանապարհով էր Մերին Փարիզ ընկնելու, այդքան քնականորեն ու արագ ֆրանսիականանալու:

Զգիտեմ, ասում էր Սանատրուկը, բայց միթե՞ դա կարելու է:

Իրոք, կարելու չէր, եւ ես, չուզենալով, բայց ստիպված, հարցնում էի՝ իսկ անկողնու՞մ, համարյա մի տարի ապրեց Մերիի հետ, անկողնում Ամելին նմա՞ն էր Մերիին:

Հիմա Սանատրուկը համոզված էր, որ խշխշան երկնագույն սավանների մեջ Ամելին Մերին էր ամեն ինչով, միայն թե իր տարերքին ավելի հավատարիմ:

Լա՞վ, ասում էի ես, սկզբում էր թաքցնում, հետո ինչու՞ չխոստովանեց ինքն ով է:

Սանատրուկը քահ-քահ ծիծաղում էր՝ Երեւանի բեռը մեր ուսերին, ի՞նչ ես կարծում, ինչպե՞ս էինք մաքուր սրտով նայելու միմյանց աչքերին:

Ես կարծում եմ, ասում էի, դու՛ չգիտեիր ում աչքերին ես նայում, Ամելին, եթե Մերին էր, հրաշալի պիտի իմանար ում հետ գործ ունի:

Մերին, ասում էր, մինչեւ վերջ էլ սիրում էր ինձ: Նա անհետացավ, որպեսզի նորից ինձ գտնի, որպեսզի ամեն ինչ մաքուր էջից սկսե՞նք: Նա ինձ գտավ, Սանատրուկը բռունցքը սեղանին էր խփում, իսկ ես նորից կորցրի նրան:

Ես մինչեւ կոկորդս կուշտ էի Սանատրուկից, բայց խոսքը Մերիի մասին էր, թեկուզեւ ենթադրյալ Մերիի, եւ մեր մտավարժանքը

շարունակվում էր:

Մեր առաջին իսկ հանդիպմանը, որը թերեւս ամենաերկարն էր, որովհետեւ մի քանի ժամ լսում էի նրա հանգամանալից, երբեմն էլ տեղապտույտներով ու անսպասելի անցումներով պատմությունը, ես ի վերջո հարցրի՝ հիմա ի՞նչ է անելու:

Սանատրուկն ասաց, որ արդեն անում է:

Ի՞նչ:

Չանգահարում է Ամելիին: Այսինքն, Մերիին:

Արդյունքը:

Արդյունքը առայժմ գոհացուցիչ չէր՝ հեռախոսը չէր պատասխանում:

Հեռախոսը չէր պատասխանել նաեւ հաջորդ օրերին, երբ ես առանց պայմանավորվելու, կեսօրին աշխատանքից դուրս գալով, գնում էի աշխատավայրիս կողքի սրճարանը, որտեղ առաջին օրը հանդիպել էի Սանատրուկին, եւ որտեղ նա նույնպէս առանց պայմանավորվածության էր գալիս: Նստում ու նորանոր մանրամասներ էր հիշում: Երկրորդ թե երրորդ օրը հարցրեց՝ Ամելի, այդպիսի անուն կա՞ եւ արդյո՞ք ֆրանսիական է:

Ես չգիտեի (հիմա էլ չգիտեմ), նման անունի կարծես թե հանդիպել էի, բայց ոչ թե Ամելի, այլ Ամելին:

Կարելոր չէ, ասաց Սանատրուկը, որովհետեւ այս դեպքում դա Մերի է նշանակում:

Ես, քնական է, զարմացա:

Իզուր, ասաց Սանատրուկը, դու, իհարկե, չգիտես, որտեղից իմանաս, բայց Մերին պատմում էր, որ երեխա ժամանակ տատն այնքան է ասել՝ հերիք եղավ, ա՛յ Մերի, որ ինքն իրեն Ամերի էր կոչում, բայց երեխաները, գիտես, միշտ մի քիչ թլիկ են, ուրեմն Ամերին Ամելի է արտասանել: Հասկացա՞ր, ասում էր, Մերի-Ամերի-Ամելի՝ նույն անունն է:

Գոհացուցիչ ստուգաբանություն էր, ցավոք, գոհացուցիչ չէին իրական պրպտումները՝ հեռախոսը չէր պատասխանում:

Չորրորդ կամ հինգերորդ օրվա կեսօրին ես մտածեցի, որ ի տարբերություն Սանատրուկի, ես կարծես թե խելքս գլխին մարդ եմ եւ եթե ուզում եմ մինչեւ վերջ այդպիսին մնամ, կամ կեսօրվա սուրճից պիտի հրաժարվեմ, կամ ուրիշ սրճարան գնամ:

Մի շաբաթ ես ուրիշ սրճարան էի գնում: Հետո, երբ նյարդերս չդիմացան ու գնացի իմ սովորական տեղը, ինչքան էլ երկար նստեցի, Սանատրուկը չէր եւաց:

Նա չէր եւաց մինչեւ տարեվերջ, իսկ Նոր տարուց հետո հանկարծ զանգահարեց աշխատավայրս ու հարցրեց՝ կարո՞ղ եմ դուրս գալ: Նոր տարում հպարտությունս երեւի նվազել էր, եւ ասացի, որ կարող եմ, թեւս քիչ առաջ էի վերադարձել նույն սրճարանից:

Հեռախոսը վերջապէս պատասխանել էր: Բայց խոսափողը ուրիշ կին էր վերցրել, որը, ի տարբերություն Ամելիի, չէր հասկացել Սանատրուկի հայերենը, Սանատրուկն էլ համապատասխանաբար նրա ֆրանսերենը: Սանատրուկը ասաց, որ ինչքան գիտի, ես խոսում եմ ֆրանսերեն: Խոսում էի էլը ցեխից հանելու նման, բայց որեւէ մեկին կանչել հեռախոսի մոտ, կամ իմանալ ինչու նա չկա, իրոք կարող էի, եւ մենք սրճարանից հեռախոսակայան գնացինք:

Անձանոթ կինը ասաց, որ մայրն սխալվել է եւ անմիջապէս դրեց խոսափողը: Ես զանգահարեցի երկրորդ անգամ, ներողություն խնդրեցի, ասացի, որ իրեն եմ անհանգստացնում, որովհետեւ դեռ մի երկու ամիս առաջ այս համարով ապրում էր իմ բարեկամուհի Ամելին: Կինն ասաց, որ ես ինչ-որ բան շփոթում եմ, այս համարով մի երկու ամիս առաջ, ինչպէս եւ երկու տարի, ապրում է ինքը: Ես կողմնորոշվեցի՝ իմ բարեկամուհուն, ասացի, ոմանք գիտեն Մերի անունով: Հասկացե՞ք, ասաց կինը, այստեղ միայն ես եմ ապրում, իսկ իմ անունը ոչ Մերի է, ոչ էլ, ինչպե՞ս էր, Ամելի:

Ստում է, ասաց Սանատրուկը, երբ խոսափողը ցած էի դրել:

Ասաց համոզված, բայց չհամոզեց: Ես չգիտեի ում հավատամ՝ Սանատրուկին, որ երբեք ինձ վստահություն չէր ներշնչել, թե անձանոթ ֆրանսուհուն, որի ողջամտությանը կասկածելու հիմք չկար:

Վստա՞հ ես, ասացի, որ համարը ճիշտ ես հիշում:

Ես լավ հիշողություն ունեմ, ասաց Սանատրուկը:

Ես վստահեցի նրա հիշողությանը, ինչը միաժամանակ նշանակում էր, որ Մերի հետքերը, մի անգամ արդեն կորած, նորից էին կորչում: Մի թույլ փորձ, նորից ինչ-որ բանից կառչելու, մենք, իհարկե, արեցինք: Սանատրուկի առաջարկությամբ, երբ մի քանի օր անց նորից էինք հանդիպել, չգիտեմ պատահաբար, թե ենթագիտակցորեն իրար փնտրելով: Նա առաջարկեց զանգ տալ մեր բարեկամին, որը լավ գիտի այդ շենքը, կարող է գնալ ու ստուգել: Ես ասացի, որ մեր բարեկամին ինքն էլ կարող է զանգ տալ, նա թեւս արեւմտահայերեն, բայց այնուամենայնիվ հայերեն է խոսում: Սանատրուկն ասաց, որ արդեն զանգահարել է, բայց մեր բարեկամը իրեն գրողի ծոցը ուղարկեց: Ծիշտ վարքագծի համար ես չէի կարող դատապարտել մեր բարեկամին, բայց Սանատրուկի հորդորները անտեսելը նույնպէս անհնար էր: Լսելով խնդրանքս, մեր բարեկամը ինձ էլ գրողի ծոցն ուղարկեց, իհարկե, մի քիչ ավելի յուրահատկորեն: Նա ասաց՝ եթե ան խենթ է, դուն ինչու՞ խենթեցար եւ ինչու՞ կուզես ես ալ խենթեամ: Այսքան սպառնիչ պատասխանին դժվար էր հակաճանաչել, եւ ես մեր բարեկամին հավերժ սթափություն մաղթեցի:

Բայց երեւի պէտք է Սանատրուկին մաղթել: Ամելիի (կամ Մերիի) որոնումները դադարեցնելուց հետո նա մի երկու շաբաթ չէր երեւում, ապա անսպասելիորեն հայտնվեց ցնցող հայտարարությամբ՝ ես ամեն ինչ պարզել եմ:

Նախ եւ առաջ, նա ուզում էր իմանալ՝ ես հավատում եմ հոգիների գոյությանը:

Ի՞նչ իմաստով:

Որ հոգին մեր մահից հետո շարունակում է ապրել:

Ուզում եմ հավատալ, ասացի:

Իսկ հոգիների վերաբնակեցմա՞նը:

Չգիտեմ, ասացի:

Հավատա, ասաց: Այս երկու շաբաթը անընդհատ մտածելուց հանկարծ հասկացա՝ Ամելին լրիվ Մերին չէր, այսինքն, արտաքինով Մերին չէր, թե չէ, իհարկե, դու ճիշտ էիր, անմիջապես կճանաչեի նրան, վերջին հաշվով, փառք աստծո, կույր չեմ, նրա հոգին էր Մերիինը, Մերիի հոգին վերաբնակվել էր նրա մեջ:

Չգիտեմ ես ինչ տեսք ունեի, եւ երեւի Սանատրուկն իրավունք ուներ ասելու՝

Մինչեւ վերջ լսիր, սրանով ամեն ինչ կապվում է: Ես շատ եմ մտածել՝ ո՞նց եղավ, որ հուլիսին հանկարծ վեր կացա գնացի, ես ի՞նչ է, չգիտեի, որ օգոստոսին Փարիզում անելիք չունեմ, ի՞նչ կանչ էի լսում, որին ոչ մեր բարեկամը հավատաց, ոչ դու: Ոնց հավատայիք, եթե ես ինձ չեի հասկանում: Մերիի կանչն էր դա: Նրա հոգին այստեղ էր՝ կողքիս, իսկ ես՝ չհասկանալով վեր կացա, Փարիզ գնացի: Նա էլ տեսեիցս եկավ: Ինչու՞ այն գիշեր թվաց, թե տանը մարդ կա: Երեխա հո՞ չեմ, որ գլխիս գոռ տամ ու վախենամ: Մարդ, ճիշտ է, չկար, բայց կար Մերիի հոգին: Նա ինձ մոտ էր վերադառնում իր հեռանալու ճիշտ նույն գիշերը: Ես էլի չհասկացա, նորից փախա, հիմա էլ տեղից դուրս գալով, եւ նա հուսահատված, վերաբնակվեց Ամելիի մեջ, որ այդ պահին իր մեքենայով ով գիտե ինչու կանգնած էր մեր դռանը: Պատկերացնում եմ՝ ինչ է զգացել նրա հոգին, երբ քիչ էր մնում իր աչքի առաջ պոռնիկի հետ գնայի: Լավ է, չգնացի, այդ մի մեղքից գոնե մաքուր եմ, բայց էլի իր շնորհիվ, թեեւ իրեն զգալով հանդերձ ու չհասկանալով ինչ եմ զգում, ինձ հիմարի նման էի պահում: Բայց այստեղ վերջապես հիշեցի իրեն, վերջապես հիշեցի մեր վերջին երեկոն, ու մնացածը՝ կլոշարներից մինչեւ նորից նրա հայտնվելը երեւի իմ քավարանն էր: Պատահակա՞ն էր, որ այս անգամ ես ընդունեցի իրավերն ու առանց խոսքի նստեցի նրա մեքենան: Պատահակա՞ն էր, որ առաջին իսկ պահից մեր մեջ ամեն ինչ ընթացավ հալած յուրի նման:

Սանատրուկը շարունակում էր խոսել, Ամելիի մարմնում Մերիի հոգու ներկայության նորանոր ապացույցներ բերելով, ես նստած էի բերանս ջուր առած, ես լուրջ չէի ընդունում նրա ոչ մի բառը, բայց մնում-մնում՝ զգում էի, մեր բարեկամն իրավացի է, ես էլ եմ խելքս թռցնում: Եվ իրականության զգացումը չկորցնելու հուսահատ ճիգով հիմարություններ էի դուրս տալիս:

Հարցնում էի՝ Մերիի հոգին ինչպե՞ս էր հետը անձրեանոց տանում եւ, մեղմ ասած, հազցնում Ամելիին:

Սանատրուկը ձեռքն էր թափ տալիս՝ դատարկ բան է, մոխրագույն, իրար նման անձրեանոցներ աշխարհում միլիոններով կան:

Լսել եմ, ասում էի, որ հոգին կարող է անցնել պատի միջով, նույնիսկ տեսել ինչ-որ կինոնկարում, բայց չեմ լսել, որ անուշահոտություններ օգտագործեն, մասնավորապես՝ «Պալումա Պիկասո»:

Որտեղի՞ց գիտես, ասում էր Սանատրուկը, անուշահոտությունները եթերայուղ են, իսկ հոգին ի՞նչ է, եթե ոչ եթեր:

Երբ հակաճանություններդ, հազիվ բերանիցդ թռած, հողմացրիվ են լինում դիմացինիդ ձեռքի մի շարժումից, ամենախելացի բանը պատվով նահանջելն է, ինչն էլ ես ի վերջո արեցի, նկատելով, որ այդ ամենը հրաշալի է, ցավոք, չի օգնում գտնելու Ամելիին կամ Մերիին, եթե նախապատվությունը հոգուն տանք եւ ոչ թե մարմնին:

Ինչպե՞ս թե չի օգնում, ապա՞նց Սանատրուկը, Ամելին տանն է:

Եվ անթերի վարպետությամբ, ինչպես իմ ծանոթներից միայն ինքն էր կարողանում, անցավ իր տրամաբանական կառույցի տանիքը կապելուն:

Այն կինը, ուրեմն, այնուամենայնիվ, չէր ստում: Նա, իրոք, միշտ այնտեղ է ապրել: Բայց նա չի հիշում իր կյանքի այն մի քանի ամիսը, երբ Մերիի հոգին էր իր մեջ: Իսկ Մերիի հոգին նրան լքել է երեւի այն լուսադեմին, երբ մեր բարեկամի հետ անցավ կողքով, թողնելով մուգ ու ցուրտ փողոցում միայնակ կանգնած, կամ, ավելի հավանական է, երբ երագում լքեց Մերիին՝ Մաշտոցի պողոտայում, շուկայի մոտ, նորից ամայության ու մենության մեջ:

Սանատրուկի դեմքը սգավոր արտահայտություն ընդունեց, որը ես փորձեցի ջնջել, ասելով՝ բայց այդ կինը գոնե իր անունը պիտի հիշի:

Որտեղի՞ց հիշի, ծիծաղեց Սանատրուկը, ախր Ամելի չկա, ընդհանրապես չի եղել, Մերիի հոգին էր, նրա մեջ մտնելով, իրեն այդպես կոչել՝ Այ Մերի-Ամերի-Ամելի, չէ որ Մերին փաստորեն նորից ծնվելով, իրեն անվանակոչել էր իր մանկության անունով, որը, ի՞նչ իմանաս, գուցե թե նաեւ ինձ տրված բանալի էր, որով պիտի ճանաչեի իրեն, բայց ես, ցավոք, չճանաչեցի:

Այս հերթական սգահանդեսից, որի անկեղծությունը չգիտես ինչու ինձ չհամոզեց, ես պաշտպանվեցի սուրճիս մեջ նայելով:

Այնուհանդերձ, ես չկռահեցի, որ Սանատրուկն արդեն հրաժեշտ է տվել Մերիին: Չկռահեցի նաեւ հեռուստատեսային հաղորդման ժամանակ, երբ փարիզյան իր գործունեության մասին երկար խոսելուց հետո, հանկարծ որոշեց մի քիչ էլ ընդհանրապես Փարիզից խոսել, ըստ որում, այնպես, որ զգում էիր՝ այս մարդը տարբերվում է սովորական զբոսաշրջիկից, նույնիսկ այնտեղ հաճախ եղող գործարարից, մշակութային ու քաղաքական գործչից, կարճ ասած, ապրել է Փարիզում: Իհարկե, ես չէի սպասում, որ այլոց թվում, ովքեր իր համար հայտնաբերել էին Փարիզը, նաեւ Ամելիի անունը կտար, բայց ամենեւին չզգացվեց, ինչպես հնդիկները կասեին, որ այնտեղ Ամելիի պես գուրու է ունեցել, կամ, ավելի ճիշտ չզգացի, որ ինքն իր մեջ հիշում է այդ գուրուն, հատկապես, երբ վան

Գոգի գերեզմանից էր խոսում: Ես դա վերագրեցի այն լարվածությանը, որը, օրինակ, ես ունենում եմ տեսագրվելիս:

Ես դա հասկացա երեւի մարտին, երբ վերջին անգամ՝ Լստեցիք երես առ երես: Մի ճաշկերույթից հետո, որ իր վաթսուամյակի կապակցությամբ տվել էր մի ընդհանուր գործընկեր: Փողոցում Սանատրուկը միացավ ինձ, ապա առաջարկեց որեւէ տեղում սուրճ խմել, սուրճի հետ նորից օղի պատվիրեց, թեւէ երկուսս էլ արդեն բավականին խմած էինք, եւ մի քիչ Պոմպիդուի կենտրոնում՝ իր տված դասախոսությունից խոսելուց հետո (որի բնագիրը մի քանի օր առաջ տպագրվել էր հանդեսներից մեկում), միանգամից, առանց անցումի ասաց՝

Արի խոստովանիր, դու սիրահարված էիր Մերիին:

Ինչքան ուղղամիտ, նույնքան էլ նենգամիտ այս հայտարարությունից հետո՝ «չէ» էլ լինեք, պիտի «այո» ասեի:

Ես զգում էի, քմծիծաղեց նա, բայց պատկերացնում էս ինչ է նշանակում ամեն օր արթնանալ դաշույն ծոցումդ:

Որքան էլ տարօրինակ էր պատկերացնում էի, թեւէ դաշույնը իր ծոցում էր եղել:

Մերին, ասացի ես, ինչպես անհետացավ, այդպես էլ ցանկացած օր կարող է հայտնվել:

Յրաշքեր չեն լինում, ձեռքը թափ տվեց նա:

Իսկ հոգիների վերաբնակեցում:

Այդ ե՞ս եմ ասել, նրա զարմանքը միանգամայն անկեղծ էր, դատարկ բան է, մեզ ենք խաբում:

Սանատրուկը ինամբով սրբում էր իր հետքերը, կամ փակում այն դռները, որոնցով կարող էր հայտնվել Մերիի ուրվականը: Խոստովանությունս արդեն կորզած, երեւի գտնում էր, որ դաշույնն էլ կարող է իմ ծոցը գցել: Չէ որ, իրոք, տարբերություն չկա՝ արե՞լ ես, թե՞ կանեի:

Չկա Մերին, ասացի, իսկ Ամելի՞ն:

Սանատրուկը, սակայն, չէր ուզում նորից նույն ճամփան անցնել:

Ամելին էլ չկա, ասաց, դու որեւէ բան լսե՞լ ես զուգահեռ աշխարհների մասին:

Եժանագին ֆանտաստիկայի ոգով, բայց առատորեն լցունված գիտական եսիմ ինչ նորագույն վարկածներով, վրայից էլ մի քիչ իմաստասիրական փոշի ցանած՝ նա Ամելիին տեղափոխեց մեզ անհասանելի մեկ ուրիշ աշխարհ, որտեղ ինքը ժամանակավորապես էր եղել, դրանով բացատրելով իր այն գիշերվա տարօրինակ վիճակն ու զարմանալի հարաբերությունները Ամելիի հետ, ըստ որում, Ամելին ամեն ինչ իմացել էր, չէր իմացել ինքը՝ Սանատրուկը, Ամելին նաեւ գիտեր, որ Սանատրուկին հավերժ չի կարող իր կողքին պահել, որովհետեւ սեփական աշխարհը, միեւնույնն է, քաշելու է նրան, դրա համար էլ ապրում էր պահի մեջ, թիթեռի կյանքով, իսկ ինքը՝ Սանատրուկը, կոպիտ ասած, Ամելիի մոտից մեր բարեկամի մոտ գնալով, փաստորեն մի զուգահեռ աշխարհից մյուսն էր տեղափոխվում, իսկ վերջին գիշերը հրաժեշտ տալով, մեկընդմիջտ վերադարձավ այսպես ասած տուն, Ամելին էլ, դարձյալ այսպես ասած, մեկընդմիջտ մնաց իր տանը, այնպես որ այս կնոջ զարմանքը միանգամայն տեղին է՝ մեր աշխարհում այս բնակարանում միշտ նա է ապրել, ինչն էլ նշանակում է, որ մեզ զուգահեռ՝ այսինքն, Ամելիի աշխարհի մի անգամ հրա շքով բացված դռները նորից փակվել են:

Ես ասացի՝ ավելի հեշտ չի՞ պարզապես խոստովանել, որ Մերին քեզնից փախավ, դու՝ Ամելիից ու վերջակետ դնել, բայց ինքնամաքրման ուղի ելած Սանատրուկին դժվար էր ետ բերել:

Չեշտ է, ասաց, բայց արդյո՞ք հեշտ են մարդկային հարաբերությունները, արդյո՞ք հեշտ է ճիշտը սխալից գանազանել, եւ արդյո՞ք մենք իրավունք ունենք իրար դատավոր լինելու՞...

Սանատրուկը բարձր էր խոսում, ասես դա նույնպես ինքնամաքրման եղանակ էր, կողքի սեղանների շուրջը նստածները լսում էին մեզ՝ երկու հարբած ու խելքը գցածներին, թեւէ ես բաժակիս չէի դիպչում, միայն Սանատրուկն էր շարունակում խմել, բայց դա ի՞նչ կարեւոր էր՝ ում հետ նստած ես, նրա հետ ես ճանապարհ գնում: Եվ միմիայն այն պատճառով, որ մի օր Սանատրուկի կողքին Մերիին էի տեսել, կամ, ցավոք, Մերիին տեսել միայն այնպիսի օր, երբ նրա կողքին Սանատրուկն էր եղել: Եվ հանկարծ ու միանգամից ես հասկացա, որ այլեւս չեմ ուզում նրա հետ նույն սայլը քաշել: Իհարկե, բոլորս էլ լծկան ենք, բայց յուրաքանչյուրս սեփական հույսերի ու հիասթափությունների լծկանը:

Խիղճը Սանատրուկին որոշ ժամանակ էլ տանջեց, բայց տարալուծվելով հերթական մտավարժանքների մեջ: Մինչեւ մայիս, գուցե մինչեւ հունիս ես նրան նույնիսկ հեռվից չէի տեսնում, ինչի համար գոհ էի նախախնամությունից, ինձ միայն նրա խոհից ծնված գոհարներն էին հասնում: Սանատրուկը, ասում էին ծիծաղելով, խելքը լրիվ գցել է, յուրաքանչյուր ինքնասպանության հետեւում, ասում է, սպանություն է կանգնած, պահանջում է յուրաքանչյուր ինքնասպանության դիմաց մեկին գնդակահարել կամ կախել, բայց կողմապահությունից խուսափելու եւ զանազան չարաշահումների առաջն առնելու համար, պատիժը, ասում է, պետք է իրականացվի վիճակահանությամբ, որովհետեւ, ում էլ ընկնի վիճակը, ճիշտ կլինի, որովհետեւ այս կյանքում չկա մեկը, որ մեղքերի խուրջին չունենա ուսին: Բացառություն է անում, ասում էին, միայն անչափահասների համար:

Մայիսից կամ հունիսից Սանատրուկին արդեն հեռվից տեսնում էի բացօթյա սրճարաններում: Ինչպես միշտ ունկընդիրներով ու բերանբանցներով շրջապատված, որոնց թվում նաեւ կանանցով, բայց դրանք ավելի շուտ սկսնակ կամ չկայացած բանաստեղծուհիներ էին, կամ պարզապես գրամուկներ, որոնց Սանատրուկը որպես օրենք արհամարհում էր: Ամռանն էր, որ նրա կողքին հայտնվեց ու այլեւս անհետացավ կարճ կտրած մազերով, փոքր-ինչ գեր, բայց բավականին նագելի մի աղջիկ: Իսկ մի անգամ, պատահաբար նայն սրճարանում հայտնվելով (բայց ուրիշ սեղանի շուրջը) ես մոտիկից տեսա նրան: Ամենեւին նման չէր Մերիին, ոչ էլ, ենթադրում եմ, Ամելիին, բայց սիրահարվածի աչքերով էր Սանատրուկին նայում: Շատ հնարավոր է, որ այդ օրն էլ վերջնականապես համոզվեցի՝ թե՛ նույնիսկ լծի ընկեր փնտրեմ, չեմ գտնելու, ես արդեն միայնակ լծկան եմ:

Ի տարբերություն Սանատրուկի, հեռախոսի համարների հարցում հիշողությունս պարծենալու առիթներ չի տալիս, բայց Ամելիի համարը չգիտես ինչու դուրս չեր գալիս գլխիցս: Եվ աշնանամուտին՝ լծիս լիիրավ տերը դառնալուց հետո, մի օր հանկարծ հասկացա, թե ինչու:

Ես զանգահարեցի անմիջապես ու ճանաչեցի նույն կնոջ ձայնը: Ասացի՝ հիշում եք, մեկը տարեսկզբին զանգ էր տալիս եւ ինչ-որ Ամելի կամ Մերի հարցնում: Հիշում եմ, ասաց: Նորից, ասացի, ես եմ անհանգստացնում, եթե զաղտնիք չի՝ դուք այսինչ փողոցում եք ապրում (փողոցի անունը դիտավորյալ չեմ տալիս): Դա որտե՞ղ է, հարցրեց կինը: 8-րդ թաղամասում, ասացի: Աստված իմ, ասաց, այդպե՞ս են փնտրում բարեկամուհիներին, 8-րդը աչ ափում է, ես ձախում եմ ապրում: Միանգամից բարձրացած տրամադրությամբ ես կատակով հարցրի՝ իսկ ո՞ր փողոցում, եթե դարձյալ զաղտնիք չի: Գաղտնիք չի, ասաց, բայց հերիք է, որ հեռախոսիս համարը գիտեք: Եվ ես նորից կատակեցի՝ եթե Փարիզում լինեմ, անպայման կզանգահարեմ:

Լավ հիշողության տեր Սանատրուկը, մինչեւ Երեւան կհասներ, շփոթել էր համարը: Իսկ գուցե դա նախախնամություն էր, երրորդ անգամ Մերին չպետք է նրա ձեռքն ընկեր:

Այս կռահումս էլ, որ գուցե սխալ համարով ենք զանգանգարել, պատճառ դարձավ, որ այստեղ վերջակետ չեմ դնում:

Ինձ վիճակվեց մի շաբաթով Փարիզ ընկնել միայն դեկտեմբերին: Առաջին անգամ ձմռանը: Մի կողմից ցուրտ էր, մյուս կողմից՝ Շննդյան տոներին նախորդող իրարանցում, գործուղումս էլ՝ շատ լարված, այնպես որ, առաջին երկու օրերը ես կարգին չգիտեի որտեղ եմ: Բայց քանի որ Սանատրուկի նման ես էլ էի մեր բարեկամի տանը իջեանել, օրը ամսվազն երկու անգամ անցնում էի Ամելիի տան մոտով, նույնիսկ ոտքս կախ գցում: Թեեւ ճանապարհս այդպես երկարում էր, բայց նրա փողոցով էի գնում մետրոյի մոտակա կայարանը, վերադառնում նույն ճանապարհով: Ես նրան Ամելի էի կոչում, թեեւ մտքումս Մերին էր:

Երրորդ օրը, վերջապես գործերից թեթևացած, անցա, ինչպես ասում են, վճռական գործողությունների: Հաշվեցի, թե քանի բնակարանի զանգի կոճակ կա, այդ թիվը բաժանեցի հարկերի վրա, իմ կարծիքով որոշեցի, թե որոնք կարող են երրորդ հարկում լինել, եւ երեքից մեկը սեղմեցի:

Տղամարդ պատասխանեց: Չգիտես ինչու մի քիչ զարմացած՝ ես բարեւեցի, հարցրի՝ Ամելին տա՞նն է: Ռ՞վ-ո՞վ, դժգոհ արձագանքեց նա: Իսկ Մերի՞ն, վրա տվեցի ես: Ավելի դժգոհ՝ նա հարցրեց, թե ո՞ր բնակարանն եմ ուզում: Ես տվեցի իր բնակարանի համարը: Սխալվել եք, մայր, ասաց նա ու կախեց խոսափողը:

Մյուս բնակարանից կին պատասխանեց, բայց նա Ամելին չէր, ոչ էլ Մերին:

Երրորդ բնակարանը, չնայած համառ զանգերին, չարձագանքեց:

Իմ թվաբանությունը հնարավոր է չհամապատասխաներ շենքը երեւի մի երկու հարյուրամյակ առաջ նախագծողի թվաբանությանը, եւ ես փորձեցի եւս երկու բնակարանի հետ կապվել, մեկը՝ մի թիվ ետ, մյուսը՝ առաջ: Եվ դարձյալ մեկը չարձագանքեց, մյուսում ոչ Ամելի կար, ոչ Մերի:

Անհաջողությունը, թեալթափ անելու փոխարեն, ինձ աներես դարձրեց, եւ այդ ու հաջորդ օրվա ընթացքում, աստիճանաբար ընդարձակելով երրորդ հարկը, ես փորձեցի կապվել բոլոր բնակարանների հետ: Արդյունքը հուսահատական էր՝ տասնհինգ բնակարաններից տասնմեկում ինձ հետաքրքրող անուններով կին չկար, չորսում՝ ընդհանրապես ոչ մեկը:

Այդ երեկոյան ես կասկած հայտնեցի, որ Սանատրուկի փարիզյան սիրովեպը, թեեւ առանց կրակ ծուխ չի լինում, ավելի շատ երեւի իր երեւակայության արդյունքն է: Մեր բարեկամը չհամաձայնեց: Այդ ժամանակ էլ հիշատակեց «ոռիկը», որը դիպավ սրտիս, բայց կուլ տվեցի լռությամբ, չէ որ խոսքը իմ սիրուհու բարեմասնությունների մասին չէր:

Հաջորդ առավոտյան ես վերջին փորձը արեցի, բայց չորս բնակարաներն էլ նորից քար լռություն պահպանեցին, ինչը կարող էր նշանակել, որ նրանք ընդհանրապես բնակեցված չեն:

Փարիզի ձմեռը երեսնյանի հետ չես համեմատի, բայց դիմացի մայիին կանգնած ու հոգսերիս անհաղորդ պատուհաններին նայելով, ես լրիվ սառել էի, երբ մոտավորապես մի ժամ անց շքամուտքի դուռը վերջապես բացվեց: Դուրս եկավ տարեց մի տիկին՝ չնայած փարիզուհի լինելուն շատ նման երեսնյան այդ տարիքի բարեկեցիկ տատիկներին: Որոնք երեսնում չգիտեմ ինչու միշտ բարեհամբույր են հետս, եւ ես նրան մոտեցա հուսալով, որ այդ ավանդույթը այստեղ էլ չի խախտվի:

Չխախտվեց: Ցավոք, նա ճանաչում էր միայն իր նման հնաբնակներին, մյուսներին, որոնք հաճախ էին փոխվում, գիտեր միայն բարե-բարի լույսով, առանց անուն-ազգանվան: Իմ նկարագրած կնոջ նման կին չենքում կարծես՝ եւ՛ կար, եւ՛ չկար, կամ կարծես թե եղել էր: Դիմեց շենքի տիրոջը, վերջում խորհուրդ տվեց նա, եւ բացատրեց որտեղ գտնեմ նրան:

Տասները՝ տարեց, փոքրամարմին, կլոր փորով ու կլոր ակնոցով, ամենայն հավանականությամբ հրեա, ինձ ընդունեց կասկածանքով: Խնորանքս լսելով, նախ հարցրեց՝ ես ոստիկանությունից եմ, իսկ իմանալով, որ չեմ, չգիտես ինչու ավելի մռայլվեց: Իմ կցկտուր ֆրանսերենով դժվար էր վստահության արժանանալ, եւ ես հանեցի հայկական անձնագիրս՝ ահա՛, հեռվից եկել եմ, բարեկամուհուս եմ փնտրում, նա ինձ անցյալ տարի այս հասցեն է տվել:

Արդյունքն այն եղավ, որ տանտերն ասաց՝ ով էլ լինեք, ինչ մտքով էլ եկած, իմ օգնությամբ միենույնն է չեք գտնելու, այնպես որ տեսնեք ձեր ասած ժամանակ ո՞վ է այստեղ ապրել:

Իրավունք ուներ այդպես ասելու, որովհետեւ ես չգիտեի Ամելիի ազգանունը (որովհետեւ չգիտեր Սանատրուկը), տանտերն էլ Ամելի կամ Մերի անունով իր մոտ ապրած վաճակալ չէր հիշում: Իմ ուղեցույցն էր՝ երիտասարդ մի կին, որն այստեղ, երրորդ հարկում, ապրել է անցյալ տարվա ամսվազն օգոստոս-նոյեմբեր ամիսներին:

Փնտրում էր նա, ակնոցը հառած՝ անդադար պատկերափոխ լինող մոնիտորին եւ վերջապես բացականեց՝

Անա՛, դուք փնտրում եք մադամ Տոզային:

Մադամ Տոզայ՞, իսկ անու՞նը:

Մադամ Մարի Տոզայ, չգիտես ինչու հաղթական շեշտով ասաց տանտերը, եւ շունչս բռնվեց՝ Մարին ավելի նման էր Մերիին, քան Ամելին:

Իսկ հիմա որտե՞ղ է Մարի..., ազգանունը ես արդեն մոռացել էի:

Է-հե՛, ծիծաղեց տերը, շատ բան եք ուզում իմանալ: Որտե՞ղ պիտի լինի՝ ամուսնու մոտ, եթե, իհարկե, նորից չի փախել:

Չեմ հիշում ինչը ինձ ավելի շատ հետաքրքրեց՝ փախչելը, թե՞ ամուսինը: Մերին փախել էր Սանատրուկից, Սանատրուկը ինքը չէր գտել նրան, բայց դա երեւի հիմա կարեւոր չէր: Ես ինչքան կարող էի նկարագրեցի երկուսի արտաքինն էլ: Բարեբախտաբար, տանտիրոջ լեզուն բացվել էր, պատասխանը, ցավոք, ամեն ինչ խճճեց:

Մադամ Տոզայն, ասաց, նման է, բայց մայր Տոզայն, կներեք, ավելացրեց ծիծաղելով, թեեւ նույնպես չափել էր, բայց ինձնից: Դուք, ասաց, սիրեկանին եք ամուսնու տեղ դրել:

Դասական եռանկյունին անսպասելի էր, եւ ես, շփոթված, ասացի, որ նրանք երեւի իմ փնտրածը չեն:

Ինչպե՛ս չէ, վրդովեց տանտերը, օգոստոս-նոյեմբերը չէ՞ր ձեզ հետաքրքրողը: Խնդրեմ՝ մադամ Տոզայն տեղավորվեց օգոստոսի 1-ին, գնաց՝ նոյեմբերի 16-ին: Բացի այդ, ավելի վրդովեց նա՛՝ դուք չէի՞ք ասում՝ Մարի, Մարի:

Ես, հասկանալի է, Մերի է ասել, բայց դա չէր կարելորդ: Սանատրուկը Փարիզ էր եկել հուլիսի 31-ին, մեկնել՝ նոյեմբերի 15-ին: Մեկական օր ուշացումով փաստորեն նույնն էր արել մադամ Տոզայն, այսինքն, Մարին, եւ միթե՞ Ամելին կամ Մերին: Ես հարցրի՝ իսկ ի՞նչ եղավ սիրեկանը:

Չգիտեմ ինչպես էր իմացել, բայց մի օր առաջ անհետացավ, ասաց տանտերը, ամուսինը ախր մասնավոր դեղեկտիվի միջոցով էր գտել կնոջ հետքը:

Ես, մեր խոսակցությունը ավարտված էի համարում, բայց նորից մոնիտորին գամված տանտերը հանկարծ բացականչեց՝ մի թույլ, մի թույլ... ճիշտ նույն օրերին մի գեղեցկուհի էլ այդ հարկում իմ վարձակալը դարձավ եւ նույնպես կարճ ժամանակով... ահա՛, մադամ Կորտեշը:

Կորտե՞շ, զարմացա ես, կարծես պորտուգալական ազգանուն լինի:

Պորտուգալուհին, մոնիտորից չկտրվելով ասաց նա, պորտուգալական ազգանուն կունենա:

Իսկ անու՞նը:

Մադամ Մելիսիա Կորտեշ, նորից հաղթական շեշտով ասաց նա:

Մելիսիան էլ հեշտությամբ դարձավ Մերի (Մելիսիա-Մելի-Մերի), նույն կերպ էլ նաեւ Ամելի (Մելիսիա-Մելի-Ամելի): Ինչու՞, մտածեցի, ֆրանսիացի ծեր փեսացուի կարելի է հանդիպել, պորտուգալացու՞ չէ: Գուցե մադամ Կորտեշի ամուսինն էր պորտուգալացի:

Մադամ Կորտեշը ամուսնացած չէր, ծիծաղեց տանտերը, սիրեկանին էր ամուսինս ասում: Բայց սա ավելի սրիկան էր, քան մյուսը, որովհետեւ արանքը ճղեց, հենց որ մադամ Կորտեշի փողերը վերջացան: Ուրեմն... մադամ Կորտեշը եկավ օգոստոսի 5-ն, հաշիվները փակեց նոյեմբերի 20-ին: Ինքն էլ նույն օրը կգնար, երեւի հույս ուներ հասնել սրիկայի ետեւից, բայց պարտքերը վզին ու՞ր էր փախչելու եւ ստիպված մի քանի օր համբերեց:

Նորից շատ բան էր համընկնում. Սանատրուկը Ամելին հանդիպել էր իր գալուց մի շաբաթ անց՝ 6-ին, իսկ մի քանի օրն էլ, որ մադամ Կորտեշը պարտքի պատճառով ստիպված էր եղել նստել այս մարդու թրի տակ, երեւի նոյեմբերի 15-20-ն էին:

Բայց սիրեկանը երեւի պորտուգալացի չէր, ասացի ես, փորձելով Սանատրուկի հետքը գտնել:

Ի՞նչ իմանամ, ասաց, ես նրա հետ չեմ զրուցել, ոչ էլ մյուսի, մեկ-երկու անգամ հեռվից եմ տեսել: Ինձ իմ տնվորներն են հետաքրքրում եւ նրանց վճարունակությունը: Այս առումով, ասաց, ձեր բարեկամուհիները երկուսն էլ կյանքս կերան: Մի սրիկան ինքն էր քամում մադամ Տոզային, մյուս սրիկայի վրա ինքը՝ մադամ Կորտեշն էր վատնում: Բայց մադամ Տոզայի հարցերը հեշտ լուծվեցին՝ ամուսինը եկավ վճարեց, խեղճ մադամ Կորտեշը ավտոմեքենան վաճառեց:

«Ռենոն», թռավ բերանիցս:

«Ռենոն», հաստատեց տանտերը: Եվ ի՞նչ է զարմանալի, ծիծաղեց նա, սկզբում մադամ Տոզայն էր ուզում իր «Ռենոն» գլխիս կապի, հետո՝ մադամ Կորտեշը: Առաջինից արձա ամուսնու շնորհիվ, բայց երկրորդի համար ստիպված էի գնորդ գտնել: Էժան տվեց, հազիվ հերիքեց պարտքերին, չգիտեմ ձեռքին որեւէ բան մնաց, թե չէ, բայց ո՞վ է մեղավոր: Մեղավոր են իրենք, որ չգիտեն ում հետ են կապվում, որ խելքները զցում են ամեն կանգնած փայտի համար:

Ես, որ մի պահ ոգեւորվել էի, փորս ընկած ձայնով հարցրի՝ իսկ ո՞ր «Ռենոն» էր փոքր:

Երկուսն էլ մի բան չէին, ասաց տանտերը: Այդ երկու կանայք, ծիծաղեց նա, իրար արժեին: Երկուսն էլ ժամանակին վճարեցին միայն առաջին մեկ ամիսը: Յետո, հենց համբերությունս հատնում էր, հենց ձեռքս պարզում էի հեռախոսին, որտեղից որտեղ զգում էին, նախ մեկն էր գալիս, հետո մյուսը, նստում այնտեղ, ուր հիմա դուք եք նստած, ու այնպես նայում երեսիս մուկ կայծկտան

աչքերով, որ ասում է՝ ոչինչ, Մադամ Տոգյա, ոչինչ, մադամ Կորտեշ, մի անհանգստացեք, հետո կվճարեք:

Ես ինչքան կարող էի ու ինչքան բառապաշարս հերիքում էր, փորձեցի մի անգամ էլ նկարագրել Մերիին:

Է-Է՛հ, ծիծաղեց տանտերը, դուք, մայր, կարծես թե փնտրում եք երկուսին էլ:

Վերջին հարցիս՝ այնուամենայնիվ գուցե գիտե, այստեղից ուր եմ գնացել, տանտերը ասաց, որ իմանար էլ չէր ասի, որովհետեւ ո՞վ կերաշխավորի որ հանցավոր մտքեր չկան գլխումս, բայց չգիտի: Իսկ հիմա, ժպտացին նրա ակնոցները, եթե թույլ կտաք, մի քիչ էլ իմ գործերով զբաղվեմ:

Ես շնորհակալություն հայտնեցի ու դուրս եկա:

Այդ երեկո ես հոժարակամ նստեցի մեր բարեկամի հետ նարդի խաղալու (եւ հոժարակամ պարտվելու): Ես գցում էի գառերը, վերհիշում խոսակցությունս տանտիրոջ հետ, եւ այն, ինչ ցերեկը չէր կամվել, կամաց-կամաց կուռ պատմություն էր դառնում: Իմ հայրենակցուհիներից շատերն էին երագում ամուսնանալ ու արտասահման ընկնել, Մերին ինչո՞վ էր պակաս: Սանատրուկի վրա ծախսած փողերն էլ ամուսնունն էին: Ինչ-որ կերպ իմացել էր նրա գալը, եկել գտել: Իսկ որ ամուսինը հայտնվել է Սանատրուկի մեկնելու հաշտոր օրը, երեւի զուգահեռություն է: Մերին Ֆրանսիայում, պարզ է, պիտի Մարի դառնա:

Մադամ Տոգյայի պատմությունը այսպես հեշտ հյուսվեց, ինչը չի կարելի ասել մադամ Կորտեշի մասին: Բայց երրորդ պարտիան տանուլ տալիս՝ ես արդեն նրա պատմությունն էլ ունեմ:

Պորտուգալուհի Մելիսիան, իհարկե, կարող էր Մերին չլինել, բայց Ամելին՝ այո: Ինչ-որ բանից հիասթափված, Փարիզում ինքն էլ մեռակ ու օտար՝ կարող էր Սանատրուկին ձեռք մեկնել: Գուցե նա էլ էր այդ գիշեր թափառում (իհարկե, ավտոմեքենայով), մի անգամ պատահաբար տեսավ Սանատրուկին, երկրորդ անգամ... Եթե նրա հիասթափությունը սիրուց էր (իսկ ուրիշ էլ ինչի՞ց), եթե նրան խաբել էր որեւէ տղամարդ, կարող էր գուրգուրել, իրենով անել ձեռքից գնացած ու համրի պես բերանը փակ Սանատրուկին, որովհետեւ ո՞վ է հատկապես անմնացորդ ու անդավաճան մեզ նվիրվում՝ անտեր մնացած անլեզու արարածները: Յետո, երբ Սանատրուկը ոտքի կանգնեց, արդեն կարող էր հպարտանալ նրանով, ինչպես յուրաքանչյուր կին իր ծնած-շահած-պահածով, որովհետեւ նահանգներից վերադառնալուց հետո մեր բարեկամի գտած Սանատրուկը ի՞նչ էր, եթե ոչ Ամելիի ստեղծագործությունը: Վերջում էլ՝ արդեն մարդ դառած, բոլոր փուլ գավակների նման երախտամոռ եղավ: Բայց այստեղ ես նորից Մերիի հետքի վրա ընկա: Սանատրուկից դառնացած Մերին էլ կարող էր նրան ձեռք մեկնել: Գուցե իր առավելությունը ըմբռնելու ցանկությունից (կանացի վրեժխնդրությունը ի՞նչ իմանաւ ինչ ձեռք կարող է ընդունել), գուցե դեռ շարունակում էր սիրել նրան (արի ու հասկացրի կանանց), բայց վերջում նորից թակարդն ընկավ (ինչպես բոլոր շատ նվիրված մարդիկ): Ինչպես կարող էր Մերին Պորտուգալիա ընկնել ու Մելիսիա Կորտեշ դառնալ՝ սրա համար գոհացնող պատասխան չգտա, բայց մյուս կողմից էլ՝ տանը նստած առաստաղին նայելով (զառ գցելով ու պարտվելով), ինչպե՞ս ամեն ինչ իմանայի:

Նախավերջին օրս նորից խիստ լարված էր՝ հագիվ հասցրի կցմցելով ծայրը ծայրին բերել գործուղմանս հետ կապված գործերը, իսկ կեսգիշերին մոտ, մեր բարեկամից կրկին մի քանի պարտիա ջախջախիչ պարտություններ կրելուց հետո, ասացի, որ ուզում եմ վերջին անգամ Փարիզում զբոսնել, բարի գիշեր մաղթեցի ու դուրս եկա:

Ամայի փողոցի երկու մայրերի երկայնքով հոգնած ննչում էին ավտոմեքենաների հուլունքաշարերը, ու թեեւ ես քայլեցի ոտքս կախ գցելով, ոչ մի մեքենայից ոչ ոք ինձ ձայն չտվեց:

Ես գնացի բուլվար Կլիշի, զբոսնեցի մերկ գեղեցկուհիների լուսանկարների անտարբեր եւ «եստի համեցեք» կանչող արաբների հույսով լի հայացքների տակ, ապա՝ ինչպես եկել էի, նույն ճանապարհով էլ Մեծ Բուլվարներ իջա: Մեր բարեկամի լուսամուտները արդեն մթնել էին, իսկ բուլվար Պուասիոններում ես ազատ սրճարան գտա ու նստեցի համարյա մինչեւ երկուսը: Երբ ինձ այստեղից քշեցին, դուրս եկա ու երկու անգամ ծայրեծայր կտրեցի Մեծ Բուլվարները, իսկ հասնելով Սեն Դենիսի կամարին, համանուն փողոցը թեքվեցի:

Դեկտեմբերյան գիշերով աղջիկները երեւի ավելի քիչ էին, քան նույն ժամին օգոստոսին, իսկ հաճախորդներ ընդհանրապես չկային՝ նույնիսկ Սադամ Յուսեյինի երկվորյակի պես շքեղ մեքենայում բազմած, եւ միակ անցորդն էի կամ հաճախորդացուն, եւ երեւի քանիսի անեծքին արժանացա, մինչեւ որ խարտյաջ խոպոպներով սովորական աղջիկ տեսնելու հույսը կտրած՝ կանգնեցի նրա առաջ, որը, ինչպես թվաց, վերջինն է: Նա չասաց՝ չորս հարյուր ու երկու հարյուր Ֆրանկ, նա միայն լարված ժպտաց: Ես էլ ժպտացի: Աղջիկը չէր ճոճվում թաթերի ու կրուկների վրա, նա մարզական կոշիկներով չէր, այլ բարձրակրունկ, կանգնել էր սառած, դեմքին էլ ժպիտն էր սառել, իսկ մեքենա չէր երեւում փողոցի ոչ մեկ, ոչ մյուս ծայրում: Ների, ասացի, ես հաճախորդ չեմ, ես մտքով էի ընկել: Ու շարունակեցի ճանապարհս: Հասնելով խաչմերուկին, մի քիչ կանգնեցի, մտածեցի, որ նորից Սեն Դենիսով ետ գնալն ու երկու տասնյակի չափ աղջիկներին նորից հուսախաբ անելը անմարդկային բան կլինի, ապա, ճանապարհս շարունակելով մի քիչ ուղիղ, մի քիչ աջ, շուտով հասա Լուվրին՝ այս ժամին մուօ ու մռայլ: Ռիվոլիո վ մի քիչ քայլելուց հետո ետ դարձա, շրջանցեցի Լուվրը եւ քայլեցի մյուս կողմով: Տյուիլրի այգու անկյունում կանգնեցի, սիգարետ վառեցի ու, չնայած կլոշարներ ձեռքին գետնի տակից, կամրջով ձախ ասիւն անցա:

Ձախ ավում էլ ինձ ոչ ոք չանհանգստացրեց: Մեկը, իհարկե, կտրեց ճանապարհս՝ մայր, ըն ֆրանկ, բայց կլոշարի նման չէր, չնայած բարձրահասակ լինելուն էլ՝ տղամարդու հագուստներով, եւ հեռացավ մեկ ֆրանկով միանգամայն գոհացած: Ես արագ էի քայլում, որպեսզի տաքանամ, այնուհանդերձ, մինչեւ բուլվար Սեն ժերմենից Լյուքսեմբուրգյան այգի կհասնեի, հետո ետ կդառնայի, որպեսզի Լատինական թաղամասում գիշերով դիտեմ Սորբոնը, հետո էլ ճամփա կընկնեի Սոնյառնասի երկնաքերն ու գերեզմանոցը դիտելու, վերջնականապես սառել էի: Այստեղ ես դեռ Սենաս ու իմ ավիզ գցում էի բոլոր նյարդերով, բայց մեջս ընկած ցեցի հետ ձեռք ձեռքի քայլելով սատանան գիտե թե ուր, ի վերջո իրոք մոլորվեցի: Սառած ու հոգնած՝ ես մերթ այս կողմ էի գնում, մերթ այն, որեւէ փողոցի կեսից միտքս փոխած ետ դառնում եւ աչքերիս չիավատացի, երբ հանկարծ բաց սրճարան տեսա: Հագիվ թե դա Սանատրուկի սրճարանը լինե, որովհետեւ «24 ժամ» ցուցանակը չկար, բայց դա ի՞նչ կարեւոր էր, վերջին հաշվով ես իմ ճանապարհով էի գնում: Ներսում էլ Բերանժեի երգերից փախած խորամանկ ժակ չկար, բարմեք, վաճառատեղանին հենված, «Ֆրանս սուր» էր կարգում, երկու հաճախորդներն էլ՝ միանման տաք բաճկոններով երկու տղամարդ, լուռ ու մուռ քրուսասն էին ուտում եւ նարնջի հյուլ խմում: Վերջացնելով, նրանք վերջապես խոսեցին իրար մեջ, եւ ես զարմանքով հասկացա, որ խոսում են պորտուգալերեն: Ես մտածեցի, որ սա չի կարող պատահականություն լինել՝ մադամ Կորտեշ, պորտուգալացի վարորդներ: Ես կռահեցի, որ պատուհանից երեւացող հսկա բեռնատարը՝ «Տիր» մակագրությամբ, նրանցն է, եւ մի պահ համարյա հավատացի, որ

Մերի-Ամելի-Մելիսիան կամ Մերի-Ամելի-Մարին իր փոքրիկ «Ռենյոյով» կամ մի ուրիշ մեքենայով (հաջողության համար ի՞նչ կարեւոր են մեքենաների մակնիշները), սլանում է իր ու իմ ճակատագրին ընդառաջ: Ես արդեն մի գավաթ վողկա դատարկել էի՝ եւ փորձեցի խոսել պորտուգալացիների հետ, բայց նրանք ֆրանսերեն ավելի վատ գիտեին, քան ես, ուստի ներողություն խնդրեցի (ինձանկից) եւ շնորհակալություն հայտնեցի (բարմենին), վճարեցին ու դուրս եկան: Ես նայում էի, թե ինչպես են նրանք մոտենում իրենց մեքենային եւ ափսոս հարբած չէի, թե չէ կվազեի տեսներից, կասեի՝ պատահաբար չե՞ք ճանաչում մադամ Կորտեշին, թեեւ ամենայն հավանակալությամբ ձեզ մոտ նա սիւնորիտա է, այսինքն, օրիորդ, դե ահա, ուրեմն, գուցե ճանաչու՞մ եք սիւնորիտա Մելիսիային, նա օրիորդ Մերին է, ես, հասկանու՞մ եք, չգիտեմ ինչու կալել եմ այդ աղջկան, թեեւ նա երբեք իմը չի եղել, հիմարություն է, գիտեմ, բայց ես հիմա աշխարհով մեկ նրան եմ փնտրում, իսկ եթե նրա տեղը չգիտեմ, գուցե ճանապարհին որեւէ տեղ մադամ Տոգայի՞ն եք հանդիպել, նա արդեն իսկական մադամ է, ինչպես ձեզ մոտ եմ ասում՝ սիւնորա, որովհետեւ, եթե հանդիպել եք, կողքի տարեց մարդը հայրը չէ, ոչ էլ նույնիսկ պապը, այլ ամուսինը, բայց նա՞ մադամ Տոգայան, կարող է նաեւ պարզապես Մարի կոչվել, որը նույն Մերին է, որին ես փնտրում եմ, որովհետեւ չգիտեմ ինչու, բայց հենց նա է ինձ պետք, իսկ գուցե որեւէ տեղ այսպես քրուսասան ուտելիս Ամելի անունով մեկի՞ն եք տեսել, սա արդեն մեծ հաջողություն կլինի, որովհետեւ միանգամից կգտնեմ թե իրեն, թե սիւնորիտա Մելիսիային, թե մադամ Տոգային, եւ թե՛ Մերին, թեեւ այս չորսից ինձ միայն Մերին է պետք, բայց Ամելին աչքերը փակում է իրենց չորսի ցավը միաժամանակ կուլ տալով, իրենց չորսի փոխարեն ակախը կանչի պահում, այնպես որ եթե քրուսասան ուտելիս այդպիսի մեկին տեսել եք, ես երեւի հաստատ գտնեմ Մերին, իսկ եթե՞ չէ, էլի ոչինչ, աշխարհը սրանով չի վերջանում, դուք կզնաք, ես կսպասեմ, գտնելը, երեւի գիտեք, երբեք էլ ուչ չի, ափսոս է չգտած մեռելը, մեկ էլ, իհարկե, ափսոս է, որ չգիտենք ինչ պիտի գտնենք, եւ անկեղծ ասած, ես էլ չգիտեմ, բայց ես նրան Մերի անունն եմ տվել, որովհետեւ մի անգամ, երբ տեսա Մերիին, քիչ մաջ իմանայի փնտրածիս անունը, ու թեեւ չկարողացա, բայց հավատացի, որ կա ու պիտի փնտրեմ, ես էլ, ահա, փնտրում եմ, ահա, եկա այստեղ, հուսալով, որ գուցե այստեղ հանդիպենք, թեեւ առանձնապես մեծ հույսեր չունեմ, բայց, միեւնույնն է, պիտի սպասեմ, որովհետեւ երբեք չգիտես որտեղ կգտնես, որտեղ կկորցնես, սովորաբար, իհարկե, կորցնում ես նաեւ գտնելիս, բայց կորցնելով կորցնելը անմտություն է, իսկ գտնելով կորցնելը՝ հաջողություն, որովհետեւ գտնելով կորցնելիս կորչում ենք մենք, իսկ մեր գտածը՝ մնում, իմ փնտրածն էլ հենց դա է, ցավոք, անուն չունի, որ ավելի լավ բացատրեմ, որ հասկանաք ինչու եմ Մերիին փնտրում, ինչու եմ Մերիի մեջ փնտրում իմ փնտրածը, կամ ինչ եմ անելու, եթե գտնեմ, պատկերացրեք, չգիտեմ ինչ եմ անելու, պարզապես մի օր ինձ չգիտես ինչու թվացել է, որ մեր մեջ չնկատված ու չհասկացված մի բան կա, կամ մի անգամ կորած ու մեկընդմիջտ մոռացված, որի պատճառով ինքնակատար է դարձել սիրելն ու ատելը, ապրելն ու մեռնելը, ինձ թվացել է՝ մենք որպես օրենք մի բան ենք ուզում, բայց հակառակն անում, մի բան ենք տեսնում, այլ բան հասկանում, սկսում ենք վերջից, վերջացնում սկզբում, այսպես է թվացել, ես մեղավոր չեմ, գուցե հենց իմ մեջ կամ միայն իմ մեջ է կողմնացույց պակասում, ես, իհարկե, առանց աչքս թարթելու կարող եմ ասել, որ ձեր Պորտուգալիան մեր կանգնած տեղից բավականին հարավ է ու մոտ մի այդքան էլ արեւմուտք, բայց սա, հասկանու՞մ եք, աշխարհագրություն է, իսկ իմ ուզածը մի քիչ ուրիշ բան՝ ճակատագրություն, որի չորս ծագերը կողմնացույցիս մեղքով խառնվել են իրար, եւ իմ միջի Յայատանից ձեր միջի Պորտուգալիան հասնելու փոխարեն ընկնում եմ հարկ ու մի ճահիճներ, մի քիչ թփրտում, բայց տեսնում, որ չէ՞, այսպես չի լինի, ու ճարտաստալով՝ ձեռացնում, որ ուզածս սա էր, ձեր գործը հեշտ է, կեստեք ձեր մեքենան, կզնաք ուր կուզեք, իսկ ես պետք է վերադառնամ սպասեմ, սակայն ինձ թվում է, դուք չպետք է ժամանակից շուտ ուրախանաք, ես էլ հուսահատվեմ, որովհետեւ երբեք հայտնի չի, թե հաջորդ պահին որտեղով կանցնի երկրագնդի առանցքը, կարող է հենց այս սրճարանով, եւ դուք փոշմանեք, որ գնացինք, իսկ ես վերջապես գտնեմ Մերիին, որովհետեւ կողմնացույցիս սպքները մի օր վերջապես խելքի պիտի գան, կամ խելքի գան Մերիի կողմնացույցի սպքները, եւ մենք վերջապես հանդիպենք, վերջապես իմանամ ինչ է ինձ պետք, որովհետեւ, դուք էլ իմացեք, սա ամենեւին էլ միայն տղամարդու ու կնոջ խնդիր չի, ինչպես որ Ամելիի կանչն ու ցավը մի մարդու կանչն ու ցավն է, ինչպես որ աշխարհ գալն ու գնալը դեռ ամեն ինչ չէ, իսկ թե ինչ է, չգիտեմ, բայց ուզում եմ իմանալ, որովհետեւ, քանի դեռ չգիտենք, միշտ այսպես կլինի՝ ես կխոսեմ, դուք կուզեք ինձնից արծնել, դուք կզնաք, ես կսպասեմ, նա չի գա, ես նորից ոչինչ չեմ իմանա, նորից մեռնելիս կզգանք, որ ամեն ինչ փուչ էր, եւ ճիշտ կզգանք, որովհետեւ իրոք փուչ է, այնպես որ, թեեւ հույս չունեմ, բայց մի քիչ էլ սպասեմ, իսկ ձեզ՝ բարի ճանապարհ, գնացեք ու ինձ գժի տեղ մի դրեք, թեեւ այլ բանի տեղ, գիտեմ, հնարավոր չի դնել:

Բայց ես հարբած չեի, որ որեւէ մեկի գլուխը տանեի, ես, թեեւ հոգնած ու տանջահար, բայց միանգամայն օրինավոր տեսքով թառած բարձր աթոռին, նայում էի, թե ինչպես պորտուգալացիները համարյա միաժամանակ երկու կողմերից բեռնատարի խցիկը բարձրացան, միաժամանակ շրխկացրին դռները, եւ երբ նրանց մեքենան գնացել էր, շրջվեցի պատուհանից ու նորից վողկա խնդրեցի: Բարմենը կատարեց խնդրանքս ու վերադարձավ թերթի մոտ: Նա կարողում էր, ես խմում, նա՞՝ ուրիշի մտքերի հետ, ըստ որում, ոտքի վրա ծնած, ես՝ սեփականից փոշի հանելով, իսկ այն, ինչը թերթում էր կարող լինել, իմ հանած փոշու մեջ էլ չէր երեւում, մեզ իզուր սպասում էր ուրիշ մի տեղում՝ գուցե շատ մոտիկ, գուցե հենց կողքերիս, բայց, միեւնույնն է, անհայտ, այնպես որ, երբ երրորդ գավաթը պիտի պատվիրեի, մտածեցի, որ գիտակցությունը կորցնելու աստիճանի հարթելու եւ բախտի միջեւ այնուամենայնիվ չի կարող ուղղակի կապ լինել եւ որոշեցի սուրճ խմել: Լուսանում էր: Ես վճարեցի ու դուրս եկա: Առաջվա նման չգիտեի որտեղ եմ եւ չէի ուզում իմանալ: Խճուղու նման մի տեղում՝ սատանան գիտե որ արվարձանները տանող, իմ կողքով սուրացին արթնացող քաղաքի առաջին ավտոմեքենաները: Սուրացին հուսահատեցնող նպատակաւալացույթամբ, ինչպես որ սուրում են աշխարհի բոլոր ծեգերում, հենց որ՝ ճանապարհ են տեսնում իրենց առաջ, բայց նրանք հնարավոր չէր մեղադրել, որովհետեւ, եթե մեր տեղերը փոխվելիս, ես կսուրայի արյունն աչքս առած, իսկ նրանք վերջին ուժերով քաշ կտային ոտքերը, որովհետեւ մեզ թվում է, որ եթե ծնվել ենք, պիտի ճանապարհ գնանք, որի հաջորդ կեռմանում հենց մեր ուզածն է, իսկ կեռմանները, հասկանալի է, անթիվ են, ճանապարհն էլ, քանի դեռ չի ավարտվել, հասկանալի է, անվերջ: Իհարկե, կասկած կա, որ ինչքան էլ արագ սուրանք, ինչքան էլ հեռու, երկար ճանապարհի վերջում մեզ, միեւնույնն է, մահվան արձանի պես սպասում է ունայնությունը, սակայն, ունայնության անունը շուրթներին շունչը փչելը այնուամենայնիվ չնչին ակնթարթ է տարիների վազվզոցից հետո, այնպես որ երեւի չարժի դեռ շուրջ չմտած թրջվելուց վախենալ, ու համենայն դեպս կարելի է ետ չընկնել համամարդկային վազքից: Ոչ ոք առանձին չգիտի, թե ուր է վազում, բայց բոլորը միասին երեւի գիտեն: Անպայման գիտեն, եթե վազում ես ուսիս: Երեւի շատ ավելին գիտեն, եթե աշխատում են մեկը մյուսից ետ չմալ: Յատագ գիտեն, եթե տեղն եկած տեղը կարող են տրորել իրար: Ետեւից, իհարկե, չի երեւում, թե ինչ են տեսնում առջեւից վազողները, բայց անպայման մի բան տեսնում են, եթե ավելի ու ավելի արագ են վազում: Ուրեմն, հարկավոր է ետ չմալ: Թեկուզե հոգնած, ոտքերը քաշ տալով: Իհարկե, հնարավոր է, որ առջեւից վազողներն էլ արդեն ոչինչ են տեսնում, որովհետեւ՝ մնացել են ետեւից վազողների ոտքի տակ: Յնարավոր է, որ սրանք էլ երկար չեն տեսնում, որովհետեւ նրանք ետեւից էլ վազող կա: Եվ ստացվում է, որ ոչ ոք ոչինչ չի տեսնում, որ վազելով հանդերձ դո՞ւրեմն ենք տեղում: Բայց ինչպե՞ս դա ստուգես, քանի դեռ չես վազել, քանի դեռ չես տեսել, քանի դեռ չես տրորվել: Գուցե իսկապես արժե այդ անհայտ լուսատուին թեկուզ մի ակնթարթ թեկուզ մի աչքով նայելու համար ոտքի տակ գնալ: Անպայման արժե, որովհետեւ, եթե նույնիսկ պարզվի, որ տեսնելու բան չէր, ետեւիցդ եկողները ժամանակ չեն տա ունայնության մասին մտածես: Այսպիսի սփոփիչ գրավական ձեռքից ինչպե՞ս հրաժարվես համամարդկային խնեթությունից: Վերջին հաշվով դա նաեւ միակ բանն է, որ առայժմ ունենք, կամ ունեմ ես (վերջին հաշվով ամեն մեկն իր անունից պիտի խոսի), եւ վերջին հաշվով այնքան էլ վատ չի, չլինեի Մերին, ես ի՞նչ էի փնտրելու: Սկզբունքորեն մինչեւ նրան հանդիպել էի գիտեի, որ ինչ-որ բան գոյություն ունի, բայց տեսականորեն: Իսկ այդ անիծյալ երեկո Գալբուտիկայում սատանան գիտե ինչ էր տեղի ունենում, արեւային մորիկների մտքով եսիմ ինչ նոր խնեթություն էր անցել, որովհետեւ այդպիսի վերջալույս մեկ էլ երեւի Արարատի կազմավորման ժամանակներում էր եղել, որովհետեւ այդ երեկո

ձայները կարելի էր տեսնել, հայացքները լսել՝ ձայները իրենց ետեւից բարակ թելի նման հետագիծ էին մանում, իսկ հայացքները կախվում օդում ու լողում լոտոսների պես, հասկանալի է, Մերիի ձայնն ու հայացքը, հենց այդ ժամանակ էլ միլիարդավոր տարիներ առաջ տիեզերքի կենտրոնից ճանփա ընկած լույսից մի շող էլ ինձ հասավ, եւ ես մի պահ գիտեի ով եմ ես, որտեղից, ինչի համար... Բայց այս խճուղում երեւի արդեն անիմաստ էր հուսալ, որ Մերիս կերեւա: Հատուկէնտ անցորդները շատացան, եւ միակ բանը, որ ինձ մնում էր անել, մետրոյի որեւէ կայարան գտնելն էր: Որն էլ գտա, բարեբախտաբար, շուտով:

Ես տուն էի գնում, բայց Սեն Միշել կայարանում չգիտեմ ինչ անցավ մտքովս, եւ շտապեցի դուրս գալ:

Սեն Ժերմեն դը Պրեի սրճարաններից մեկում ես մատուցողից հարցրի հեռախոսի տեղը եւ, մի ֆրանկ գցելով, գանգահարեցի ծանոթ համարով:

Բարի լույս, ասացի, հիշու՞մ էք այն միամիտ երեւանցուն, որ աշխարհ խոստացավ Փարիզում լինելու դեպքում գանգահարել ձեզ:

Հիշում եմ, ասաց, այսքան տարում ավելի տարօրինակ հեռախոսային զրույցներ չեմ ունեցել:

Դե ահա, ասացի, ես Փարիզում եմ ու կատարում եմ խոստումս:

Գտա՞ք ձեր բարեկամուհուն, հարցրեց նա:

Այս քաղաքում, ասացի, իմ միակ բարեկամուհին դուք էք:

Այսքան պարտավորեցնող խոստովանությունից հետո, ասաց, ինչո՞վ ձեզ օգնեմ:

Ոչնչով, ասացի, որովհետեւ այս գիշեր մեկնում եմ: Բայց քանի որ դժվար թէ նորից գանգահարելու պատրվակ գտնեմ, կուզեի իմանալ՝ ու՞մ հեռախոսն է անջնջելի գրեթե պես տպվել ուղեղումս եւ ինչու:

Նա ծիծաղեց՝ եթե դուք էլ ձեր ֆրանսերենի պես ահավոր եք, ես, կարծում եմ, կգերադասեի հեռախոսային ծանոթներ մնանք:

Ես ասացի, թե որ սրճարանում եմ նստած: Եվ ասացի, որ մի քիչ տխուր եմ:

Երկրորդ տխուր մարդ, նորից ծիծաղեց, Շննդյան տոներից առաջ Փարիզում դժվար թէ գտնվի:

Նստած եմ, ասացի, դռնից աջ, պատուհանի մոտ եւ փողոց եմ նայում: Ինչպես հասկացաք՝ տխուր հայացքով:

Ես ոչինչ չեմ խոստանում, ասաց նա:

Դուք կարող եք չգալ, ասացի, բայց ես միեւնոյնն է կսպասեմ, որովհետեւ միևնույն գիշեր ժամանակ դեռ շատ կա:

Ես իջա ներքեւ, լվացվեցի, ինչքան հնարավոր էր ինձ կարգի բերեցի ու վերադարձա տեղս:

Նա հայտնվեց երեւի մի ժամ անց: Սանատրուկը ճիշտ էր՝ կանանց տարիքը երբեմն դժվար է որոշել, բայց մուշտակի մեջ փաթաթված կինը, որ աչքերը ծիծաղկոտ կկոցած դրսից ինձ էր դիտում, ինչքան էլ երիտասարդ երեւար, կարող էր եւ տարեկիցս լինել: Հետո նա շարժվեց դեպի դուռը, եւ ես վեր կացա դիմավորելու:

Նրա նիհար ուսերը, երբ օգնում էի մուշտակը հանի, չգիտես ինչու հանգստացրին ինձ:

Նա չէր լսում ու նայում Մերիի պես արմունկը սեղանին, ծնոտը բռունցքին դրած, ոչ էլ Ամելիի պես փակում աչքերը ու խոսում հեռու կանչի կամ մոտիկ ցավի հետ, նա նստած էր ուղիղ, եւ նրա աչքերը ամբողջ ժամանակ ծիծաղում էին: Այդպես էլ ասաց՝ ծիծաղս գալիս է, ավելի անկապ ժամադրության, ասաց, դեռ չեի գնացել, դրա համար էլ, ասաց, եկա: Եվ հարցրեց՝ տխուր եմ, որովհետեւ չե՞մ գտել բարեկամուհուն:

Ես կրկնեցի, որ իմ միակ բարեկամուհին ինքն է: Իսկ տխուր եմ, որովհետեւ հնարավոր չէ ամեն օր ուրախ լինել, կամ՝ որ այս գիշեր եմ մեկնում:

Այո, ասաց, ամենախկակաբան խոզությունն է՝ միակ բարեկամուհուն գանգ տալ ամենավերջին օրը:

Ես արդարացա, որ ընդամենը մի շաբաթով էի եկել ու շատ զբաղված էի:

Միեւնոյնն է, ծիծաղեց, զբաղված խոզություն:

Ես չհասկացա՝ իրե՞ն էի ուզում դիպել, թե՞ ծիծաղին, բայց քանի որ, հասկանալի է, թե ինչու ոչ մեկը կարող էի անել, ոչ մյուսը, շոշափեցի աթոռին գցված մուշտակի փափուկ խավը:

Սրճարանում մենք մնացինք մի ժամի չափ:

Նրա մեքենան ինձ փոքրիկ թվաց, բայց երբ հարցրի՝ «Ռենո» է, ծիծաղեց՝ «Պեժո»: Ծիծաղելով հարցրեց անուս, ծիծաղելով ասաց՝ իսկ իմը...

Ես չթողեցի վերջացնի՝ պետք չի, ասացի, ձեր անունն էլ թող մնա հաջորդ գանգի կամ հաջորդ այցելության համար:

Ու՞մ պատմեմ, որ հավատա, ու՞մ, ծիծաղում էր նա, եւ մեքենան անհոգ թեթեւությամբ գնում էր նախ բուլվար Սեն Ժերմենով, հետո ինձ անծանոթ փողոցներով:

Նրա բնակարանում լողարան չկար, ցնցուղ էր, իսկ սավանները խշխշան, բայց վարդագույն:

Այսպիսի բան չի լինում, բայց ինձ հետ եղավ, ծիծաղում էր նա, չի լինում, բայց եղավ:

Նա՝ Մերի-Ամելի-Մարի-Մելիսիան (իսկ գուցե պարզապես Մարիամը, չէ որ մենք ոչ թե անուն ենք փնտրում, այլ այն, ինչը անունից անուն է մեզանից փախչում) ծիծաղում էր նաև ինձ ճանապարհելիս (մի ձեռքը դռան վրա, մյուսը շերտավոր լողախալաթի գրպանում)՝ ես սա ամբողջ կյանքում եմ հիշելու, իսկ ես իջնելով մտածում էի, որ ամբողջ կյանքում հիշում եմ երեւի միայն այն, ինչը մի անգամ է եղել ու չի կրկնվելու, ինչպես որ տեսնում եմ միայն այն, ինչը պիտի լիներ, բայց չեղավ:

Վերջինը ես վաղուց ունեի, նա էլ գտավ առաջինը, որովհետեւ մոտենալով մեր բարեկամի դռանը, հանկարծ գլխի ընկա, որ ոչ միայն չեմ հիշում որտեղ էր նրա տունը, այլևեւ հեռախոսի համարն եմ մոռացել: Մեկից մինչեւ զրո տասը թվերը իմ գլխում շարվել էին այնպիսի անաղարտ թվաբանական հաջորդականությամբ, որ կարելի էր կարծել հեռախոսի գյուտը դեռ չի արվել, կամ նույնիսկ դեռ չի սկսվել տարիների թվագրությունը:

Վերադարձիս մասին պատմելու շատ բան չկա: Ինչպես որ չափ չկար աչքը ջուր կտրած մեր բարեկամի վրդովմունքին, որ հայտարարեց՝ վերջ, այսուհետ ո՛չ մեկ հայաստանցի այս շեմը անցնելու չէ: Բայց դեռ բավականին ժամանակ կար, մենք հասցրինք եւ հաշտվել, եւ միասին ճաշել, մի քանի ժամ էլ քնելուն մնաց:

Առավոտյան հինգին, երբ մեքենան անցնում էր Ամելիենց խաչմերուկը, ես, հիարկե, եւ նայեցի, եւ շրջվեցի, բայց խաչմերուկը, ինչպես եւ պետք է լիներ, դատարկ էր:

Ինքնաթիռում համարյա ամբողջ ժամանակ քնած էի եւ ոչ մի երազ չտեսա: Անիվներն էլ ինչպես միշտ փափուկ դիպան վայրէջքուղուն, թեեւ մի քիչ ընդգծված բծախնդրությամբ ստուգեցին մեր ամրագոտիները՝ Չվարթնոցում Երեւանի համար հազվադեպ մառախլապատ եղանակ էր՝ երեւի ձյուն պիտի գար:

Տուն գնացի տաքփով: Կյանքից հոգնած «06»-ը իրեն չարչարելու դեմ սկսեց բողոքել դեռ ճանապարհի կեսին, ավտոկայանի մոտ մի քանի րոպեանոց կանգառ պահանջեց, բայց, երբ անցանք կամուրջն ու գետնուղին, մտանք Մաշտոցի պողոտա եւ Ամիրյանի անկյունում՝ Նորից ընդվզեց, ես մտածեցի, որ նրա հոգեվարքի վկան լինելն անհիմաստ է, վճարեցի վարորդին, թեթեւ պայուսակս ուսս գցեցի ու գնացի ոտքով:

Միգուցե այն պատճառով, որ մոտավորապես այստեղ էր Սանատրուկը երագում կորցրել Մերիին, ես Նորից սկսեցի նրա մասին մտածել, եւ Թումանյանի խաչմերուկն անցնելով, մոտեցա այն բացօթյա սրճարանին, որտեղ առաջին անգամ տեսել էի նրան, որը դեկտեմբերին, հասկանալի է, փակ էր, եւ որի տեղում հիմա տրորված-սեւացած ձյուն էր՝ սառած ու ընկած հայացքի նման:

Ես շրջանցեցի Մեծ համերգասրահը, քայլեցի Սայաթ-Նովայով, արդեն հեռու չէի տնից, որտեղ ինձ էին սպասում զրքերս եւ որոնց կարոտել էի ինչպես ամեն մի բացակայության ժամանակ, բայց նրանց իմաստուն լռությունն այս լուսադեմին, երբ չգիտես ինչու թվում է աշխարհն առաջին անգամ պիտի արարվի, ինձ վաղաժամ թվաց: Փարիզի ու Երեւանի ժամանակների երեքժամյա տարբերության պատճառով ես հիմա, ինչպես եւ երեկ, դրսում էի գրեթե նույն ժամին, Նորից ցուրտ էր, Նորից փողոցները ամայի էին, եւ շատ չանցած ես արդեն Երեւանում էի շուրջօրյա սրճարան մտնում:

Ես տաք թեյ խնդրեցի: Ես միակ հաճախորդն էի կիսանկուղային փոքրիկ սրճարանում, սեղանի վրա բացակա հոգու արծազանքի պես թրթռում էր մոմը, երիտասարդ բարմենը, ինքն իրեն ոգեւորելով, ամբողջ մարմնով ջանում էր որսալ ինչ-որ մեկի կոկորդում խաչոտած մեղեդին, մատուցողուհին՝ մանկամարդ աղջիկ, վաճառասեղանին կռթնած, հեզանկեքով նրան էր նայում, ուղեղս լարված ինչ-որ բան էր փնտրում, չգիտեմ՝ միտք թե պատկեր, ու չէր գտնում: Ես կենտրոնացա տաք բաժակի ու գոլորշու վրա:

Կես ժամ անց, ես Նորից դրսում էի: Լույսը դեռ չէր բացվել, մառախուղը չէր ցրվել, խոստացված ձյունը չէր գալիս: Ես քայլեցի մշուշի միջով, սառած հետքերով:

2001. փետրվար-մարտ